

ՀԱՐ ԵՐԶՈՒՆ

V ՏՈՒՐ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ. Ի Ր

№ 2, 3

ՓԵՏՐՈՒԱՐ, ՄԱՐՏ

1905



Թ. Ի Յ. Ի. Բ. Ս.

Տպարան 33 ՀԱՐՄԻՍՏԱՆ Երզր. փող. № 15.

1905

ԲՈՒՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ № 2—3

Երև.

1. ՄՕՐՈՒՔԻ ՍԱՆՏՐԸ, Առանձարի	5
2. ԴԷՊԻ ԱՆԻ, Ա. Անարոնեանի	10
3. ԵՐԵԿՈՅԵԱՆ, ոտան. Ա. Իսահակեանի	33
4. ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ, պօլ. Յով. Թուման- կանի	34
5. ՔեՕԽՎԱ. (պատկ. գիւղից) Վ. Փափագեանի	40
6. ՆՄԱՆ ԴԱՅԼԵՐԻ, ոտան. Ա. Իսահակեանի	65
7. ԴԱՐԱՆԻՅԵԱՆ ԿԱՄ ՎԱՅՈՅ ՋՈՐ, Ս. Տ. Ա. ի	66
8. Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԵՐԸ,	74
9. ԿԵԱՆՔԻ ՋԱՅՆԸ, ոտան. Ա. Ժառուրեանի	100
10. ՀԱՅ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ, Տ. ի	101
11. ԹԻՒՐՔ. ՖԻՆԱՆՍՆԵՐԸ, Ռուբէն Բերքերեանի	103
12. ՆՈՒԷՐ ՕՐ. Ն. Ն. Ա. Իսահակեանի	117
13. ՕԲԵՐԼԵՆԵՐԸ ՎԷՊ, Րընէ Բագլի	118
14. ԿԱՆԱՆՅ ԲԱՐ. ԸՆԿ. ՍՏՐՊԱՏ., Ե. Փրանգեանի	142
15. ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼԸ.—Մամուլական հասարա- կութիւնը մօտէն նանաչլու պէտքը:—«Թէրջիմանի» եւ «Շարքի-Ռուսի» բանակիւր համալսմունեան մասին տառած յօդուածին առիթով:—Եղիպտոսի մէջ լոյս տես- նող «Թիւրք» լրագրի հայեացքը համալսմունեան մա- սին:—«Շարքի-Ռուսի» Բազու փոխադրութեան պատ- ճառով թուրք լրագրի ուղղութեան մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը:—Աղայի «Շարքի-Ռուսի» խմբագիր:— «Շարքի-Ռուսի» հին շրջանը, մատուցած ծառայու- թիւնները եւ նոր «Շարքի-Ռուսի»:—Աղայի «հաւա- հանդանորդ» Տիգրանի	155
16. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԾՈՒԹԻՒՆ.—1) Մուշեղ փարդապետի «Դրուագներ».—Տ. Զ. 2) Ա. Дер- вишъ «Пѣвецъ Гражданской скорби».—Նա. 3) Բօսորով, «Ռուբէնի կրթութիւնը» Ե. Ղազ. քահ. Յովսէփեան «Անարկներ Ռուսիայի եւ մանկական հայրի մասին».—Նա.	169
17. ՆՈՐ ՍՏԱՏՈՒՄԸ ԳՐԲԵՐ	179
18. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ներքին կեանքի հիւանդոտ արտա- տութիւնները:—Բազուի արիւնատեղ անցքերը:—Հասա- րակութեան եւ Եջմիածնի ցոյց տուած նախաձեռնու-	

Նոր ջրջան V տարի

Հրատ. XVII տարի

ՄՈՒՐՃ


ԴՐԵՊԸՆ, ՀՆՍԵՐԵԿԵԿԸՆ ԵՒ ՔԵՂԵՔԵԿԸՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ № 2-3

ՓԵՏՐՈՒԱՐ, ՄԱՐՏ

1905



ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Ընկ. Մադար. փող., 15.

1905

Дозволено цензурою Тифлисъ 1905 г. 3 февраля.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ № 2—3

	Երբ
1. ՄՕՐՈՒՔԻ ՍԱՆՏՐԸ, Առանձարի	5
2. ԴԷՊԻ ԱՆԻ, Ա. Անարոնեանի	10
3. ԵՐԵԿՈՅԵԱՆ, ոտան. Ա. Խառակեանի	33
4. ԹՄԿԱՐԵՐԻՒ ԱՌՈՒՄԸ, պօէմա. Յով. Թուման- եանի	34
5. ՔԵՕԽՎԱ. (պատկ. գիւղից) Վ. Փափազեանի	40
6. ՆՄԱՆ ԳԱՅԼԵՐԻ, ոտան. Ա. Խառակեանի	65
7. ԴԱՐԱԼԱԳԵԱՋ ԿԱՄ ՎԱՅՈՅ ՁՈՐ, Մ. Տ. Ա.ի	66
8. Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ,	74
9. ԿԵԱՆՔԻ ՉԱՅՆԸ, ոտան. Ա. Ժառուրեանի	100
10. ՀԱՅ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ, Տ.ի	101
11. ԹԻՒՐՔ. ՖԻՆԱՆՍՆԵՐԸ, Ռուբէն Բերբերեանի . . .	103
12. ՆՈՒԷՐ ՕՐ. Ռ. Ն. Ա. Խառակեանի	117
13. ՕՐԵՐԼԷՆԵՐԸ ՎԷՊ, ՐԸՆԷ ԲԱՂԷՆԻ	118
14. ԿԱՆԱՆՅ ԲԱՐ. ԸՆԿ. ԱՏՐՊԱՏ., Ե. Փրանգեանի . .	142
15. ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼԸ.—Մամուլական հասարա- կութիւնը մօտէն ծանաչելու պէտքը:—«Թէրջիմանի» եւ «Շարքի-Ռուսի» բանակիւրը համախառնութեան մասին տառուած յօդուածին առիթով:—Եզիպտոսի մէջ լոյս տես- նող «Թիւրք» լրագրի հայեացքը համախառնութեան մա- սին:—«Շարքի-Ռուսի» Բազու փոխադրութեան պատ- ճառով թուրք լրագրի ուղղութեան մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը:—Աղայեմ «Շարքի-Ռուսի» խմբագիրը:— «Շարքի-Ռուսի» հին շրջանը, մատուցած ծառայու- թիւնն՝ րի եւ նոր «Շարքի-Ռուսի»:—Աղայեմի «հաւա- հանգանարը»: Տիգրանի	155
16. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1) Մուշեղ վարդապետի «Դրուպներ».—Տ. Զ. 2) А. Дер- вишъ «Ивѣдѣ Гражданской скорби».—Նա.: 3) Բուսրոմ, «Ռուբէնի զբաղմունքը. Ե.—Ղադ. քաղ. Յոխէփեան՝ «Ակնարկներ Ուտիայի եւ մամուլական հայերի մասին».—Նա.:	169
17. ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԴՐՔԵՐ	179
18. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ներքին կեանքի հիւանդոտ արտա- տուծիւնները:—Բազուի արիւնահեղ անցքերը:—Հասա- րակութեան եւ Էջմիածնի ցոյց տուած նախաձեռնու-	

ծինը եւ ինքնօգնութիւնը:—Կովկասեան ազգերի համե-
րաշխութեան զաղափարի յաղթանակը:—Շահի հեռագի-
րը:—Պաշտօնական հաղորդագրութիւն Թիֆլիսի, Բա-
թումի, Երեւանի եւ Կովկասի եւ այլ տեղերի զանազան
խառնակութիւնների մասին:—Թիֆլիսի երգ. հաւատ.
կազմած յանձնաժողովը:—Հայերի պատգամաւորութիւ-
նը Պետերբուրգում:—† Մեծ իշխ. Սերգէյ Ալէքսանդրո-
վիչ:—Կաթող. կողմից Կովկասի նոր փոխարքային ուղար-
կած հեռագիրը եւ նրա պատասխանը:—Գուրիական
գործերը:—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ:
—† Սիմէօն Հախումեան: Լ. Ս. 181

19. ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ, Տիգրան Ռաշմանեանի 210

20. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ. — «Թիֆլիսի կոկորդ-
ճուղերմանի:—«Թագի համար» Զ. Կոսպէի:—«Վա-
նիւշինի զաւակները»՝ Նալդեոնովի:—«Պաշտպան»՝
Սօսիկովսկիի:—«Խարդաւանք եւ Սէր»՝ Շիլլերի, Շիլ-
լերը իբրեւ թատերագիր:—«Գոկտոր Շտոկման»՝ Իբսե-
նի:—Նորվեգիայի մեծ թատերադրի աշխարհայեացքը.
«Գոկտոր Շտոկմանի» մէջ գործող անձերը եւ նրանց
բնորոշումը:—«Հանելուկ»՝ պ. Էրվիօի. մեր դերասան-
ները եւ ֆրանսիական պիէսները:—«Վաւաճանութիւն»՝
իշխան Սումբատովի:—Տ. Վարդուհու յորեկեանը:—
«Նոր Կեանքի շէմբուլ»՝ Քիշմիշեանի, Տ. Զաւէնի. 218

21. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻԻՆ. — Մուկղէնի տակ:—Անդրիան Մեր-
ձաւոր արեւելքում Լ. Ս. ի 239

22. Ո՞Վ ՓԱԿԵՑ ԹԱԻՐԻՉԻ ԼԻԼԱԻԱ ԹԱՂԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ,
Ն. Տ. Վ. Մուրադեանի 242

22. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻԻՆՆԵՐ 175

23. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ 177

24. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.

24. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻԻՆՆԵՐ 178:

ՄՕՐՈՒՔԻ ՍԱՆՏՐԸ

Ընկերոջս Յ. Աղասէրին

— Բարի լոյս, չորպաճի.

— Բարի լոյս, Հիւսնի չափուշ.

Եւ խոր հառաչանքով մը հազիւ զլուխս վեր առած էի տոմարներուս վրայէն, երբ այցելուս արդէն սիկարէթներէս մէկը վառած ու աթոռ մը գրաւած էր, իսկ վաճառանոցիս ծառան դէպի մօտակայ սրճարանը կը փութար սուրճ ապսպրելու:

Մեր քաղաքին ոստիկանատան չաւուշն էր այս մտերմական հիւրը, որ վաճառանոցիս ճամբան սորված էր ամիսներ առաջ դատական գործի մը առթիւ: Պաշտօնապէս թէև երեք այցելութիւններու պատիւը կը բաւէր, բայց Հիւսնի չափուշ այն սիրալիր էակներէն է, որոնք պաշտօնական առթիւ մը ծանօթանալէ ետքը անպաշտօն այցելութիւններու առթիւ չեն փախցներ: Ամէն անգամ երբ պարտականութիւնը զինք այս կողմերը բերէ, չի մոռնար հանդիպել ինձի, ինչպէս ինք կ'ըսէ «չօրպաճիին *) սիկարան ու սուրճը խմելու»:

Պիտի հարցնէք թէ ի՞նչ գործ ունէի ոստիկանութեան կամ դատարանի հետ: Դատ: Աստուած չընէ. առհաս տեղս վրայ կուտամ զատ չեմ բանար... Թիւր-

*) Չօրպաճի=Ապուր տուող: Ժամանակին Եկնիչէրիները առած են այս տխրողս բրիտանեայ հարուստներուն. բառին այս ծագումը կարծեմ պերճախօսօրէն կը բացատրէ արդէն անոր փոխաբերական իմաստը:

քիոյ մէջ: Իմս դատական փորձանք մըն էր և պատճառը, կընայի՞ք երեակայել... մօրուքի սանտր մը: Այո, թէև փղոսկրէ, բայց վերջապէս մօրուքի սանտր մը:

*
* *
*

Մեր շուկային մէջ էն նշանաւորներէն մէկն է Առաքելին կրօնական ապրանքներու խանութը և ինք Առաքելն ալ իմ վաղեմի բարեկամս: Յաճախ կ'երթամ նստիլ իր խանութը, երբեմն գործով, երբեմն ալ լոկ բարեկամական տեսակցութեան համար: Քանի մը ամիս առաջ դարձեալ նստած էի հոն, երբ խանութին դուռը յանկարծ ուժգին բացուելով մէկը ներս խուժեց: Հսկայ հասակ մը կապոյտ պատմուճանի մը մէջ պարուրուած և սպիտակ խոշոր փաթթոց մը, որու ներքեւէն մոխրագոյն, լայնածաւալ մօրուք մը կախուած էր, հազիւ տեղ թողնելով զոյգ մը կոկան աչքերու և տափակ քթի մը:

Առաջին ակնարկով իսկ դժուար չէր գուշակել որ դիւղական մօլլա մըն էր եկողը: Զբարկեց և առանց ուշադրութեան իսկ արժանացնելու Առաքելի ժպտալի բարեն ու նստելու հրաւէրը, ձեռքը մէջքի լայն գօտիին մէջ խոթեց և սանտր մը հանելով նետեց անոր առջև:

—Դրամս ետ տուր.

Որոտաձայն արձակուած այս կտրուկ հրամանին առջև Առաքել պահ մը ապշած մնալէ յետոյ, սանտրը սկսաւ գննել: Ես ալ զարմացած՝ տեղէս ելայ և ընկերացայ իրեն: Փղոսկրէ սանտր մըն էր, որ արդէն թնճուք բռնած էր և ատամին մէկն ալ կոտրած:

—Ի՞նչ է, հօճա էֆէնտի, ի՞նչ է, պատահեր— հարցուց Առաքել շուարած:

—Ի՞նչ պիտի պատահի, դեռ կը հարցնե՞ս ալ— պատասխանեց հօճան նոյն բարկացայտ շեշտով— անխիղճ անհաւատ, խաբեր ես զիս. այս սանտրը ո՛չ թէ 35 դրուշ՝ 35 փարա իսկ չարժեր. մէկ անգամ մօրուքիս

զարկի ստամին մէկը թափեցաւ և մօրուքէս ալ փունջ մը մազ փեռեց:

—Տէր Աստուած, շատ բան լսեր էի, բայց այս տեսակ փորձանքի դեռ չէի հանդիպել—բացառանչեց Առաքել հայերէն գլուխը թօթուելով և հօճային դառնալով թիւրքերէն շարունակեց—հօճա էֆէնտի, Աստուած վկայ որ այս սանտրը առաջնակարգ տեսակէ է և ես շատ աժան ծախեցի ձեզի, ուրիշ տեղ ասկէ վարնոցը 40-ի ալ չէիք կրնար առնել:

Եւ երկու հայ վաճառականներս մեր ամբողջ լեզունութիւնը թափելով փոխասացութիւն մը սկսանք, համոզելու համար հօճա էֆէնտին որ իր մօրուքին այդ փետուամին մէջ սանտրը յանցանք չունէր: Սանտրի ուրիշ զանազան տեսակներ վկայութեան բերինք ապացուցանելու համար իր գնածին գերազանցութիւնը, սակայն իզո՛ւր, մարդը մեղմանալու տմենափոքը տրամադրութիւն մը խիչ չէր ցուցներ և միշտ ոտքը գետին դարնելով դրամը կը պահանջէր սպառնազին:

—Այս ապրանքը խանութը չի մնար, երբ ըլլայ կը ծախուի—ըսաւ վերջապէս Առաքել առանց իր քաղցրը շեշտը փոխելու—և ես ձեր խաթերը համար առանց խօսք ընելու ետ կ'առնէի զայն, եթէ ատամը կոտրած չըլլայիք. բայց հիմա ես որո՞ւ կրնամ ծախել այս կոտրած սանտրը...

—Ես չեմ կոտրեր, լիւրժ, ինչո՞ւ սուտ կը խօսիս—պոռաց մօլլան աւելի կատղած—առած ատենս կոտրած է եղեր, ո՞վ գիտէ փակցուցեր ես, ի՞նչ ես ըրեր, խաբեր ես զիս: Վերջապէս ալ երկար խօսք չեմ ուզեր, կամ դրամս ետ կուտաս և կամ... դուն գիտես:

Ամէն համբերութիւն սահման ունի ըսեր են, մինչև անգամ խանութպանի և հայ խանութպանի համբերութիւնը: Իմ համբերութիւնս արդէն վաղուց հատած էր, վերջապէս Առաքելին ներսն ալ համբերանք չմնաց: Զայրագին գզրոցը քաշեց, մէջէն եօթը հատ հինգնոց առաւ ու հօճային նետեց:

—Ա՛ռ ու կորսուէ, ձեզի պէսներուն հետ առու-տուր ընելը փորձանք է. կ'երևի թէ կեանքիդ մէջ առաջին անգամն ըլլալով մօրուքիդ սանտր կը զարնես. սանտրս ի՞նչ յանցանք ունի, երկաթ ըլլայ չի դիմանար այդ աղտոտ մօրուքիդ...

Հագիւ այս խօսքերը Առաքելի բերնէն ելած էին, երբ մօլլան—վայ շունշանորդի կեավուր, մօրուքիս կը հայհոյես—աղաղակեց ու անոր վրայ խոյացաւ:

Անմիջապէս օձիկ-օձիկ փայլալներ շողացին աչքե-րուս առջև, ջիղերս պրկուեցան և պահ մը արձանացած մնացի: Յարձակի՛լ լիւրբ անպիտանի վրայ, գետին տապալելով լաւ մը տփել և ոտքէն քաշելով դուրս նետել... Բայց ոտքերս առանց վճռիս սպասելու յանկարծ փողոց նետեցին զիս... Ու շնչասպառ վաճառանոցս հասայ, առանց ետև նայելու:

Քանի մը ժամ հտքը միայն խմացայ պատմութեան շարունակութիւնը: Խեղճ Առաքելը սատտիկ ծեծ կերած էր հօճայէն և անոր աղաղակին վրայ փողոցէն օգնութեան հասնող թիւրքերէն, ու արիւնշուայ վիճակի մէջ ոստիկանատուն տարուած էր: Այս տխուր լուրին տպաւորութեանը տակ բաւական մեծ խղճի խայթ զգացի բարեկամս վտանգի ըռպէին լքած ու հեռացած ըլլալուս համար, բայց այդ խղճահարութիւնս երկար չտևեց: Ի՞նչ պիտի ըլլար օգուտը, եթէ վերջին փայրկեանին զգացումս ոտքերուս վրայ յաղթանակը տանէր և հոն մնացած ըլլայի՞, շատ շատ գետին պիտի փռէինք փուճ կենդանին ու լաւ մը ծեծէինք, բայց վերջը. ատով խնդիրը աւելի պիտի մեծնար, թիւրք խուժանը ներս պիտի թափէր և եթէ անոր ձեռքէն ողջ պրծէինք յետոյ կառավարութեան ձեռքը իջնալով՝ զնդաններու մէջ էջ նահատակ պիտի ըլլայինք: Իսկապէս նոր կը հասկնայի թէ ի՞նչ ահուկի փտանդ էր որ անցուցած էի և իրիկունը, երբ գէպքը մօրս պատմեցի, խեղճ պառաւր ամբողջ գիշերը աչք չփակեց և առտուան առաջին զանգակի ձայնին ժամ փութաց Ս. Թորոսին առջև ջուխտ մը մամ վառելու:

Յաջորդ օրը կէսօրէն ետքը վաճառանոցիս մէջ քանի մը յաճախորդներու հետ զբաղած էի, երբ խռպոտ ձայն մը յանկարծ ընդհատեց մեզ:

—Թորոս օղլու Կարապետը ո՞վ է:

Ծերուկ զապթիյէ մըն էր, որ աննկատելի կերպով ներս մտած և սրունքները լարած կանգնած էր սենեակին մէջտեղը:

—Նս եմ, ի՞նչ կայ, ի՞նչ կ'ուզէք—հարցուցի տաղնապալի շարժումով:

—Դժն ես, ուրեմն քալէ հետս, քօմիսէր պէյը քեզ կ'ուզէ:

Սարսուռ մը սողաց պիտու մագերէն մինչև ոտքիս եղունգները և սիրտս մեքենական մուրճի պէս զարնել սկսաւ:

—Զի՞ն կ'ուզէ ըսիք, չեմ կարծեր, չի կրնար ըլլալ... ի՞նչ պիտի ընէ զիս:

Ատ իր գիտնալիք բանն է, քեզի չվերաբերիր—ըսաւ զապթիյէն վայրահալ, եռանկիւնի զլուխը վեր ցնցելով և ցուցոմատը բարձրացնելով:

—Այո, այդպէս է, իրաւունք ունիք, բայց ես զործ չունիմ ոստիկանութեան հետ... բան մը չեմ ըրած... կ'ողաչեմ... սխալ եկած չըլլաք...

—Հն, հն, հն, հն, է՞ս սխալ դուռ զարնեմ—պատասխանեց ծերուկը յոխորտ ծիծաղով մը ժողատ լինդերը ցուցնելով—էհ փնաս չունի, ել երթանք, եթէ սըխալած ըլլամ, կ'առնեմ նորէն տեղդ կը բերեմ քեզ, բան մը չես կորսնցնէր: Բայց լսւ նայէ ինծի. երէկ չէ որ ես այս պաշտօնիս մէջ մտած եմ, արդէն 15 տարի է, քեզի պէս շատերը տարած բերած եմ: Այս խանին առնուն ի՞նչ է,—Անմէդ աղա խան է, այնպէս չէ. քու առնունդ ալ Թորոս օղլու Կարապետ է այնպէս չէ. էհ շատ աղէկ, քօմիսէր պէյն ալ ինծի ըսաւ. «Անմէտ աղա խանին մէջ հայ վաճառական Թորոս օղլու Կարապետը կ'առնես ինծի կը բերես» և ես ալ անոս եկած եմ. հիմա գուն ըսէ, սխալ եկած եմ թէ ճիշդ—ու կըր-

կին շարունակեց իր սրտագին ծիծաղը—հա, հա, հա, հա...

—Ձէ, ինչպէս կը տեսնեմ չէք սխալած, ներեցէք, բայց կը տեսնէք որ հիմա քիչ մը գործ ունիմ, քօմիսէր պէյին ծառայական յարգանքներս մատուցէք, վերջացնելուս պէս կու գամ:

—Ձէ, տես, աս չեմ կրնար ընել. մեզմէ վեր օրէնքը կայ, օրէնքի հակառակ չեմ կրնար գործել, քեզ հետս չառած այս դռնէն դուրս չեմ ելլեր: Վնաս չունի, դուն գործդ վերջացուր դեռ ժամանակ կայ, ես ալ քիչ մը շունչ առնեմ, սիկարա մը, սուրճ մը խմեմ. մէկ շունչով սէրայէն մինչև հոս եկայ, քիչ տեղ չէ, ան ալ այս տաքին. երիտասարդ ժամանակս յոգնութիւն, ցուրտ, տաք ի՞նչ է չէի գիտեր, օրինակի համար Մօսկօֆի պատերազմին մինչև մէջքս ձիւնի մէջ օր ու գիշեր կը քալէի, ամենևին հոգս չէր, բայց հիմա ալ երիտասարդ չեմ:

—Խնդրեմ, խնդրեմ, զապթիյէ աղա, նստեցէք, սիկարէթ մը հրամեցէք, ծօ թաղոս սուրճ մը ըսէ:

—Ես զապթիյէ չեմ—գիտեմ տուաւ քօմիսէր պէյին խղճամիտ գործակատարը, որու հետ այն ատեն մտքես իսկ չէի կրնար անցընել որ այնչափ պիտի մտերմանայինք ետքէն—ինծի կ'ըսեն Հիւսնի չավուշ. չէի՞ր ճանչնար զիս, տարօրինակ բան, այս քաղքին մէջ զիս չըճանչցող չկայ, շուկայէն անցած ատենս, մեծէն մինչև փոքրը, ամենքն ալ բարեւ կու տան, ամէն կողմէ սուրճի կը հրաւիրեն, բայց ես այնչափ ժամանակ չունիմ որ ամենքին ալ խաթրը չկոտրեմ:

Կարծեմ աւելորդ է ըսել թէ հակառակ Հիւսնի չավուշին յայտնած կասկածներուս, տուջի բողբոջին իսկ հասկըցած էի քօմիսէրի այս հրաւերին շարժառիթը: Երէկուան դէպքին համար էր, աս շատ պարզ էր. միայն սա պարզ չէր թէ ի՞նչ դեր վիճակուած էր ինծի այդ խնդրին մէջ և ահա այս մութ կէտն էր որ կը վախցնէր զիս: Բայց քիչ մը ետքը, երբ Հիւսնի չավուշ սիկարէթս ու սուրճս համատեսելէ յետոյ իր այնքան տեսական բարե-

կամութեան հիմքը դրաւ, թէն քիչ մը քօղարկեալ կերպով՝ բայց և այնպէս յայտնեց որ ես իբր վիայ կը կանչուէի: Ասոր վրայ սրտիս մուրճը բաւական մեղմացուց իր հարուածները. մտածեցի կ'երթամ տեսածս տեղնի տեղօք կը պատմեմ, ասով ինչ վնաս կրնայ հասնիլ ինծի, ընդհակառակը թերևս Առաքելին ալ օգուտ մը տամ:

Անմիջապէս գործերս կարճ կապելով ընկերացայ Հիւսնի չափուշին: Ճամբան բազմափաստակ ծերուկը քանի մը խոշոր դրուադներով պատկերացուց ինծի իր փառաւոր կեանքը, Մօսկօֆի պատերազմին մէջ իր կատարած անկարելի սխրագործութիւններէն սկսած մինչև իր արդի պաշտօնին անհնարին դժուարութիւնները: Իսկ ես, թէն անընդհատ հիացական բացագոհանշութիւններ կը յեղյեղէի, բայց ճիշտն ըսելով շատ քիչ բան կըցայ լսել, որովհետև միտքս այդ պահուն գիտ սպասող անծանօթին վրայ կը չարչարուէր:

Երբ վերջապէս սէրային ընդարձակ բակէն անցնելով շէնքին դռնէն ներս մտանք—վեր պիտի ելլենք—ըսաւ Հիւսնի չափուշ առաջին յարկին սանդուղները ցուցնելով: Բայց հագիւ ոտքս առաջին աստիճանին վրայ դրած էի, երբ մէկը փէշէս բռնեց.

—Է՛յ, մըր կը քշես այդ աղտոտ ոտքերով.

Սովորական տարագով թիւրք մը էր, ձեռքը գաւազանով մը, որու ծայրը սաղի փետուրներու փունջ մը կապուած էր: Առանց խօսելու ժամանակ տալու իր այդ տարօրինակ վրձինը հապճեպով թափ տուաւ կօշիկներուս վրայ ու ափը բանալով տասնոց մը պահանջեց: Նոր նկատեցի որ միևնոյն տեսակ գաւազաններով զինուած քանի մը հոգի կային դրան մօտ և Հիւսնի չափուշ բացատրեց որ ասոնք կապալով առած էին կառավարական շէնքին մաքրութեան հսկելու գործը: Մաքրասիրական և ելևմտական այդ կրկնապէս հանճարեղ թիւրք գիւտին առջև հիացած և զրպանս ալ մանրուք չունենալուս՝ տասնոցի տեղ քառասունոց մը տուի և առաջին յարկը ելանք:

Հոս սանդուղին գլուխը դնելու մը բանալով Հիւսնի չավուշ հանգիսաւոր բարեւ մը ղրկեց ներս և ինծի դառնալով՝

— Զօրպաճի, հոս կը հանգստանաս, մինչև որ քեզ կանչեն— ըսաւ ու ինք դարձեալ վար իջաւ:

Այս սենեակը, ինչպէս տեսքէն կը հասկնայ, հաստատութեան խոհով— օճաղին պիտի ըլլար: Մէկ անկիւնը կռթնած էր՝ սուրճի վիթխարի մրոտ օճախը, քովը հին սեղան մը սրճափայլ ջրով լի խոշոր տաշտով մը, ֆինճաններով, ճէզվաններով, նարկիլէներով, ալտոտ քուրջերով և այլ յարակից իրեղէններով բեռնաւորուած: Միւս անկիւնը հասարակ փայտէ տախտ մը, որու վրայ կիսովին ծալուած անկողին մը կը հանգչէր թերմնշ կապերտի մը մէջ փաթթուած, մօտը աղտոտ անտուկ մը. մէկ պատի երկայքին նստարան մը, որու վրայ յոգնած դէմքերով ու այլադան հագուստներով մարդերու շարք մը կ'օրօրուէր, իւրաքանչիւրն իր գլուխը աջակողմեան դրացիին ուսին հանգչեցուած: Իսկ ասոնց դիմացը խփրի մը վրայ դէմ առ դէմ ծալապատիկ նստած էին երկու փաթթոցաւորներ, որոնք երկիւղած լուսթեամբ մը խաղող ու պանիր կ'ուտէին:

Հազիւ ավրտ մը գտած էի, երբ խահվէճին, իր պաշտօնական հագուստէն աւելի մաշած դէմքով ծերուկ մը՝ մօտեցաւ.

— Զօրպաճի, շաքարով կը խմէք թէ պարզ.

Այդ տրամադրութեան և այդ մաքրադարդ մթնոլորտին մէջ ոչ շաքարովին ախորժակ ունէի և ոչ ալ պարզին, բայց և այնպէս մարդուկին ափը քառասունոց մը դնելով՝ պարզ մը ապսպրեցի և աչքերս փակելով դեղի պէս վար տուի:

Այդ ծակին մէջ մէկ ժամէ աւելի սպասել հարկ եղաւ: Շոգէն ու սրտնեղութենէս թերևս ճաթէի, եթէ ներսի կեանքը շուտով շահեկան ոգևորութիւն մը չըստանար: Սրճաղործին աշխատները անընդհատ կը մըտնէին ու կ'ըլլէին ձեռքերնին սուրճի սարքերով, զրա-

սենեակներու, ծառաներ կու գային որը նարկիլէ տանելու, որը սուրճ ապսպրելու և որն ալ ապտէսթի ըսրըզ լեցնելու, միևնոյն ատեն չմոռնալով առիթէն օգտուիլ և ոտքի վրայ իրենք ալ բաժակ մը սուրճ խմել փոխադարձաբար թարմ նորութիւններ հաղորդելով իրարու: Երբեմն ալ դուռը կէս մը կը բացուէր և բարձրաձայն անուն մը կը տրուէր, որու վրայ նստարանի շարքէն մէկը կը քակուէր, իսկ միւսները մոլտալով ու աչքերնին շփելով վայրկեան մը իրարու երես նայելէ յետոյ՝ բացուած տեղը անմիջապէս կը փակէին ու կրկին կը շարունակէին իրենց ալեկերպ ծածանումը: Վերջապէս իմ անունըս տրուեցաւ և իսկոյն վեր ցատկելով հետեցայ ոստիկանի մը, որ զիս վարի յարկը սենեակ մը առաջնորդեց:

Ընդարձակ սենեակ մըն էր, բակին վրայ նայող երկու մեծ պատուհաններով: Մէկ անկիւնը իրարու վըրայ զիպուած էին խոշոր մնտուկներ, որոնց անխուփ բերաններէն պաշտօնական թղթերու փոշոտ կապոցներ դուրս կը թափէին: Պատերը զարդարուած էին ոստիկանի հին համազգեստներով, սուրերով, գօտիներով ու զանազան մեծութեան մտրակներով: Միակ նշանը՝ որ ոստիկանական թանգարան մը կամ աւելորդարան մը մտած չէի, երկու զրասեղաններ էին, որոնցմէ մէկուն ետեւ դրազիր մը նստած էր, իսկ միւսին ետեւ քօմիսէրը: Քօմիսէր Օսման պէյը թէև դէմքով ծանօթ էր ինծի, բայց այդ պահուն բաւական պիտի դժուարանայի ճանչնալ զինք, եթէ ամխագոյն թաւ պեխերը և սեղանի տակ երկնցած տիտանական ոտքերը չըլլային: Ճակատը կարմիր թաշկինակով մը կապած էր, որու տակէն գետնախնձորի կեղևներ մինչև աչքերուն վրայ կը կախուէին: Աջ ձեռքը զլսուն նեցուկ տուած, ընկողմաննաժ էր թիկնաթոռին վրայ և ճակտին յարդարանքն ու ըռոջըս զրասեղանին վրայ շարուած գետնախնձորներ կը մատնէին, որ խեղբին պտուկը լաւ վիճակի մէջ չէր:

Քանի մը քայլ յառաջանալով գետնամած բարե մը տուի և կանգնեցայ:

—Հը, ի՞նչ կ'ուզես—մոլտաց առանց զիբքը փոխելու:

—Պէյ էֆէնտի, կանչած էիք զիս, ատոր համար եկած եմ:

—Ո՞վ ես դուն:

—Ծառանիդ Կարապետ Թորոսեան:

Ասոր վրայ ուժգին փնչելով շտկուեցաւ և սեղանին վրայէն թուղթ մը ջոկելով—հա, Ահմէտ աղա խանը վաճառական Թորոս օղլու Կարապետը դո՞ւն ես:

—Այո, էֆէնտիմ, ծառանիդ եմ:

Եւ պահ մը ձեռքի թուղթը կարդալէ ետքը:

—Խանութպան Մամաս օղլու Առաքելը կը ճանչնաս:

—Այո, պէյ էֆէնտի, կը ճանչնամ:

—Ո՞րչափ ժամանակէ ի վեր կը ճանչնաս:

—Տղայութենէ իվեր կը ճանչնամ:

—Ուրեմն լաւ բարեկամներ էք:

—Այո, տէր իմ:

—Իսկ Հաճիքէօյցի մօլլա Հասան էֆէնտին ալ կը ճանչնաս:

—Ո՛չ, այդ անունով անձնաւորութիւն մը չեմ ճանչնար:

—Ձեռ ճանչնար, տարօրինակ բան. բայց մենք քեզ իբր վկայ կանչած ենք, որովհետեւ երէկ, երբ Առաքել ըլլալէք շունը մօլլա էֆէնտիին հայհոյած է իր խանութին մէջ, դուն ալ հոն ներկայ գտնուած ես:

—Այո, երէկ Առաքելի խանութին մէջ ցաւալի դէպքի մը ականատես եղայ, բայց մօլլա էֆէնտին առաջին անգամ ըլլալով տեսայ հոն, անունն ալ մինչև հիմա չէի գիտեր:

—Է՛ լաւ, Առաքելը ինչո՞ւ հայհոյեց մօլլա էֆէնտիին:

—Ներեցէք, տէր իմ, Առաքելը ոչ մէկ հայհոյու-

թիւն չըրաւ, ընդհակառակը շատ մեծ քաղաքավարութեամբ ու քաղցրութեամբ կը վարուէր մօլլա էֆէնտինին հետ. բայց մօլլա էֆէնտին... քիչ մը... մօլլա էֆէնտին արդէն նախապէս... զրգռուած տրամադրութեան մէջ ըլլալուն... այդ տխուր դէպքին պատճառ եղաւ:

—Սյսինքն, խօսքին թիւքերէնը՝ պարզապէս ըսել կ'ուզես թէ յանցաւորը Առաքելը չէր, այլ մօլլա էֆէնտին:

— Ա...յո:

—Սյսինքն մէկ խօսքով ըսել կուզես թէ Առաքել կոչուած քնափրկ սրիկան մօլլա էֆէնտինն աւելի լաւ մարդ է:

— ° ° °

—Ինչո՞ւ լռեցիր, պատասխան չտա:

—Պէյ էֆէնտի ես այդ տեսակ յանդուգն վճիռ մը չեմ կրնար արձակել. ինչպէս քիչ առաջ ըսի, մօլլա էֆէնտին ես չեմ ճանչնար, կրնայ շատ ազնիւ ու պատուական մարդ ըլլալ, բայց երեկուան դէպքին մէջ... իրաւունքը իր կողմը չէր:

—Ասոր նայէ, ասոր նայէ — դարձաւ քօմիսէր պէյը իր քարտուղարին հեգնական ծիծաղով մը — դիմացս կանդներ փաստաբանութիւն կ'ընէ. մօլլա էֆէնտին կրնայ լաւ մարդ ըլլալ եղբր, բայց ինք չի ճանչնար եղբր, կարծես թէ դեռ վիճաբանելիք խնդիր մը ըլլար պատկառելի, սուրբ մօլլայի մը և... հայ խանութպանի կտորի մը համեմատութիւնը. հա, հա, հա, հա. ինծի նայէ, դուք շատ երես էք առեր, ձեր չափը վաղուց մոռցեր էք, բայց ես ձեզի նորէն այնպէս մը սորվեցնեմ ձեր չափը, որ յաւիտեան չմոռնար:

Եւ գլխով նշան մը տուաւ քարտուղարին, որ անմիջապէս դուրս ելաւ, իսկ ինք գլխուն կապը քակելով գետնախնձորի կեղևները նորոգել սկսաւ:

Քիչ մը ետքը քարտուղարը դուռը բացաւ և ներս մտան երէկուան մօլլան ու Առաքելը:

Մօլլան բուռն շարժումներով քովէս անցաւ և խո-

Ժող ահնարկով մը զիս չափելէ ետքը գնաց նստաւ քօմիսէրին քով, որ արդէն տեղէն ելած և աթոռ մը պատրաստած էր: Իսկ Առաքելը, ճի մի հարցնէք, խեղճ մարդուն տեսքը պարզապէս աղիքներս գալարեց: Գլուխը անագին փաթաթի մը մէջ կորսուած, աջ թևը անբնական կերպով կողին փակած, դողդոջ քայլերով և ողորմ ու պաղատագին նայուածք մը ուղղելով երեսիս, քիչ մը անդին գլուխը կախեց ու կանգնեցաւ:

—Հա, ատամիդ ցաւը դեռ չանցաւ, ըէլաթում, աս որչափ բան ես փաթթեր գլուխդ, կարծես փրաւորուած ըլլաս և ան ալ թնդանօթի ուռմբով—մոռնեց քօմիսէրը երկու ձեռքով փառահեղ պեխերը շտկելով և զիս ցուցնելով հարցուց՝

—Ա՞ս է քու վկայ:

—Այո, պէյ էֆէնտի—թոթովեց Առաքելը խղճուկ ձայնով:

—Աս երէկ հո՞ն էր—դարձաւ քօմիսէրը հօճային:

—Կարծեմ... այո, այո հոն էր պատասխանեց հօճան դարձեալ խոշոր ահնարկ մը սևեռելով ինծի:

—Է՛, ուրեմն շատ աղէկ. հիմա ծայրէ ծայր և կատարեալ ճշգրտութեամբ պիտի մատուցես ինչ որ տեսած ես—հրամայեց Օսման պէյ խօսքը կրկին ինծի ուղղելով—բայց լնւ ուշադրութիւն ըրէ, կատարեալ ճշգրտութեամբ կ'ըսեմ, կը հասկնաս:

—Այո, էֆէնտիմ, շատ լաւ կը հասկնամ և վստահ եղէք որ զուտ ճշմարտութիւնը պիտի ըսեմ—պատասխանեցի խոնարհութիւն մը ընելով:

—Բայց ոչ հայու ճշմարտութիւնը, աս ալ հասկցմը—աւելցուց խոշոր ցուցամատը սպառնազին ձօճելով—այլ բուն ճշմարտութիւնը, այն ճշմարտութիւնը, զոր հօճա էֆէնտին արդէն յայտնած է. եթէ տարբեր բան պատմելու ըլլաս 32 ատամիդ կոկորդէ կը թափեմ: Սկսէ նայինք:

Եւ սկսայ մանրամասնօրէն սրտամեղ ամբողջ դէպքը, բնականաբար կարելի եղածին չափ մեղմ բացատրութիւն-

ներ փնտռելով հօճա էֆէնտին վարմունքը նկարագրելու համար:

Պատմութիւնս քանի կը յառաջանար, հօճան ալ նոյնքան տւելի կ'անհանգստանար իր աթոռին վրայ, իսկ քօմիսէրը, որ ճակատին գետնախնձորները շփելով գէմքի գծկամակ ծամածռութիւններ կ'ընէր, յանկարծ ընդհատեց զիս.

— Ինծի նայէ, կոյր ես, չե՞ս տեսներ որ գլուխս կը ցաւի. քու դատարկարանութիւններդ լսելու ես ոչ կարողութիւն ունիմ և ոչ ալ ժամանակ. կարճ կապէ և միայն սա հարցումիս պատասխան տուր. աս հայր ի՞նչ հայհոյութիւն ըրաւ հօճա էֆէնտին:

— Հայհոյութիւն... բայց պէյ էֆէնտի կարծեմ քիչ առաջ ըսի որ ես հայհոյութիւն չեմ լսած:

— Լիրբ անհաւատ, ի՞նչու սուտ կը խօսիս, մօրուքիս չհայհոյեց— պայթեցաւ վերջապէս մօլլան և տեղէն վեր ցատկելով յարձակողական դիրք մը առաւ:

— Մի յուզուիք հօճա էֆէնտի, կանգնեմ մի յուզուիք, ի՞նչ կարեւորութիւն ունի ատոր վկայութիւնը— միջամտեց քօմիսէրը և թեէն բռնելով դարձեալ տեղը նստեցուց մօլլան:

Այդ միջոցին բայց պատուհանէն ձայն մը լսուեցաւ— պէյ էֆէնտի կը հրամայէք:

Թիւրքի գլուխ մըն էր, որուն քօմիսէրը ձեռքի նշանով մը պատասխանեց և դուռը բացուելով շրջուն պաղպաղակալածառ մը ներս մտաւ իր ամբողջ կարգուսարքով:

— Էսա ժամանակին եկար Էօմէր— ըսաւ քօմիսէրը— գլուխս կը ցաւի, առատօրէն երկու պնակ լեցուր, մէկը հօճա էֆէնտին, միւսը ինծի:

Պաղպաղակին առաջին դգալը արդէն մեղմեց հօճային զայրոյթը, իսկ քօմիսէրը իրարու ետեւ քանի մը խոշոր դգալ կլլելէ յետոյ ինծի դառնալով.

— Դուն քու կեանքուրի խելքովդ սուտ վկայութեամբ իբր թէ բարեկամդ պիտի ազատես, բայց նորէն կ'ըսեմ,

Նպատակիդ չհասնելէ զատ՝ այս ընթացքով դուն ալ իշու արքայութեան պիտի արժանանաս: Հիմա կորսուէ՛ գնա, քեզի մտածելու ժամանակ կուտամ, որպէսզի գալ անգամ նոյն սուտերը չկրկնես. կը հասկնաս, քու ըսածըդ ալ, ըսելիքդ ալ արդէն մէկ փարայի կարևորութիւն չունին, խնդիրը շատ պարզ է: Ուրեմն գնա կորսուէ՛, մինչև որ նորէն կանչեմ քեզ:

Կրկին գետնամած բարե մը տալով և Առաքելին հետ դարձեալ ցաւագին ակնարկ մը փոխանակելէ ետքը, դուրս ելայ:

Երկրորդ հրաւերը չուշացաւ: Հազիւ երեք օր անց Հիւսնի չափուշը վերստին սիկարա մը ու սուրճ մը խմեց վաճառանոցիս մէջ և իր անսպառ կենսագրութենէն նոր դրուագներ պատմելով՝ առաջնորդեց զիս քօմիսէր պէյին քով:

Միևնոյն սենեակին մէջ հարցաքննութիւնը նոյն ուղղութեամբ կրկնուեցաւ, միայն թէ այս անգամ գործը հանդիսաւոր կերպարանք մը առած էր: Մօլլային հետ ուրիշ երեք անձանօթ մարդեր ալ կային, որոնք ապշեցուցիչ մանրամասնութիւններով ճոխ վէպ մը պատմեցին, որուն վերջաբանը այն էր, թէ Առաքելը ամենաազտոտ բացատրութեամբ մը հայհոյած էր հօճա էֆէնտիի նուիրական մօրուքին: Առաքելը նոյն սրտաճմլիկ վիճակին մէջ էր, աւելի նիհարցած ու տժգոյն, սակայն այս անգամ չէին թողած որ գլուխը կապէ, և ոչ իսկ ակռայի ցաւի պատրուակին տակ, որովհետեւ հօճան ըսկիզբէն իվեր կ'ուրանար ծեծի խնդիրը: Իսկ այս վերջինս հարցաքննութեան ամբողջ ընթացքին մօրուքը անբնական կերպով վեր կը բռնէր, անշուշտ աւելի ուժ տալու համար հայհոյանքի ամբաստանութեան: Պահ մը համարձակեցայ պնդել որ զէպքի միջոցին Առաքելի խա՛նութին մէջ ինծմէ՛ գատ դուրսէն մարդ չկար, հետեւաբար ուրիշ վկայ չէր կրնար ըլլար. բայց այս անխօհեմութեանս միակ արդիւնքը այն եղաւ, որ հօճան ու իր վկաները կատաղի լուտանքներով վրաս վազեցին,

սակայն քօմիսէրը ուժգին աստակ մը իջեցնելով երեսիս, փրկեց զիս անոնց ձեռքէն: Ի վերջոյ քօմիսէրը յայտնեց, որ դործը հարցաքննիչ դատաւորին պիտի յանձնուի, որովհետեւ հօճա էֆէնտին դատ կ'ուզէր բանալ:

Այս նոր սպառնալիքին տակ սենեակէն դուրս ելած էի, երբ Հիւսնի չավուշ թեւս բռնելով խանվէ—օճախին տարաւ զիս և հոն անկիւն մը քաշելով սկսաւ բացատրել թէ ի՞նչ մեծ փորձանքներ պիտի գային թէ Առաքելին և թէ իմ գլխուս, եթէ խնդիրը դատարանի առջև ելլէր: Ու զիս պահ մը սարսափի մէջ թողնելէ ետքը յայտնեց, որ ինք կրնայ մեզ այդ բոլոր երևելի և աներևոյթ փորձանքներէն ազատել, եթէ պզտիկ գումար մը, 15 ոսկի, իր տրամադրութեանը տակ զնէինք: Պատասխանեցի թէ խնդիրը Առաքելէն կախուած է, քանի որ ան է ամբաստանեալը: Ասոր վրայ զնաց Առաքելն ալ բերաւ և մեզի սպառնացող վտանգները անոր ալ մէկիկ մէկիկ բացատրելէ յետոյ պահ մը մեզ առանձին թողուց, որպէսզի խորհրդակցինք:

Կը կարծէի թէ Առաքելը վայրկեան մը իսկ չպիտի վարանէր փրկութեան այդ առաջարկը ընդունելու: Բայց Հիւսնի չավուշը 4—5 անգամ գնաց եկաւ և գեռ մեր խորհրդակցութիւնը չէր վերջացած:

—Ծօ աղբար, ի՞նչ կ'ըսես, ի՞նչպէս տամ 15 ոսկին, ինծի համար զրամագլուխ մըն է:

Այս էր իր միակ պատասխանը, զոր անդադար կը յեղեղէր կողկողազին ծունկերը ծեծելով: Վերջապէս պատրաստականութիւն յայտնեցի 3 ոսկին ես իմ քսակէս տալու, սակայն ասոր ալ միակ արդիւնքը այն եղաւ, որ իր յանկերգին 15 թիւը 12-ի իջեցուց և այս անգամ ալ կը կրկնէր.

—Ծօ աղբար, ի՞նչ կ'ըսես, ի՞նչպէս տամ, 12 ոսկին ինծի համար զրամագլուխ մըն է:

Ա՛լ բարկացած ու յուսահատած դուրս ելայ և տուն գնացի:

Յաջորդ առաւօտ վաճառանոցիս մէջ նստած միտ-

քըս կը տանջէի, դէթ ես իմ պոչս ազատելու միջոց մը գտնելու համար: Ի՞նչ ընել: Որ կողմը կը դառնայի, չէի կրնար լուծել այն կոյը հանգոյցը, որով իմ պոչս կապուած էր Առաքելի պոչին: Յիմարը չէր ուզեր 12 ոսկիի զոհողութիւնը յանձն առնել իր կաշին փրկելու համար, իսկ ես ալ այդ պատճառով աւելի կը դժուարանայի ամբողջ գումարը քսակէս վճարելու: Գործերնիս թերեւս այս աստիճան չգէշնար, եթէ սկիզբէն խելք ըրած ու քանի մը թիւրք վկաներ գտած ըլլայինք: Այդ կարգի վկաներ վարձել մահմետականի մը դէմ թէն դժուար, բայց անկարելի չէր: Դատարանի դրան առջև փոքրիկ, աղտոտ սրճարանի մը մէջ միշտ նստած են մարդիկ, որոնց արհեստը վկայութիւնն է: Ամէն բանի մասին կրնան վկայել, սովորական վկայութեան նուազագոյն սակը 5 դր. է, ինչպէս կը տեսնէք ոչ շատ սուղ, իսկ քրիստոնեայի ինպատ մահմետականի դէմ վկայելու համար այս սակը կը բազմապատկուի խնդրին մեծութեան և քրիստոնեայի քսակին ծանրութեան համեմատ: Բայց մենք այս ամենատես և ամենուրեք մարդերէն ալ չէինք կրնար օգտուիլ, որովհետեւ արդէն յայտնած էի, որ ինծմէ գատ մարդ չկար խանութը գէպքին սկանառես:

Տակաւին այս մտատանջութեան մէջ էի, երբ ոստիկան մը մտնելով տոմսակ մը յանձնեց:

Առաքելէն էր: Երէկուան սպառնալիքները կերեկի թէ բանտի գիշերուան մէջ դիւային համեմատութիւններ առնելով յաղթանակը տարած էին 12 ոսկիի դրամագլուխին վրայ: Թշուառականը վերջապէս կ'ընդունէր առաջարկուած միջոցը, սակայն պայմանով որ... 5 ոսկին ես տայի: Այս պայմանը բաւական զայրացուց զիս, բայց անտով զբաղուելու ստենք չէր. անմիջապէս վաղեցի Հիւսնի չափուշը գտայ:

Այս անգամ ալ աս տարբեր երգ կ'երգէր: Յայտնեց որ գործը արդէն հարցաքննիչ դատաւորին յանձնուած էր և այլեւս անկարելի էր առջև առնել: Բայց քիչ մը ետքը աւելցուց որ բոլորովին ալ անկարելի չէ,

որ ինք դարձեալ կրնայ խնդիրը փակել, եթէ միայն նախկին գումարը 20-ի բարձրացնենք: Որովհետեւ հարցաքննիչ դատաւորը Պոլսոյ իրաւաբանական վարժարանը նոր աւարտած երիտասարդ մը ըլլալուն, նիւթապէս գեռ չէր պարարտացած և 5 ոսկիով կարելի էր ձեռքը իւղել:

Առաքելս քիչ մնաց կաթուած իջեցնէր, երբ այս նոր լուրը իրեն հաղորդեցի: Քանի մը ըրալէ անբարբառ մնաց և երբ վերջապէս բերանը բացուեցաւ, փոխանակ պատասխան մը տալու, բռունցքով գլուխը կը հարուածէր սանտրը և մասնաւորապէս մօրուքի սանտրը հնարողին ալ, շինողին ալ եօթը պորտը հայհոյելով և իրեն ծանօթ բոլոր սուրբերու անունով կ'երդնուր այլևս սանտր չծախել: Իմ ըստինս 5 ոսկիի բարձրացնելով հազիւ կըցայ զինք համողել, որ մնացած 15 ոսկին տայ և նոյն օրն իսկ զբամը յանձնեցի Հիւսնի չավուշին:

Չորս օր ամբողջ լուր չելաւ գործէն և Առաքելը բանալէն տոմսակ տոմսակի ետեւէ կը զրկէր իր ամբողջ մողձը իմ վրաս թափելով, որ անխելքութեամբ 20 ոսկի ալ ակռայի վարձք տուած էի շներուն: Սակայն հինգերորդ օրը կոչնագիր մը հասաւ հարցաքննիչ դատաւորէն և այդ ակռայի վարձքին կատարած հրաշքին վայելքը ամեն բան մոռցուց:

Մօլլան, իր վկաները, Առաքելը ամենքն ալ հոն էին երբ ներս մտայ: Այս անգամ Առաքելը աթոռի մը վրայ բազմած էր և ինծի ալ իսկոյն նստելու հրաման տրուեցաւ: Հարցաքննիչ դատաւորը, վայելուչ երիտասարդ մը կրօնական վերջին նորաձեւութեամբ հագուած՝ նուրբ թիւրքերէնով և մեծ քաղաքավարութեամբ դարձեալ ընդհանուր հարցաքննութիւն մը կատարեց, իսկ քարտուղար մը եղէգի արագ ճգճոցներով իւրաքանչիւրիս խօսածը կ'արձանագրէր: Բայց պատմութիւնը այս անգամ շատ համառօտուած էր և մօլլային վկաները իրենց վկայութեան տարօրինակ փոփոխութիւն մը տուած էին, որու խորախորհուրդ իմաստը վերջը միայն կըցայ հասկնալ: Առաքելը այս անգամ հօճա

էֆէնտիին ոչ թէ մօրուքին հայհոյած էր, այլ մօրուքին միմիայն մէկ թելին:

Կարճառօտ հարցաքննութիւնը վերջանալէ յետոյ, հարցաքննիչ դատաւորը խնդրեց որ պահ մը դուրս ելլենք: Դուրսը միջանցքին մէջ հօճա էֆէնտին ժպտալի բարեւով մը մօտեցաւ մեզի և ձեռքը Առաքելի ուսին դնելով ըսաւ.

—Ծօ, գնա աղօթք ըրէ որ ինծի պէս բարի մարդու մը հանդիպեցար, թէ չէ գիտէս ինչ կ'ըլլար վիճակըդ և բերանը Առաքելի ականջին մօտեցնելով աւելցուց—ալ վաղը խանութդ որ գամ, հարկաւ նոր սանտր մը կը նուիրես:

Առաքել սանտրի անունը լսելուն թէ և ցնցուեցաւ ու քայլ մը ետ գնաց, բայց և այնպէս խոստացաւ այդ նուէրն ալ ընել: Քանի մը բոպէ ետքը կրկին ներս կանչուեցանք և հարցաքննիչ դատաւորը ձեռքը թուղթ մը առնելով հիանալի առողջանութեամբ ու հանդիսաւոր ոճով մը կարգաց իր վճռադիրը, զոր իբր թանկագին յիշատակ մը պահած եմ մինչև այսօր և ուրկէ հետևեալ էական կտորը առաջ կը բերեմ թարգմանաբար, որչափ որ կարելի է թարգմանել անթարգմանելի հրաշակերտ մը:

—«Նկատելով որ, ըստ իր վկային՝ ամբաստանեալը հօճա էֆէնտիի մօրուքին համար միայն աղտոտ է ըսեր է, ինչոր իսկապէս հայհոյութիւն չի կրնար համարուիլ և միւս կողմէ նկատելով որ ամբաստանիչին վկաները թէ և նախապէս ոստիկանութեան առջև կը վկայէին թէ խանութպան Առաքելը հօճա Հասան էֆէնտիի մօրուքին հայհոյած է, սակայն ետքէն իրենց արգարացի յուզումը հանդարտելով և յիշողութիւննին աւելի պարզուելով հարցաքննիչ դատաւորին առջև իրենց նախկին վկայութիւնը սրբազրելով վկայեցին որ ամբաստանեալը ամբաստանիչին ոչ թէ ամբողջ մօրուքին, այլ մօրուքին միմիայն մէկ թելին հայհոյած է:

«Նկատելով որ ամբաստանեալը հայհոյանքը արտաբերելէն անմիջապէս յետոյ նախատեալին արգարացի

զայրոյթին հետևանօք իրեն արժանի պատիժը արդէն մասամբ մը կրած է:

«Նկատելով որ այդ պատիժը տրուած միջոցին ըստ ամենայն հաւանականութեան մօրուքին հայհոյուած թելը կրնայ փրթած ու ինկած ըլլալ, որով բնականաբար հայհոյութիւնն ալ հետը միասին ինկած կ'ըլլայ:

«Նկատելով վերջապէս որ ամբաստանեալը քանիցս աչքերը անկեղծ գղջումի արցունքով լեցուած և պաղատազին ներողութիւն խնդրած է ամբաստանիչէն և հօճա էֆէնտին ալ իր նուիրական աստիճանին և առաքինազարդ անձին վայել զթասրտութեամբ ու վեհանձնութեամբ ներել կ'ուզէ:

«Հարցաքննիչ դատաւորը խնդիրը մանրամասնօրէն քննելէ յետոյ այսպիսով փակուած կը նկատէ զայն և ամբաստանեալն ալ ազատ կ'արձակէ առժամանակեայ ձերբակալութենէն»:

Առանձար

Դ Է Պ Ի Ա Ն Ի

Ճանապարհն այսուհետև աւելի տանելի է, թէև գրաւիչ ոչինչ չունի. լերկ, անհամբոյր բլուրներ են չորս. կողմներս և Ախուրեանն է մեր մշտական ուղեկիցը, որ հոսում է միշտ անդունդների միջից, միշտ զալարուն ու անձայն: Դաւադրական մի բան կայ նրա ժայռոտ ափերի խորութեան, նրա յարատև լռութեան մէջ:

Ես երեակայում եմ ձմերային մի գիշեր, մի բուր-բուրան գիշեր, երբ փոթորիկը ձիւնը լցնում է բոլոր խոր ու ձորերը, ծածկում է բոլոր նշաններն ու շաւիղները, Ախուրեանի անդունդը հեռուից դառնում է մի գաւաճան հարթութիւն, ուր անշուշտ գետը դարան մտած զազանի պէս սպասում է մոլորութեամբ ճամբորդին:

Այս մոռացութեամբ ու կիսավայրենի երկրում, ուր տէրը միայն բնութիւնն է, և մարդը ոչինչ չի անում կեանքի տանելի պայմաններ ստեղծելու համար, ուր ճանապարհները քամիներն ու հեղեղներն են շինում և ոչ մարդկային ձեռքը, անզնդախոր Ախուրեանը մի ուղեկից է, որից միշտ կարելի է վախենալ:

Փոքրիկ պտոյտ ենք գործում, դէպի ձորն ենք իջնում, և Ղօշափանքը մեր առաջն է իր շէն և աւեր եկեղեցիներով: Դիմում ենք դէպի այն հին տաճարը, որ այժմ գիւղի աղօթատունն է: Միաբանական մի անցած կեանք այստեղ դեռ թողել է իր հետքերը: Բակի շուրջը տակաւին շարուած մնում են վարդապետական խցերի մի ամբողջ շարք, որոնք բոլորն էլ դատարկ են:

Բուն եկեղեցին մտնելու համար պէտք է անցնել մի կիսախաւար նախազաւթից, որ շինուած է արաբական սճով՝ մանաւանդ նրա կեղրոնի վրայ կախուած բաղմանկիւնի կոնաձև զմբէթը՝ ներսից ողկուղաձև քանդակներով զարդար-

*) Տես «Մուրճ» 1.

ուած: Այստեղ սիւներ կան, հաստաբեւտ ու բարձր, որոնց նմանները ես տեսել եմ միայն Հոռմի ֆորումում: Եւ այդ սիւները միակտուր քարից են. գեղեցիկ չեն նրանք, այլ ուժեղ և գոռոգ: Կոլոսներ են սրանք և կարծես յաւիտենականութեան համար կերտուած, բայց ժամանակը աւելի հզօր է հանդիտացել և ձախակողմեան սիւնը արդէն ճաքել է վերից վար: Բարեբախտաբար ճարուել է մի խնամոտ ձեռք որ երկաթեայ հաստ գօտիով նրա մէջքը պրկել է և այս հետաքրքիր շէնքը վերջնական աւերածից աղատել:

Դրանից բացի՝ Ղօշավանքի եկեղեցու բակում միաբանական խցերի յետևում ծակծկոտած ու թափթփուած կոուրների տակ կայ մի հրաշալիք, արտրական ու հայկական արուեստի մի գրաւիչ ծնունդ:

Ներս ենք մտնում: Տաճուկ մթնոլորտը լցուած է փթած դարմանի և խոտի անախորժ հոտով: Երեք քառակուսի դահլիճներ յաջորդում են իրար. նրանցից առաջինը վերածուած է յարդանոցի. խոտի մի ահագին դէզ բռնում է նրա մեծ մասը. տեսնելու քիչ բան կայ, շտապով անցնում ենք նայելու միւս երկու դահլիճները. ամենից մեծը և ուշագրաւը վերջինն է: Չորս կեդրոնական և տասներկու միջնապատեայ սիւների վրայ կախուած են տասն կամարներ՝ կազմելով երեք կարգ սիւնազարդ սրահներ: Առաստաղը հէնց կեդրոնում կոնաձև գոգնում է, աստիճանաբար նեղանալով դէպի վեր: Այստեղ էլ տերևաձև քանդակներ վարպետօրէն ու ճաշակով իրար խճողւած, մի սիրուն փունջ են կազմում վերևում: Ոճը արաբական է հայկականին խոտն: Կամարները կեդրոնում նեղանում են էլիպսի ձևով: Սիւները բարակ են ութանկիւնի նուրբ գծերով, միայն կեդրոնականներն են կոլոր: Չնայելով որ շէնքը բարձր չէ, կամարների և յատակի մէջ տարածութիւնը փոքր է, այնուամենայնիւ ամբողջի տպաւորութիւնը չափազանց թեթև է ու տեսքը խիստ գրաւիչ: Ջարմանալի է, թէ այս ծայրայեղ անտէրութեան ու լքման մէջ ինչպէս դեռ կանգուն է մնացել այս հրաշակերտը: Կտուրի մի չնչին մասն է միայն թափուել, մնացածն ամբողջ է, չնայելով՝ որ ոչնչով պաշտպանուած չէ, անձրևների և ձեռն առաջ: Ո՛չ մի խնամք, ո՛չ մի ուշադրութիւն. միայն երբեմն այցելուներն են գալիս, նայում, փոշոտ, խոնաւ պատերի ու սիւների վրայ անունները գրում ու անցնում, թողնելով որ ժամանակը կատարեալ դարձնի տւերածի գործը:

Ջայռոյթի, ցաւի և մանաւանդ ամօթի մի բուռն զգացմունք համակում է մարդուն և ստիպում շուտով դուրս փախ-

չել չտեսնելու համար առաջին սրահում կուտուած խոտի անագին դէզը, որ տգիտութիւնը, յանցագործ ու բռն յիմարութիւնը տնկել են այստեղ՝ որպէս ամօթալի խորհրդանշան մեր հայրենի յիշատակարանի արտասուելի կացութեան: Դժուար էր աւելի ծանր կերպով վիրաւորել մեր նուիրական անցեալը, աւելի բիրտ կերպով անարգել հայրենի արուեստը, ցեղական հանձարը: Վերից կախուած են գեռ ստալակախիտի ձևով հոյսակալ քանդակները և նրանցից վար այս գարշահոտ դէզն է: Այս հրէշաւոր հակասութիւնը, այս այլանդակ աններդաշնակութիւնը հոգի է ցաւեցնում:

Ի՞նչ է այս սակայն, պալատ, կաթողիկոսարան, արքայական ապարանք... մի գիտէ: Մեր երէկն ու այսօրը մինչև այժմ անկարելի եղաւ կապել իրար, յամենայն դէպս անկասկած է, որ այս սիրուն կամարների տակ, այս գեղեցիկ քանդակներից ներքև, մի օր, գլուխներ են խորհել, որոնց առաջ պալատները յարգանոցի վերածողի սերունդը մի ոչնչութիւն է: Այստեղ գուցէ մի ամբողջ երկրի բարձրագոյն միտքն է գործել, նրա հասարակական, քաղաքական և հոգևոր կեանքի առանցքն է դարձել: Սրբատաշ քարերն ու կամարները համր են, կեանքը մեռել է վաղուց և այն օրուանից գեղարուեստը ամեն օր պղծում, անարգում է և մեռնում՝ մաս-մաս: Եւ այս ցուրտ, գերեզմանային ամայութեան մէջ բազմել է այս խոտի դէզը, նոյնքան թանձր, ու նոյնքան բորբոսնած, որքան նրա շուրջն ապրող մարդու միաբը:

Վհատեցուցիչ է մտածել, որ մի հատիկ այդպիսի շէնքը բաւական է մի ամբողջ էպոխայի արուեստը փրկելու համար և մենք այդպէս արհամարհում ենք նրան: Գանձեր ունենք՝ և աղքատ ենք, գեղարուեստ ունենք՝ և բիրտ ենք ճաշակով: Այս վաւերում, ասում են վարդապետ կայ, մենք չտեսանք նրան. ի՞նչ է անում այդ սևագլուխը. նրա գիտութեամբ է պալատը յարգանոցի վերածուել անշուշտ: Էլ ինչո՞ւ համար է նա այստեղ, աւերակների վրայ առանց նրան էլ բուերը կարող են «վճռ վճռ» անել: Մայր Աթոռ՝ հայրենի յիշատակարանները իր պաշտօնեաների խնամքին յանձնելիս, նրանց վրայ կրկնակի պարտք պիտի դնի, հսկել, որ եղածը անաղարտ ու մաքուր մնայ և հնար եղածին չափ նորոգել աւերուածը: Եթէ աղքատային կրեստները անկարող են ըմբռնել՝ թէ, ի՞նչ է նշանակում մի ժողովուրդի բարոյական մեծութիւնը համար սեփական գեղարուեստը, և չեն հոգում որ հայրենի յիշատակարանները կանգուն մնան, իւրաքանչիւր վանքայր վարդապետ այցելութիւնների համար իրաւունք ունի փոքրիկ հարկ սահմանել հոգևոր

կեղերոնական իշխանութեան թոյլտուութեամբ և վերահսկողութեամբ: Այդ գումարը պէտք է գործադրուի յիշատակարանների պահպանութեան, հնարաւոր վերանորոգութեան վրայ: Սա մի սովորութիւն է, որ գործադրուած է համարեա բոլոր քաղաքակիրթ երկրներում: Խտալիայում իւրաքանչիւր միւլէ կամ հետաքրքիր աւերակ այցելելիս անուազն վերցնում են 1—2 ֆրանկ. Հռոմում ֆորումի փորուածքները տեսնելու, Նեապոլում Պոմպէի աւերակներն այցելելու համար երկուսական ֆրանկ է պահանջուած: Մինչև իսկ Վեզուվի հրաբուխը տեսնելու համար չորս ֆրանկ հարկ է սահմանուած:

Յիշում եմ Շիլեօնի զոհակը Շվէյցարիայում, Հեման լճի ափին: Իւրաքանչիւր ճանապարհորդ Շվէյցարիայով անցնելիս պարտք է համարում այցելել Բոնիվարի բանտը, վճարելով մուտքի համար մի ֆրանկ, բացի այլ ծախսերը որ նա ստիպուած է անել գնելով զոհակի մինիատուրան ներկայացնող փոքրիկ զարկեր, նկարներ, կարտեր և այլն: Մի ամբողջ յանձնաժողով կայ, որ հսկում է այդ զոհակի բարեգարգութեան վրայ և մի ճարտարապետ անընդհատ կատարում է հարկ եղած նորոգութիւնները: Ամբողջ Շվէյցարիան է հպարտ իր Շիլեօնով, զարմանում են, երբ ճանապարհորդը ուշանում է այցելել այդ զոհակը. և սակայն լինէ է այն՝ համեմատելով մեր Դոշաւանքի այս սքանչելի ապարանքի հետ, որ պահապան վարդապետը անհրաժեշտ է գտել յարգանոցի վերածել:

Ինչո՞ւ չյիշել այստեղ և մեր պատմական, մեր հին ազգային ցաւը. «օտարի ճրագը» ասացուածքը հայը հէնց իր համար է ստեղծել. մենք սովոր ենք արհամարհել մեր սեփականը, մեր ունեցածը: Մեր փառքն ու մեծութիւնը, մեր գեղարուեստն ու գիտութիւնը, մեր գրականութիւնն ու մեր պօէզիան մենք միշտ արհամարհել ենք և գերադասել օտարինը. «օտարի ճրագներ ենք», առատաձեռն, մեծահոգի՝ օտարի համար, օտարի տներում, գծուծ ենք քարասիրտ ու բիրտ, երբ պէտք է հայրենի երկրի բարօրութեան և յառաջադիմութեան համար զոհեր յանձն առնել: Ես հաւատացած եմ, որ Շիլեօնի ողորմելի, անհետաքրքիր զոհակը տեսնելու համար տասնեակ ֆրանկներ ծախսող հայը կուէկները կը խնայի մի հայրենի աւերակ այցելելու կամ նրա վերանորոգութեանն օժանդակելու համար:

Օտարի ճրագներ ենք...

Գիւղից վար, ձորակի մէջ, Ախուրեանի ափին դարձեալ եկեղեցիներ. այնտեղ է նաև Աշոտ Ողորմածի դամբարանը: Վար ենք իջնում մի կեղտոտ արահետով. ամայի ձոր է. ոչ մի ծառ անգամ. ջրի ափերը լերկ են: Վեր-վար մեծ

ու փոքր քարեր են միայն: Ձորի լանջի վրայ կանգնած է մի մոլորուած՝ դժգոհ գոմէշ և իր լայն կոկորդի բոլոր ուժով տնքում է ու մոնչում: Նրա անախորժ ձայնը տարածւում է ձորի և աւերակների վրայ գոռ արձագանքներով և էլ աւելի անհաճոյ դարձնում ընդհանուր պատկերը: Եկեղեցիները, որոնք ցցուած են մի մերկ թմբի վրայ, հեռուից միայն շէն են թւում. մօտիկից նրանց աւերածը անդարձ է, կտուրները թափուած, պատերը կիսով չափ խորտակուած: Նրանց շրջապատը անասունների կայան է և տարիների աղբ է դիզուած: Ահա այստեղ է և Աշոտ Ողորմածի յաւիտենական հանգստարանը, մի անշուք, աւերակ դամբարան: Ո՛չ մի դարդ, ո՛չ մի քանդակ, բացի մի քանի անշնորք հայ տառերից, որոնք կազմում են մեծ թաղաւորի անունը: Արքայական ոչինչ չի մնացել այս դամբարանի վրայ: Ողորմած թաղաւորի նուիրական շիրիմը նոյնպէս ամենամանողորմ անարդանքի է ենթարկուած:

Հեռանում ենք, վերադառնալով ընդհանուր ձորն ի վեր գիւղում մի պտոյտ կատարելու համար: Հայ գիւղը Շիրակում... Դա մի կատարեալ անախորժնիզմ է, մի կսկծեցուցիչ երեոյթ: Ես շատ եմ տեսել հայ գիւղեր, բայց Շիրակի՛նը... Նա կարծես քարացել է դարերից ի վեր ճնշող խաւարի ծանրութեան տակ: Տները թէև էլ գեանափոր չեն, ինչպէս Քսենոֆոնի տեսածները, բայց շատ էլ չեն տարբերւում նրանցից: Բոլորն էլ ձիւղած տեսք ունին և շատ քիչ են բարձրանում գետնի երեսից: Եւ այս աղբը... ո՞վ է այսքան աղբ հաւաքել այս գիւղում. թւում է թէ առանձին աշխատանք է գործ դրուել փողոցները, տների շուրջը, պատերը, ցածրիկ կտուրները որքան կարելի է աւելի ազտեղելու համար: Անձրեւ այդ աղբից կը պատրաստի մի զգուելի, բազմագոյն և գարշահոտ շաղախ. իսկ այժմ չորային է և անասունների արտաթորութիւնները, փըթած յարդի մնացորդը, փոշի, մոխիր, խիճ խառնուած իրար, թանձր շերտով ծածկել են ամեն ինչ: Քայլում ես և կօշիկներով ակօս ես բայ անում քո յետևից:

Տները մեծ մասամբ բակեր չունին. նրանց դռները բացւում են հէնց այս աղբի, այս գարշանքի ծովի վրայ. թեթեւ քամին բաւական է, որ փողոցներից այս ապականութիւնը ներս մտնի, ծածկի տան յատակը, թափուի ամանների մէջ, անկողինների և զգեստների վրայ, կերակրի և ջրի հետ խառնուի: Դարեր շարունակ այսպէս է և այս ժողովուրդը վերջիվերջոյ աղբի ու կեղտի հասկացողութիւնը կորցրել է: Փողոցները սրբելու մասին խօսք չի կարող լինել, սղամարդիկ կա-

նայք, երեխաներ սիրով կը նստեն աղբակոյտների վրայ, կը շնչեն զարշահոտ գոլորշիները, կը ծծեն միջատներով լի փռշին և երբէք չեն զգայ, որ դա կատարեալ անասնական կեանք է:

Գիւղը գեղեցիկ զիրք ունի. նա զետեղուած է ձորակի գլխին, որից ներքև հոսում է Ախուրեանը. գեղասիրութեան ամենատարրական պահանջի կատարեալ բացակայութեան շնորհիւ գիւղացիք չեն օգտուել նաև այդ բնական գիրքից, մի փոքրիկ տեսարան, մի փոքր լաւ օդ ունենալու: Անգամ ձորակի գլխին տալոդ գիւղացին իր խրճիթը շինել է աղսոտ փողոցի վրայ, իսկ ձորին նայող գետինը յատկացրել է անասունների գոմին ու աղբին: Եւ մաքրութիւն, և՛ առողջապահութիւն, և՛ ճաշակ ամեն ինչ այստեղ զոհ է բերած անասուններին. գիւղերի տէրերը նրանք են, այս մունչացոդ գոմէշները, այս եզներն ու կովերը. փողոցները նրանց համար են, տները նրանց համար: Այդ չորքոտանիները, որոնք տէրեր են գիւղացու ճակատագրին, իշխում են գիւղերում և մարդն ստիպուած է սողալ նրանց յետեից աղբի և զարշահոտութեան մէջ մի կերպ տալրելու համար:

Մի անից ծուխ է դուրս գալիս, և դրան առաջ կանայք են երևում: Խնդրում ենք մի վայրկենով ներս ընդունել մեզ: Հայր հիւրասէր է ինչ պայմաններում և լինի նա: Տանտիկինը մի կեղտոտ ու զգոլած պառաւ, ներս է հրաւիրում մեզ: Ինչպէս երկու հազար տարի առաջ, նոյնպէս և այժմ, մարդիկ և անասունները մի հատիկ դուռ ունեն. մուտքից դէպի աջ, տան միջից բացուած է գոմի դուռը. մի ահագին գոմ և մի լաւ սաքու: «Այստեղ ենք պառկում» ասում է պառաւը ցոյց տալով սաքուն: «Չմեռը շատ լաւ է այստեղ» աւելացնում է, նկատելով մեր գարմանքը:

Իսկական տունը գիւղացու համար թոնրատունը չէ, որ ծառայում է կերակուրներ եփելու, հաց թխելու համար, այլ սաքուն, բնակարանի այդ ամենայարգի մասը, ընդունարանը, հանգստութեան հաճելի անկիւնը: Եւ սաքուն նոյնն է, ինչպէս սրանից երկու հազար տարի առաջ. փոփոխութիւնը որ տեղի է ունեցել այդքան դարերի ընթացքում, դա սաքուի լուսաւորութեան մէջ է. մի ժամանակ վառում էին ձիթէ ճրագ, իսկ այժմ փոքրիկ, մրոտ լամպ, որ ծխում է անվերջ: Եւ սակայն, գոմն անասուններին է. այնտեղ միայն մի ջնչին անկիւն ունի գրաւած մարդը իր և իր հիւրերի համար: Անասունների շնորհիւ, կամ ինչպէս գիւղացիք են ասում նրանց «ստոտաղայով» են ապրում գիւղերում: Ահա թէ ինչո՞ւ են տէր անասունները: Մինչև իսկ ցրտերի դէպ մարդը առանց անասունի չի կարող

պաշտպանուել. երկար ու ցուրտ ձմեռները նա կծկուած է նրա շնչի տակ, նրա կողքին և գոմի գարշահոտութիւնը վերջ ի վերջոյ դադարել է նրա համար անհաճոյ լինելուց: Չորս հինգ ամիս անասունների մթնոլորտում, նրանց արտաթորութիւնների վրայ ապրողը չի կարող տեսնել և մանաւանդ զգալ փողոցների կեղտոտութիւնները:

Նախասենեակի տեղ ծառայող մի տալան կայ, որ բաժանում է իրարից գոմն ու թոնրատունը. թէ մէկը և թէ միւսը մտնելու համար՝ այստեղից պէտք է անցնել: Անասունները և մարդիկ հաւասար իրաւունք ունեն այստեղ:

Ունևոր տուն է: Պատաւ տանտիկինը հպարտութեամբ ցոյց է տալիս մեզ ալրի տախտակէ ամբարը (փետուկ), առաստաղից կախուած խնոցին, երեք օրօրոց և... հեշտակուր: «Տղերքը իրիկունները չայ կը խմեն, երբ աշխատանքից տուն դառնան» ասում է նա ինքնաբաւական կերպով: Փորձում եմ առջ անցնել դէպի թոնրատունը, որի դուռը բաց է. բայց այդ անկարելի է դառնում. ներսը մի կատարեալ դժոխք է: Թոնիրը վառում է, թանձր ծուխը լցրել է խրճիթը և գժուարութեամբ դուրս է նետում փոքրիկ հերդիկից: Ծխի շերտի տակ, գետնի երեսին, թոնրին մօտ հազիւ հազ երևում են մի քանի կանայք ու երեխաներ. վերջինները պառակ թոռներն են, որոնք շրջապատել են թոնիրը և ծխի մէջ խելզուելով, աչքերից արցունք քամելով նայում են մի ինչ որ կճուճի: Երեխաներից մէկը սաստիկ լալիս է, մի բան է պահանջում մօրից. վերջինս զայրանում է, ճչում, անիծում. փոքրիկը չի լսում. մայրը վրայ է պրծնում և նրա թիկունքին մէկ երկու հարուածներ իջնում բռնեցքով. լացողի ձայնը բարձրանում է աւելի զիւ. կատաղած մայրը այս անգամ խլում է աւելը հակառակ կողմից բռնած՝ սպառնալի կերպով նետում է դէպի մանուկը՝ «մկայ կը թմմցնեմ քեզի» ճչում է նա. երեխան լաւ է հասկանում երևի «թմմցնելու» խորհուրդը և որովհետեւ բնաւ ցանկութիւն չունի «թմմուելու», դուրս է փախչում: Մեր առջից անցնում է նա շեշտակի, զզզուած ու սև, որպէս մի ճչացող աղբակոյտ. նրան հետևում է կատաղած մայրը, որ որոշել է անպատճառ «թմմցնելու»: Նրան բռնում է փողոցում և մանուկը աղիողորմ ճչում է աւելի կոթի հարուածների տակ: Ներսում շարունակում է վառուել թոնիրը. ծուխը բարձրանում է, հա բարձրանում՝ լցնելով խրճիթը, և կրակի շուրջը դառնում են մի քանի դեմքեր՝ աչքերը արորելով, արցունքը սրբելով: Ի՞նչ է կատարւում. գժուար է հասկանալ, բայց անշուշտ մի բան կատարւում է: Գիւղն այսպէս է ապրում...

Ծուխ, մուր, անասուն, աղբ, արցունք, ծեծ, ճիշ, ահա այդ կեանքը: Սև, այլանդակ կեանք, մի մութ գոյութիւն, որ սողում է այս խաւարի մէջ, անգիտակից ու թշուառ, չարքաշ ու կարօտ. սողում է կեղտի ու մուրի մէջ և ապա անցնում է: Ասես բնաւ եկած չլինէր:

— Էս երեխան հիւանդ է, ի՞նչ անենք, տաքոց-դոդոց ունի:

Նայում եմ, խօսողը պառաւ տանտիկինն է, նա ցոյց է տալիս մի փոքրիկ հիւանդ երեխայ, որ վառւում է ջերմի մէջ և որ չգիտեմ ռորտեղից յայտնուեց: Ամեն մի լաւ հազնուած մարդ՝ գիւղում որոշ չափով բժիշկ է, և պառաւը հարկաւոր է համարում գիմել մեր օգնութեանը իր թոռնիկի բժշկութեան համար:

— Քինա քինա տուէք, պատասխանում եմ.

— Քինաքինան ի՞նչ է, ռորտեղից բերենք:

Վհատեցուցիչ ու անյոյս խեղճութիւն. ի՞նչ պատասխանեմ. նայում եմ ողորմելի պառաւին լռութեամբ, էլ ինչ ասելս չգիտեմ. անտէր ու խաւար գիւղը ապրում է հէնց այնպէս, երկնքի հովանու տակ, ամեն մի հիւանդութիւն այստեղ մի ճակատադէր է, ամեն մի փոքրիկ աղէտ՝ անյոյս թըշուառութիւն: Խաւարի ժայռն է սռաջը, անխորտակելի ու հազին: Բայց պառաւն սպասում է. նա իր մարած աչքերը չի հեռացնում իմ շրթունքներից. ախր թուն է հիւանդ, այս սիրուն թոռնիկը. քաղթի մարդիկ ենք, մի բան կիմանանք, նա ճար է ուզում:

— Նանի, քինաքինան քաղթից կը բերեն, քաղթից:

— Հո՛ւ, քաղաքը հեռու ա, լինում է պատասխանը:

Հեռու է, ամեն ինչ հեռու այս դժբախտ գիւղի համար. և՛ դեղ, և՛ բժիշկ, և լոյս, և՛ բախտ. մօտը միայն ցաւն է ու գերեզմանը. այս երկունսն էլ տանում են անտրտունջ:

Կառք ենք նստում, պատրաստւում ենք հեռանալ և ահա վազէվազ հասնում է մեր յետևից նոյն պառաւը. նա էլի ասելիք ունի. այժմ խնդրում է ասել, թէ ի՞նչպէս բժշկել «խորոզակը» (կօկլիւշը). այս անգամ էլ պատասխան չունենք. կառքը սլանում է և պառաւը շարունակում է նայել մեր յետևից անյոյս ու խեղճ: Քաղաքի մարդիկ էին, «գիտուն» մարդիկ, եկան տեսան և ոչինչ չասացին նրան, դարդին ճար չարին: Ահա նա հնազանդ տուն կը դառնայ, ուր ծուխը բարձրանում է պալան պալան. փոքրիկ երեխան տենդում է, մի ուրիշը լաց է լինում և ցաւի մէջ մոլորած, համբերութիւնը հատած մայրը աւելով «թմմցընում» է միւսին:

Ինչո՞ւ է այս ժողովուրդն այսպէս անճարակ, այսպէս մոռացուած, մտածում եմ ես, երբ անցնում ենք գարշահոտ ան-

տաների փողոցներով: Ե՞րբ մեռաւ գեղեցիկ, բարձր հոգեւոր և մտաւոր պահանջների աղնուացնող զգացմունքը այս վայրերում, ուր անշէն պալատներն ու եկեղեցիները կողոպտուած ու պղծուած՝ դեռ խօսում են վսեմ արուեստից, վկայում են մի բարձր քաղաքակրթութիւն: Ինչպէս է պատահում, որ այս գոռոզ յիշատակարաններում, այս սիւնադարդ դահլիճներում, այս աւերակ կամարների տակ ապրող մեծ ողին ոչ մի բարձր ներշնչումով չի յուզում այս խաւար և խեղճ սրտերը, չի աղմկում սրանց հոգին երազական իդէլերով: Ի՞նչու այս հրէշաւոր աններդաշնակութիւնը միռնչների գեղեցկութեան և կենդանի մարդկանց այս մահացու դալկութեան մէջ: Հոգեւոր կեանքը իր բոլոր վսեմ, բարձր արտայայտութիւններով ինչո՞ւ է սպանուած այստեղ: Հազար ու մի խեղդող հարցեր, որոնց պատասխանը ծածկուած է հին դարերի մշուշի մէջ և որոնք դիւսկան պալտով անցնում են մարդու աչքի առաջից: Մտածիր ինչ ուզում ես, խորհիր, որչափ կամենաս, բայց իրականութիւնը՝ անյոյս ու խեղճ, այստեղ է առաջդ ցցուած:

Ահա գիւղացին փորում է տնքալով. նա ցորենի հոր է պատրաստում. Շիրակի հինմուրց ամբարները: Ահա մի ուրիշը դաշտից սայլով ցորեն է կրում: Եւ յետոյ այս կալերը... մանուկները քշում են կամը, կանայք ցորեն են մաղում, սողամարդը էրան է անում, թեզն է քամու տալիս՝ ցորենն ու յարդը իրարից բաժնելով: Աշուն է, կալ ու կուտի ժամանակ. գիւղն աշխատում է հեիհե. երկար ձմեռուայ համար հաց է պատրաստում:

Ապշեցուցիչ է ցամաք հացի այն քանակութիւնը, որ մի գիւղացի կարող է ուտել: Ատամները գործում են անվերջ, ծրնօտը յոգնում է բարձր ու ցածր անելուց, բայց անիծած ստամոքսը չի լցւում. նա անծայր է, նա անգունդ է: Մի հատ լաւաշը անուշահոտ ու կակուղ, փաթաթւում է հին մաքաղաթի ձեով, գիւղացին բռնում է ձեռքին այն, ինչպէս մահակ և անմիջապէս ոչնչացնում: Եւ քանի այդպիսին նա կարող է կուլ տալ, երբ «թացան» չկայ, «տաքկեր» չկայ, մի փոքր մաշուր չկայ, «փրթոց» պատրաստելու համար: Եւ երբ մի ժողովուրդ դարեր շարունակ, շնորհիւ երկրի բնութեան միայն ցամաք հաց է ծամում, զարմանալի չէ, որ նրա ստամոքսը դառնում է «Շարայի որկորը»: Բարեբերութեամբ հռչակուած Շիրակի դաշտը հացից դուրս ո՞չինչ չի տալիս, գոնէ այն էլ առատ լինէր, բայց հողը յոգնել է դարերի մշակութիւնից, հողը պառակել է, մինչդեռ բնակիչների ստամոքսը շարունակում է մնալ «Շարայի որկոր»: Շիրակեցին գիտէ այդ. նա գիտէ, որ իր փորի և իր

ամբարների մէջ ներդաշնակութիւնը վաղուց խախտուել է, ուստի նա անհանգիստ է, դողում է իր հացի համար, ցամաք հացի. փոյթ չէ, որ տունը համարեա գետնափոր է, աղբի մէջ կորած, որ փողոցները անտանելի են, ճանապարհներն անանցանելի. փոյթ չէ, որ նա զրկուած է քաղաքակիրթ կեանքի ամենատարրական յարմարութիւններից, միայն թէ հաց լինի, հաց: Փոքրի ահաւոր հոգսը բռնել է նրա ամբողջ էութիւնը. բոլոր միւս, աւելի բարձր, աւելի ազնիւ պահանջները ջնջուել են այս մի հատիկ հրամայող պահանջի առաջ: Զուլում է այն տարին, երբ սակաւ է հացը, երբ հորերը լիքը չեն, երբ ալրի ամբարը կիսատ է, թոնիրն ամեն օր չի վառում, թափայ հացի հոտը տունը չի լցնում: Հաց, հաց... այս խեղճ ժողովուրդն ապրում է միայն հացով, զարմանալի է միթէ, որ հոգևոր աւելի բարձր պահանջները խեղդում կամ բնաւ չեն զարթնում ստամոքսի հրամայող հոգսի առաջ:

Աւ. Ահարոնեան

(Կը շարունակուի)

*
* *

Երեկոյեան ծաղկոտ սարից
Հովիւն հօտը տուն կը բերէ.
Յոգնած հօտը մթին սարից
Քնքռւշ եարիս քուն կը բերէ:

Էսօր եարս շատ է խաղցել
Արեգակի շողերի հետ.
Արևի պէս շատ է խաղցել
Շնդ-մատներով իմ սրտի հետ:

Շնդ-մատներով, վարդ-մատներով
Իմ սրտի հետ շատ է խաղցել.
Հիմա յոգնել, եղնիկի պէս,
Գրկիս միջին քուն է մտել:

Յոգնած հօտը սար ու քարից
Սիրուն եարիս քուն կը բերէ.
Աղբիւրների, ծաղիկների
Երազներով քուն կը բերէ:

Աւ. Իսահակեան

ԹԸՄԿԱՐԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ

VII

Դարձաւ իր կըռւից իշխան Թաթուրը,
Դարձաւ յաղթական իրեն զօրքի հետ,
Սըրբեց, պատենում գըրաւ կեռ թուրը,
Ցընծութեան ձայնից գողաց Թըմկաբերդ:

Խընջոյք է սարքել Թըմկայ տիրուհին,
Ցերեկ է արել խաւար գիշերը,
Հեղեղի նըման հոսում է գինին,
Ու քէֆ է անում Զաւախքի տէրը:

Պըտոյտ է գալիս չըքնաղ տիրուհին,
Անցնում է, հըսկում սեղաններն ամեն,
Յորդորում, խընդրում, որ ուրախ լինին,
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

—Հապա լըցրէք, իմ քաջ հիւրեր,
Բաժակներըդ լիուլի,
Խըմենք՝ Աստուած կըտրուկ անի
Թուրը իմ քաջ Թաթուլի:

—Է՛յ, Տէր Աստուած կըտրուկ անի
Թուրը մեր քաջ իշխանի,
Նըրա շուքը միշտ, հանապաղ
Մեր վըրայից անպակաս:

Ու թընդում է թըմուկ բերդը
 էն աղմուկից խընդութեան,
 Որոտում են տաղն ու երգը
 Գոռ ձայներով յաղթական:

(Երգում են)

— Էն մըթին ամպից արծիւն է իջնում,
 Սարի արծիւը շեշտակի թափով:
 — Էն թըմկայ բերդից թաթուլն է իջնում,
 Թըշնամու հոգին լըցնում սարսափով:

— Էն թըմկայ ձորում սև ամպն է դուռում,
 Էն շանթն է ճայթում էնպէս ահարկու:
 — Էն թըմկայ ձորում թաթուլն է կըռում,
 Էն թուրն է շաշում էնպէս ահարկու:

Ի՛նչ սարի արծիւ կը հասնի քաջին,
 Ի՛նչ շահ կը կանգնի նըրա առաջին:

Եւ չի դադարում երգի հետ վարար
 Կախեթի գինին խելագար հոսել.
 Խըմում են տիկնոջ թանգ կեանքի համար,
 Որ էն ժայռերին ծաղիկ է բուսել:

Խըմում են կըռուող քաջերի փառքին,
 Որ կըռուի դաշտում կեանք չեն խընայում,
 Եւ ընկածների սուրբ յիշատակին,
 Որ երկընքից են արդ իրենց նայում...

Պըտոյտ է գալի ծաղիկ տիրուհին,
 Անցնում է, հըսկում սեղաններն ամեն,
 Յորդորում, խընդրում, որ ուրախ լինին,
 Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

—Օ՜ֆ, տիրուհի, Աստուած վկայ,
 էլ չենք կարող մենք տանել.
 էլ ուժ չըկայ, էլ տեղ չըկայ,
 Շատ ենք խըմել ու յոգնել...»

Ու հանգչում է թըմուկ բերդը,
 Պապանձում է ու մարում,
 Հարբած, յոգնած տէրն ու գործը
 Մըրափում են խաւարում:

VIII

Հուռ ու խաւարչտին կամարների տակ,
 Յոգնած ու քնած բազմութեան վըրով
 Թըռչում են, թըռչում, սեւ, չարապուշակ
 Երազներն անեղ, անվերջ խմբերով:

Երազ է տեսնում Թաթուլ իշխանը,
 Որ վիշապ օձը եկել է անա,
 Եկել, փաթաթուել, իր բերդը պատել,
 Գըլուխը դըրել ետ պոչի վրայ:

Եւ բարձրացնում է հըրէշն անուլի,
 Իրեն գըլուխը բարձրացնում է վեր,
 Բարձրացնում մինչև բարձունքը բերդի,
 Մինչև Թաթուլի պալատն ու տըներ:

Պառկած է իբրև Թաթուլ իշխանը
 Նազելի կընոջ գըլուխն իր դօշին,
 Եւ իբր ասում է՝ վեր կաց, իմ հրեշտակ,
 Թող, որ սպանեմ ես այդ հրէշին:

Այսպէս է ասում Թաթուլ իշխանը,
 Եւ զարհուրելով տեսնում է յանկարծ՝
 Իրեն սիրելի կնոջ գլխի տեղ
 Օձի գըլուխն է կըրծքին ծանրացած...

IX

Է՛յ, հըսկեցէք, ի՞նչ էք քընում
 Քաջ զինւորներ թաթուլի.
 Ո՞վ է տեսէք տանջւում մըթնում,
 Քուն չի աչքին մօտ գալի:

Ձըլինի թէ յաղթահարուած,
 Ճարը հատած թըշնամին
 Դաւ է գընում մուլթն ու մեռած
 Կէս գիշերուայ էս ժամին:

Վեր կացէք, վեր, ամբողջ գիշեր
 Մարդ է գընում ու գալի.
 Հէ՛յ, գարթնեցէք, առիւծ քաջեր,
 Պահապաններ թաթուլի:

Վեր կացէք, վեր, հարբեցրել է
 Իր յաղթական հիւրերին,
 Բաց է անում դուռն ու դարպաս
 Ձեր դաւաճան տիրուհին:

Դաւ... դաւ... ելէք... կոչնակ... սահնակ...
 Ձէնք առէք շնտ... ձի հեծէք, ձի...
 Ճըռնչումն, դըղըրդումն
 Դարպասները երկաթի...

X

Բաց արաւ ցերեկն իր աչքը սայծառ
 Աշխարհքի վըրայ, Ձաւախքի վըրայ,
 Աւերակ բերդին, սև ամպի նըման,
 Ծուխն ու թըշնամին չոքած են ահա:

Յաղթութեան փառքով ու գինով հարբած
 Քընած են բերդի և զօրքերն և տէր.

Ու յաւիտեան էլ մընացին քընած,
Դաւին անտեղեակ, ցաւին անտարբեր:

Նըստած է Շահը մըռայլը դէմքին,
Առջնն իրիկուան քէֆի սեղանը,
Նայում է Շահը անտէր դահոյքին,
Մըտքովն անցնում է աշխարհքի բանը:

Եւ լիքը թոյնով հարցընում է նա
Դալուկ, մարմարին թըմկայ տիրունուն.
— Պատասխան տուր ինձ, մատնիչ սեաշեայ,
Քու թաթուկն արդեօք քոջ էր ու սիրուն...

— Քաջ էր ու սիրուն քեզնից առաւել.
Մի բարձր ու ազնիւ տղամարդ էր նա.
Կոռ ձառնութեամբ ամբոյ չի առել,
Զի եղել կեանքում երբէք խաբեբայ...

Այսպէս տիկինը տըւաւ պատասխան.
Անհուն ցասումից մըռննչաց Շահը.
— Հէյ, դահիճ, գոռաց գազանի նըման,
Ու նըրա ձայնից դողաց սրահը:

XI

Դահիճն եկաւ ոտից գըլուխ
Կամիր հագած ու արիւն,
Ու գուրս տարան իր պալատից
Թըմկայ չըքնաղ տիրունուն:

Տարան անտակ էն սև ժայռից,
Որ կանգնած է մինչ էսօր,
էն ահաւոր ժայռի ծէրից
Գըլորեցին դէպի ձոր:

Գայլ ու աղուէս եկան հանդից՝
Ագահ սիրտը լափեցին,
Յին ու ագռաւ իջան ամպից՝
Սև աչքերը հանեցին:

Անցաւ անտես ու աննրման
էն սիրունը աշխարհից,
Ինչպէս ծաղիկն անցած գարնան,
Որ չի ծաղկի էլ նորից:

Անցաւ զալում էն մեծ արքան
Իրեն փառքով ու զօրքով,
Անցաւ Թաթուլն էն յաղթական
Ու իր քաջերն էն կարգով:

Ու նրբանցից միայն անմեռ
էս զրոյցը հասաւ մեզ,
Որ մեզանից յետոյ էլ դեռ
Պէտք է խօսուի միշտ էսպէս:

XII

Հէյ, պարոններ, տկանջ արէք
Թափառական աշուղին,
Սիրուն տիկնայք, ջահիլ տղերք,
Լաւ ուշ գըրէք իմ խաղին:

Կոյր աշուղը հոգու աչքով
Նըկատում է ամեն բան,
Պատմում է ձեզ խաղ ու երգով
Մարդու գործերն ու ճամբան:

Ամենքս այսպէս հիւր ենք կեանքում
Մեր ծննդեան փուչ օրից,

Հերթով գալիս, անց ենք կենում
էս անցաւոր աշխարհից:

Անց ենք կենում... միայն անմահ
Գործն է խօսւում լաւ ու վատ.
Ա՛խ, երանի՛ ո՛վ մարդ կը գայ
Ու մարդ կերթայ անարատ:

Յովհ. Թումանեան

Ք Ե Օ Խ Վ Ա

(Պատկերներ զխղից)

I

Սարսափելի էր տեսնել տանուտէր Թորոսի բար-
կութիւնն այդ երեկոյ:

Չուխի ծայրերը գօտկի մէջ, կարտուզը պինդ կո-
խած գլխին, աչքերն արիւնով լի, ձեռքին մի խոշոր
մտրակ շառաչեցնելով, գզիւրն էլ—այն խեղճ ու կրակ
Սահակին—եսեր ձգած, հայհոյելով ու գոռգոռալով էր
որ յայտնուեց գիւղի հրապարակի վրայ:

Եւ ձայնը, ձայնը!... Նման պատուած մեծ թմբուկի
ձայնի, խռպոտ, խմած օղիից դէմքն էլ կապտած, քուն-
քերը ուռած՝ գոռում էր, կանչում. իսկ բառերը մի-
մեանց գլխի վրայից, իրար կոխոտելով ու անկապ՝
դուրս էին նետւում բերնից:

Օ՛հ, ինչպիսի՛ բառեր...

Գիւղում պիտի լինել կիրակի օրերը, այն էլ այդ
լեռնային զիւղերում, լսելու համար թէ որպիսի՛ հայ-

հոյանքներ ու լսիրշ բառեր կարող են գոյութիւն ունենալ հայերէն լեզուի մէջ:

Հայր, մայր, գերեզման, պապեր, հաւատք... ոչինչ, ոչինչ չէ խնայուած: Ու բանաստեղծական պատկերացումներ, ինքնատիպ կազմութեամբ հայհոյանքներ, որ մարդ սպշած է մնում գիւղական մտքի այդքան բեղուն ստեղծագործութեան, այդքան հնարագէտ աղտեղի նըրբաստացութեան առաջ:

Անշուշտ, Թորոսը հարբած էր և լսւ հարբած: Հերթը իրանն էր երեւի այդ օր և ո՞վ գիտէ, ո՞րտեղ էր «լակել»: Սակայն ի գուր խօ չէ՞ր որ կատաղել էր, մտրակն էր շառաչեցնում և կամ պատռած ձայնովը գիւղը ոտքի հանում, այն թշուառ գգիւրին էլ ետեւիցը քարշ էր տալիս—բերում:

Հրապարակի վրայ էին գիւղացիները. եթէ ոչ բուրբ, զրեթէ մեծ մասը: Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ,—կիրակի էր և անելու ոչինչ չկար—հաւաքուել էին խօսելու, գուարճանալու, էհ, եթէ հասարակութեան գործ էլ պատահէր՝ գողգողալու, վիճելու:

Կիրակոսենց Գալօի «մագագինի» առաջ և մօտը դրուած նստարանի վրայ այդ երեկոյ բաւական մարդիկ կային: Նախ՝ «Խօլերան»: Յամբած, երկտակ եղած դժգոյն մի ծերունի, որ չնայելով տաքին, մուշտակը վրան էր, ահագին փափախը մինչև ականջների արմատը խրած, տակից կապած սև թաշկինակի ծայրերն էլ, նապաստակի ականջների նման դուրս հանած:

Կային նաև—կարմրամագ Սմբատը՝ ձեռքերը միշտ դրպանում, Գալօն, որ ամեն խօսելիս՝ գոռում էր ինչպէս կաշաղակ, որդին՝ Արշակը, ըստ սովորութեան լուռ, արհամարհոտ, կանգնած խանութի շէմքին: Այդտեղ էր և մշտապէս ալիւրոտ Ջաքէն, մրսողի դէմքով երեսփոխ Մուշեղը, երկարավիզ հիւան Գէվօն, ծոծրակն ածիլած պայտար Խէչօն, մինչև իսկ գուռնաչի և որմնագիր վարպետ Համբօն:

Գրիշաենց Մկրտչի խանութի առաջ, ճշմարիտ է,

ոչ ոք չէր երևում, բայց թէ ներսում և թէ ետևի սե-
նեակում խմբեր կային օդու շիշերի առաջ:

Սարօենց խանութի մօտ բազմութիւնն աւելի էր:
Բացի այն, որ ամբողջ ծածկոցի տակ նստոտել կամ
խումբ առ խումբ կիտուած կային գիւղացիներ, այլ և
նստարանի վրայ «տաւա» էին խաղում վարժապետն ու
ծերունի մանրավաճառ հրէայ Սիմօնը՝ անբաժանելի
սպիտակ չուխան (կարծեմ, պիտի որ կոռուից լինէր)
հագին և այլանդակ, երկարաւուն մեծ ակնոցը աչքին:

Խաղացողների մօտ էր երիտասարդութիւնը: «Տա-
ման» զբաղմունք էր. հրէան լաւ խաղացող էր, երէ-
կունից ի վեր գիւղումն էր և ողջ օրը գիւղի տղայք
միմեանց էին յաջորդում խաղի նստարանի վրայ:

Ու գիտող, միմեանց սեղմած այժմ, սրտատրոփ
տեսնում էին, որ վարժապետն էլ յաղթւում էր վարպետ
հրէայից:

Այստեղ էր նաև — չմոռանանք — գլուխը միշտ
կախ ձգած կարմրաքիթ «պարոնը», վերարկուն, քաղա-
քացու նման ուսերին, կարմիր ատլասէ արխաւուզով,
ոսկեջրած արծաթապատ դօտի, մինչև իսկ, այո, ոս-
կեայ մեծ մատանի, այն էլ փերուզով... Քաղաքացի էր
զրեթէ մարդը. ի՞նչ անենք որ այդտեղից էր աղջիկ
առել, Սարօենց փեսան էր, նրանց խանութի կիսարա-
րը և կամ առանց կարմիր քիթի երբէք տեսնել չէր կա-
րելի նրան:

Իսկ ի՞նչ է անում Ջաւադը — հասուիկ ու կաղիկ
այդ ճշացողը՝ մէջքի վրայ մեծ կարկտանով:

Թշուառ կաղիկ: Սկի քէֆը տեղը չէր այդ օր: Եղ-
բայրը առաւօտեանից ի վեր կորսուել էր՝ խանութը իր
վրայ թողնելով. ողջ օրն էլ «բռի, անտաշ» գիւղացի-
ների հետ ճղճղացել — աղմկել էր՝ մի քանի արշին չիթ
ծախելու համար. և ի գժբախտութիւն ամենի, հարբե-
լու, խմելու ոչ մի առիթ չէր ներկայացել:

Մարդը զինի էր խմում, իսկ այդ շաբաթ, թարսի
նման, ոչ մի կաթիլ զինի չկար ոչ իրենց տանը, ոչ էլ

խանութներում: Զոռ պէտք էր տալ «գիծ» օղի-
ին:

Ու նստել էր նա «տամա» խաղացողներին կողքին,
մէջքը դէմ առնել պատին, կարճ փայտը ոտների մէջ,
երազուն, հազիւ խառնւում էր խօսակցութիւնների:
Ուշքն էլ—կատաղեցնողը հէնց դա էր—դէպի գետեզրն
էր, ուրտեղից նրա ականջին էին հասնում զուռնի և եր-
գերի զուարթ ձայներ...

Իսկ եղանակը, որքան լաւ էր այդ օրերը. գետինը
չոր, երկինքը պարզ, այգիները պճնուած կանաչով, ծա-
ղիկներով, դաշտերը ժպտն... ամէն ինչ քէֆի յարմար.
մարդու երգելը, պարելն ու վազվզելն էր զալիս:

Բանն այն էր, որ ահա մի շաբաթ էր, օգտուելով
լաւ եղանակներից, յայտնուել էին ցածի զիւղերից 5—6
երիտասարդներ—այն անիծեալ Կիրակոսէնց ազգական-
ները—ու ամէն երեկոյ, նոյնիսկ ցերեկը, զուռնաչի
Համօյի աշակերտ Ղազարին հետն առած, մարդ չէ ի-
մանում՝ որտեղից բոլ զինի գտած, նախ մի լաւ կոն-
ծում էին գետեզրի կանաչների մէջ, յետոյ զուռնան
առաջներն արած, թափօրով, երգերով, անցնում էին
փողոցներից, մինչև կէս զիշեր թնդացնելով զիւղը:

Եւ ահա այդ իսկ «շան որդիները» առանց Զաւա-
դի, առանց նրա մասնակցութեան, այդ օր շատ աւելի
աղմկարար էին դարձել այնտեղ—Սուքիասէնց այգիներ-
ի տակը, գետեզրին նստած: Կոյր Մարտիրոսէնց Ա-
րամի զիւ ու քաղցր ձայնն էլ խօ... կատաղութիւնից
տրաքեցնում էր կաղիկին:

—Էդ ո՞րտեղ են քէֆ անում դրանք, հարցրել էր
նա զիւղացիներին:

—Գետի դրաղումը, Սուքիասէնց բաղի տակը...

Հը՛մ, տօ. բաս համբերելու բան էր: Ինքը այնտեղ
նստած, իսկ ուրիշները Սուքիասէնց սիրուն հարսի ա-
ռաջ բայաթիներ կիկացնեն և Զաւադը իր ձայնը լսե-
ցնելու առիթ չգտնի «հրեղէն» Մարանին:

Զկարծէք թէ Զաւադը կին չունէր: Ի՞նչու ոչ:

Մինչև իսկ երեք որդի, կինն էլ դաշտի գիւղերի մի լաւ օջախից: Բայց դէհ, Սուքիասենց հարսին ո՞վ տեսներ՝ որ ջանը կրակ չընկնէր. այն էլ Ջաւադի պէս քաղաքին սովոր, սիրուն «մաթուշկաների» հետ նստած կազնած, ճաշակը «զարգացած» մարդը...

Սուքիասենց հարսն էլ—մեղայն Աստծու—մի քանի անգամ արտը գնալիս ժպտել էր Ջաւադին, խօսքերին պատասխանել. մինչև իսկ—ղօշնղ Ջաւադ—աչքով անելուն ժպտաւ իր քաջակերել:

Սակայն այդ օր բանը թասրուել էր: «Շան տղերքը» առանց իրեն քէֆը չաղացրել էին հէնց ճիշտ սիրուն Մարանի տան պարտէզի տակը, և, Ջաւադի փոխարէն, Արամն էր ձէնը գլուխը քցել:

Սատանէն ասում էր մէկ վեր կաց, գնա նրանց մօտ, բողբոլիւն դէն տուր; գուննէն քոքիր, ձէնդ գլիր ու ողջ գիւղի հարսներին էլ աներիցը դուրս թափի...

Հէնց այդ մտածութեան մէջ՝ դողն ընկել էր ջանը. մի ըռպէ ևս և գուցէ ոտքի ելնէր, որ յանկարծ եղբայրը—տանուտէրի օգնական թորոսը, կատաղած ու գոռգոռալով՝ հրապարակ էր նետուել գլիրի հետ:

Արդեօք ի՞նչ էր եղել, ի՞նչ կար: Հարբելո՞ւց էր, թէ՞ մէկը քեօխվի քէֆին կպել էր:

Ամենքը թողին իրանց զբաղմունքը: Խմբակները լուծուեցին, Խոլերան ուղղուեց և ոտքի ելաւ, Գալօն առաջ գնաց, հրէան այլանդակ ակնոցների վերևովը դարձաւ նայեց, վարժապետը, կարմիր քարերը բռան մէջ՝ առաջ քայլեց, իսկ Ջաւադը երկու ոտտիւնով դէպի եղբայրը վազեց:

—Էդ ի՞նչ ա ըլել, քեօխվա, ճչաց Գալօն—ի՞նչի ես գազազել:

—Տօ ես նրանց հօր... տօ ես նրանց պապերի օխտը ջինսը... բա ըտէնց բան էք տեսել, խալխը...

—Ի՞նչ կայ, մօտեցաւ Գալօն չարամիտ ժպիտով—ո՞վ ա նեղացրել քեօխվին, ա՛ Սահակ...

Հետզհետէ շրջապատեցին քեօխվին, որ քայլեց դէ-

պի Գալօի պատշգամբը և այնտեղ, նստեց նստարանի վրայ:

— Ադա՛ս բառ... շարունակեց նա մտրակը գետնին խփելով — բառ ես քեօխվա չեմ... սօ բառ դո՛ւք չէք ընտրել ինձ, բառ քեօխվութեան ցէպը (շղթան) հրէս ջբո՛ւմըս չի... Ա՛յ ես նրանց...

— Հլա մէկ ասա՛, Թորոս, յորդորեց Գալօն — ըսէ՛նց ինչի՞ ես բարկացել... ինչ ա ըլել... Տօ ջհաննամը թէ մի բան էլ պակասութիւն ես տեսել, ինչի՞ ես իզուր քեզ կարատում...

Գիւղացիք խմբուեցին խանութի առաջ և շրջանը սեղմուեց: Զաւաղը դարձեալ ճարպիկ դանուելով, յաշողուեց նստարանի ծայրը բռնել՝ թողնելով ոտքի վրայ թէ Խոլերային և թէ միւս ծերունիներին, իսկ վարժապետը, կարմիր քարերը դեռ բռան մէջ՝ կանգնած մնաց Գալօի կողքին, շարունակ հայհոյող քեօխվի առաջ:

— Դէ՛ ասա տեսմօք, Թորոս, ճչաց Գալօն — էդ ի՞նչ ա ըլել, որ կրակ ես դարձել...

Ծաղը, հեգնութիւն, ամէն ինչ կար նրա ձայնի մէջ, աչքերն էլ թարթում էր ու ակնարկներ անում սրան-նրան, բայց քեօխվէն և ոչ իսկ ուշադրութիւն դարձրեց:

— Տօ ի՞նչ ասեմ, ճչաց նա — ասելու բան ա, որ ասեմ... ըսէ՛նց բան սկի իմ օրումը չէի տեսել ու լսել... Տօ բառ էլ ինչացո՛ւ քեօխվա եմ, որ իմ գլիրին քացով խփեն, փափախին բամբաչեն, հլա մի ստաքան էլ կարմիր գինով գունչն ու մուկթը լուանան... Հը՞, ա խալխը, տեսնում՞ բան ա սա...

— Հա՛, հա՛, արեց գլիրը խեղճ-խեղճ - շատ ասի թէ մի անէք, լաւ չի... գինին էլա, ասի, տուէք ես խմեմ, ամա չելաւ... Ա՛յ, ըսէ՛նց սաղ փափախս լուացին, շորերս գինոտեցին...

— Փիէ՛... կանչեց Զաւաղը — բա գինին էլ կը թափե՛ն... շան տղերքը ջրի տեղ են դրել...

— Ադա էդ ինչե՛ր էք ասում է՛է... գոռաց քեօխ-

վէն—ինչ գինի, ի՞նչ փստան... խօսքը գինի՞ն ա, թէ՞ իմ հրամանը ոտնատակ տալը, գզիրիս թակելը...

Ապա յանկարծ դարձաւ դէպի գզիրը և ձայնեց.

—Տօ շա՛ն սղայ, դու գզիր չե՞ս, հասարակութիւնը քեզ իշխանութիւն չի՞ տուել... Ռւր ես բառ էդ երկար չոմբաղը ձեռքիդ ման ածում, չէի՞ր կարալ նրանց կողքերը մի լաւ ջարդի...

—Դէ էլաւ ոչ, քեօխվա, ի՞նչ անեմ... Շատ էին, համ էլ հանրած...

—Տօ հրէս ես խմած չեմ... կ'ուզե՞ս, էս դամշին ընենց մէկ վրայ բերեմ փափախիդ...

Վարժապետը, որ լուռ լսում էր, համբերութիւնից դուրս գալով, բռան քարերը դէն շարտեց ու ջղայնութեամբ ասաց.

—Ի՞նչ ես ծոծումում, Թորոս. քեզ բան են հարցընում, ասա, ինչի՞ ես ձէնդ գլուխդ քցել:

Քեօխվէն զգայ, բարկութեամբ ասուած և հրամայական շեշտ կրող այդ խօսքերը և խէթ-խէթ ուսուցչին նայեց:

—Հ'ըմ... արեց նա—ինչ ա ըլել... ինչի՞, բա դու խուլ խօ չե՞ս. չես տեսնում որ էդ սալախոնաները (սրիկաներ) էս ա մէկ շաբաթ՝ սաղ օրը, գիշերը, զուռնան առաջները քցած, գինին ջրի պէս խմելով, սաղ ասելով՝ հոգիներս հանեցին...

—Եանի դա քեզ ինչ. աւելի բարկացաւ վարժապետը—կարաս դո՛ւ էլ արա, ո՞վ ա ձեռքդ բռնել... Էդ էր, զրա՞ համար էիր փրփրել... Տենո՛ւմ էք, ա խալիւր, հիմիկանց դէնը առանց քեօխվի իրաւունքի՝ քէֆ անելն արգելուած ա... վեր, վեր կաց գնա քնի... շա՛շ...

Ասաց, արհամարհաբար թևերը շարժեց, ձղեց բազմութիւնը և գնաց դարձեալ իր «տաման» շարունակելու:

Մութն սկսում էր կոխել այդ միջոցին: Երեք խա-

նութներում էլ ճրագները վառել էին, իսկ բաղմութիւնը աւելանում էր հրապարակի վրայ: Երևում էին օտար գիւղացիներ էլ, որոնք հիւր էին այդտեղ:

Աւելի շատ, բնականաբար, Գալօի «մագազինի» տառն էին գալիս կիտում: Ուրովհետեւ, չնայելով որ վարժապետի կարուկ վարմունքն ու խիստ շեշտելով ծաղրը յանկարծակիի էր բերել քեօխին, սակայն նա բուն կատաղութիւնից մի բոլորէ կարկամած մնալուց յետոյ, մէկէն ոտնեց, նախ մի քայլ արաւ դէպի վարժապետի կողմը, ապա դարձաւ, իրանը ետ ծռեց, ոտները վրայ լարուեց, բռնեցքով մի հարուած տուաւ կարտուղին և ճչաց.

—Ո՞նց թէ «շաշ»... Դո՛ւք թէ՛ «զնա քնի»... բա ես մարդ չեմ թէ պրատակուլ... ցէպս, ցէպս օր դի ա...

—Հա՛-հա՛-հա՛... քրքշաց Գալօն—ա՛յ թէ զլեցին քեզ հա՛, քեօխվա... Ա՛րի, արի նստիր... Տօ դու օր ես նեղանում, որ ջահիլները քէֆի են ու քեզ չեն կանչել...

—Ախր էդ չի էէ՛, Գալօ ամի, համարձակուեց միջամտել դղիրը—է՛դ չի... Ո՞վ ա նրանց բան ասում...

—Ձէնդ կարի լպտա՛ծ... քու ի՞նչ բանն ա. կանչեց քեօխվեն—թող հլա մէ տեսնանք էն օր հարամզադէն էր ինձ «շաշ» ասողը... վարժապետ ես, ի՞նչ զահրումար ես, հլա մէկ դէսն արի...

—Դէ՛, ձէ՛նդ, ձէ՛նդ... կանչեց կանացի ձայնով սիւնի մօտ կանգնած մի կարճահասակ ծերունի—տեղդ վեր ընկի, քու բերնին չի ընկել տէրութեան վարժապետին...

—Էդ օվ ա, էդ օր...

—Ես եմ... վարժապետի հէրն ա... տեսնում ես էս չոմաղը... բան ունես՝ ասա... բաս որ դու շաշ չըլես, քու ի՞նչ բանն ա թէ մեր ջահիլները, մեր ղոնաղները քէֆ են անում, ղուռնա տծում, ես գինի խմում...

—Փիէ, փիէ... ոտքի ելաւ Զաւաղը,—Սաղ Կիրա-կոսենց ջինսը ուզում էք վրա՞յ տալ մեզ:

—Ս. խալիսը, ձայնը բարձրացրեց վերջապէս գզիրը—մէկ թողէք ես պատմեմ էէ... ասիւր քէֆի բան չի... զիշերուան դարառուի համար ա, դարառուի...

—Ո՞նց... դարառուի... ի՞նչի... ի՞նչ կայ...

Ամեն կողմից հարցեր տեղացին, ամենքը խառնուեցին իրար: Ձաւաղը վէճի բռնուեց կիրակոսենց ցեղից Յարէթ աղի տղայի հետ և այն էլ թունդ վէճի, որովհետեւ երկուսն էլ կսկորդ պատուելու չափ դռուում էին. Խոլերան փափախը երեքընեւով՝ ճգնում էր խօսք հասկացնել խոնուող և շրջանը քանդող գիւղացիներին, ալիւրոտ Ջաքէն, մարդ չէր հասկանում թէ ի՞նչու էր աղաղակում կարմրամազ Սմբատի ականջն ի վեր. երկուրովի Գէվօն էլ, վիզն ածիլած պայտար Խէչօի գէմքի մօտ լարուած՝ յամառ կերպով ճչում էր ինչ որ անհասկանալի բառեր...

Մի խօսքով, մի այնպիսի խառնուրդ աղաղակների, ձայնի զանազան ելեէջների, որ շներն անգամ սկսեցին հաջել ամէն կողմից: Վարժապետն ու հրէան միայն անդդուելի, թէև դադարել էին խաղալուց, բայց նստած մնացին. այլ և Արշակը, որ իր ոչ կանգնած դիրքը փոխեց, ոչ էլ գէմքի անտարբեր հայեացքը:

Եւ այդ տեսց երկար: Միմեանց չը հասկանալը կարծես պայման էր դրուած, իսկ աղաղակելը՝ միակ խօսակցութեան և վէճի ձև: Սակայն քիչ-քիչ ճշացողների թիւը նուազեց և նրանց միջից դարձեալ դուրս նետուեց քեօխվի ձայնը որ դռուում էր.

—Տօ խեղդելո՞ւ էք... բաս դարառու չըլի՞, բաս գեղը առանց դարառուի մնայ...

—Ինչի՞, նրա գէմը կարեց մէկը—բա ուրիշի չը տեսար, որ երկու անգամ իրար վրայ նրան ես զրկում...

—Հա՛ տօ... կանչեց մի երկրորդը—հարուստներին թողնում ա ու աղքատներին ջանին ընկնում...

—Գէ՛ օնց անենք, քեօխվէն ի՞նչ անի, պաշտպանեց քեօխվին Գէվօն՝ չարախնդաց—ոչ ոք չի գնում... համ էլ ի՞նչի գուռնա ածի Ղազարը...

—Պտի գնայ, բա՛ս, արդու՛մ էր Զաքէն—հերթը իրան ա ընկել։ Էլ ինչացու ա քեօխվէն... հրամայում ա, պիտի կատարես...

—Հստեղ մտիկ տու, ըստեղ, քեօխվա, նետուեց դէպի Թորոսը՝ պայտար Խէչօն և երկար վզով գլուխը քիչ մնաց կոխէր տանուտէրի բաց բերանը—եանի քիչ ա պատահել որ հէնց ըտէնց չեն զնացել... եա թէ չէ՝ զնացել էլ են, մթնելու պէս փախել են ու սնեւրը մտել, հ°ը...

—Դրո՛ւստ ա ասում Խէչօն, վրայ բերեց Սմբատը —էլ դրա համար ո՛ւր էք էսքան զալմաղալ քցել... ուրիշը զրէք՝ ու պրծաւ զնաց...

—Ո՞նց կլլի, գոռաց այն կողմից Զաւաղը—հերթը նրանն ա, նա էլ պտի գնայ... կա՛րայ գուռնէն քեօքի ու գեղի հարմներին դուրս թափի... շան սողերքը... սալախանաներ... կատաղել են, գինին ջրի պէս են վերածում...

Այդ միջոցին գգիրը, որ մի կողմը քաշուել՝ երկար փայտը ձևաքին, սրան-նրան էր յորդորում հանդարտելու հեռուից,—յանկարծ ոստնեց դէպի մի երիտասարդ, բռնեց նրա թևիցն ու ձայնեց.

—Հրէս ա, քեօխվա, բռնել եմ մէկին... հէնց սա էր որ հիւջաթ էր անում թէ Ղաղարին չեն թողալ, թէ հերթը նրանը չի... հէնց սա ա...

—Հա՛... թռաւ դէպի նա քեօխվէն—է՛ս շան տղան... Հլա մէկ դէնը կացեք տեսնենք էտ ո՞վ ա, որ քեօխվի հրամանին դէմ ա կանգնում... Դու ո՞վ ես, ա՛ շան տղայ...

Երիտասարդը օտարական էր։ Ապշած այդ յարձակումից, մի ըսպէ՛ շուարած՝ լուռ մնաց, յետոյ ասաց զրգռուած զայրոյթով.

—Ի՞նչ ես ուէրդ ցրիւ տալիս. չի՞ ըլլի որ քիչ քաղաքավարի խօսաս... Հա՛, հէնց ես էի ասողը...

—Ինչի՞ տօ, շա՛ն թուլա... Դու ո՞վ ես, ի՞նչ մարդ ես ըստեղ. տենա՛մ մէկ պասպորտդ...

— Քարկողցի եմ. յետոյ...

— Տօ բա դուք մեր գեղն էք եկել որ լոթուծիւն անէք... աօ բա ես մեռած եմ ըստեղ, որ թողամ սաղ շաբաթ դուռնէն առաջներդ քցէք...

— Ասելիքդ տաս'... միջամտեց խոտուծեամբ երկոտասարդը:

— Չոռ ու ցա՛ւ ասեմ, ի՛շի տղայ... ձայնը բարձրաբից քէօխվէն—դու ի՞նչ ես, ի՞նչ հօրս ցաւն ես, որ համարձակոււմ ես գլիրիս երեսին զինի շարտել, փափախին դմիացնել...

— Չէ, քեօխվա, միջամտեց գլիրը—սա չէր թափողը... սա հէնց ընէնց, խօսքով...

— Դու սո՛ւս, հարամղա՛դա, մարաղը բարձրացրեց նրա վրայ քեօխվէն—երբ քեօխվէդ խօսում ա դու ձէնդ կտրի... Հը՞, աղա՛—դարձաւ նա երկոտասարդին—ասա տեսնանք, դու ո՞ւմ շունն ես որ սաղ շաբաթ դալմաղալը քցել ես գեղը, հլա քեօխվի հրամանին էլ դէմ ես դնում...

— Քեօխվա՛ կանչեց այն կողմից մի երկարահասակ ծերունի—ա՛յ տղայ, ըտէնց բիաբուռ խօսքերով կը խօսան զոնաղի հետ... ի՞նչի քաղաքավարի, մարդավարի չես խօսում, որդի...

Քէօխվէն բարկացաւ, բուռն շարժմամբ դարձաւ դէպի ձայնի կողմը և կանչեց զայրագին.

— Տօ ձե՛զ ինչ, դուք ի՞նչ գործ ունէք իմ դատատանի մէջը... Դոնաղս որն ա... Դոնաղը եկել ա որ մարդավարի պահի իրան, թէ՛ վուռնէն առաջը քցած, գինու բուծիկէն խոտած՝ գեղի քուչէքովը պտուտ տայ ու մեր ջահիւներին էլ դժուացնի, իմ հրամաններին դէմ գնի, գլիրին թակի... հը՞, ա՛ շան թուլա, խօսա տեսնանք, դու ի՞նչացու ես որ...

— Քեօխվա՛, մէջ մտաւ Գալօն—եանի հերթը դըրո՛ւստ Դադարինն ա, թէ չէ հէնց ընենց, ուզում ես ջահիւների քէֆը խափանես՝ ընտո՛ւր նրանց վուռնաչուն խլում ես... արլի դրուստն ասա, դո՛ւ քո Աստուածը...

Գալօն հարուստ, հետևապէս ազդեցիկ մարդ էր: Թորոսը շատ էլ ուզում էր մի լաւ հայհոյի նրան, ուզում էր մի լաւ «շշպուել» նրա հոգին լուսաբանող այդ կաշաղակային ծերունուն, բայց մտածելով հետևանքի մասին, կուտակուող կասաղութիւնը զսպեց և ուսաց բարկութեամբ.

—Տօ բաւ էլ ինչանցու քեօխվա էք դրել ինձ, որ իմ ձեռքումն չըլի դարաւուլ նշանակելը:

—Դրուստ ա. քո ձեռքումն ա, առարկեց Գալօն ժպիտը դէմքին—բայց հերթը Ղազարինն ա... Արի դրուստը խօսա, ախպէր... Ասենք բարկացել ես, որ էս ա մի շաբաթ քէֆ են անում ու սկի քեզ մարդատեղ էլա չեն դնում—կանչեն մի ստաքան գինի խմացնեն... Ի հարկէ, դա լաւ չի, ամօթ ա նրանց համար, բայց դէ, ջահիլ են, բախշիր...

—Ինչէր էք ասում, ինչէր... աղաղակեց քեօխվէն, կեղծ վիրաւորուած ցոյց տալով իրան—ես նրանց գինուն եմ հասրաթ. գինի որ ուղենամ՝ չեմ կարալ ձի հեծանցել ու Վլադիմիրովկից բերել տալ... Ասում եմ հերթը հէնց նրանն ա որ կայ, նրա՛նն ա...

—էդ բա ինչի՞ հէնց ուժդ աղքատներին ա պատում, մէջ մտաւ երիտասարդ հիւրը—Ղազարն ասում էր որ հերթը իրանը չի ու ձեր—հէնց Սարօենց Մուրադինն ա...

Քեօխվէն այլևս զսպել չկարողացաւ իրան և ամբողջ զայրոյթը դուրս թափեց հիւրի վրայ, մանաւանդ որ երևան էր հանուում իր կողմնապահութիւնը:

• Մի քայլ առաջ նետուեց և առանց այլևայլութեան մտրակը շառաչեցնելով՝ ուժգնութեամբ իջեցրեց երիտասարդի մէջքին:

—Շա՛ն տղա՛յ, քեզ ա մնացել խօսա՛լը... Ը՛հր քեզ...

Իսկոյն դրան հետեւեցին աղաղակներ, հիւրը նետուեց դէպի քեօխվէն՝ բռունցքները բարձրացրած, մարդիկ խառնուեցին իրար, ու մի քանի բոպէ ճիչ, աղմուկ, շարժում, հայհոյանք խլացրին ամեն այլ ձայն:

Այս անգամ վարժապետն ու հրէան վագեցին դէպի խառնուրդը, մինչև իսկ Արշակը թողեց լեանութի շէմքը և մտաւ կռուողներին մէջ:

Երիտասարդ Քարկոզցին սաստիկ կատաղած՝ ճըգնում էր իրեն ընտղներին և յորդորողներին դէն հրել և հասնել քեօխմին: Իսկ սա, մէկէն կարծես սթափուած՝ ետ էր քաշուել և թոյլ էր տալիս որ եղբայրն ու այլ զիւղացիք նախ խլէին ձեռքից մտրակը, ապա յորդորանքով ու համոզելով՝ տանէին մինչև իրանց խանութը, որովհետև Կիրակոսենց ցեղի մարդիկ վրդովուած՝ ձայները բարձրացնում էին:

Քարկոզցին կոյր Մարտիրոսի ազգականներից էր. հետևապէս բոլոր ներկայ եղող Կիրակոսեանները պաշտպանութեան ելան: Վարժապետի հայրը իր կանացի ձայնով սկսեց ճշտլ, Գալօն կաշաղակային աղմուկը մեծացրեց, Յարէթ աղայի որդին ջանաց կտրել Զաւադի դէմը, իսկ սա, թշուառ կաղլիկը, լրջօրէն վախեցած՝ գոռում էր ու հայհոյում անխտիր, առանց հասցէի...

Մինչ այդ, Խոյերան դուրս սպրաւեց և տուն գնաց ալիւրոտ Զաքէն, կարմրամազ Սմբատը և զուռնաչի Համօն՝ միմեանց դէմ եկած՝ բարձրաձայն գոռում էին, որ քեօխման անիրաւ էր, որ նա իրաւունք չ'ունէր խփելու, իսկ մի երկարահասակ ծերունի—Ոսկանենց Յարութիւնը—իր խրոխտ ձայնով կանչում էր թէ այդպէս էլ պէտք էր և թէ չպէտք էր թողնել որ զանազան «լոթի-փոթիներ» գային զիւղի մէջ աղմուկ հանելու, հնազանդութիւնը վերացնելու օրինակը տալու...

Վարժապետն էլ խօսում էր, բայց նրա ձայնը չէր լսւում ժխորի և աղմուկի մէջ: Հրէան լուռ էր—ըստ երևոյթին սովոր՝ այգալիսի տեսարանների:

Արբած տանուտէրին յաջողել էին վերջապէս իր խանութի առաջը հասցնել, ուր նա, նստարանի վրայ ընկած, դեռ կոտորուել չէր կամենում, շարունակում էր հայհոյել, պնդել որ քիչ էր տուած ծեծը և որ դեռ մըտաղիւր էր բոլորին էլ իր «ղամշու համը ցոյց տալ»...

—Շան թուլաներ... ասում էր նա—մազամ անտէր ա էս գեղը, որ դուք գաք ու լոթութեան տաք ձեզ... մազամ ես մեռել եմ... իշխ լակոտներ, ըտէնց հա... հմի զնացէք ու տենանք ո՞նց էք քէֆ անում...

III

Քարկողցի ծեծ ուտողին իսկոյն շրջապատեցին և զրեթէ զոռով, քաշէքաշ հանեցին հրապարակից, համոզելով լինէր կամ աղաչանքով՝ անցկացրին առուից և հասցրին ու ներս ձգեցին կոյր Մարտիրոսի տունը:

Այնտեղ էր նա հիւր: Սաստիկ զայրացած, չկարողանալով կատաղութիւնը թափել մէկի վրայ, անգօր՝ իրան համոզողներին դէմը և փակողներին յորդորներէից, խըւպոտութեան հասած ձայնով աղաչակրում էր անընդհատ...

—Աստուած սիրողը բաց թողնի ինձ... թողէք զնամ ես նրա ջանդալը փռեմ մէկ... ինձ ծեծել... ո՞տ թողէք է, ես կը տրաքեմ հիմի... բա դուք Աստուած չունէք, բա ինձ սպանել էք ուզում... թողէք ասում եմ է՛ է՛...

Ու տմէն ձիգ, ամէն ոյժ գործ էր դնում իրան բռնողներէից ազատուելու և ետ դառնալու դէպի հրապարակը: Կռանում, քար էր վերցնում, սպառնում էր շան պէս սատկացնել քեօխիին, աղաչում էր բաց թողնել... մինչև իսկ կատաղութիւնից արտասուել սկսեց... բայց նրան յորդորող զիւղացիք շատ լաւ զգալով թէ ինչ պիտի լինէր հետևանքը, եթէ արգելք չլինէին—աւելի ոյժով հրեցին—հրմշակեցին նրան, ներս ձգեցին և դռները փակեցին:

Լուրը հասել էր զետեղրում եղած նրա ընկերներին և այժմ թէ՛ զուռնաչին և թէ՛ քէֆ անողները յուզուած ու զայրացած՝ մի առ մի հասնում էին ու ներս լցւում:

—Սարգիս, քեզ մատաղ... զրեթէ գրկել՝ հանգարտեցնում էր երիտասարդին՝ կոյրի կինը—զագէտ առնեմ,

հանդարտիր, հլա մէկ նստի, թոյ... փորձանք կը հանես...

—Տօ թողէք է է... կանչում էր անդադար Սարգիսը—Բնչի, նա ում շունն ա որ ինձ խփի... թողէք զնամ փորը թափեմ. բա ես Քարկողցի ըլեմ, Շուշանենց կարապետի տղան ու դամ Դուզան ծեծ ուտեմ Սարո- ենց շան ձեռքիցը...

—Սարգիս, ա Սարգիս... կանչեց իր թախտի վրայից կոյր Մարտիրոսը, որին շտապել էին պատմել եղածը—հլա մէկ դէն արի... ադա մէկ ձէններդ կտրէք տեսնամ է է... մէկ դէսը բերէք դրան... Այ տղայ, դու չէ՞ որ խելօք տղայ էիր, էս Բնչ ա ըլել քեզ... հլա մէկ ըստեզ արի՝ կողքիս նստի...

Բայց ով էր լսողը։ Սարգիսը քանի գնում՝ կատա- ղում էր. անձնասիրութիւնը խորապէս վիրաւորուած էր. ոչինչ չէր լռեցնում նրան. գոռալուց ձայնը կտրու- ւում էր, իրան բռնողների ձեռքից ազատուելու ջանքը յուսահատ կռուի հասցրած՝ դէն էր շարտում տանտիկ- նոջ, հարսին, նոյն իսկ աղջկան՝ դէպի որը նա անտար- բեր չէր։

—Պտի սպանեմ, ուր ա դամէս... ես Քարկողցի ըլեմ ու մէկ քոսոտ թորոսից ծեծ ուտեմ...

—Սարգիս, ճգնում էր հանդարտեցնել նրան տա- նուտիւրով աղջիկը, բռնած երիտասարդի ձեռքը—Սար- գիս, քեզ մատնող... բաս դու սկի մեղ չե՞ս սիրում... հանդարտիր։

Ճշմարիտ է, աղջկայ հպումը և սիրալիր աղաչան- քը ազդում էր երիտասարդին, բայց ծեծ կերան, խայ- տառակուսած և այն էլ անպատասխան թողնւած...

—Տօ գոնէ մի հատ էլ ես խփի, նամարդներ... կան- չում էր նա—բա ես պատի՞ւ չունեմ... Ասո, Մարգարիտ, որ ասում ես թէ հանդարտեմ, բա դու կը մարսես որ Սարգսին զամշիով ծեծեն շան նման ու նա սուս կե- նայ...

—Այ տղայ Սարգիս... ձայնում էր կոյրը—փիէ...

«... Եղ ի՞նչ էլաւ քեզ, խօ չը դժուեցի՞ր... դէսը բերէք դրան... տօ պի՛նի բերէք... ո՛ւր ա գուռնան, Ղազարին կանչէք ըստեղ... աղջի, Մարգարիտ, գնա Արամին ձէն տուր ըստեղ...»

— Ըստեղ են, հայրիկ, Ղազարն էլ ա ըստեղ...

— Այ տղայ մէ գուռնէն ածէք շուտ է՛ է... փիէ, ի՞նչ էք թողնում խեղճ տղան ինքն-իրան սպանի...

Նախագաւթից, ուր կատարւում էր այդ ճնշող տեսարանը, վերջապէս յաջողուեց ներս բերել երիտասարդին և կոյրի նստած մեծ թախտի ծայրին նստեցնել: Եւ այդ՝ յաջողուեց Մարգարիտին, որ վճռականօրէն, իր ուժեղ բազուկներով դրկեց երիտասարդին, իր ժպիտներով և հպումովը մեղմացրեց նրան, քաշեց ներս և երբ նստեցրել էր, ձեռքը իր ձեռքի մէջն առաւ ու չթողեց որ շարժուէր:

Առիւծը մեղմանում էր, թէև կուրծքը եխում-իջնում էր, կոկորդից խռպոտ մոնչիւններ էր արձակում և երբեմն ձգնում էր ձեռքը նոյն խկ Մարգարիտի ձեռքիցն ազատել և գնալ ջախջախելու «քոսոտ շանը»:

— Այ տղայ, խօսեց մեղմութեամբ կոյրը — բա ըտէնց բան կ'ըլլի. դու խօ երեխայ չե՛ս. ի՞նչ ես դժուել ու կատղել... տօ ջհաննամը թէ մի հարբած շուն կծել ա քեզ. դու նրա հախիցը դալը ի՛նձ թող. ես էգուց մէկ քեօխվա շինեմ նրան, որ էլ չմոռանայ... Չուռնան ի՞նչի չէք փչում, տղերք... Գինի բերէք, ո՛ւր էք քէֆներդ խարաբ անում... հէ՛րն անիծեմ քեաչալ թորոսի, մէ ընէնց քէֆը զլեցէք, որ սաղ Սարօենց թաղը ժայ գայ... Աղջի Մարգարիտ, սրտեղ ես...

— Ըստի եմ, հայրիկ...

— Դէ ասա սեղանը քցեն, պանիր-բան բերէք ու ըստեղ հիմի քէֆը սկսենք...

— Չէ, ամի, խօսեց երիտասարդը հեալով — չէ, ես մինչև նրան մի լաւ չը ջարդեմ՝ չեմ հանգստանայ... Հէրս ի՞նչ կասի թէ լսեց որ Սարօյենց թորոսը, էն քնծոտ

Թորոսը ինձ զամշիով ծեծեց ու ես սկի մէկ մատուցա
էլա՝ չը կսլայ նրան...

—Տօ սուս է մէկ, ասաց կոյրը—հօրդ ես բանի
էութիւնը կը պատմեմ... արքա ճնց կ'ըլէր, քեօխվա ա
մարդը, մէկ էլ տեսար պըխստաւ—զադ... Հլա մէկ կաց
լուսանայ ու տեսանք թէ ինչի՞ ա խփել, ի՞նչ իրաւուն-
քով... Դու քու քէֆդ տես, ես էս ա մէկ կերթամ դու-
քանները ու կ'իմանամ, թէ էն շունն էլ ընդի էլաւ՝ հա-
խիցը կը գամ... Այ տղայ, Արամ, Ղաղարն ո՞ւր ա, ին-
չի՞ չէք զուռնան փշուռ... փչէք որդի, փչէք ու քէֆ-
ներդ շարունակէք...

Ղաղարը—զուռնաչին, որ պատի տակ գունատ
կանգնած մնացել էր զուռնան ձեռքին, զլուխը թափա-
հարեց ու ասաց.

—Ձէ, զարաուլի են կանչել, պիտի գնամ, թէ չէ
քեօխվէն հողիս կը հանի թակելով... առանց էն էլ հլա
տեսնանք քանի՞ զամշի եմ ուտելու:

—Ո՞նց... ոստնեց տեղիցը Մարգիսը—ես շա՛ն ծիծ
կերած ըլեմ՝ թէ քեզ թողամ գնաս... բա հերթը քոնն
ա, տօ, բա աշկարայ չի՞, որ նա մեր քէֆը խառնելու
համար ա քեզ զարաուլ կանչում...

—Մարգիս, սեղմեց ձեռքը և ստիպեց նստելու Մար-
գարիսը—հանդարտուի՛ր, հերիք ա...

—Փիէ... ձայնեց կոյրը—էդ ճնց բան ա, հլա կա-
ցէք... Մէկ գէ՛սն արի, Ղաղա՛ր—ինչի՞, հերթը քո՞նը
չի...

—Ձէ, ամի՛. ես անցած շաբթու գնացի. հերթը է-
սօր Սարօհնց Մուրադինն ա, Մուրէնինն ու Փիլոսինը...
էլ չեմ իմանում թէ ինչի՞ ա քեօխվէն ինձ նշանակել...
կարելի ա Մուրադը գեղումը չի... Ըտէնց մէկ բան
կըլի գգիւրին զրկեց թէ հալքա՛թ պիտի դաս... Քեօխվա
ա, ի՞նչ ասէի. ես ուզում ի գնալ, ամա տգերքը չը
թողին...

—Ադա էդ ի՞նչ էք ասում, ճչաց կոյրը—վա՛յ ես նը-
րանց հօր... Ըտէնց էլ անիրաւութիւն կըլի... անպատ-

ճառ նախանձում ա, ու կամենում ա ձեր քէֆը խարաբ անի... Ձը գնաս, ու համ էլ զուռնէդ քեօքի՛ր շուտ, մէկ լաւ քէֆ արէք, ես դրանց անիրաւ հոգին... ինչի՞, ալան-թալան ա, մենակ քեասիքների՞ն ա տեսել... զուռնէդ քեօքի՛ր, ջուղաբը ես կը տամ...

Հագարը պահ մի շուարած մնաց, յետոյ վճռականօրէն գլուխը ցնցեց, զուռնէն բերնին տարաւ ու ասաց.

— Զհաննամը, ինչ ուզում ա, թող ըլի...

Ժպտեց, և յիրաւի, զուռնէն ափսպէս գլեց, որ իսկոյն տունը դորդաց, ամէն գէմքի վրայ ժպիտ երևաց և ձայնը մինչև հրապարակ հասաւ:

Իսկոյն գինին էլ եկաւ մէջ տեղ, աշխուժութիւնը տիրեց ամենքին, հարսները սեղան շինեցին, կիրակոսեաց ջահիլները մի առ մի ներս լցուեցին և քիչ յետոյ խումբն ամբողջ վերակազմուած՝ սկսեց մի աշխոյժ պար սենեակում, մինչ զըսումը, սոսնիքների, քարակոյտների և գերանների վրայ հաւաքւում էին մօտակայ բոլոր տներից կանայք և մանուկներ՝ հանդիսատես լինելու զուարճութեան:

Հինգ ըռպէից յետոյ, չը գիտեմ որի նախաձեռնութեամբ, մի սեղան դուրս բերուեց դռան առաջ, ապա մի լապտեր վառուեց քաղաքացիներին պատշգամբում, և հոսկ ուրեմն, հանդիսատեսները մօտեցան մի մեծ շրջան կազմելու, որի կեդրոնը մտան միմեանց ձեռքիցը բռնած երիտասարդները և սկսեցին մեծ շրջապար:

Հապտերի լոյսը աղօտ լուսաւորում էր այդ բոլորը: Պարուկները ոստոստում էին, գիւղի աղջիկները մօտ էին դալլա, յետոյ, քաղաքացիք էլ աթոռներ իջեցնելով՝ նստան, աւելացաւ և մի թմբկահար, բազմութիւնը շատացաւ, գիւղի հրապարակը սկսեց այստեղ դատարկուել և զիշերուայ խոր լռութեան մէջ երաշժաուութեան ու զուարթ կանչերի ձայնը սփռւում էր գիւղի մինչև ամենավերջին ծայրը:

Իսկ Զաւաղը, որը մնացել էր խանութի առաջ, ա-

ւելի կատաղած՝ կարտուզը պինդ կոխեց գլխին ու մըր-
մըռաց.

—Շան աղերքը... Մարանի սան կողքին են սարքել
հիմի քէֆը!...

Եւ յիրաւի, Սուքիասենց տունը հեռու չէր. թարսի
պէս էլ հէնց ինքը «հրեղէն» Մարանը, կտուրից կտուր
անցնելով՝ մի քանի հարսների հետ եկել էր միանալու
հանգիստատեաններին և քիչ յետոյ էլ՝ պարոզներին...

IV

Վարժապետը և ոչ իսկ շարժում գործեց, երբ քեօխ-
վային հրելով-հրմշտկելով՝ սոխպեցին նստել նրա բռնած
նստարանի վրայ, ճիշտ կողքին:

Ո՛չ միայն չը խօսեց, այլև ճգնեց սառը կերպա-
րանք ստանալու և պապիրոսը բերնին՝ մէջքը գէմ տու-
աւ պատին ու անշարժ մնաց: Ձգաց որ քեօխվէն իր
հետ էր սկսելու այժմ, բայց զսպեց իրան և սպասեց
տեսնելու թէ ի՞նչ կը լինէր:

Գալօի խանութի առջևից գիւղացիք անցան քեօխ-
վի առաջը շրջան կաղմելու: Հրէան անհետացել էր. Ջա-
ւադը բռնեց նրա տեղը և վարժապետը, արձանի նման
անշարժ, գտնուեց երկու եղբայրների մէջտեղը:

Քեօխվան նախ մի քանի բոլակ շարունակեց էլի
մտրակուղի և գիւղը եկած «սալախանաների» հասցէին
աղտոտ հայհոյանքներ ուղղել, յետոյ հետգհետէ ձայնը
իջեցրեց, լսելով յորդորներին՝ հանգարտուեց և նոր մի-
այն նկատեց, որ նստել էր վարժապետի կողքին:

Դարձաւ և մի բոլակ նրան նայեց լուռ: Վարժապետը
սառնաղէմ, անշարժ, ծուխի մի սլինակ միայն դուրս
թողեց բերնիցը գէպի նա: Քեօխվէն կատաղեց, շուռ
եկաւ և զրգոռած ձայնով ասաց.

—Հմի գանք քեզ, վարժապետ... էդ եանի ինչի՞
դու մէջ ընկար, ինձ էլ ուշունցի կոպեցիր. էլ «շահ»
էլ «գնա քնի»... Հ՞ը, ես քեզ ի՞նչ էի արել...

—Ոչինչ, արեց ուսուցիչը և ծուխի մի ուրիշ քու-
լա էլ արձակեց դէպի նա:

—Փիէ... բացազանչեց քեօիւման—ծուխի ճանա-
պարհ չկայ, որ երեսիս ես շարտում...

—Երեսդ որ չմօտեցնես՝ նա դէնը կերթայ:

—Հազըր դու զլուխդ շուռ տա...

—Ըսէնց էլ լաւ ա. թէ ուղում ես ծուխը դբա քեզ
չգայ՝ քիչ դէնը նստի:

—Թարսուել ես, խնչը... քէֆդ տեղը չի...

—Յա-տօ, քո քէֆը լաւ տեղն ա:

—Ձի խմել էսօր, ընդհուր ըտէնց ա վարժապետը,
նկատեց ծաղրօրէն Ջաւադը:

—Ես ամէն վախտ լակել չգիտեմ, ջանաց դսպել
իրան վարժապետը և շարունակեց անընդհատ ծուխ
ժայթքել բերնիցը—ըլի՛ կը խմեմ, չ'ելաւ՝ գեղը ոտքի
չեմ հանի, թէ ի՛նչ ա՛ խմելու զադ չունեմ...

—Ընչի՛, տաքացաւ քեօիւմէն—ես խմելո՞ւ համար
էր որ բարկացել էի:

—Հա, խմելու համար: Քեզ չէին կանչել՝ ընդուր
էլ դաւմաղալը քցել էիր, հլա դամչի էլ շարժեցիր... Տե-
նանք էզուց ի՛նչ պատասխան կը տաս ծեծուողին:

Քեօիւմէն բորբոքուեց:

—Տօ շատ լաւ եմ արել, բացազանչեց նա—հլա էն
քիչ էր. հրէս զնալու եմ դիփունանց կաշին պլոկեմ
դամչիովս, գեղիցը դուրս քշեմ... Քո բերնին չի ընկել
ինձ չթողալը...

—Կը թողամ, ինչի՛ չէ... Գնա, որ մի լաւ զնքսեն
քեզ ընտեղ ու ճամփու քցեն:

—Ի՞նձ, ի՛նձ զնքսեն... տենանք էն ո՞ր շունը կը
համարձակուի... Հրէս գնում եմ. ո՞ւր ա դամչիս...

Ու ոտքի ելաւ:

—Դէ լաւ, Թորոս, համոզեց նրան մի զիւղացի—դու
էլ, վարժապետ, ո՞ւր ես թազադան զլում դրան:

Փիէ, շարունակեց քեօիւման—ըստո՞ւր մտիկ տուէք
է է... ասում ա՛ կը դմփեն... Տօ էն ո՞ր շունն ա, որ

Նուռաթ կանի... Դո՛ւ, քո ջի՛նսը...

—Ջնախ հանգիստ թող, սասայ վարժապետը—
ձեռքերդ կը վառուեն...

—Ձեռքերս վառողը տես, գոռաց տանուտէրը—գէ-
նը կացէք տենա՛նք, ա՛ խալիսը... սա՛ ինչ ա ուզում
ինձնից... Դու հլա մէկ տես քեզ ոնց եմ քաշ տալիս
պրիստաւի մօտ, որ ինձ ուշուենց սոււիր...

—Այն, կանչեց վարժապետը ծիծաղով—բերնիցդ
մինչև ականջներդ քանի՞ գեազ ա... բաս դու քո ու-
շունցները սկի չլսեցիր...

—Ես քեօխվա եմ, դո՛ւ ինչ ես...

Այստեղ այլ ես չկարողացաւ զսպել իրան վարժա-
պետը. շարժուեց, մէկէ՛ն պապիրոսը նետեց, ոստնեց
նստարանից ցած, դարձաւ, գլուխը մօտեցրեց քեօխվին
և զոչեց նրա երեսն ի վեր.

—Ա՛ շան տղայ, եանի շատ ես խօսալու, եանի հլա
շատ ես գեղի զլխին օյիններ սարքելու...

Յետոյ, չթողնելով քեօխվին խօսելու, դարձաւ
գիւղացիներին և աղաղակեց.

—Ըստեղ մտիկ տուէք, ա՛ խալիսը. էս շաշը կար-
ծում ա՛ թէ ինքը որ քեօխվա էլաւ՝ իրաւունք ունի
բերանը ցրիւ տալու, ում ասես՝ դամշի ուտացնելու.
մենք էլ է՛ն ա, սլտի մէջքներս գէմ տանք անսաս, բե-
րաններս փակենք, հլա մէկ ձեռն էլ պաչենք... Ո՞նց
չէ... Տօ ախմախ, որ էգուց էդ Քարկոզցին գնայ պը-
րիստաւին գանգատուի՝ թէ դու անիրաւ տեղը ծեծել
ես իրան ու ես էլ վկայ դառնամ—ի՛նչ Նուգար
կը տաս. կ'ասես քեօխվա ես, ընդո՛ւր ծեծեցիր...
Հլա կաց մէկ... Համ էլ դու ընչացո՛ւ ես, քեօխվէն
եղած տեղը դու ո՞վ ես, որ կրակում ես գեղը... Ա՛
խալիսը, ինչի՞ չենք էս շան տղի ձեռիցը ցէսլը առ-
նում ու իսկական քեօխվի ձեռքը տալիս, որ սա ըսէնց
լըբանայ, մարդ թափի...

Այնքան արագ, այնքան միմեանց վրայ և հետզհե-
տէ ձայնը բարձրացնելով այս բոլորն սասայ վարժապե-

տը, որ քեօնվէն կատաղութիւնից դողում, շատ էլ ուզում էր պատասխանել, բայց միմիայն կակաղեց, խռպոտ մոնչիւններ արձակեց և միջոց չգտաւ առարկելու:

Վարժապետն էլ խօ... Գիտէր որ, ինչպէս պետական պաշտօնեայի (պետական դպրոցի ուսուցիչ էր ասի), քեօնվէն իր վրայ ձեռք բարձրացնել չէր կարող: Այդ էր պատճառը հէնց, որ նա աւելի քայլում էր դէպի ետ-ետ գնացող տանուտէրը և խօսքերով կարկտահարում նրան:

Գալօն, որդին, միւս գիւղացիք դարձեալ խոնուեցին. Զաւաղը շապակեց քաշուել դէպի խանութի դուռը:

— Տօ... փիէ... տօ... կմկմում էր քեօնվան—տօ հլա կաց մէկ էէ... ո՞նց թէ քեօնվա չեմ... ո՞նց թէ՛ ես ո՞վ եմ... ո՞նց թէ՛ շան տղայ... ցէպս առնեն ձեռքիցըս...

— Հա հէնց, դուռաց աւելի բարձր՝ վարժապետը—դու պաժօշնիկ ես, դու քեօնվա չե՛ս. քեօնվէն հրէն Կարնպետն ա. նա չի ետ կացել, դու ժամանակաւոր ես... Մենք քեզ էլ չենք ուզում, հերիք ա, ցէպը ետ տուր ու անդ ըլի գլխներիցս...

— Ո՞նց, ո՞նց տօ... դու ո՞վ ես, պրիստաւ ես... փիէ... ադա Սահակ, Զաւաղ, մէկ ձիւ թամբէք գնամ պրիստաւին՝ տենանք սա ո՞նց ա ինձ պաշտօնիցս դուրս քցում, ես ո՞վ ա, որ ինձ ուշուցակով ա անում ըսէնց...

— Ղորդ, կանչեց Զաւաղը դռան մօտից—դու ինչացո՞ւ ես, վարժապետ, որ մէջտեղ ես ընկել:

— Ձէնդ, հարամգաղա... կանչեց նրա վրայ վարժապետը՝ աւելի և աւելի բարձրացնելով ձայնը—ո՞նց էք. էս սհաթիս մի թուղթ գրեմ պրիստաւին, որ քեօնվէն սաղ օրը հարբում ա ու դամչին առած՝ սրան նրան ծեծում, զալմաղալը քցում, էլ դոնաղ ասես, էլ վարժապետ ասես...

Քեօնվէն յիբաւի, սկսեց վախ զգալ այդ սպառնալիքից: Նա լաւ գիտէր որ վարժապետը գրել կարող էր

և որ պրիստաւը առհասարակ բարեկամ լինելով ուսուցչի հետ, կարող էր հաւատալ, քննութիւն բանալ, իրան պատասխանատուութեան տակ ձգել...

Սակայն դարձեալ զայրոյթը շատանում էր, զգալով որ հարկաւոր էր յաղթել, ճգմել գիւղի այդ ըմբոստին և չթողնել որ գործը մեծանայ:

—Վարժապետ, մէջ մտաւ մի ծերունի—դէ հերիք ա, ձեռք քաշի... դաւա՛թ արաւ, էլ ինչի՞ ես կատաղեցնում, քեզ խօ չխփե՛ց մարդը...

—Կարա՞յ որ... Նա ի՞նչ իրաւունք ունի ծեծելու անմեղ մարդկանց, հարբի ու գեղը ոտքի հանի, սրանսրան ուշուց տայ...

—Փիէ՛... կատաղութիւնից իրան կտրտում էր քեօխվէն—տօ տրաքեցի էէ՛... տօ ձիս սուէք էէ՛... բա ես էս բեխերս կը թրաշեմ, վարժապետ, թէ հէնց հմի չգնամ պրիստաւի մօտ ու զաղախ, եպստաւու չըղրկեմ ետևիցդ...

Ասաց, բազմութիւնը ճղեց ու երբ մի քանի քայլ գնացել էր, դարձաւ ու շարունակեց.

—Ըսէնց բո՞ն էք տեսել... Ասում ա՛ քեօխվա չես, ինձ «ախմախ» ա ասում... վկայ ըլէք, ա՛ խալիւր... ի՞նչ ա, ինձ ուտե՛լ էք ուզում սաղ ջնսով, բա ըստեղ իշխանութիւն չկայ... Ձիս բե՛ր, Զաւա՛դ, Սահա՛կ, շա՛ն տղերք...

—Քեօխվա՛, քեօխվա... յորդորում էին մի քանի գիւղացիք—հերիք ա՛...

—Ձէ, էս սհաթիս գնում եմ... Ես դրանց ցոյց կը տամ քեօխվին անպատուելը, քեօխվի կարգադրութիւնսերի մէջ խառնուելը...

Ու մեծ քայլերով, սպառնալից, զնաց դէպի վեր: Վարժապետը թողեց նրան գոռգոռալու, խսկ ինքը դարձաւ գիւղացոց: Սկսուեց ժխորային աղմուկ, վէճ: Հարց ծագեց թէ որքա՞ն իրաւունք ունէր տանուտէրի օգնականը հրապարակօրէն մտրակելու անմեղներին: Ուսուցիչը պնդում էր, որ նա շատ էր երես առել, որ նրան

հարկաւոր էր պաշտօնից դուրս ձգել, հաշիւները պահանջել և որ այդ հաշիւները, ինքը ստոյգ տեղից գիտէր, մաքուր չէին: Նրա ցեղակիցները—կիրակոսներ միացան նրան. Սարոյենց կողմի մարդիկ հակառակութեան ելան...

Սուր կերպարանք ստացած վիճաբանութիւնը, որ տարւում էր ժխորային աղաղակներով, մեծացաւ, գրաւեց ամենքին, սակայն վերջ ի վերջոյ կազմուեց մեծամասնութիւն և վճռուեց որ հարկաւոր է իսկական տանուտէրին խնդրել պաշտօնը ստանձնելու և Թորոսին «ռազ անելու»:

Եւ երբ միմեկ էր, խանութները սկսում էին կողպել, վարժապետին յաջողուել էր շատ կուսակիցներ շահել, որոնք որոշեցին միւս օրն ևեթ Կարապետին ստիպել կամ յանձն առնելու քեօխութիւնը, և կամ գնալ նոր քեօխվայի ընտրութիւն պահանջել իշխանութիւնից:

Այդ բոլորից յետոյ, երիտասարդները վարժապետի հետ գնացին կոյր Մարտիրոսի բազը, ուր դեռ գոռոնան փչւում էր և շրջապատը երկսեռ դարձած՝ մեծացել էր:

Միւս օրը, յիրաւի, մի եասառւլ մտաւ գիւղը և հրաման բերաւ պրիստաւից՝ գիւղաքաղաք ուղարկելու վարժապետին և կարմրամազ Սմբատին: Պարզ էր. Թորոսը անշուշտ գիշերով գնացել էր վարժապետին իբր խոռվարար, մինչև իսկ իբր ֆիդան ամբաստանելու:

Յամենայն դէպս, կարմրամազ Սմբատը շատ վախեցաւ: Ոչ ոք չկարողացաւ ենթադրութիւն անել թէ նա ինչ գործ ունէր այդ խնդրում և թէ նրան ինչու պրիստաւը կանչել էր:

Միւս օրն առաւօտեան մի կառք լծեցին, Գալօի որդի Արշակն էլ, որ ապրանք ունէր առնելու, ելաւ իբր կառավար և երեքն էլ գիւղաքաղաք գնացին:

Գիւղացիք այդ օրն ամբողջ մինչև երեկոյ, յու-

զուած էին և տենդային անհամբերութեամբ սպասում էին գնացողներին վերադարձին:

Երեկոցեան դէմ յանկարծ գիւղի վերեւից լսուեցին երգերի և զուարթ կանչերի ձայներ, յետոյ մի կառք զղրղիւնով իջաւ և հրապարակ մտաւ:

Ի՞նչ մուտք! Բոլորը հարբել էին: Բոլորն էմ ա- սում, որովհետեւ գիւղաքաղաքում որքան Դուզանցիներ կային, նախ մի զինետուն մտել—լաւ կոնծել էին, լըց- ուել կառքը, ճանապարհին կանչւում էին և այժմ ահա ահագին աղմուկներով գիւղ էին մտնում:

Պէտք էր ենթադրել որ յաղթական էր նրանց մուտքը: Յիրաւի, ամենից առաջ վար ցատկոդներն էին Սմբատն ու վարժապետը: Սա այնքան լաւ կոնծել էր, որ հագիւ կարողացաւ հաւասարակշռութիւնը պահպա- նելով՝ հասնել Գալօի խանութի առաջ և ընկնել նստա- րանի վրայ:

— Կը շորտու... գոչում էր նա—պրծաւ... Թորոսի բանը պրծաւ... պաշտ Վո՛ն, մերզաւէց... պրիստան ասաց, հլա քիչ մնաց որ մի լա՛ւ գնքսէր...

Սպասող գիւղացիք խոնուեցին նրա շուրջը:

— Հը՛մ... դէմքը կնճուեց Ջաւադը:

— Հը... հարցրին վարժապետին գիւղացիք—պատ- միր, ո՞նց էլաւ... ինչի՞ էր կանչել...

— Ֆիդա՛ն... ո՞նց տօ... թոթովեց վարժապետը— մեզ ֆիդան էր ասել... ըտէ՛նց հա... Թորոսը պրծա՛ւ. պրիստաւը նրան «պաշտ Վո՛ն» արեց...

— Հլա մէկ պատմիր, ստիպեց նրան Գալօն:

— Քեօլովութիւնի քցեց... շարունակեց վարժապե- տը—հրամայեց ցէպը տիրոջը տալ, Կարապետին... Ը- տէնց հա՛...

— Տօ դրո՞ւստ... կանչեցին գիւղացիք—բաս քեօլ- վութիւնի ընկաւ Թորոսը... այ արել ա հա՛...

— Ընկաւ, ընկաւ, ժպտեց վարժապետը: Գինին դէսը բերէք, տղերք... Պրիստաւը՝ թէ «բաւ, վարժապետ, խոովութիւն ևս քցում»...— «Ո՛չ, ձերդ ազնւութիւն,

ասում եմ, սո՛ւտ ա, Թորոսն էր հարբել ու համնողին ծե-
ծում էր»... Քեօնվէն թէ՛ «սո՛ւտ ա, ես հարբած չէի»:
—«Ձերդ ազնուութեան, ասում եմ, հրէս հէնց հիմի էլ
հարբած ա եկել ձեզ մօտ»... Պրիստաւը աչքերը ոլո-
ւեց, մօտ գնաց քեօնվին, արագի հոտը որ չ'առաւ...
«Պաշու վո՛ն, մերզաւէց» արաւ ու հրամայեց որ ցէպը
կարապետին տայ... Դուրս եկանք, Խզօի դուքանումը
մի լաւ քէֆ էլ արինք ու... տօ գինին գէսը բերէք է՛
է՛»...

Վ. Փափազեան

* *
*

Նման դայերի խմբին ամենի,
Զմրան գիշերին ոռնում է քամին
Եւ իմ պարտիզում—մռայլ, ամայի
Խեղճ ուռիներիս ջարդում է քամին:

Ա՛խ, մանկուց տանջուեց քու սէրը, սիրտ իմ,
Ոչ ոք չհասկացաւ երազդ աղուոր.
Զուր մի որոնիր սիրտ մի մտերիմ,—
Ծնուել է հոգին յաւէրժ մենաւոր:

Հանիր քու սէրը սրտիցդ անյոյս,—
—Այդ խորթ, ապօրէ՛ն զաւակն աշխարհի,—
Քցիր այս դաժան, մութ գիշերին դուրս՝
Յուրա քամու բերան.— թող երթայ սառի...

Թող լայ, հեծեծայ սէրս՝ ո՛րք, անմայր.
Եւ քամին լացը նորա թող տանի
Ալէկոճ ծովեր, անապատ մի վայր,
Սակայն մարդու մօտ... երբէք չը տանի...

Ոռնում է քամին, վայում դժնդակ
Մռայլ գիշերին ձիւն-ձմերայնի.
Ա՛խ, սէրս ջարդուած ուռիների տակ
Մեռնում է մենակ.— թող երթայ մեռնի...

Ա. Իսահակեան

ԴԱՐԱԼԱԳԵԱԶ ԿԱՄ ՎԱՅՈՑ ԶՈՐ*)

Ալազեազու հասարակութիւնը.—Դարալազեազի արեւմտահիւսիսային կողմը, Ալազեազ չայի, Սէլիմ չայի և էրազին չայի եզերքներին և նոյն անուն ձորերի մէջ զետեղուած են Ալազեազու հասարակութեան գիւղերը: Այդ հասարակութիւնը Նոր-Բայազետու գաւառի հետ հաղորդակցութիւն ունի Սէլիմի գիւտուկովն ու ձորով: Այդ ձորովն է անցնում Բաշնորաշէն Նոր-Բայազետի խճուղին, շինուած 1892—1894 թուականներին: Ձմեռները յաճախ այդ ճանապարհը փակուած է, բաւական ժամանակ ընդհատուած է ինչպէս Ալազեազու հասարակութեան, նոյնպէս էլ ամբողջ Դարալազեազի հաղորդակցութիւնը Նոր-Բայազետի գաւառի հետ: Ալազեազու հասարակութիւնը բռնուած է Դարալազեազի ամենագրաւիչ դիրքը, իր կանաչ, անտառապատ լեռներով, ձորերով, կարկաշատ առատ ջրերով և բազմաթիւ հոյակապ հնութիւններով: Ալազեազու և Սէլիմի ձորերը մտնելով, մարդ տեսնում է թէ որքան ծաղկած են եղել հին ժամանակ այդ գեղեցիկ վայրերը: Աւերակների մի թագաւորութիւն է նկարուած: Ալազեազու հասարակութիւնը բաղկացած է 20 գիւղերից: Սրանցից 4 գիւղերում հայեր են բնակւում, մնացածներում թուրքեր: Հայ գիւղերի մասին կը խօսենք առանձին, իսկ այժմ առաջ բերենք թիւրք գիւղերի մի աղիւսակ.

1886թ. այժմ տուն տուն		Սէլիմ ձորում		1886թ. այժմ տուն տուն	
1. Հոստուն	11	15			
2. Ալազեազ	41	49			
3. Գիւնէյ վանք	11	15	13. Շահգեալլի		
4. Ղափուշուղ	20	27	ՂԶԼաղ	12	15
5. Կալասար	17	24	14. Սալլի	51	59
6. Այսասի	34	39	15. Ազքեանդ	94	105
7. Կաբախլու	42	55	16. Հորս	101	125
8. Ջանի	20	27			
9. Գիլլի տուղ	25	31			
10. Ղարաշայ	24	30			
11. Ղոդուխ-վանք	25	28			
12. Հորբաղղ	38	48			

*) Տես «Մուրճ» 1904 թ. № 12.

Ալազեհազու հասարակութեան շինական կառավարութիւնը գտնուում էր Ալազեհազ գիւղում, որը 1894 թուից փոխադրուել է Հասանքեանդ գիւղը, բայց մինչև այժմ էլ կոչւում է Ալազեհազ՝ փոխանակ Հասանքեանդու հասարակութիւն:

Անցնենք հայ գիւղերի նկարագրութեան:

Այնտեղ, ուր Սէլիմի և Ալազեհազու ձորերը իրանց համանուն վտակներով միանում են, գտնուում է Հասանքեանդ գիւղը: Հասանքեանդը իր անունն ստացել է թուրք Հասանի անունով: Այդ Հասանը մի սպեցիկ մարդ է եղել Դարալազեհազում, երբ հայերը գաղթել են Պարսկաստանից: Սրա թոռը, Մամադ Սէյիդ Նաջաֆալի օղլին, սպանում է Հասանքեանդցի Բաբա Ղազարեանցին, ապա ճնշուելով հետամուտ եղող վարչութիւններին և հայերին, թողնում է Հասանքեանդը հայերին և իր որդուն՝ Սէյիդ Նաջաֆալու հետ հեռանում են ու Այսասի, Ղարաղայա, Ջանի և Ղաբախու գիւղերի մէջտեղում բարձրացած սարահարթի վրայ (Հասանքեանդից 20 վերստ հեռաւորութեամբ) հիմնում են Գիւլլիդուզ (Ծաղկահարթ) գիւղը, ուր բնակւում է մինչև այժմ նրանց տոհմը:

Հասանքեանդի բնակիչները 1886 թուի ընտանեկան ցուցակով կազմում էին 34 տուն, այժմ՝ 87 տուն: Բնակիչների թիւը, 580 է, որոնցից 20 հոգի արական են, 300 հոգի իգական: Հասանքեանդի այդիները գտնուելով Բաշնորաշէն—Նոր-Բայազետի ճանապարհի վրայ, թէ խաղողը, թէ գինին և այլ մթերքները հեշտութեամբ վաճառւում են Նոր-Բայազետու մրգակարօտ գաւառում: Այս պատճառաւ Հասանքեանդը բաւականին վաճառաշահ գիւղ է կազմում Դարալազեհազում: Այստեղ հիանալի կերպով աճում է առուոյալ և կռփնկան: Հասանքեանդցիները օրինակելի երկրագործներ են: Այգի մշակելը, դաշտ հերկելը, տների, գոմերի և մարաքների գեղեցկութիւնն ու մաքրութիւնը երբէք չէ կարելի համեմատել միւս գիւղերի հետ: Սրա հետ միասին Հասանքեանդցիները աւելի բարեպաշտ են, քան յիշուած գիւղացիները. թէև քահանայ չունին, բայց եկեղեցիք հաճախները Հասանքեանդցիներից ստացուող արգիւնքի համար միշտ վիճում են իրար հետ: Երկար ժամանակ ամառուայ արօտատեղիներ չունէին, բայց արդէն 14 տարի է, որ մի կերպով ձեռք բերեցին երկու արօտատեղիներ հարեան թուրք գիւղերից, որոնք հարուստ են արօտատեղիներով: Այդ սեփականացրած արօտատեղիներից մէկը կոչւում է Հաւա-մէշասի միւսը Օյուխլու: Երկու երեք տարի սրանից առաջ շատ խաղաղ և հաշտ սպրուկ էին իրար մէջ, գողութիւններ չատ

քիչ էին տեղի ունենում, բայց այժմ թէ մէկը և թէ միւսը շատացել են:

Հասանքեանդի բնակիչները գաղթել են այստեղ Պարսկաստանի Սոմա գաւառից ու խօսում են Սոմեցոյ լեզուով:

Հասանքեանդցիներն ունին 3 հոգի գրագէտներ, 2 ճոթի և մէկ մանրունքի խանութներ, մի դարբնոց, 3—4 հիւաներ, 4—5 որմնադիրներ, 2 սազանդար, մէկ դերձակ: Բնակիչները առողջակազմ և յաղթանդամ մարդիկ են:

Այդ գիւղի նիւթական գրութեանը մեծ քայքայում ու հարուած հասցրեց իրանց գիւղի գեղեցիկ, այգեէտ շրջապատը, որի գեղեցկութիւնից յափշտակուելով՝ հարկային վերակացուները (податной инспекторъ) մնացեալ վարելահողերին տեղեակ չլինելով, խեղճերի հարկերի քանակութիւնն այնքան շատացրեցին, որ Հասանքեանդցիները ստիպուած են ծախել իրանց եղած չեղած ապրանքն ու կահ կարասիքը այդ հարկերը վճարելու համար: Այդ մասին թէև շատ բողոքեցին, բայց մինչև այժմ ասլարդիւն է մնացել նրանց բողոքը, ուստի սպասում են մինչև 1906 թիւը — հարկերի նոր բաժանութիւնը (թովջին):

Գիւղից մօտ է Շատինու հոյակապ վանքը, իր մեծածախս շինութիւններով:

Հասանքեանդից չորս վերստ հեռաւորութեան վրայ, դէպի հիւսիս, Էրտազին չայի աջ ափին, գտնուում է Էրտազին գիւղը: Էրտազինը բաժանուում է Եղիգիս աւերակ քաղաքից (այժմ թուրքաբնակ Ալագեազ գիւղը) միջնորմի նման նոյնպէս հիւսիսից հարաւ ուղղուած առապար լեռնով: Այդ լեռը, որը Դամբթազայ լեռան ճիւղն է, սկսելով Դամբթազայից ու բաժանելով Եղիգիսն Էրտազինից, վերջանում է Յոստուն գիւղի մօտ, որտեղ վերջանում են Եղիգիսի աւերակները, մի աւերակ եկեղեցիով: Այդ խով լեռան գլխի բարձրաբերձ ժայռերի վրայ գեռև կանգնած է իր հոյակապ կամարակապ գոներով ու ամուր պարիսպներով Սմբատայ բերդը:

Դեռևս տասն տարի սրանից առաջ, Էրտազին և Հորբազը գիւղերն իրանց ծոցն առնող լեռները պատած էին թանձր անտառներով, որոնց հետքերից մնում են այժմ երբեմն երբեմն աչքի ընկնող արտուջի ծառերը և դարերի հսկայ սառները — ընկուզենիները, այն կանաչագեղ զարդերի նմուշները, որով Էրտազինը մի ժամանակ բանաստեղծական վայր էր ներկայացնում:

1886 թուի ընտանեկան ցուցակով Էրտազինը կազմում է

40 տուն. այժմ եղել են 70 տուն, բնակիչների թիւը ընդամենը 600 է, որոնցից 320 հոգի արական են, 280 հոգի իգական: Բնակիչները գաղթել են Պարսկաստանի խոյ գաւառից ու խոստում են խոյեցոց լեզուով: Վարելահողերը բոլորը ջրովի են, բայց իբրեւ լեռնային տեղեր, սակաւ արգիւնաւէտ են, լաւ տարին մէկին հինգ արգիւնք են տալիս, բայցի այդ, հողը խիստ սակաւ է, այնպէս, որ ամեն մի հողուն հասնում է 3 փութ հոգ: Բնակիչները պարսպուած են երկրագործութեամբ, անասնապահութեամբ և այգեգործութեամբ: Մի քանիսը տներ ունեն, 1—70 հատ մեղուի փեթակներ: 32 տուն լծկան տաւարներ չունին. 50 տուն մօտաւորապէս հացը ծախ են առնում, դրանք խաղողը, խնձորը, ծիրանը, բոխի և շրէշ բանջարները տանելով Նոր-Քայազետի գաւառը փոխում են ցորնի ու գարու հետ և իրանց օրական պարէնը հայթայթում: Այստեղ ամենից շատ ցանոցը 8 բեռնից աւելի սերմ չէ ցանում: Չորս տներ ունին մինչ 100 հատ ոչխար և մինչ 28 հատ տաւար: Վեց տներ հաշում են հարուստներ, որոնց դրամագլուխը 300 բուրլուց աւել չէ: Այդ գիւղի բնակիչ Գաբրիէլ Տէր-Աւագեանը սկսել է եռանդով տարածել այստեղ նոր տեսակի մեղուապահութիւն, շերամապահութիւն, անասնապահութիւն ու այգեգործութիւն: 550 բուրլով բերել է չվէյցարական տեսակի մ: կով և մի ցուլ. ունէ 70 հատ մեղուի փեթակներ իր պատրաստած նոր տեսակի արկղների մէջ, որոնց խորիսիները ինքն է պատրաստում Տփլիսից բերած մեքենաներով: Շերամապահութեան համար էլ 3 բեռան տեղ տարածութեան վրայ տնկել է թթնիներ: Գիւղացիները հիացքով հետևում են նրա օրինակին: Էրտագինում կան 3 ջրաղաց, 2 սաղանդար, 3 հիւսներ, 3 հասարակ որմնաղիւրներ և 5 գրագէտ: Էրտագինը Դարալագեազի անուանի գիւղերից մէկն է:

Պարսկաստանից գաղթելիս՝ հայերը վարչութիւնից ազատ իրաւունք են ստացել բնութելու Դարալագեազում իրանց բնակութեան տեղեր: Փորձում են բնակուել Ալագեազու հասարակութեան մէջ, բայց տեսնելով աւաղակարտոյ թուրքերի կողմից փառանացող վտանգը, յետ են դառնում Հորս, Ալագեազ և այլն պատուական գիւղերից ու բնակում այլ տեղեր, թողնելով այդ տեղերը թուրքերին: Չորս գիւղ միայն (Էրտագին, Հասանքեանդ, Քարագլուխ և Թառաթում գիւղերի բնակիչները) արհամարհելով վտանգը, բնակում են Ալագեազու հասարակութեան մէջ: Էրտագինցիներն հաշում են այժմ ամենաքաջ գիւղը Դարալագեազում, որոնց մի ուն անգամ չեն կարողանում խիլ թուրքերը: Էրտագինցու անունը ահ ու սար-

սափ է ազդում թուրքերի վրայ. եղել են դէպքեր, որ միակ էրտագինցին տաք կռուի ժամանակ փախցրել է մի քանի տասնեակ թուրքերի:

Գիւղից վերև, Զըռի-ձորում, կայ մի աւերակ աղօթատեղի իր գերեզմանաքարերով, որի վրայ էրտագինցիները մատուռ են շինել: Սրան կոչում են այժմ Զըռի ժամտուն: Բացի այդ, Գիւնէյ-անուանուած հանդում, գիւղից երկու վերստ դէպի հիւսիս, կան աւերակների հետքեր, որոնց ներքև կայ մի այլ, որը ունի գաղտնի մի մուտք, որ տանում է բլուրի միւս կողմը և այնտեղից դուրս է գալիս: Այստեղ վտանգի ժամանակ պատուարուած են եղել մեր նախնիքը: Այս աւերակների շուրջը կան դեռ ևս վայրենացած խաղողի որթեր, տանձի և լոնձորի ծառեր, նաև բազմաթիւ ընկուզենիներ:

Հասանքեանդ գիւղից 10 վերստ հեռաւորութեամբ դէպի արևմտահիւսիս, գտնուում է Բարազլուխ գիւղը: Գիւղը Բարազլուխ անունն ստացել է, հաւանականօրէն, այն քարի գլխին կանգնած մեծ խաչ քարից, որին հանդիպում ես գիւղից ներքև, հարաւային կողմից գիւղը մտնելիս: Գիւղի դիւրքը տափառակ է, բարձր, շրջապատը բաց և ազատ: Հիւսիսային կողմը, ձորակի միջով բղխում են երկու հիւսնալի աղբիւրներ, հարաւային կողմից, մասամբ և հիւսիսից զարդարուած է ծիրանի, խնձորի, սալորի, ուռնու ու բարտիի ծառերով. մի քանի բեռան տեղ տարածութեան վրայ Բարազլուխը ունի խաղողի այգիներ, բայց ստացուած խաղողը այնքան թթուաշ է, որ գինու համար անյարմար է, վարելահողերը աւազոտ են և անպտուղ, որի համար էլ հացը սակաւ տարիներ է ստացւում բաւարար կերպով. նոյնիսկ այդ վարելահողերը բաւարար չեն: Գիւղացիներից ունեւորները ցանում են Ալքեանդ գիւղի թուրքերի հողերը կիսարար և գրեթէ միշտ վիճում են դրացի Սալլու գիւղի թուրքերի հետ, իրարից հող կորզելու համար: Գիւղի մեծամասնութիւնն աղքատ է, այնպէս որ 40 տուն ամենևին լծկան չունին ու ապրում են մի ձիու յոյսով և եթէ չլինէր Նոր-Բայազետի գաւառը, անտանելի կը լինէր քարագլխեցիները դրութիւնը հացի կողմից: Բայց բարերախտաբար ընակիչների մեծ մասը Դարալագեազի բերքերից, օրինակ խաղող, եմշան կամ գիւժիկ,¹⁾ շրէշ, բոխի և ալագեազ²⁾ բեռներով տանում են Նոր-Բայա-

¹⁾ Եմշան—գիւժիկ՝ վայրենի, անտառի միրգէ՝ մանր կարմիր պտուղներով: ²⁾ Ալագեազ բանջար:

դետի գաւառը ու փոխում են այնտեղ ցորենի ու գարու հետ: Անասնապահութիւնը և մեղուապահութիւնը միննոյն է, ինչ որ միւս գիւղերում: Քարագլխի ընակիչները գաղթել են Պարսկաստանի Սոյ գաւառից ու խօսում են խոյկացի լեզուով: 1876 թուի ընտանեկան ցուցակով կազմում էին 55 տուն, այժմ 124 տուն են եղել: Բնակիչների թիւը ընդամենը 946 հոգի է, որոնցից 513 հոգին արական են, 433 հոգի իգական:

Այդ գիւղում հարուստ են թէ դրամագլխով և թէ անասնապահութեամբ երկու նշանաւոր տներ, որոնք գրեթէ իշխում են գիւղին: Այդ երկու տոհմերի մէջ կատարեալ մրցութիւն է տիրում և այդ շարունակում է երկար ժամանակից: Եթէ մի տոհմի անդամներից մէկը երէցփոխ, մելիք կամ շինական դատաւոր եղաւ, անշուշտ միւս տոհմը ևս պիտի աշխատէ նոյնը հետեւելուն ունենալ: Վերջին տարիները այդ մրցութիւնը հասաւ խռովութեան և յայտնի կուռի: Բռնուելով կուռի, սրանք գիւղը ամբողջովին բաժանել են երկու կուսակցութիւնների, որով մինչև օրս շարունակւում է խռովութիւնը և կռիւը նրանց մէջ, յառաջացնելով զանազան աղէտներ գիւղում: Առհասարակ քաւրագլուխները նկատւում են Դարալագեազում իբրև պարծենկոտ մարդիկ: Սիրում են իրանց անունները նաշխել պարսկական կոկիլի և փայլուն անուններով, օրինակ, Դոլուբէկ, Դոլուխան, Նախի բէկ, Ջալալ են: Ունեն քսան հոգի գրագէտներ, երկու ճոթի խանութներ, չորս ջրաղաց և համարեա թէ անգրագէտ մի քահանայ: Գարնան վերջերին Քարագլխի պատանիներն ու երիտասարդները խումբ խումբ գնում են Ելիսաւետապոլի նահանգը և Շարուրի գաւառակը ամիս ու կէս ժամանակով մշակութիւն անելու, մեծ մասամբ հունձ անելու: Ռուսաստան գնացողներ կան միայն մի քանի հոգիներ: Քարագլուխը՝ Նոր-Բայազետի գաւառի սահմանակից հայ գիւղն է Դարալագեազի, որի համար էլ թէ այստեղից Նոր-Բայազետի գաւառը և թէ այնտեղից Դարալագեազ եկողները գիշերում են Քարագլխում, որոնց հիւրասէր գիւղացիները սիրով ընդունում են ու ապաստան տալիս: Քարագլխից մինչև Սէլիմի քարուանսարան 13 վերստ է, մինչև Նոր-Բայազետի սահմանակից գիւղերը 3—3½ ժամուայ ճանապարհ և մինչև Նոր-Բայազետ քաղաքը մի օրուայ ճանապարհ:

Սէլիմի քարվանսարան շինուած է 220 թուականին հայոց ունի 40 քայլ երկարութիւն և 20 քայլ լայնութիւն, կանգնած է 16 սիւների վրայ, շինած կովածու քարերից, մնացած բոլոր բաժանմունքները նոյնպէս քարաշէն են, զեղեցկաքանդակ և

հոյակապ, որոնք հիացք են պատճառում ամեն մի տեսնողի: Քարվանսարան անտէր է և աւերակ, ոչ ոք էլ չէ մտածում շէնացնելու նրան: Քարազլիից դէպի հիւսիս, հինգ վերստ հեռաւորութեան վրայ, մի կապոյտ բլուրի գլխին, գտնւում է մի աւերակ աղօթատեղի, որին քարազլուխցիները փայտով ծածկել են ու անուանում են Թուխ-Մանուկ: Սրա շուրջը սփռւած են բազմաթիւ գեղեցկաքանդակ գերեզմանաքարեր: Այստեղ կիրակիները շրջակայ գիւղերից ուխտ են գալիս բազմաթիւ ուխտաւորներ:

Քարազլիից $1\frac{1}{2}$ վերստ հեռաւորութեամբ դէպի արեւմուտ, Սելիմի գետակի աջ ափի մօտ դրւած է Թառաթում գիւղը:

1886 թուի ընտանեկան ցուցակով կազմում էին 28 տուն, իսկ այժմ 48 տուն: Բնակիչների թիւը 370 է, որոնցից 190 հոգին արական են, 180 իգական: Այդ գիւղի բնակիչները՝ Այաւրից յետոյ, երկրորդ տեղն են բռնում իրանց վատառողջութեամբ: 48 տան մէջ կան 11 հոգի կոյրեր, 12 հոգի ճաղատներ, մնացածներն էլ խեղճ և ողորմելի մարդիկ են, բացի մի քանի տներից: Չորս տներ կան, որոնք ամբողջ Ալաբաղու հասարակութեան գիւղի բնակիչներից գերազանցում են իրանց հարըստութեամբ: Այդ հարստութիւնը ձեռք են բերել վաղուց ժամանակից ոչխար ու տաւարի, նաև ձոթի առևտրով: Դարաւագեալում այդ չորս տները յայտնի են «Օհան Գէվօներ» անունով: Թառաթումցիների վարելահողերի մեծ մասը անջրդի է: Անտառների անհաշիւ կոտորելուց այդ վարելահողերը բերքից ընկել են: Եւ ընկնում են: Այդ բանը օրէցօր աւելանում է և աւելի զգալի դառնում ամառները, երբ յորդահոս անձրևներից զոյացած հեղեղները իրանց կործանիչ հոսանքով պատահում են հողերի կուրծքը ու ողողում, տանում դէպի Արփաչայ նրանց պիտանացու մասերը:

Թառաթումի բնակիչները գաղթել են Պարսկաստանի Խոյ գաւառից, խօսում են խոյեցոյ լեզուով: Բացի ծիրանի, խնձորի, սալորի ծառերից, գիւղի շրջապատում, 5—6 բեռան տեղ տարածութեան վրայ գտնւում են նաև խաղողի այգիներ: Վեց տներ ունեն 1—12 փեթակ մեղուներ, մի քանի տներում կանայք գորգ ու կապերա են գործում: Գիւղի մեծամասնութիւնն աղքատ է. ամեն զարնան 12—18 հոգի երիտասարդներ ու պատանիներ ղրիմում են հարևան գաւառներն ու նահանգները մըշակութիւն անելու ամիս ու կէս ժամանակով, ապա վերադառ-

հուժմ են: Ունեն 2 ջրաղաց, մի պատուական աղբիւր, 4—5 հոգի գրագէտներ և մի կիսագրագէտ քահանայ:

Ընթերցողը կարդալով Այազեազու հասարակութեան գիւղերի նկարագիրը, կը գարմանայ, թէ այդ տեսակ անապահով դրութեան մէջ Թաութումի Օհան Գեվօնները ինչպէս են կարողացել այդքան ժամանակ պահպանել իրանց կայքը և գոյութիւնը՝ շրջապատող սովալլուկ և գաղանաբարոյ թուրքերի ճանկերից: Այդ հանելուկն իմանալու համար, պէտք է ականատես լինել այդ չորս տների գործ դրած նախազուշութեան միջոցներին—այն ստորերկրեայ անցքերին ու մուտքերին, նաև իրար կպած տների պատերում մէջէմէջ թողուած ծակերին, որոնց մէկի տան մէջ հազալիս, խօսելիս և փռշտալիս, լոլոր տները լսում են: Այդ դարանների շնորհիւ ձերբակալուեց աւագակ Օղուրին, երբ ներս էր խուժել Օհան Գեվօնների տունը աւարի ու կողոպուտի ենթարկելու:

Մ. Տ. Ա.

(Կը շարունակուի)

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ*)

Սիրելի եղբայր Գէորգ.

Քու նախատական նամակը ստացայ. շնորհակալ եմ. երեւի աւել լաւին արժանի չէի: Տաղարանը կ'ուղղեմ ինչպէս որ դու ցանկանում ես: Բուդաղեանի առաջ ինձ փոքր ինչ արդարացներու համար՝ տնայ, խնդրեմ, 50 հատ տաղարան և 200 հատ այրբենարան նորա Յովհաննէս եղբորը մօտ, որ այժմ յետ դարձաւ Մոսկով և կենում է въ д. 3-ей гимназіи: Տաղարանը կ'աւես, այդտեղ ծախելու համար է, իսկ այրբենարանի մասին այս կ'աւելացնես (ի հարկէ պէտք է սուտ ասել) իբր թէ դու յանձնել էիր մի վաճառականի, որ Յաժտարխանի վրայով մտադիր էր Ղզլար չուելու, նորա ճանապարհորդութիւնը պատեն և յաջողակ համարելով՝ յանձնեցիր (4 ամիս դորանից առաջ) 180 հատ այրբենարան Գրիգոր Բուդաղեանին հասցնել. բայց որովհետեւ այդ (ի հարկէ սուտ) ճանապարհորդը փոխել է իւր մը՝ տաղբուծիւնը Յաժտարխանի վրայով երթալը, ուրեմն մեր գրքերը Ղզլար են գնացել. իսկ նոցա փոխարէն տալիս ես նորան այս 200 հատը, որ դու միջոց չ'ունենալով և իւր խոստմանը համեմատ (որ ինձ այս տեղ արաւ) պիտի հասնի նորա եղբորը Յաժտարխան: Իսկ խալաթովից ան մի փոքրիկ ձեռագիր թէ՛ նա ստացել է քեզանից 400 հատ այրբենարան, որոնցից

*) Մեր նոր գրականութեան և հասարակութեան ինքնագիտակցութեան լիակատար պատմութիւնը գրելու համար դեռ պակասում են շատ և շատ նիւթեր, որոնց մէջ գործիչների մասնաւոր նամակները առաջնակարգ տեղ են բռնում: «Մուրճի» մէջ մենք արդէն տուել ենք Սեփ. Նազարեանի նամակները, այժմ տպում ենք Ռափայէլ Պապկանեանի նամակները իր մտերիմ բարեկամներին՝ Գէորգ Քանանեանին և Մ. Թիմուրեանին: Նամակներից մի քանիսի վրայ չէ նշանակուած ժամանակը, սակայն գրանց բովանդակութիւնից դժուար չէ որոշել թէ բանաստեղծի կեանքի ո՞ր շրջանից են: Ուղղագրութիւնը անփոփոխ է պահպանուած:

Նմր.

200-ը հասցնելու է բժիշկ Յովհաննէսեանին, իսկ միւս 200-ը Տէր Յովսէփեանին: Կարելի է որ այս կերպով յետ դարձնեմ Բուդաղեանի և Սանասարեանի հարկաւոր հաւատարմութիւնը: Քու նամակը տուի Բուդաղեանին. նա քեզ ուղարկեց, կարծեմ, նամակ: Զարմանում եմ՝ ի՞նչպէս կորաւ 4-րորդ թուահամարը:

Գէորգ, ես մի բանից սաստիկ վախենում եմ. վա՛յ թէ այն մարդիկ, որոնք զալու են Ղզլարի գործի մասին՝ ուղեն ուրիշ ճամբով առաջ տանել իրանց քաղաքի գործը քանթէ պր. Ֆիդանեանը, այդ ժամանակ իմացած լինես որ Բուդաղեանը մեզ երկուսիս էլ ոստիկ խաբեբաներ պիտի կարծէ, և դարտակ գործերով պարապող: Ես վախենում եմ որ Ֆիդանեանը Մոսկովումը լինելով աւել նենգութիւն են գործածել քեզ հետ և դու այն չես հասկացել. այսինքն՝ նոքա ուղացել են իմանալ՝ արդեօք հնար կ'այ մի օգնութիւն անելու. և երբ որ մեզանից դրական պատասխան ստացան՝ այն ժամանակ ինքեա՜ք առանց կողմնակի մամանակցութեան ուղում են գործել: Մեզ համար այդ տեղումը ոչինչ ֆլաւս չի կայ, մենք (զոնէ ես) շատ ուրախ եմ որ նոքա իւրեանց նպատակին հասնեն. բայց ամօթ, որ միջոցները միշտ խաբեբայական և նենգութեամբ է կատարում: Բուդաղեանը անս ամբողջ ամիս է որ դէս ու դէն վազվզում է իմ յորգորանօք, որովհետեւ ես նորան նկարագրել եմ քեզ մի այնպիսի անձն, որի խօսքը սարի նման ամուր է. ուրեմն նա քեզ և բու խօսքին հաւատաց առաւել քան թէ բոլոր Ղզլարի հասարակութեանը. և ի՞նչ:

Ռափայէլ

1854 մայիսի 1 Ս. Պ. Բ.

Սիրելի եղբայր Թիմուրեան.

Այս մօտ ժամանակներումս ես քեզ հինգ պիւր եմ ուղարկել մին մինի քամակից, մեծ մասը եկաւորների ձեռքով. կարծում եմ որ անմիջապէս ամենն էլ ստացած պիտի լինիս, թէև նոցա կորուստը մեծ տխրութիւն չէր պատճառիլ ինձ՝ բացի վերջինից, որ դու հինգշաբթի սուրհանդակով պիտի ստանայիր, եթէ մի տարաբաղդութիւն չի պատահել ճամբուն: Խնդրեմ շուտով միամտացնես ինձ՝ ստացա՞ր արդեօք այն նամակը, ուղարկեցի՞ր հօրս մէջի ծրարած նամակը և ի՞նչ է քու ինձ տալու պատասխանդ: Ես երեւակայել չեմ կարող, որ ես մի բացասական, տխրալի պատասխան պիտի լսեմ քեզանից. վախենում եմ Պօղոսովի խանութ երթալ՝ չիլի քեզանից մի ինձ համար անհաճելի նամակ տան այնտեղ. այնքան աչքս

վախեցել է թմրեցուցիչ յոյսերից: Բայց միւս կողմից յոյսը, այս եղական իմ մխիթարիչը, ասում է, որ ընդ կարող էին հեշտութեամբ օգնել Մ. Տ.-Մ. Ս. Գ. կային. վերջինին իմ միջնորդութեամբ նեղ օրումը դու ինքդ օգնել էիր անցեալ տարի, այդ լաւ միտս է: Անհամբերութեամբ սպասում եմ նամակդ, այնքան մեծ է անհամբերութիւնս, որ ոչ հանդիստ քնել եմ կարող, ոչ նստել, ոչ մտածել, ոչ խօսել. դրելի մասին էլ մի հարցնիլ. միայն քաշում եմ, քաշում եմ խիստ սաստիկ. ծանօթներս սկսել են վտարանքի մէջ ընկնել, որ ես թորացաւ չի ստանամ: Ձեռն սխալել, որոնք ասել են քեզ որ ես նիհարացել եմ. միւս օր գերասանուհին էլ նոյնը ասաց. խեղճ կին, ինչպէս կարեկցում է ինձ, ինչպէս աշխատում է ամեն կերպով մխիթարել, ասես թէ հարազատ և սրտացաւ քոյրս է: Խնդրեմ և կրկին անգամ խնդրեմ, թէ չես ճարել այն պահանջած գումարս, որքան կարելի է աշխատէ, լարէ ամեն դժուարութիւնդ. յաջողութիւնիցդ է կախած առաջիկայ տարուայ կուրուստս. կամ օգտիւ'ի գործ գնելը: Մի'թէ կարող եմ հանգիստ մնալ մի տեղ, երբ որ Համալսարանը իւր 12 առարկաներովը խղճմտանքի նման աչքիս առաջ կանգնած՝ ամեն վայրկեան շնչում է ականջիս. «Թանգ է օրդ, թանգ է ժամդ, թանգ է րոպէդ»: Միայն այժմ կարող եմ ասել. Աշխարք աչքիս սեցել է հողիս մէջը զեցել է... Ինչպէս որ 3 տարի առաջ սիրահարի բերնով ասել էի: Թիմուրեան, Թիմուրեան, ճանաչեցի աշխարք, բայց ափսոս որ միայն սև կողմիցը, վարդը չի քաղած՝ չարաչար ծակծկեցի ձեռքս նորա փուշերովը: Մարդիկ, մարդիկ, քանիսի՞ն արդեօք ինչպէս ինձ, փոխանակ մխիթարող բարեկամ անելու՝ ձեր սառուցի սրտով անհաշտ թշնամի էք դարձրել: Մի'թէ այսուհետև յոյս պիտի ունենար, որ ինձանից կարող է ձեր աչքը սրբող մարդ գուրս գալ, կարճդ էք ինձ մեղադրել, եթէ ես երբ և իցէ դարձնեմ աչքս ձեր սովալլուկ, անտէրունջ որբուկներէն և այն չոր պատառ հացը, որ կ'աւելանայ սեղանիցս ես շուտով տամ բակիս շանը, քանթէ ձեր դաւակնելուն՝ մի'թէ ես, նաև ճանաչելով, խոստովանելով սրտումս ձեր անմեղութիւնը, այսուհետև պիտի պաշտպանեմ, ջատագովեմ ձեզ, ինչպէս որ առաջ: Աւագուտ տափից մի՛ ըսպտէք հունձ. ձեր բարեբարութիւնը ցանած չէ իմ սրտի մէջ, ուրեմն պտուղները քաղելու յոյս մի՛ ունենաք: Ես դեռ ևս չէի տեսնուել թամամշեանի հետ, որ նորա տուած պատասխանը կարգացի նամակումդ. էլ աւելորդ էր երթալ նրա մօտ այցելութեան համար. ցածահոգութիւն էր այդ իմ կարծիքով: Զարմանալի՜ փարիսեցիութիւն, անօրինակ ստախօսութիւն, ով է

այն թշուառ անձը, որին որ Թամամշեանը (ինչպէս որ ինքը պարծանցել է քու առաջ) բարերարութիւն է արել, երջանկացրել է: Արդեօք իր սրտակից բարեկամներուն տուն հրաւիրելը և մեծընթին է համարում նա բարերարութիւն, թէ՛ այն է նորա բարերարութիւնը, որ 2 տարի առաջ մի շնարարոյ պոռնիկի տուեց ('ի հարկէ ընդգէմ կամացը) մօտ 500 մանէթ որով իրօք կարող էր ապահովացնել (եթէ ոչ իմ) գոնէ մի հայ խեղճ երիտասարդի ապագայ վիճակը. բայց բաց'ի այսպիսի բարերարութիւններէ նա ուրիշ բան չի՝ և չի արել: Թողնենք այս տխրալի առարկան. առանց դորան էլ կարծեմ ես թիւնաւորել եմ քու ամեն մի բաղցր ժամը. փոքր խօսկնք ուրիշ բանի վրայ: Մեր Նիկոլեան սիրահարուել է մի սիրուն կրթած աղջկայ վրայ. 6 ամիս է որ գնում գալիս էր նորա ծնողաց տուն ընդ պատրուակաւ, որ նորա մօրաքեռորդու հետ պարապում է, բայց արդեամբ նորա ականջին սիրոյ երգեր էր երգում: Երեկ չէ՞ մեկէլ օր (այսօր 19 է Յունիսի) իմ բարեկամի սիրական Լուիզ-Էմիլեան անգգուշութեամբ սիրոյ նամակը թողել է բարձի վրայ, որ մայրը դտել է և կարդացել է: Հիմի դու կարող ես երևակայել մեր խղճուկ Նիկոլեայի գրութիւնը: Կասկած կայ որ նորան կ'արգելէին այն օրից ոտքը նորանց տուն դնել՝ ցածահոգի Հառթմանը (դորա ընկերը) փոխանակ նոցա բարկութիւնը հանդարտացնելու՝ սկսել է աւել գրգռել՝ անուանելով խեղճին լիրը, անգգամ և բողբոջած: Բայց հրքան չարահոգի է, այնքան էլ յիմար է: Նիկոլեան ամեն օր ստանում է սիրականից մինը մինից աւել կըքալից նամակներ և փոխադարձը իմ օգնութեամբ ինքն էլ գրում է: Ես գտայ հընար ծանօթանալու պարոն Էմիլեանի հետ և նորա բոլոր գերգաստանի՝ հէնց նորա համար որ բանը շուտացնենք. այս տարի սեպտեմբերին Նիկոլեան ուզում է տալ վերջի քննութիւնը և ճարտարապետ դուրս գալ. բայց որովհետեւ Լուիզայի անհոգի ծնողքը և վատասիրտ մօրաքեռ որդին Վիկտոր Հառթմանը ամենեւին լսել չեն ուզում այդպիսի բան, Նիկոլեան և Լուիզան երգում արին, որ հէնց առաջի դիպուածին փախչեն ինձ հետ միասին մերձակայ գիւղ և այնտեղ ամենից թաքուն պըսակուեն և յետ գան. ես պիտի լինեմ նոցա խաչեղբայրը. մեր հիմիկուայ մտադրութիւնը այս է. ինչ կ'լինի յետոյ՝ Աստուծոյ է միայն յայտնի. ես իմ կասկածներով և գիմաղարծութիւններով չեմ ուզում խղճուկ սիրահարեալ զոյգերու սիրտը կոտրել, թող մխրթարուին իւրեանց համար. բայց պէտք է ասել քեզ, որ աղջիկը մի ջնաշխարհիկ արարած է. հրեշտակի գեղեցկութիւն նորա յետին արժանաւորութիւնն է. ես գեռ ես չէի

տեսել զորա պէս միեւնոյն ժամանակ միասին իւր մէջ միաւորած կըթութիւն, բարեսրտութիւն, քնքուշութիւն և գեղեցկութիւն: Խեղճ Նիկոլեան շատ տխուր է: Քեզ շատ և շատ բարեւ է անում. նմանապէս Վանիւշը, Ասատուրովը, Քանանեանցը: Քերոբին մի շաբաթ է որ չեմ տեսել: Նորերումս ծանօթացայ մի հայ երիտասարդի հետ, ազգանունը Հայկազեանց, Շուշեցի, տաք սրտով և ազգին սրտացաւ տղայ է: Գետափով անցնելիս պատահմամբ հանդիպեցայ Սուլիսանովի հետ. այնքան ուրախացայ, որ կարծես թէ երկար բացակայութիւնից յետ հարազատ եղբօրս տեսայ. տարի Ասատուրովի տուն և երկար խօսեցանք այնտեղ. բայց ափսոս որ ձեր մասին հետաքրքիր բաներ չէր պատմում: Շուտով գալու է: Մի անգամ ես էլ գնացի նորա մօտ Ասատուրովի հետ, բայց չի գտայ տանը. Յարսկըյ-սելօ էր գնացել: Ինձանից շատ բարեւ Սիմեօնին, Քանանեանին, Քաւթարածէին, Գիւզելեանին, Սուրենեանին և ամեն սիրելի ծանօթներուս:

Մնաս բարեւ Քու Ռափայէլ

Իմ հասցէն այսուհետեւ այսպէս գրէ.

№ №

На Вознесенскомъ проспектъ, на Офицерской улицѣ, въ д. Бага, на квартирѣ переплетнаго мастера Паули. Въ собственныя руки.

Մեր եկաւորները ուշացան: Ի՞նչ կ'ընշանակէ:

Եղբայր Գէորգ.

Մի շաբաթ առաջ Սանասարեանը Մոսկովումն էր և ինձ բերեց բաւականին վատ լուր, այսինքն դու դեռ ես չեմ տարել Խալաթովին այբբենարանները. Բուդազեանը նմանապէս անբաւական է մեզանից, որ նորա եղբայրը տակաւին չի ստացել ոչ այբբենարանները և ոչ 10-10 հատ Գամառները. զարմանք բան: Խնդրեմ շուտով ուղղէ արած սխալը. այսինքն տար Խալաթովին 200 այբբենարան 40 կոպէկանոցից և հասցէն Տէր-Յովսէփեանի վրայ լինի. նմանապէս 300 հատ տուր նորան, և հասցէն լինի городскому лекарю Артемію Іоанесіани. նմանապէս Խալաթովին տուր 200 առաջի թուահամարից Գամառի որ Տէր-Յովսէփեանը ստանայ. ֆնացածները այս օրերը կ'ստանաս և հէնց նորա միջնորդութեամբ կ'ուղարկենք Թիֆլիզ: Ահա ուղարկում եմ տաղարաններ 2 կապոցքով, փոքրի մէջ 25 հատ է, այն դու կը ցրուես Մոսկովումը. միւսի մէջ կայ 30 հատ, այն կ'տաս Ивану Захарьевичу Будагову, живетъ онъ въ д. 3-й

Гимназіи: Մանր տառերը պատրաստ է. 5 թուահամարումը կը տեսնես статьи: Խնդրեմ շուտով ուղարկէ փող, խեղդվում եմ: Ֆիդանեանի այցելութեան տոմսակները պատրաստ է, 6 մանէթ ուղարկէ նոցա համար, որ ստանամ литографчикъ-ից: Ղզլարի գործի մասին գտայ գործունեայ և հաւատարիմ մարդ, նա ուզում է իմանալ въ чемъ состоитъ ихъ просьба или требова- ние այդ պէտք է նա ունենայ և նմանապէս документы, на чемъ онъ могъ-бы основываться. և ի՞նչ նշանակում էք վարձը: Առաջուանից հիվ պիտի անէ ծախսը. և այլն: Դիւլորիէն խընդ- րում է Ստեփաննոս Օրբէլեան պատմութիւնը Սիւնեաց. հար- ցուր Սուրենեանից՝ կմյ արդեօք այն Լազարեան ձեմարանումը. և ինձ իմաց տուր: Պէտք է поддерживать ծանօթութիւնը Փա- րիզի հետ, Այվազովսքիի ինդիւրն էլ, և թէ հնար կայ՝ առաջա- ցուր այդ տեղ. պէտք է դրա հետ ևս գործ ունենալ: Իզմիրեանը за граница գնաց: Ես անհամբերութեամբ սպասում եմ քեզա- նից փող և այն խնդիրքներուս կատարելը: Ես բառարան եմ պատրաստում:

Քու եղբայր Ռափայէլ

24 Փետր.

Սիրելի եղբայր՝ Գէորգ,

Մեղադրանքդ ՚ի զուր են միանգամայն: Ֆակտը ես քեզ միշտ ասում եմ ինչպէս ֆակտ, իսկ յոյսը ես ընդունում եմ արդէն ինչպէս դիւլորութեամբ կատարելի. ես ի՞նչ եմ մեղաւոր որ մի քանի անպիտան անձինք, ինչպէս որ Մատթեոսը, Մսու- րը և այլն խափան են լինում ամեն բարի կատարման, բայց և այնպէս ես շարունակում եմ վարժապետութիւնը իշխան Բէհ- րութեանին, Արդութինսկիին, և աղնիւ Սմբատեանին և Ղոռ- ւանեանին. բայց վկայագիր վաղ կամ ուշ պէտք է: Պր. Շան- շիեմը չէ չի ասում բայց բանը էգուց միւս օրի է ձգում: Մա- նասարովին ժամումը տեսայ: Առանձին բան չի խօսեց. շարա- թուայ մէջ հրաւիրեց:

Ես քեզ 2 անգամ ուղարկել էի այբբենարաններ թուով 700-ի մօտ. այժմ ևս ուղարկում եմ 399: Խնդրեմ 150 հատ կապուտից և 30 հատ 30 կոպէկանոցից ուղարկես Յաշտար- խան Դրիգոր Բուդաղովի վրայ. իսկ 100 կապուտից 75 . . . *) 25 լուից ուղարկես Նախիջևան մօրս վրայ: Օրաց

*) Այստեղ ձեռագիրը պատռուած է:

. նուժ է, Գամառը տպուեցաւ, կ'հրամայես ցրուել
 սենք, ինչպէս խօսք էինք տուել:

Ռափայէլ

Թիմուրեան,

Անցեալ նամակիդ պատասխանը երկու տողով գրել էի նախընթաց նամակումս, յուսալով որ այս անգամին աւել ընդարձակ կ'ղրեմ. թէև այս ուղում եմ այս բողէիս քեզ հետ փոքր ինչ երկար խօսել, բայց որ մտիկ եմ անում թղթիս վրայ՝ տեսնում եմ որ անհնարին է այդ. ուրեմն կամայ ակամայ պիտի խօսիմ լակոնիկաբար*): Այս ոտանաւորը, որ քեզ կը տայ Անանեան—Վարդանի թաղումը—ես վաղուց յօրինել էի երեւակայութենումս միայն թէ յարմար ժամանակ չէի գտնում թղթի աւանդելու, որ վերջապէս կատարեցի. թէև այն չի յայտնեցի ինչ որ ուղում էի, գէթ ոչ այն աստիճանի ազդու Նիւթը միանգամայն շինովի է. ոչ մի պատմաբան, նաև եղիշէն չի գրել նորա (Վարդանի) յուղարկաւորութիւնը. մեզ յայտնի չէ այն ժամանակուայ ծէսը. ես առաւել անկեղծն ի պատերազմի. պէտք էր ստեղծել: Դարձեալ չգիտեմ թաղման ժամանակ կայի՞ն արդեօք կնանիք. արդեօք Աւարայրումը թաղեցին նորան թէ տարին նորան կալուածք կամ մի որոշ տեղ. ես թաղում եմ նորան Աւարայրի դաշտումը. վրան սուղ անել եմ տալիս նորա կնկան ու աղջկան և զինուորներին, որ ամենը միասին առած լաւպատկեր է. բայց այժմ այսքանով բաւականացիր:

Փող չի կայ, բանս չի յառաջանում. 6 հատ նոր գիրք ունիմ տպելու ամեն կերպով պատրաստ և չեմ կարող բան սկսել. վնջ ինձ: Հանդամանքս դառն է: Ինձ ստիպում են ուսանող լիւնել և ոչ ազատ լսող, թէ չէ դձուրս արի, ասում են պէտք է ուսանողի շոր կարել, որ բիչ բիչ 70 մանէթ կ'նստի: Այս նոր օրէնքն էլ իմ տարաբաղդութիւնից դուրս եկաւ գլխիս վրայ:

Մնամ թշուառ բարեկամ քո Ռափայէլ:

Ազնուահոգի բարեկամ Գևորգ.

Մի մեղադրիլ ինձ, որ քեզ առանձին թղթի վրայ չեմ գրում նամակ. ձեռումս 10 կոպէկից աւել չունիմ. բայց թէ փոքր ինչ թողլթ աւելացնեմ ծրարի մէջ՝ գուցէ նշանակածից

*) Այս և յաջորդ նամակը գրուած են մի փոքրիկ կտոր թղթի երկու երեսների վրայ:

ծանր գայ՝ այդ պատճառով անտեսութիւն եմ անում: Արժանի՞ է արդեօք քեզ այս ոտանաւորը որ ես համարձակեցայ քեզ նուիրել. չի՞ խրանացնիլ արդեօք քու լսողութիւնը, որ սովոր է նիրհել Շիլլէրի դաշն հնչիւններով: Եթէ լինէր դա խմորումն մտաց կամ պտուղ դատարկութեան սրտի կամ արդիւնք անքուն գիշերոյ՝ այն ժամանակ ես իհարկէ քեզ կ'վիրաւորէի դորանով, բայց այդ իմ հոգուս խորհրդի հոսումն է, ուստի արժանի քու բարեկամութեանը:—Գործերս կանգնել է. բան չի յառաջանում: Ես միանգամայն սառած մնացել եմ: Երբ որ մեր աշխատանքը արդիւնք չի բերում, մենք միանգամայն կորցնում ենք մարմնոյ և հոգւոյ զօրութիւնը: Գոնէ ձեր նամակներումը պիտի գտնէի ես այս ժամանակներումս, փոքր ինչ մը խիթարութիւն. բայց դուք ինչպէս ժրաջան ուսանողներ՝ չէք արժանացնում ինձ մի տող նամակ: Ձ օր առաջ սուրհանդակով ուղարկել էի ձեզ նամակ: Մ'անք բարեւ:

Բարեացակամ հղրայր քո

Ռափայէլ

Հա, հա, սիրական Գէորգ, թէ որ մինի անիւը կանգնել է՝ մարդկային կարողութիւնը թոյլ է տալ նորան նոր շարժումն, մինչև որ պատահուները կամ բաւզը կամ Վերին խնամքը (որը ուզես հասկացիր) չի բարեհաճէ ձգել իր զանդաղ ձեռքը դէպի նորան. միանգամայն այսպէս իմացիր և մեր ձեռնարկութիւնը՝ մենք չունինք բարի կամք և միևնոյն ժամանակ հաստատ և անվրդով, մենք չունինք անշեղելի եռանդ դէպի մեր ձեռնարկութիւնը, մենք չենք հասկանում մեր ազգի կարիքը և պատրաստ չենք լքցնել նորա պակասութիւնները՝ իսկ մեզանից խելով և մեզ դրկելով կարեւորից. և ի՜նչ. մեր ամեն աշխատութիւնը՝ ի դերե է ելնում մենք մնում ենք ամեն կողմանէ անօգնական, ենթարկուած ամեն կերպ անբաւականութեան, առարկայ ամեն չարամիտ մարդկերանց առարկայ բամբասանքին. թէ դործունեայ ենք, թէ անդործ, թէ խօսում ենք, թէ լռած՝ ողջը մին է՝ մարդիկ մեր ամեն քայլը իրանց կերպի են հասկանում, մեզ փաթաթել են իրանց կոպիտ նախապաշարմանց և չարակամութեան ուռվանով՝ ոչ մօտենալ են թողնում իրանց, ոչ հեռանալ նոցանից: Գնա ու այնուհետև, բան յառաջացուր. քար լինէր, կ'ճաքէր, ուր մնաց մեզ պէս անաղաշուպան տուկախեալ էակը:

Ստացի՛ք Գ. Քաթիպանիւնը. նոցանից առաջ մի օրով մի նամակ էի գրել՝ իբրև կարապետ: Ինչպէս տեսնում ես այս

Թուահամարը շատ գերադանց է առաջինից. բայց այստեղ էլ բամբաստում են, 'ի հարկէ, ասում են 6 ամիսը մի փոքրիկ տետրը լոյս տալը դժուար չէ. բայց ինքեանք մինչև 45 ամաց հասակը չեն յանդգնիլ 6 տող բան ոչ թէ տպել, այլ գրել. չեն 'ուզում լսել կամ հասկանալ մեր կամ աւել մօտ՝ իմ շարժառիթները, ինչու այսպէս արի և ոչ այլ ազգ. ինչպէս ասացի՝ նոցա համար լաւ է բանի վատ կողմը տեսնել, քան թէ լաւ. ի՞նչ զարմանք, եթէ մեր աշխատութեան ուշանալը նոցա աւել բերկրալի է, քան թէ՝ տխրելի: Ես քեզ խնդրեմ, ինչպէս առաջ գրէ ինձ քո Թիմուրեանի նկատմունքները վատ կողմից, որ միւս անգամ այդ պակասութիւններից զգուշանում. նմանապէս գրէ այն ինչ կը խօսեն (եթէ կ'արժանացնեն խօսելու նոցա վրայ) մենք կը նմանենք այն մեղուին, որ ամեն ծաղկից մի լաւ բան քաղում է՝ թոյնը և աղտը մէջը թողնելով:

Տպուեցաւ մեր գրքոյկը Ֆոիդրիքսօնի տպարանումը և այդպէս կ'շարունակուի՝ մինչև դուրս գայ հրաման մեր անուամբ. ես նոցա հետ օրինաւոր պայման կապեցի, որ 2 շաբաթը մի թերթ կարողանայ դուրս տալ. ուրեմն քու ցանկացած սխտեմային այժմ մենք կարող ենք հետևել. բայց թէ (լաւ իմացիր) մեզ անակնկալ օգնութեան չի գայ ուստիք, կամ մեր գրքոյկները հաւաստի և շուտ չի ծախուի՝ տառերս կ'կորչեն պայմանի դօրութեամբ, ուրեմն դու քու անելուդ արշն, եթէ Իզմիրովը գայ այդտեղ (պատճառ որ շուտով գալու է) այն մասին անպատճառ խօսիր, թէ չէ ուրիշ բան չի օգնիլ, թէկուզ քարը տռաքի:

Վարդանը ամենը հարցնում են. Վանիւշը ովին ասես պատմել է. հիմի իմ գլոխս հոտացնում են անցնող վարձողը. ուղարկում եմ քեզ 66 տող բան, բայց խնդրեմ առաջինները, այսինքն մինչև այստեղ գրածս յետ ուղարկես, կարելի է շուտով աւարտեմ և տպեմ. Վանիւշը միտք ունի նոցա համար 4 կամ 5 վիմատիպ պատկերներ շինել:—Սուլթան Շահը կարծեմ մոռացել է հօրեղբօրը նոյց տալ ստորագրութեան թերթը. միտք ձգիր, որովհետև ես այս շաբաթ նոցա համար թուխտ առի և միտք ունիմ իսկոյն 2 թուահամարից յետ տպել սկսել: Նմանապէս ասան Սուլթան Շահին, որ գրէ այստեղ, որ ինձ տան նորա 6 լեզուի խօսակցութիւնը. նոցա այն պէտք չէ, ինձ շատ պէտք է: Պոսպիսի համար բան չեն գրում, ի՞նչ եղաւ:

Քերորը քեզանից նամակ է սպասում, բարև է անում. նմանապէս Վանիւշը, Նիկողեան, Իզմիրովը, Ոսկանը, Քաթան-

եանը . . . *) և կինը նորա: Ինձանից բարև արա առ հասարակ ամենին, ծոյլ Սիմէօնին մանաւանդ:

Եղբայր Թիմուրեան, **)

Ես քու նամակիդ պատասխանը ուշացրի. պատճառը ծուլութիւնն չէր, ինչպէս և քու նամակի ուշանալը ես չեմ համարձակիլ ծուլութեան հետեանք կարծել: Ուրախ եմ որ շուտ կ'աւարտես վերջի քննութիւնդ և գուցէ շուտով կը տեսնուինք: Ես հաստատ միտքս դրել եմ բարեկենդանին գալ ձեզ այցելութեան 3 կամ 4 օրուայ. կ'գայ կարելի է Թրիֆանովն էլ, բայց այդ կախած են զանազան յաջողակ դիպուածներից: Ո՛րքան ձանձրացել եմ իմ գրութիւնից՝ միայն Աստուծոյ է յայտնի, թէ՛ն՝ դուք շատ անգամ նոյնը գրում էք ինձ, բայց ինչ կուզէ լինի՝ դուք պատած էք գոնէ այնպիսի մարդիկներով, որոնց հետ միշտ կարող էք փոփոխուել ուրախ և տխրալի զգացմունքներով: Բայց ես, իմ պարզ բնութիւնովս, աշխարհի պայմաններով եզրափակած՝ շատ ու շատ անգամ ստիպուած եմ դերասանի դիմակ հագած երեսիս՝ շարժիլ և խօսիլ ինձ պատած հոգիների հետ. դժուար է այս հասակումը և այս գաղափարներով փոխուել ինձ. և եթէ ես ձեզ գրում եմ՝ թէ ձեր գրութիւնն է և ձեր յիշատակը ինձ ոգևորող և պահպանողը, դուք կարող էք քօմպլիմէնթ համարել, այն ինչ այդ իմ բացասիրտ խոստովանանքն է: Բարև են անում քեզ Վանիւշը և Նիկոլեան:

Բարև՝ արա սարկաւազին, Տէր Յարութիւն Մսերին
Քու հոգեհարազատ, Ռաֆայէլից

Ս.-Պ. Բուրգ 25

Սիրելի Գևորգ

Քու 9-ին մաքտի գրած գիրը, ուղարկած 30 մանէթը և Կուզէնի շարադրութիւնը ստացայ ն. ամսոյ 15-ին. միւս օր գրեցի պատասխանը և որքան կարողացայ արդարացողի ինքըս ինձի քու առաջ և կարծեմ որ հիմի դու միանգամայն միամիտ ես իմ մոտին, և քու կասկածները և մեղադրանքը իմ նկատմամբ միանգամայն ի դուր էին: Չի մնալով քու պատասխանին և գտնելով յաջողակ դիպուած՝ ուղարկում եմ և այս նամակը, որ դու կ'ստանաս իմ ծանօթ և քեզ անծանօթ Ասատուրովից, որի հետ դու գըլ-

*) Անընթեռնելի:

**) Նամակի միւսնոյն թղթի վրայ

Ծ. 10 մր.

խաղաղութիւն կ'անես ուղարկել ինձ նամակ և այն քու տետրակները (Բէլինսկիի) որ ես անցեալ նամակումս խնդրել էի քեզանից: Կուզէնի գեղեցիկ շարագրութիւնը կարդացի, թէ կ'ուզես իմանալ՝ նաև հաւանեցայ, բայց պէտք է խոստովանիմ որ նա չի կարողացաւ լցնել և յագեցնել իմ կարօտութիւնը. շատ, չափազանց շատ աւելորդ է սասած, բայց աւել շատ՝ սասած չէ՝ մէջը: Գուցէ դու կ'ուզէիր, որ ես քեզ իսկոյն յետ դարձնէի, բայց ես միտք ունենալով մի քանի քաղաածքներ անել մէջից՝ թողի առ ժամանակ մի մօտս, բայց դու միամիտ եղիր, առաջի յաջորդակ դիպուածին կ'ուղարկեմ:

Աւելորդ եմ համարում օրագրի վրայ խօսել (որ արդէն մօտ է տպուելու), որովհետև անցեալ նամակումս խիստ ընդարձակ խօսել էի նորա մասին. միայն խնդրեմ (թէն դուք խնդրելու պէտք է չի սպասէք) ձեր պարտալ ժամերից մի քանիսը նուիրէք մեր նուիրական աշխատութեանը. բայց միանդամայն այն կանոններով, որ դու արդէն գիտես իմ նամակի զօրութեամբ:

Բարև կ'անես ինձանից ամենին, որոնց համար իմ յիշատակը թանկ է:

Երկրորդ, երրորդ և չորրորդ անգամ ասում եմ, որ քու նամակի վերջի տողերը միանգամայն անտեղի և անհիմն էին. առանց շոգոքորթութեան եմ ասում՝ ես չէի կարող քամահել այն մարդը, որի յիշատակը և սեպհական և հազուադիւր աբժանաւորութիւնները ես միշտ թանկ դին դրել եմ. ես այժմ առաւել քան թէ մի ուրիշ ժամանակ զգում եմ քեզ պէս բարեմիտ հայ պատանիից զրկուելու: Դորանից յետոյ՝ կարճ էի ես որևիցէ կերպով վերաւորել քեզ:

Մ'նամ միշտ բարեացակամ եղբայր քու.

Ռ. Պատկանեան:

Его Благородію

Студенту Им. Московскаго Университета

Геворгу Кананову

Սիրելի եղբայր և բարեկամ Գէորգ:

Նախընթաց նամակիս պարունակութիւնը աւել քեզ անհանգստացրած պիտի լինի, քան թէ միամտացրած, պատճառ որ՝ ես յիշել էի այնտեղ մի ապաւայ ձեռնարկութեանս վրայ, որ մեզ ամենիս համար չափազանց ուրախալի պիտի լինէր, որովհետև այն այժմ զաղանիք չէ՝ ուրեմն ես արձակ համար-

ձակ կարող եմ հաղորդել ձեզ իմ ուրախութիւնը: Նիկոլայ Տրիֆանովը իւր գումարից զոհեց մօտ 1500 մանէթ Հայոց տըպարան բանալու համար Պետերբուրգումը, գնեց 25 փութ տառ Գաղղիացի Ռելիլիօնից՝ որ խիստ գեղեցիկ է և եթէ ինձ հարցնէք՝ դեռ ոչ մի տեղ դրա նմանը չի կայ: Իւրաքանչիւր փութը արժէ 22 մանէթ, կ'նշանակէ միայն տառերու համար մըլիսեց 650 մանէթ. մօտ 150 մանէթի գնեց զանազան տպարանի զարդեր, առաւ թուղթ և ուրիշ հարկաւոր բաներ 200 մանէթի: Անգլիայից ապսպրեց թափցու երկաթէ մամուլ, որ նմանապէս արժան չի նստիլ՝ խիստ սակաւից 450 մանէթ. և այս ամենը ոչ այն յուսով, որ մեծ տոկոսներ ստանայ, ոչ, այլ միայն ինձ զբաղելու և մխիթարելու համար, որովհետև՝ յայտնի կերպով ես հրաժարուում էի նորանից օգնութիւն ստանալ. այնքան ինչ այժմ ունիմ միջոց առանց ցածանալու թեթեւցնել իմ հանգամանքը: Ինչպէս է երևում քեզ այս գործը: Հիմի խնդիրքը (որ ես գլխաւորն եմ համարում) ահա ինչուֆն է կաացած. թէև նա պատրաստ է իմ ամեն առաջարկած գրքերը ձրի տպել, բայց ես այնքան չեմ յիմարանալ, որ նորան այդ ծանրութեանը տակ ձգեմ. նա պիտի վարձէ առաջի անգամ գոնէ երկու գրաշար, մինը շարող, միւսը ցրուող, դուրս համար ամսէնը բտական չէ 40 մանէթ. այդ անյարմարութիւնը տեսնելով՝ ես առաջարկեցի նորան թերթի գլուխ 25 մանէթ, որ ինձ համար աւել ձեռնտու է, քան թէ գիտութեանց ճեմարանումը տպել, ուր տաին ինձանից գրեթէ նոյնքան՝ այն բացառութեամբ, որ գրեթէ ամբողջ գիրքը ես մենակ շարեցի՝ ինչպէս հասարակ վարձկան: Ուրեմն ռըքան յարմարութիւններ ունինք այժմ մեր ազնիւ մտածմունքը էացնելու, և ասես թէ վերին նախախնամութիւնը ամեն հնարքը և միջոցը գործ է դնում՝ զգալի կերպով մեզ օգնելու: Այդ գործումը Տրիֆանովը ցոյց տուեց մի այնպիսի հաղուագիւտ ազնուութիւն, որ չէր կարելի սպասել նաև մեր մինչև երկինք բարձրացրած մեկեանսներից: Պր. Լազարեանը մի գոռ դուրս չեն հանիլ իրանց զրպանից, եթէ վստահ չլինին, որ այդ նոր խուսկ պիտի լինի նոցա կուռքի—անափառութեանը—առաջ. այն ինչ այս ազնիւ երիտասարդը առանց մի ակնկալութեան իւր աննախանձելի գումարից հանեց այդ նշանաւոր մասը, որ կարող էր գործ դրնել աւել ճշգրիտ ձեռնարկութեան: Այս տարի ուզում էր քորէ տուն գնել և չը գնեց. ի՞նչ կ'ասես: Ուրեմն, եղբայրներ, եթէ դուք զգում էք այդ գործի օգտաւէտութիւնը, պիտի որքան կարող էք՝ աշխատեք փոքր ինչ նպաստ հասցնել կամ միջոց լինիք նորա յառաջագիմութեան. միշտ ներող գտնուէք պա-

կատու թիւններու. (սով կատարեալ է) և քաջաւերէք զործով և խօսքով: Վարդը չի ծլիլ, ծաղկիլ և քաղցը հոտ տարածիլ խոր չորս կողմը, եթէ նորան չի գուրգուրէ մեղմիկ զեփիւտը, չի տաքացնէ ոսկի արեւը և չի ղովացնէ երկնից ցօղը. մարդս էլ այդպէս է. բայց և այնպէս գտնուեցան մեր ազգակիցներէց Պետրբուրգումը, որոնք սկսեցին նորածել սուտ-մուտ մտա-ցածին բաներ, որոնք կարող էին միանգամայն վհատացնել խեղճ պատանիին, եթէ նա այնքան մեծահոգութիւն և ներողա-մտութիւն չունենար. բայց եթէ միենոյնը ամեն օր և ամեն տեղից կ'կրկնուի՝ քարն էլ կը ճաքի, ոչ թէ մարդուս սիրտը և համբերութիւնը: Այժմ ես տպելու եմ Գ. Ք. 2 թուահամա-րը. եթէ կարող էք՝ շտապեցէ՛ք ուղարկել առձեռն պատրաստ փողը, որ ստացաք 1 թուահամարից: Նմանապէս խօսեցէ՛ք պր. Սանասարովի հետ տաղարանի մասին, որի պայմանները քա-նիցս անգամ գրել եմ թիմուրեանին և Անանիային: Մի՛ յետա-ձգէք, այդպէսով բան չի յառաջանալ: Անանիան լինձ դրել էր, որ «Վարդանի թաղումը» կորցրիլ էր, ահա՛ ուղարկում եմ ձեզ, փոքր ինչ նոր աւելացրած վրան. չեմ ուզում շուտով աւարտ տալ ինչու. որ՝ ամեն օր նոր նոր միտքեր են գալիս աւել ընտիր, ա-ւել գեղեցիկ. թէ՛ և ամբողջը պատրաստ է երեակայութիւնումս, բայց յայտնելու կերպը, պատկերները ըստէից ըստէ փոխփոխ-ւում են. Աստուած տայ, որ մի սիրուն պօէմա դուրս գայ դը-րանից: Քերտրին վաղուց է չեմ տեսնում. հայերից միանգա-մայն կարել եմ ոտս. փոքր ինչ՝ մխիթարութիւն եմ գտնում մաղամ Աստաֆիւսիայի, Տրիֆանովի և նորա քրոջ կենակցու-թեանը մէջ. սովորական լեզուն գաղղիներէն և գերմաներէն է. ես էլ կոտրատում եմ կարողութեանս չափ: Միբոյեովը հետս խիստ անագնիւ վարւում է, ես նորանից միանգամայն ձեռ վեր կառնեմ, եթէ առյապաջ այդպէս շարունակուի:

Անցեալ անգամ ես քեզ գրել էի քու, Սիմեօնի և Մնացականի Պետերբուրգ գալու մասին. դու մինչև այսօր բան չես գրում. եթէ մի բան գրես էլ՝ հաւաստի եմ, որ այդ պիտի լինի մի բացասական պատասխան, փողի կարօտութիւն կամ մի ուրիշ զորա նման աննշան բան. եթէ կարող էք՝ յաղթեցէ՛ք այդ ար-գելքը և շտապեցէ՛ք գալու. մենք շատ բան կարող ենք մի-մեանց նամակով յայտնել, բայց շատ բան միանգամայն ան-հնարին է՝ թէ՛ և ունենայինք բարի ցանկութիւն կատարելու այդ: Բայց ինչպիսի՞նք՝ շուտով գրէ պատասխանը, որով-

հետև այն ստացածով, պիտի սկսեմ գործը: Մնացականին, Սիմեոնին, Բաւթարածէին, և ամենուն շատ շատ բարև:

Մնամ միշտ սերտ բարեկամ քո
Ռափայէլ Պատկանեան

1855 Նոյ. 14.

Ս,-Պ.-Բուրգ:

Ամենասիրելի եղբայր,

Այս անգամին ես մի կողմ թողած մեր ընդհանուր յարաբերութիւնը՝ խնդրում եմ կարեկցութիւնդ դարձնես գէպի այս հայ պատանին, որ կանգնած է առաջդ: Այս տղան թիֆլիզից եկել էր մայրաքաղաքս որ մէկ ուսումնարան մտնէ. բայց եկած չեկած ընկել է այնպիսի շրջան, ուր անհնարին էր մէկ բարի նպատակի հասնելու: Բայց այսպիսի անցքերը որովհետև ստէպ ստէպ են պատահում, ուրեմն քեզ մի ըստ միովէ մեկնելն միանգամայն աւելորդ է: Այժմ մենք՝ այսինքն Ղօրղանեանը և ես բարի համարեցինք ուղարկել այս երիտասարդին քու բարի հոգացողութեանը, վստահ գոյով որ դու՝ կ'արդարացնես մեր ակընկալութիւնը և այս տղի բարի գիտաւորութիւնը, յանուն որոյ թողել է իւր մայրենի երկիրը և եկել է օտարութեան մէջ պանդխտելու: Չգիտեմ, պէտք է քեզ խնդրել, թէ ոչ, որ դու ջերմ եռանդով ձեռքդ առնուիր դորա ապագայ վիճակը բարւոթեցու. տեսնում ես առաջիկ հայ երիտասարդը, որ եթէ ընկնի բարի մարդու ձեռք՝ անշուշտ բարի մարդ է դառնալու ժամանակաւ, իսկ եթէ... յուսամ, որ քնացածը քեզ շատ լաւ է յայտնի: Եթէ քեզ հետ բնակուելը անյարմար ես համարում, գոնէ պահ տուր բարի մարդու ձեռք. դա (ինչպէս կարծում եմ) տարեկան հինգ հարիւր ուրբլի ունի եկամուտք, ուրեմն եթէ փոքր ինչ կարեկցութիւն ցոյց տաք՝ տղան միանգամայն երախտագէտ է լինելու իւր բոլոր կեանքի ժամանակ:

Իզմիրեանցն շուտով (այս 10 օրից) կուգայ տեղդ. այժմ նա թվերումն է: Ինձնից շատ բարև ամենին: Ղօրղանեանը շատ բարև է անում:

Մի մոռանար քեզ միշտ սիրող Ռափայէլին

Մարտի 2—

Սիրելի եղբայր Թիմուրեան,

Դու լռութիւնը օրից օր ինձ ոչ թէ զարմացնում կամ ախրացնում է, այլ մի կերպ անմեկնելի զգացմանց մէջ է ձգում

որ իւր մէջ խառը պարունակում է տաղտկութիւն, յուսահատութիւն, վհատութիւն և զոցա նման անպիտան բաներ, ստոյգըն էլ պէտք է ասել, որ քու արարմունքը փոքր ինչ աններելի է. բայց ես ըստ հին սովորութեանս առաջուանից արդարացնում եմ քեզ, պատճառ բերելով, որ անհնարին բան է որ մի շարժառիթ ունեցած չլինիս գիրդ ուշացնելու:

Ինձ վրայ ոչինչ բան չեմ գրում. այս 3 ամսուայ հանգամանքս Անանեային լաւ յայտնի է. նա կը պատմէ քեզ մանրամասնաբար. բայց ինչ որ այսուհետեւ կ'պատահի հետո, անշուշտ իմացում-կ'ստամ իւր ժամանակին:

Ձ տետրը Գ. Ք. պատրաստ է տիպ մանելու, այսինքն շարուած և ուղղած է: Տաղարանի տպուելու ուշացաւ: Ուղարկում եմ քեզ իմ ձեռագիր տաղարանը. փոքր ինչ բան աւելացրի մէջը. մնացածները գրուած են:

Անանեայի գնալը ինձ խիստ տխրացնում է. բաւականին քաղցր բոպէներ անց-կացրի նրա հետ այս 2 ամսուայ միջոցումը:

Նամակս կարճ է. թէև գրելու շատ բան կայ, բայց սիրտըս լքցուած է. ամեն կերպ անբաւականութիւններ չորս կողմիցս պատել են ինձ. միայն Նիկողայի բարեկամութիւնն է մխիթարում ինձ այս նեղ հանգամանաց մէջ: Ձմեռը սպասում եմ քեզ. ինքս խոստացել եմ Ձ ամսից կարճ ժամանակով գալ:

Ս.-Պ.-Ք. 1855. օգ. 31. Թնայս բարև:

Ռաիսայէլ Պատկանեան:

Ազնուահոգի բարեկամ Քանանեան,

Քու նամակները ինչպէս միշտ նոյնպէս և այժմ իմ հոգւոյ մէջ անմեկնելի մխիթարար զգացմունք թափեց, ոչ թէ այն նիւթական օգուտների յոյսը, ոչ. այլ այն մարդասիրական կարեկցութիւնը, որ ես վաղուց նկատում եմ քու մէջ զէպ'ի ինձ. շնորհակալ եմ. սրտանց զգում եմ, ինչպէս քու բնածին ազնիւ բարեւարտութիւնը, այնպէս և հազուագիւտ անկեղծութիւնը: Քու առաջարկութիւնը յանձն-կ'առնում, եթէ իմ անձնասիրութիւնը չի խայթուիլ նորանով. եթէ օգնութիւն է, բարի է. եթէ ողորմութիւն՝ ես մուրացկան չեմ, այլ միայն չբաւոր: Եթէ ես քեզ համար թանգ եմ, ուրեմն յուսով եմ որ դու ինձ ամօթի մէջ չես ձգիլ: Թողնենք այս:

Քու իլլիւզիաները արտաքոյ քու կարծեացը, ինձ խիստ ցովորական և հնարաւոր, և եթէ կամենում ես՝ կարեւոր երեւան. Գ. Ք. պիտի լինի ձեռն-պարբերական, պիտի ունենայ

արդիւնք. պիտի լինի պատճառ մեծ հետեւանքներու. մէկ խօսքով մեր՝ (էն գիշերուայ) խորհուրդը չի պիտի ունայն անցնի. ես ինչպէս ասել եմ քեզ, պատրաստ եմ ամեն կերպ առաջարկութիւններուն, որոնց հետեւանքը մեր ազգի օգուտը կ'լինի. մեզք է ասելը, որ իմ մէջ չի կայ էներգիա. ուրեմն ամեն բանին ես ջերմութեամբ ձեռնամուխ եմ լինում, և եթէ թուական եմ ժամանակ առ ժամանակ, պատճառը, հաւատացիր, ես չեմ:

Ունիմ ես էլ ունիմ պոօթէկոններ, որոնք միայն իմ մէջ են: Ուրովհետեւ դու քուները ինձ յայտնեցիր, ես յանցանք կ'համարէի իմերը քեզանից թագցնել: Ապաւայ պլանները փոքր ինչ չեաոյ կ'յայտնեմ. աւել ժօտինը և ներկան ահա համառօտ կ'աշխատուի յայտնել, մանաւանդ քու աշխատութիւնների վիպուածով. Գ. Ք. անպատճառ պիտի ունենայ. ուղղութիւն ներքին պարունակութեան կողմանէ. նա պիտի լինի մեր օրերու, սեպհական մեր կարծիքների և մեր նուիրական խորհուրդների արձագանքը. նորա կարգացողները թող չի գտնեն մէջը այնպիսի հատուածներ, որոնք կարող են պատճառ լինել Հային անդորր կենցաղ սիրող լինել. թող չի անեն նոցա կրօնասէր քրիստոնեայ, զաւակասէր կամ ընտանեւէր ծնող, այլ ամեն մի դորա մէջ պարունակած յօդուածը թող կարողանայ արծարծել նոցա սրտի մէջ, եթէ ոչ ուղղակի կերպով հայրենասիրութիւնը, զոնէ թող յիշեցնեն սոցա նոցա կորցրած երջանկութիւնը. թող կամաց կամաց սովորի պաղ արիւն նայել այն մահուան վրայ, որ նա կարող է ստանալ զոհելով անձը ազգի ազատութեանը. մէկ խօսքով՝ այն ամեն զգացմունքները, որոնք խորը տաւառութեւն են մեր մէջ, որ մենք չենք համարձակուիմ հրապարակաւ քարոզել և որն որ Հային ըստ մեծի մասին անյայտ է, թող անզգամ կերպով սերմանուի նոցա սրտի և հոգւոյ մէջ: Ուստի՝ մենք պիտի աշխատենք մոծանել Գ. Ք. ի մէջ վարք երևելի արանց՝ ինչպէս որ էին Գուստաւ Ալֆրէդ, Վիլլիգէլմ Թէլլը, Բօցարիաը, Դիմիտրի Դօնսկոյը, Լէոնիդը և շատ ուրիշները, որոնք փառք են իրանց հայրենեաց: Ընդհակառակն եթէ մենք կ'տեղաւորենք այնպիսի շարադրութիւններ, ուրտեղ որ տալտամբութիւնը (ազգասիրական) համարվում է յանցանք, կ'սովորացնենք Հային խաղաղ, առտնին կեանք վայելել՝ այն ժամանակ ինչի՞ պիտի նմանին նոքա. ո՞չ ապաքէն այն տուելի հայերուն, որոնցմով առատ են, մանաւանդ ներկայ դարումս, Մոսկով, Պետրբուրգ, Ղզլար, Յաշտարխան: Իմ կարծիքով՝ աւել լաւ է նկարագրել ապստամբ աւազակները կեանքը, զորօրինակ Պուզաչօվի, Ստենկա-Ռադինի, Օտրէպիեվի՝ քան թէ դերմա-

նական կեանքից առած մեղք ու կարագով ծեփած և սերով կոկած էռնէստներու, Վօլյոյէմառներու և Դիւվալյներու: Երգերս թող պարունակեն իրանց մէջ յուսահատութիւն, կասկածանք (սկեպաւցիզմ), կեանքից զզվումն՝ քան թէ բնութեան և Աստուծոյ ողորմութիւնը, բարոյականութեան յաղթանակը: Թող հայ աղջիկը սիրէ քաջութիւն, քան թէ բարոյական առաքինութիւն, սև և խուճուճիկ մագեր, զգայուն հոգի, տոբոտ (страстный) աչքեր, քանթէ փայլուն ուսաղիւրներ, հարուստ կամ աստիճանաւոր փեսայ: Դիտեմ՝ մեզ կ'հայնոյն, անբարոյական կ'անուանեն, խելացնոր կ'կարծեն, բայց մենք եթէ չի հասնենք էլ մեր նպատակին, գոնէ կ'մօտենանք: հնարը չի կայ, որ հետևողներ չունենանք: Տեսա՞ր, ուրեմն, իմ օգակաւոյց ամբողջները աւել խելացնոր են, քան թէ քունները: Եթէ երեք հոգի ինձ համաձայնել են, կարեկից են եղել կարգալով Աղգասէրը, հայ և հայութիւնը, Արաքսի արտասուէքը, Հայրենիքը, Օրօրոցի երգը Հայաստանին՝ ես կ'իտով չափ հասել եմ նպատակիս: Բայց քանի՞սը արդեօք կան, որոնք համարում են ինձ ապստամբ, ազատախօս, փոստակար, շտուլատան, գուցէ 1=1000 բայց ես չեմ վհատում: Այս է ներկայ ժամանակումս կատարելի պլաններս: Այժմ խօսենք նոցա վրայ, որոնք ապագայումը պիտի կատարուեն: Նախ և առաջ մենք պիտի ունենանք սեպհական և անկախ տպարան, այդ կարեւոր է: Ի՞նչպէս. ահա ինչպէս: Ես խնդրեցի հօրս, որ նա ուղարկէ ինձ իւր 3 ձև գեղեցիկ մայրերը (матрицы). երկրորդ, այստեղ խօսեցայ մի գերմանացի տպարանապետի հետ, որ այդ մայրերից թափել տայ տառեր և առանձին հայոց տպագրութիւն կարգէ, և տեսայ որ այդ կերպով մենք աւել հեշտ և յարմար կարող ենք տպել մեր վաստակները: Տեսնում եմ, որ քու երեսը սպումնում է. դու վախեցար, որ էլի փող է պահանջվում, հա, անողատճառ պէտք է փող. առանց փողի բան չի յառաջանալ. ոչ ոք մեզ չի օգնի: մենք պիտի հարթենք մեր ճանապարհ, կատաղաբար պիտի մարտնչենք ամեն դժուարութեանց և արգելքների հետ. աղքատութիւն, զրկանք, հալածանք, տառապանք պիտի լինի մեր բաժինը. օգուտ ոչինչ, վարձատրութիւն ոչինչ: Ազգը մեզ փող չի տալ, մենք մեր քրտնաջան վաստակի արդիւնքը պիտի թափենք նոցա համար գրքեր տպելու, հայը մեր աշխատութեանց գին չի դնիլ. նա կը կարդայ մեր գրուածքը այն նպատակաւ որ կարողանայ գտնել մէջը սխալ, որ ծաղր ու ծանակ անէ մեզ. այս ամենը մենք պիտի յանձն առնունք անտրտունջ: Մի ուրեմն, ապշիլ, եթէ ես պը. Նազարեանցին անուանեմ շահասէր, անձնասէր և քարասիրտ. նա ուզում է ազգի մէջ ոչ

ջթէ ազնիւ իզէաններ տարածել, այլ իւր գրքերը. նա պահան ում է ազգից ոչ լուսաւորութիւն, այլ պատիւ, փող, այդ քա~ նին էի, ես և կ'լինիմ միշտ ներհակ. ոչինչ և ոչով չի կարող հաշտեցնել ինձ նորա հետ, քանի որ այդ տեղ էի՝ երես սու երես ներհակում էի նորան. այժմ և առյապաջ կ'պատերազմեմ գրով: Հիմի այսքան բաւական է. ձմեռը ես մեծ յոյս ունիմ քեզ հետ տեսնուել, այն ժամանակ Աստծով երկար կ'խօսենք: Փոքր ինչ քննենք քու թարգմանութիւնը. նախ և առաջ պէտք է ասել քեզ, որ դու աններելի տառաւիտայներ ես անում, որոնց համար ես քեզ (եթէ վարժապետդ լինէի) անճաշ ու անքնթիք կ'թողնէի. շատ անգամ ը~ի տեղ դնում ես ռ, ը~ի տեղ պ կամ փ, երկրորդ՝ կուր զկուրայն հետևում ես և ստրկանում ես պր. Նազարեանցի բերականութեանը, որ միանգամայն հակառակ է հայոց աշխարհաբաւ լեզուի օրէնքներուն, որ գուցէ մոնի սովորութիւն և ստանայ քաղաքականութիւն, բայց դորա փաստները խիստ մեծ են. Նազարեանցը լեզուագէտ է, կամ աւել լաւ ասել՝ բառագէտ է, բայց մեծ սխալ կ'լինի անուանել նորան լեզուաշէն կամ հեղինակ. նորա լեզուն դժուարաշարժ քօթով է. կենդանութիւն, խաղ, գարմոնիա մի պահանջի նորա անարուեստ և կոպտատաշ գրիչից: Ես մի ժամանակ փոքր ինչ բան գրել էի նորա մասին, յետոյ փոշմանեցայ և թողի, չուղարկեցի քեզ. թէ գտնեմ այն նամակը՝ չ'ուղարկեմ. այնտեղ կ'իմանաս իմ նորա վրայ ունեցած կարծիքը: Եթէ ուզում ես իմ խորհուրդը լսել՝ ես քեզ կ'ասեմ, որ թարգմանելու կամ գրելու ժամանակ (տպելու առարկաները) դու երևակայէ, որ առաջը կանգնած կամ նստած է մի անուսում հայ վաճառական, որին պէտք է յայտնել մտքիդ խորհուրդները. եթէ այդ կանոնին ճիշտ հետևէիր՝ հաւանական է որ այս պարբերութիւնը այսպէս չէիր յայտնիլ. «Միտքը լի գառը տրամութիւնսով, բայց առանց նախանձի նայում էր ծերունին իւր նոյնպէս ծերացեալ կնոջ հետ հարուստ հագնված անցնող մարդիքի և կանանց վերայ, որոնք մօտ գիւղերից գնում էին եկեղեցի»: — Սեղճ հալկորը իր պառաւ կնկայ հետ մղկտած սրտով նստում էր... ևայլն թէ ասէիր, աւել հայկաբանութիւն (նոր) կունենայիր իմ կարծիքով. դարձեալ՝

«Սաստիկ կռիւների ժամանակը Մ. ընկել էր մեծ պարտքերի մէջ, նորանից էլ յետոյ խաղաղութեան մէջ մի սաստիկ հրդէհ, որը սկսվել էր զրացիի տունը այրել և աւերել է և Միւլլէսի բոլոր կայքը:—Աւել հայերէն կ'լինէր, թէ այսպէս ասէիր, «Քանի որ քշում էր կռիւը, Մ. խղզւում էր պարտքի մէջ. յետոյ որ խաղաղութիւն եղաւ կամ իլաւ՝ տունը կրակին տուեց

ու ունեցած չունեցածը կորաւ գընաց:—Այս կերպ թարգմանութեան խիստ հմուտ են Գաղղիացիք, փորձի համար կարգւն Թլեռօի վալի թարգմանութիւնը Խորհնացիի պատմութեան:

Մենք պէտք չէ շինենք լեզու. լեզուն կայ, և այնքան պատրաստած և կոկած է ազգի բերնումը, որ առանց դժուարութեան կարող է մեր գաղափարները յայտնելու. ինչպէս որ ճարտարապետի գործն է պատրաստ նիւթերից մի շինուած կանգնեցնել, և ոչ ուր 'ի նորոյ քար տաշել, ծառ տնկել, որ քանի և ատաղձ ստացուի, այնպէս էլ մենք գրողներս ջանք պիտի դնենք հաւաքել ծակուծուկերից ազգային, կենդանի, խաղացկուն պարբերութիւնները և նոցանով կամ նոցա կազմութեանը հետեւելով շինել ամբողջ յօդուածներ, գրքեր: Զգիտեմ ձիւ, բայց խիստ լաւ ասաց մինը, աւել հեշտ է երեսի վրայ ձգած սեպհական պարտէզը վերանորոգել, քան թէ անապատ դաշտումը նոր պարտէզ շինել: Այս բովելիս միտս չի գալի մի քանի այդպիսի պարբերութիւններ, որ, հաւատա՞, կարող էին միանգամայն հաւասարակշիռ լինել լուսաւորեալ ազգաց դարձումներուն, զօր. խօսքը՝ արեւէ անցած опытный—չի՞ցոյց տալ որ հայը պիտէ կարճ խօսքով ձևացնել իր միտքը: Բայց ձիւ կ'աւնու յանձնը քրքրել այդ դարեւոր փոշին և միջից ժողովել երեսի վրայ ձգած մարգարիտները: Ախպրդեանի պէս մարդիկ խիստ սակաւ են, նոցա պէսներին գին դնել չենք ուզում, մենք ուշադրութիւններ դարձնում ենք դէպի նա, ով որ ինքն է հրատարակում իր հոչակը. մեղ անյայտ է պարկեշտ քանքարը լոյս հանել:—Տխրալի՜ խորհրդածութիւն: Աւարկայից հեռացայ. ինչպէս որ խնդրում ես՝ ես ուշադրութեամբ կ'կարդամ քու թարգմանութիւնը և հարկաւոր տեղերը կ'ուզդեմ, և... կ'տպեմ:

Խօսքս կտրում եմ. քեզանից աւել նաև պիտի գրեմ Թիմուրեանին, Սուլթան-Շահին և ծնողացս. ամբողջ երկու ժամ անընդհատ գրում եմ քեզ. թէև քեզ հետ խօսելը ինձ խիստ հաճելի է, բայց պէտք չէ զրկել ուրիշներին էլ:

Մնաս բարով.

Մնամ բարեացակամ և հոգեհարազատ եղբայր քո
Ռ. Պատկանեան

7

Ս. Պ. Բուրգ. 18—55

IX

Սիրելի եղբայր Քանանեան,
Շատ կարելի է որ դու շուտրած ֆնացած լինիս տեղում:

մըզ—ինչո՞ւ այսքան ժամանակ քու վերջի գրից, այսինքն դեկտ. ից, պատասխանը ուշացրի, շատ կարելի է որ մեղադրում ես էլ, 'ի հարկէ ես մեղադրելի կ'լինէի, եթէ նամակդ ստանալով՝ իսկոյն չշտապէի պատասխանը գրելու, բայց այն նախ և առաջ ընկել է տիկ. Աստաֆիեվայի տնտեսուհիի ձեռք, որ 10 օր պահել է մօտը (ասում է որ մոռացել է ամենեին) և մի պայծառ օր բերում է հազար չըմեղութիւններով՝ թէ ահա ձեզ նամակ: Ես ինչպէս հարկն էր եղեցի գլուխը. յետոյ փանդատեցի Նիկոլեայի մօրքրոջ: Ահա պատասխանիս ուշանալու պատճառը: Այսքան ժամանակ ես քեզ ուրախացնում էի. հիմի միտք ունիմ փոքր ինչ տխրացնել: Տասերը, ինչպէս անցեալ նամակումս գրել էի՝ պատրաստ էին և մեր տարաբաղդ Գ. Ք. սկսուել էր կամաց կամաց շարուելու. բայց պատահմամբ նկատեցի որ աւտուտառերը իրանցից խիստ հեռու պահում էին ուրիշներին, այնպէս որ կարելի էր միւս վանկը ուրիշ բառ կարծել պաւք կայն. ճարս կտրած հազար չարչարանքով յետ ուղարկեցի տառերը, որ նորից նոր թափեն 12,000 աւ. 8,000 տ 12,000 և 3,000 եւ. կ'նշանակէ մի շարաթուայ աշխատանք է: Այս դեռ ամենը չէ. ես քեզ գրել էի որ մի պր. ինձ հատուց 30-ի մօտ մանէթ. բայց այդ տեղ ես փոքր ինչ սխալուեցայ. ասան ինչու. ահա՝ ինչու. քեզ նամակ գրելուս նախընթաց երեկոն ես այն պարոնի մօտ էի և խնդրեցի այդ գումարը. նա ինձ ճշգրիտ խօսք տուեց որ յատկապէս միւս օրը ժամը 6-ին կարող եմ նորանից ստանալ խնդրածս, ես արդէն ստացած կարծեցի և для пущаго шику գրեցի քեզ որ արդէն ստացայ և քեզ միամտեցրի: Միւս օր գնում եմ մեր յարգելիի մօտ. ի՞նչ տեսնեմ. մեր պարոնը միանգամայն երեկուայ մարդը չէ. ոչ խօսելն է բանի նման, ոչ պատասխանելը. ես կողքից գէտից գէտից միտք ձգեցի երեկուայ խոստմունքը. куды! լսել անգամ չի ուզում. ի՞նչ խօսքս ձիգացնեմ, ինչպէս եկել էի, այնպէս էլ գնացի—այսինքն դարտակ: Եւ նմա փառք յաւիտեանս ամէն ասացի մտքուժաւ. ահա այդ անցքի ազդեցութեան տակ գրում եմ այս նամակը: Նիկոլեային բան ասել չեմ համարձակում, պատճառ որ նորան միանգամայն միամտացրել էի, որ գրաշարի փողը ես կը հատուցանեմ, նմանապէս և տպարանին և թուղթի վարձը՝ յուսալով այն պարոնի վրայ: Հիմի ի՞նչ գաղափար պիտի ունենայ նա մեր Հայերու վրայ, եթէ տեղն 'ի տեղ տեսնում նորան այս բաները. մանաւանդ որ Միրզոյեվի արարմունքից յետ նա փոքր ինչ սառեցաւ հայերից և նոր հայ տեսնելիս կամ նոցա հետ ծանօթանալիս՝ ինձ պարտաւորում է նոցա ագնիւ վարձանց վրայ պատասխանատու լինել. եթէ բանը տեղով յայտ-

Նեմ նորան 'ի հարկէ նա չէ չի ասիլ, կ'տայ ինձ այդ թշուառ գումարը, բայց ինչպէս պնդացնեմ երեսս և նորից ծանրութիւն լինիմ խեղճին, որ առանց տրտունջի իւր գումարի տոկոսով ինձ ամեն բանով ասպահովացնելից յետ՝ դեռ պիտի հոգս տանէ իմ աշխատութիւններս տպել. ինչո՞ւ. միթէ 10 տարի է քշում մեր բարեկամութիւնը. միթէ վստահ է, որ մի օր ես նորա երախտիքը հազարապատիկ պիտի վարձատրեմ. միթէ իմ ազգակից չայն է. միթէ Ռօտշիլդի ժառանգն է. միթէ նա՝ ինչպէս երիտասարդ՝ չէր կարող այդ փողը իւր զուարճութեան համար գործ ածել և միևնոյն ժամանակ—լաւ մարդ կոչուել աշխարքիս երեսին: Ի՞նչ կը հրամայես ասել դորանից յետոյ. գովե՞լ մեր հայերին. բայց ո՞ր առաքելութեանը համար: Թող-նենք, թողնենք էս տխուր և զգուշի ճշմարտութիւնները:

3 տարուայ ճամբորդութիւնից յետ դարձաւ Նիկոլեայի փեսան Եսպանեայից, ուր «Դիանա» նաւով (որ խեղդուեցաւ) Ռուսերը էքսպեդիցիա էին ուղարկել. այժմ մեր (լսի՛ր մեր եմ ասում) տանը ուրախութիւնը կրկնապատկեցաւ. օր չի անցնում որ նոր նոր անձինք չի տեսնեմ և նոր նոր համբաւներ չի լսեմ. ես քեզ արդէն գրել էի, որ ծանօթացայ (թէ և ոչ այնքան մօտ) Գոնչաուովի, Դանիելովսկիի, Պոլոնսկիի հետ, այժմ նաև Մայքովի և Զօտովի հետ, որոնք պի. Լօսեվի սերտ բարեկամներն են. մի օր ես կը գրեմ նոցա վրայ իմ կարծիքը. հիմի այնքան միայն կ'ասեմ որ խիստ խելօք և ազատ մտածմունքով մարդիկ են, բաց'ի Մայքովից, որ փոքր ինչ նուաժանացաւ տէրութեան առաջ իւր շողորորդ գրուածքներով, բայց ինչպէս ինքը ասում է, որ ստիպուած է արել այդ ամենը: Եթէ դալու միտք ունիս՝ խնդրեմ քանի օր առաջ իմացում տաս, որ ես հարկաւոր կարգադրութիւնները անեմ: Իզմիրովը քեզ բարև է անում. նմանապէս Նիկոլեայն: Ինձանից շատ բարև արաւ ամենքին: Անցեալ անգամ գրել էիր որ միւս շաբաթ (այսինքն անցեալ) փող կ'ուղարկեմ. ես քեզ իմ յոյսերովս միամտեցրի. բայց ինչպէս տեսնում ես, այժմ աւել քան թէ հրը և իցէ կարօտ եմ փողի, եթէ այնքան մեծահոգի կ'լինիս և կը խնայես ինձ Նիկոլեայի կարծիքումը՝ օգնէ գոնէ 25 մանէթով. թէ չէ՝ գրէ՛ հէնց առաջի սուրհանդակով քու վճռական հաւն և չէ՛ն, որ ես յաջողակ բոպէ ընտրեմ և երեսս կարմրաց-

նելով՝ Տրեֆանովին յայտնեմ ներկայ դրութեանս խակական պատճառները:

Մնաս բարև. անհամբերութեամբ մնալով պատասխանիդ:

Մնամ միշտ քեզ համար հաւատարիմ բարեկամ

Ռաւիայէլ

17 Դեկտ. 1855 Ս. Պ. Բուրգ.

Սիրելի եղբայր Գէորգ.

Գու և Թիմուրեանի նամակները և 8 մանէթը ստացայ ուղիղ 7 օրից յետ ձեր ուղարկելից. ինչ է այդպէս ուշանալու պատճառը չգիտեմ. երևի դուք զրելից յետ մի քանի օր մօտերըդ պահել էք ծրարած գիրը. ինչեկիցէ: Էդուցս չլր. Իզմիրեանը դուրս է գալու. խնդրեց որ ձեզ նամակը գրեմ. ժամանակը փոքր է չեմ կարող միտքս ժողովել և գրել ձեզ ինչոր ժամանակ ժամանակ ուզացել եմ հաղորդելու կարճ ի կարճոյ կ'ասեմ ինչ որ այս րոպէիս միտքս կընկնի: Պր. Իզմիրովը, հաւանաւան է որ, ձեր նամակը ստացած լինի, բայց ինձ այդ մասին բան չասաց. ես էլ չի հարցրի թէ՛ ստացել է, արդեօք, ձեզանից մի լուր. ես գիտեմ որ, երբ որ նա գայ այդտեղ, դու առաջի պարտաւորութիւնդ կը համարես նորան առաջարկելու Ֆրան բանը և գիտեմ որ, եթէ Թիմուրեանցն էլ քեզ հետ միասին ներգործէ՛ այդ ժամանակ մենք մեր ցանկութեանը կ'հասնենք: Պր. Իմիրեանցը ազատ դուրս Գաթանեանցին ժամգոտ փութած և չար ազդեցութիւնից՝ հեշտիւ կը համոզուի ձեր բարի կամքով և խօսքերով. իհարկէ այն ստորագրութիւնը, որ դեռ պիտի լինի՝ լաւ է. բայց այս առձեռն պատրաստ 150 մանէթը շատ և շատ կ'օգնէր մեզ մինչև այն ժողովուելը. այդ ժամանակ ես կարող էի 1¹/₂ թերթ դուրս տալ ամեն նուագին, պատկերազարդ և գինը ամենեւին չի փոխել: Ես յաջողակ դիպուած ունիմ օրագիր դուրս տալու. ես ուզացի պատրաստած խնդիրքս և պուզրամմաս տալ Ա. Լ. նախարարին. բայց զարհուրեցայ այդ ձեռնարկութիւնից. վաղ թէ միանգամայն անօգնական մնամ, ամօթով և խայտառակութիւնով պատած. թողի: Այժմ ինձ առաջարկում է իմ պոֆէսորը Բէրդեյվը Գ. Ք. պարբերական անելու աշխատել. նմանապէս ես չեմ ուզում, վախենում եմ 8 մանէթ 6 ամիսը ստանալով բան չի ծաղկիլ: Ցանկութիւն շատ՝ հնարք քիչ: Հնարն էլ կ'ունենանք, եթէ բերաններս չի բռնանք և չի քնենք: Դու ինձ ասում ես ճշտութիւն ճշտութիւն, ճշտութիւն. ես քեզ պատասխանում եմ օգնութիւն, օգնութիւն, օգնութիւն:

Եղբայր Քանանեան.

Յոյս առ Աստուած ողջ և առողջ հասած կ'լինիս տեղդ: Ուղարկում եմ Վարդանի թաղման շարունակութիւնը. խնդրեմ՝ դուրս գրել տուր և յետ ուղարկիր սկզբանը հետ: Բարեւ արեւ ինձանից ամենին: Քեզ բարեւ են անում քու ամեն ծանօթները՝ թէ հին թէ նոր: Ահնա Նիկողայեւնան խիստ ցաւում է քու տկարութիւնդ. նա չէր խմանում որ դու դուրս ես եկել. այն օր ինձ խնդրում էր որ քեզ հրաւիրեմ պարոն Բիրշեֆթի մօտ երաժշտական երեկոյ. եթէ ոտդ ուղիմատիղմ ստացել է՝ ասաց որ խմացում տաս, նորան մարդը ունի պատուական ճարի ունեւատ, որ խակոյն կ'փարատէ:

Քու Ռաւիսէլ

Հէնց այս րոպէիս գնում եմ պր. Սուլթան-Շահի մօտ խնդրելու քեզ յայտնի առարկայի մասին. տեսնենք ի՞նչ կ'յաջողէ վերին խնամքը:

Մուացել էիր անկիւններդ:

Ամենասիրելի բարեկամ

Մեծ ցնծութեամբ, ուրախութենիցս սիրտս թնդալով մի անգամ քեզ իմաց էի արել, թէ այժմ կարող ենք սկսել այն, ինչ որ իմ և քու ազնիւ խորհրդածութիւնների (երբեմն) պլանուղն էր: Բաւականին շատ ժամանակ անցնելից յետոյ թափաղացրիր ինձ նամակովդ թէ «թէև խոստմունքէս չեմ հրաժար վում, բայց սպասէ՛ք ժամանակով», այսինքն երբ ընդնէս ատամներս կը թափին, միտքս կը հոգնի, հոգւովս անգամ կ'զառամանամ: Վատ առաջարկութիւն չէր արածդ, եթէ 19-րորդ դարու մարդիկն ևս լինէին մեր երանելի հայրապետներու նման երկարաւուրբ: Բայց դու հրամայում ես, ուրեմն կատարելը կարի հարկաւոր է: Կ'սպասենք քամիին, տեսնենք մը աշխարհի ծագից պիտի փչէ մեզ: Մի թշուառ գիրք էի զրկել քեզ, բաւականին ծանր պայմանով տպելու, հետն էլ մի անկեղծ նամակ: Նամակս մեկնեցիր բոլորովին հակառակ խորհրդով. փոքր մի կսկծեցուցիր ինձ: Բայց ի՞նչ վընաս: Ո՞վ կսկծեցուցած չէ ինձի, որ դու փոքր մի մարդասիրաբար շարժէիր հետս: Քու վարմունքի այդպիսի ուղղութիւն ստանալը ինձ համար ոչինչ զարմանալի չէ, ըստ որում էմինից endosmosi և exosmosi օրէնքով ուրիշ զգացմունք չէիր կարող ծծել: Հնացած Բայրօնիզմ:

Ուղարկում եմ այս մանէթը, որ անպիտան աշխա-

սութիւնս զրկես ինձ առանց արտունջի: Նամակիս շա-
րունակութիւնը երես առ երես կ'խօսենք:

Յտեսութիւն շուտ. Գեղ միշտ սիրող

Ռ. Պատկանեան

Սիրելի եղբայր Գէորգ

Քու նամակը ստացայ, Սահասարեանին վերաբերեալը տա-
րի նորան սուր. քանի որ նորա տանն էի ոչինչ չի լսեցի նորա
բերանից: Դուրս գնացի, և մինչև այսօրս սպասեցի բայց
նա ոչինչ բան չասաց ինձ. ես աշխատեցայ խօսակցու-
թիւն բանալ՝ նա (Թերեա ինձ այնպէս թուեց) ոչինչ
չէր հասկանում, թէ և քաղաքավարի և մարդասէր էր: Նո
կարծում եմ որ նա բան չգիտէ կամ մոռացել է: Չար-
մանալին այն է, որ քու նամակի մասին ոչինչ չասաց, թէ դու
ինձ համար խնդրում ես: Նո քու յիշած ОБРАЗЧИК-ից բան չի
հասկացայ. դու ինձ երբէք այդ մասին բան չես գրել, ապա
թէ ոչ՝ ես իսկոյն կը տեղեկանայի և քեզ կը միամտեցնէի.
քու խօսքերը ինձ անհասկանալի երևեցան: Բայց Բերնարի
մօտ գտնուած նամակի մասին ես շատ չափչփեցի փողոցները,
գնացի նոսն адресный стол-ը, այդպիսի մարդ չի կար, բիր-
ժումս ես գնացի ինքս, շատ անգլիացոյ հարցուցի՝ ոչ որ չէ
ճանաչում: Եթէ մի տեղեակ բան գրես՝ կարող ես աներկմիտ
լինել, որ խնդիրքդ անկատար չեմ թողնիլ:

Մ'նոս միշտ յարգող քեզ Ռաֆայէլ:

Այս նամակն, խնդրեմ, քաղաքական սուրհանդակով
հասցնես Նալարեանցին՝ ստացած իսկ օրդ: Կարող ես կար-
գալ. գաղտնիք չկայ, գոնէ քեզանից:

Վարդանս ուղարկեցի՝ Թիֆլիզ Կոռնկի հրատարակողին,
ինչպէս որ խնդրել էի. հաւատացի՝ որ մեծ կարիք ունիմ, և
չգիտեմ ինչպէս պիտի անցուցանեմ այս օրհասական յունիսն և
յուլիսն: Թէկուզ հաւատան, թէկուզ ոչ, այժմ մի հին սերտուկով
և վարտիքով եմ մնացել. իմ խնդիրքը դու միանգամայն ան-
տես արիր. 6 ամիս անդադար յիշէի իմ կարիքս բոլորը ինչ
ունէի, ծախեցի: Օղնութիւն ինձ ի տանէ եկեսցէ, ասելով մնացել
եմ տարակուսում:

Ամենասիրելի եղբայր և բարեկամ,
Հանգամանքների ձախողակ ընթացքովն մենք, ահա քանի

տարի է, որ բոլորովին անգոր ենք մի պատիկ, առաւել քան թէ պատիկ—չնչին մի բան չենք կարողանում գլուխ բերելու, թէև երկուսիս կողմից եւս պակաս չէ՝ ոչ ջերմեւանդութիւնը և ոչ ցանկութիւնը դէպի բարին: Ի՞նչ ասել կ'ուզէ, որ պարագան հգոր է ամեն մարդկային գորութենէն, թէև լինէր այդ ամենագեղեցիկը, բարոյականը: Պէտք է խոնարհիլ, բայց ոչ բնկճուել, ոչ վհատել: Եղբայր, դու ինձ առաջարկում էիր տեղ ունենալ Լազ. Ճեմ. մէջ, թէկուզ առաջին անգամ չնչին վարձատրութեամբ, բայց, ինչպէս ասում էիր և ինչպէս ես չէ չէի պատասխանում քեզ, պէտք է սորանով մի բարոյական կապ ունենալ ազգի հետ և այնուհետև, ըստ կարեաց ազգիկ նորա վրայ, ի հարկէ, գրականական միջնորդութեամբ: Ո՞ւր է այդ տեղը (պաշտօնը), որ միմիայն քու ձեռքից կարող եմ ստանալ. ինչո՞ւ լուռ ես այսքան ժամանակ: Անցեալ տարի ես աւարտեցի ընթացքս, ստանալով ներգործական ուսանողի վկայագիր և իրաւունք. դու ասացիր, պէտք է կանգնեցնել թուրքիւն, այս տարի, առ 'ի չգոյէ պարագման, պարագեցայ առարկաներովս, և ստացայ քու այդքան յորդորանքիդ պատուը: Այժմ ի՞նչ ունիս խոչընդոտն ինձ ցոյց տալու, որ այսուհետև ես չեմ պէտքական ազգիս: Եղբայր, դու ինձ ճանաչում ես այնքան, որքան և ես ինքս ինձի. ուրեմն գիտես իմ գիտութեան աստիճանը. հայկական լիզուի վարժապետ և վերակացու լինելու իրաւունք լիովին ունիմ, և դու կարող ես յուսալ իմ ջերմեւանդ պաշտօնակատարութեան վրայ, այսուհետև ի՞նչ է քեզ արդելք ինձ հրաւիրելու քու իշխանութեան տակ: Ել չեմ ասում այն, որ պր. Նեվեռովի քեզ հետ ունեցած սերտ բարեկամութիւնը շատ պիտի օգնէ ցանկութեանդ, եթէ միայն գալս ցանկալի էր քեզ: Մոլորուած կեցել եմ: Եղբայր, վարժատանդ անցիրը ինձ անյայտ չեն. հաւատացիր ինձ, որ ես եւս քեզ այնքան պէտք եմ, որքան և դու ինձ. պարծանք չերևի ասածս: Գալով՝ քու ադդեցութիւնը, քու ժողովրդականութիւնը մէկ մէկով կ'աւելանայ, սուտ չեմ ասում: Գոնեա՞ ինձ դրէ քու անկեղծ խոստովանքդ, թէ էլ ի՞նչ երկիւղ կամ երկմտութիւն ունիս. սպասեմ, թէ յոյսս կտրեմ: Գուցէ՛ դու ինձ խորհուրդ կուտաս մագիստրոսութեան քննութեան պատրաստուելու, որի համար 'ի հարկէ, պէտք է գոնէ ամբողջ մի տարի. եղբայր ցանկութիւնդ և խորհուրդդ եւս կ'ընդունեմ ինչպէս ամենաբարին և ամենապահիւն, բայց և դու չսէ իմ չքմեղութիւնը—յոգնե՛լ եմ. տո՛ւր փոքր մի ժամանակ շունչ առնելու. յետոյ ես ուրախութեամբ, նոր ուժով կ'ըսկսեմ ընդմիջուած գրադմունքս:

Ուղարկում եմ քեզ այս ձեռագիրն, որն նուիրած է

կայսրորդուն: Թէև ևս սրա համար ստացել եմ կայսերական գանձարանից 150 մանէթ, որ տպէի, բայց տարուայ ապրուստս և մօրս այստեղ գալը, մօտս կենալը—ինձ մի դժուար հանգամանքի մէջ դրաւ միտելու այդ գումարը, քեզ յայտնի է, որ այս տարի ես գրեթէ ոչինչ արդիւնք չունէի, բայց Նաղ. 40 և Էնֆիաջեանցէն 50 մանէթն: Բնակարան, ուտելիք և ուրիշ կենաց պիտոյք ձրի չեն տալիս այստեղ: Բայց ինձ խոստացած է, երբ տպած օրինակն առաջարկեմ կայսերական գերդաստանին, ստանալ դրամական վարձ և պարգևք: Տպել այժմ չեմ կարող, բայց տպել պէտք է: Ես քեզանից ինչպէս մի մեծ բարերարութիւն եմ խնդրում, թէ քեզ անտանելի բան չեմ լինել, սրա տպի վրայ 55—65 մանէթ, այսպէս հաշուելով. Գիրքս իմ կարծիքով, պիտի բաղկանայ 5 թերթէ. իւրաքանչիւրը համարելով 11 ական ուտրի—55. հարիւր օրինակի համար պէտք է 500 թերթ, այսինքն մի ստօփա, որ ամենալաւը պիտի աժի 10—15 մանէթ. ահա բոլոր միխար: Եթէ գտնես մի մարդ, որ կամենայ թուղթը տալու, թող տպէ իւր համար որքան օրինակ կամի. ես արգելք չեմ անիլ, ինձ միայն պէտք է 100 օրինակ և ոչ աւելի: Ես յուսամ որ խնդիրքս անտես չես անիլ, այսինքն այսպէս կամ այնպէս, ինձ դրական պատասխան կուղարկես. բայց գլխաւորն այն է, որ պէտք է շուտ սկսել և աւարտել, մի գուցէ 1000 ամեկից ուշանամ:

Եղբայրդ ինչո՞ւ ինձ պատասխան չի գրեց, կամ ինչո՞ւ չի գալիս կանդ. քննութեան համար: Քերովրէի ասելովը, զուէլ իբր թէ մտադիր էիր գալու, ո՞ւր է, Լ՞րբ:

Ամենին շատ բարև. 4 եղբարցդ, Սիմեօնին, Քաւթարաձէին և ամեն ծանօթներին:

Ակնկալելով պատասխանիդ
միամ ամենախոնարհ բարեկամ քու Ռափայէլ

ԿԵԱՆՔԻ ՁԱՅՆԸ

Լինում են ժամեր—հոգիս մըտորուն
Մի անգուստ տենչով կեանքի ժխորից
Ջրգտում է թըռչել, սաւառնել հեռուն,
Այն երազ-աշխարհն, ուր ազատ ցաւից,
Ազատ հոգսերից, բուռն հրճուանքով
Սահում են օրերն անգորր ու փափկուն.
Ուր յաւերժ գարունն մեղմ օրօրանքով
Սըրտին բերում է երջանիկ մի քուն...

Բայց հուժկու մի ձայն, մի ձայն անմեկին,
Մըտորմունքներիս այդ վառ ժամերին,
Յամառ կըռուի է կոչում իմ հողին
Եւ ինձ ասում է.—Երգի՛չ, քո ձեռին
Քընար կա՛յ ազգու. երկինքը նըրան
Խաղի համար չէ քեզ պարգև տուած.
Վէհ է քո կոչումն, ծանրը—քո ճամբան,
Եւ անլոյս դիշեր—քո շուրջը տիրած...

Նայիր, տես, ինչ դառն, ինչ թոյն օրերի
Մըռայլ պատկեր է—կեանքը բովանդակ.
Ամեն տեղ կըսկիծ անհուն ցաւերի,
Ամեն տեղ արցունք՝ ճընշող խաչի տակ...
Եւ չարն անպատիժ, երկաթէ բազկով
Խեղդած ամեն յոյս, ամեն վառ ձրգտում,
Խաղում է թըշուառ սմբոխի կեանքով:
Խաղում մոլեգնած ու վայրագ խընդում...

Ձարկիր քրնարիդ հընչուն լարերին,
 Թոյ նրանք խօսեն կեանքի ցաւերից.
 Լեզու տո՛ւր անգամ անխօս քարերին,
 Դալուկ դէմքերից վանի՛ր սև թախիժ...
 Երգի՛չ—դու կեանքի առաքեալ—զաւակ,
 Կեանքը հըրաշունչ երգի է կարճաւ.
 Երգիր, որ լոյսի կա՛յ սուրբ յաղթանակ,
 Որ կա՛յ և կը գա՛յ ոսկի՛ առաւօտ...

Ալ. Ժատուրեան

ՀԱՅ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

Հունգարիայի եւ Տրանսիլուանիայի հայերը: «Հանգէս Ամսօրեայ»-ից (1905 թ., № 1) քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները.

Այլեայլ տեսակ աչքով նայելով ու այլեայլ ակնոցէ դիտելով՝ «Հունգարիայի և Տրանսիլուանիայի ազգայիններու թիւը թէ՛ կը նուազի և թէ՛ կը բազմանայ, ինչպէս որ պիտոյը կ'առու, կը նայի ու կը զննէ:

1. Կան՝ որոնք ազգային կը համարին զանոնք միայն, որոնք ազգային հայ արարողութեամբ մկրտուած ու դրոշմուած են:

2. Շատերը՝ ազգային կը համարին զանոնք ալ, որոնք՝ թէպէտ ըստ հայ արարողութեան մկրտուած չեն, որովհետեւ չեն գտած ազգային քահանայ որ զիրենք մկրտէ ու դրոշմէ—և կամ չունին յատուկ ազգային եկեղեցի ու ժողովրդապետութիւն՝ ուր որ կարենային մկրտուիլ.—սակայն հայ կը համարուին, անոր համար, վասն զի իրենց պապերն ու նոյնիսկ իրենց ծնողներն ազգային էին, ըստ հայ արարողութեան մկրտուած: Անուննին ալ առ բռնիս վկայ է, ու ամեն ազգային զիրենք հայ կը ճանչնայ:

3. Կան անանկներ ալ, որոնք՝ ազգային կը համարին զանոնք միայն, որոնց լեզուն հայերէն է:—Այս իմաստով առնելով՝ Հունգարիայի և Տրանսիլուանիայի մէջ բնակատեղաւ շատ քիչ ազգային պիտի ըլլայ. մանաւանդ եթէ նկատելու ըլլա՜նք.

Փետրուար, 1905.

լանք զանոնք՝ որոնք, ո՛չ ըստ հայ արարողութեան մկրտուած են, և ոչ ալ չորս ծանօթ եկեղեցիներուն իրաւասութեան տակ են.— ուստի անոնց չեն վերաբերիր:

Իշխանութիւնն այս ակնոցէն հայելով՝ Հունգարիոյ և Տրանսիլուանիոյ մէջ՝ միայն երկու հազար եօթը հարիւրէն քիչ մ'աւելի ազգային կը գտնէ պաշտօնապէս: Աս բանս՝ այսպէս համարելու իրաւունք կը համարի անո՛ր համար, որ նախ՝ հայերէն չեն խօսեր, երկրորդ՝ հայ ծէսով մկրտուած չեն ու երրորդ՝ ասոնք իրենք զիրենք իբրեւ ազգային անցընել տուած չեն աշխարհագրին մէջ:

«Հաստատութեամբ կրնանք ըսել, որ թէ՛ Հունգարիայի և թէ՛ Տրանսիլուանիայի մէջ՝ չկայ քաղաք, գիւղ, աւան, կայն՝ ուր որ աւելի կամ նուազ ազգային չգիտնուի»:

Յօդուածադիրը ամփոփելով իր ասածները գտնում է որ Հունգարիայի և Տրանսիլուանիայի մէջ հաւանուազն 10—12,000 հայ պէտք է լինի:

Սուղանի հայերը: Աֆրիկայի խորքերից, Սարթում քաղաքից, ոտացած մի մասնաւոր համակից հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւններն ենք քաղում:

«Այստեղ գտնուող հայերս առ հասարակ 1895—96 թ. թրքական արհաւիրքներէն պրծած և ժամանակ մը եղիպտոս, անկէ ալ հոս հաստատուածներ ենք: Ընդամենը 50 հոգի հազիւ ըլլայ թիւերնիս, և զժրախտաբար ամենքս մէկ տեղ չենք, ցրուած ենք քանի մը քաղաքներու մէջ. այդ անպատեհութիւնն է որ արգելք կ'ըլլայ լտարան մը կամ ուրիշ ազգային հաստատութիւն մը հիմնելու համար:

Նիւթական վիճակնիս լաւ է. ամենքն ալ վաճառականութեամբ կ'զբաղին, գրեթէ ոչնչով եկածներէն այսօր ամենքն ալ գիրքի տէր եղած են: Այս օրերս հայ երիտառարդ մը ամուսնացաւ հայ օրիորդի մը հետ. ամբողջ հայերս ներկայ գտնուեցանք հարսանեաց հանդիսին և այդ պատեհ առթիւ հանգանակութիւն մը բացինք ս. էջմիածնայ Մայր Աթոռին համար. ներկայներէն ամենքն ալ անխտիր մասնակցեցան. այդ հանգանակութեան արդիւնքը եղաւ 34 եպիպոսական ոսկի, հանգանակութիւնը գեւ պիտի շարունակենք»:

Կիպրոսի հայերը: «Մուրճում» (1904, № 1, եր. 187, 188) զետեղած համառօտ տեղեկութիւններից մեր ընթերցողը գիտէ, որ այդ կղզու՝ մօտ 283 հազար ազգաբնակչութիւնից միայն

562 հոգի են հայեր. այդ ողորմելի քանակութիւնը, ի հարկէ, անկարող էր աղգային հաստատութիւններ պահպանել: Եւ այդ հաստատուեց այն տիւր փաստով, որ Կիպրոսի միակ հայկական հաստատութիւնը՝ «Կրթարան-Որբանոցը», ինչպէս իմանում ենք մի մասնաւոր նամակից, հարկադրուած էր փակուել «ղրամական անապահովութեան» պատճառով: «Որբանոցի» բոլոր գոյքերը խնամակալութեան հրահանգով փոխադրուած են Գահիրէ (Նփսպոս): Տեսնենք այդտեղ ևս, մայր երկրից կրտսերած, կարճ են արմատներ պցել և աճել «աղգային» հաստատութիւնները: Կասկածում ենք...

S.

ԹԻՒՐԳԻԱՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Մրանից շուրջ տաս տարի առաջ՝ 1893 թ. մեզ յաջողուեց այցելել Թիւրքիայի մի քանի քաղաքները: Որքան մօտից էինք ծանօթանում այն տեղերում տիրող կարգ ու սարքի հետ, այնքան մեր մէջ ամրանում էր այն համոզմունքը, որ ուտից մինչև գլուխ փտել, նեխուել է Թիւրքիան:

Ամեն քայլափոխում ամեն ինչ ասում էր, որ տիրող ընդհանուր դրութիւնը չի կարող այլևս երկար շարունակուել և թէ Թիւրքիայի, որպէս մի անկախ պետութեան՝ օրերը արդէն հաշուած են: Պէտք է աւելացնենք որ Թիւրքիայի մասին այդ կարծիքը կարելի էր պատահել թէ Ներուպայում և թէ նոյն իսկ Թիւրքիայում: Այն ժամանակ ինձ թւում էր, որ Թիւրքիայի մօտալուտ անկման մասին էլ չի կարող լինել երկու տարբեր կարծիք:

Բայց ժամանակը արագ ընթանում էր և քաղաքական անցքերը Թիւրքիայում քանի գնում սոսկալի կերպարանք էին ստանում: Ներուպական առաջադէմ մամուլը ամեն օր յայտարարում էր հասարակութեանը Թիւրքիայի սնանկութեանը մասին, աւելի ևս՝ նրա մօտալուտ բաժանման մասին. և, սակայն ոչ Թիւրքիայի բաժանումը, ոչ էլ պաշտօնական սնանկութեան փոթորիկը անցաւ այդ պետութեան վրայով: Որքան աւելի արեւելքի քաղաքական հորիզոնի

վրայ սաստկանում էր ամպակոյտը, այնքան, կարծես, ամբանում էր նոյն թուրք կառավարութեան քաղաքական զրութիւնը: Դա հակասում էր ընդունուած կարծիքին և տրամաբանութեան, բայց միևնոյն ժամանակ դա փաստ էր և դրա հետ պէտք էր հաշտուել: Ահա հէնց այդ հակասութիւնն է զլխաւորապէս որ ստիպեց մեզ ուսումնասիրել Արևելեան հարցը և մօտենալ նրան զանազան կողմերից և փնտրել թէ ճիշտից է այն ոյժը, որ կանգնացնում է թիւրքիան վերջնական անկումից և պաշտօնական անանկութիւնից:

Ուսումնասիրելով, որքան միայն ներկցին մեր միջոցները, թիւրքիայում գոյութիւն ունեցող կարգերը՝ մենք եկանք հետևեալ եզրակացութեան:

Այն գործօնները, որոնց վրայ թէ հայ և թէ եւրոպական առաջագէժ հասարակական կարծիքը հայում էր իբրև անկման և անանկութեան զլխաւոր զրդապատճառների վրայ՝ հէնց այդ գործօնները, ասում ենք, ամենից առաջ ուշացնում և ամենից շուտ հեռացնում են խալիֆների հայրենիքը վերջնական բաժանումից ու անանկութիւնից:

Մեր խօսքը տնտեսական գործօնի և մասնաւորապէս թիւրքիայի ֆինանսական զրութեան մասին է:

Առաջին հայեացքից շատերը կարող են այս մեր կարծիքը պարադոքսի տեղ ընդունել, բայց դա գուցէ բացատրուի այն բանով, որ շատերի համար թիւրքիայի տնտեսական ու ֆինանսական կեանքի շատ և շատ կողմերը այնքան էլ պարզուած կամ լուսաբանուած չեն, մանաւանդ եթէ նրանք հայում են արևելեան հարցի վրայ միայն քաղաքական, կրօնական ու ցեղային պրիզմայի միջով:

Թիւրքիայի ֆինանսների հարցը առ հասարակ շատ քիչ է ուսումնասիրուած թէ եւրոպայում և թէ մանաւանդ Ռուսաստանում ու հայերիս մէջ: Մինչդեռ թիւրքիայում վերջին տարիներում կատարուած զէպքերից՝ յիտոյ, մանաւանդ հէնց մօտ ապագայում սպասուելիք զէպքերի կարելիութիւնը (Բալկանեան երկրներում) մեզ թոյլ են տալիս կարծել, որ աւելորդ չէ ծանօթանալ սոյն այս հարցի հետ, որը կրկնում ենք արևելեան հարցը ուսումնասիրողներին կարող է մասամբ լուսարանել, պարզել հարցի մութ մնացած կողմերը: Մեր ուսումնասիրութիւնը մենք բաժանում ենք հետևեալ մասերի *):

*) Այս հետազոտութեան համար մենք օգտուել ենք հետևեալ աղբիւրներից 1) Le Marcher Financier par Ar. Raffalowich 2) Bulletins de la Chambre du Commerce à Constantinople 3) Le Livre Jaune 4) Les Fin. de la

Ա. Շրջան առաջին՝ մինչև Թիւրքիայի պաշտօնական սը-
նանկութիւնը.

Բ. Թիւրքիայի ֆինանսները Եւրոպայի հսկողութեան
տակ:

Գ. Տնտեսական կեանք և բէֆորմների անկարելիութիւնը:

Գլուխ I

Երբ 1839 թ. նոյեմբեր ամսին սուլթան Աբդուլ Ազիզը
հրատարակեց իր նշանաւոր «Հաթիթի Շէրիֆ—Գիւլխանէ» ի-
րադէն՝ դա Թիւրքիայի առաջի հանգիստը խոստումն էր որ
անում էր Եւրոպային: Խոստացւում էր մի շարք բարենորո-
գումներ թրքաց կառավարութեան ներքին կեանքի մէջ: Այդ-
պէս՝ կառավարութիւնը համաձայն իր խոստամունքին՝ սկսեց
շինել երկաթուղի, հիմնեց կառավարչական պոստը ու հեռա-
գրատունը, և յանձնուեց Եւրոպացիներին—Թիւրքիայի համար
ծրագրներ պատրաստել: որոնց մէջ առաջին տեղը պէտք է
բռնէր պետութեան հպատակ ժողովրդի տնտեսական բարենոր-
ոգումները: Բայց սուլթանը ժառանգել էր իր նախորդի ոչ թէ
միայն զահը, այլ և բոլորովին դատարկ գանձարանը, ուրեմն
այսպէս թէ այնպէս պէտք էր գտնել նիւթական միջոցներ:
Ուստի մի տարի չանցած՝ 1840 թ. տեղի ունեցաւ առաջին մեծ
փոխառութիւնը, որը կառավարութիւնը յանձն առաւ տարե-
կան 12 տոկոսով վճարել: Լոնդոնի դրամատէր Ռիկարդօն՝
թիւրք կառավարութեան հետ կայացրած յատուկ պայմանների
հիման վրայ, այդ փոխառութիւնը 60 միլիօն ֆրանկից աւել-
ի չպէտք է լինէր: Բայց չնայած այդ պայմանին՝ մի քանի
ամիս չանցած այդ փոխառութեան արժէթղթերը կառավա-
րութեան կողմից շուկայ հանուած էին մօտ 160 միլիօնի. թիւրք
կառավարութեան այդպիսի «ոչ կորրեկտ» քայլին պէտք է ա-
ւելադնել և այն՝ որ կարճ ժամանակուայ մէջ հրապարակում
յայտնուեցին և բոլորովին կեղծ արժէթղթեր: Իրրև հետեանք
այդպիսի բարբարոս «փոխառութեան» եղաւ այն, որ կառավարու-
թիւնից լսաց թողունած և անգլիական դրամատէրից վաւերացած

Turquie par Morravitz; 5) «Taims»—1895—96, և Diplomatie and Consulate's re-
ports, Foreign Office, London» 6) Handelsarchiv 1898 թ. և ուրիշները: Շոտ-
պում ենք աւելացնել, որ ամենին յաւանդութիւն չունենք կարծելու որ
այս ուսումնասիրութիւնը գիտական կողմից պահառութիւններ չունի: Շատ
կարեւոր հարցերի վրայ կարելի էր դուրս աւելի երկայն կանգ առնել, իսկ
այն հարցերը որոնց մասին խօսում է, հաղիւ լուսարանել ենք երկու-ե-
րեք խօսքով:

արժէթղթերը ամենակարճ ժամանակի ընթացքում կորցրին իրանց նախնական արժէքը և հարիւր ֆրանկ արժող թղթերը կարելի էր գնել սարքաֆների մօտ 10—15 ֆրանկով:

Այդպիսի անել զրութիւնից ազատուելու նպատակով կառավարութիւնը հիմնում է «կայսերական բանկ» 25 միլիօն պիաստր դրամագլխով (պիաստրը՝ 8 կոպէկ): Բայց նոր հիմնարկութեան անունն էր միայն «բանկ», որովհետև ոչ մի բանկային գործունէութիւն նա ցոյց չտուեց, ոչ էլ կարող էր տալ. կառավարիչների տգիտութիւնը հասնում էր մինչև այն աստիճանի, որ կարծում էին, թէ իրը խնդրելով ու աղաչելով՝ հասարակութիւնը հաւատք կ'ընծայէ պետական արժէթղթերին և աւելի թանգ կը սկսէ գնել այդ թղթերը: Այդ «բանկը» մի քանի ամիս անաջող ձեռնարկութիւններ անելուց յետոյ, իր մայր դրամագլխից դատ, այլ ևս 35 միլիօն պիաստր կորցնելուց յետոյ փակում է իր դռները: Կորցնելով այդպիսով 60 միլ. պիաստր՝ Թիւրքիան էլ չէր մտածում նորանոր ֆինանսական փորձեր անելու և նա դադարում էր իր առաջին սնանկութեան նախընթաց օրը, երբ կարծես պատահամբ նոր ղէպերը դուրս բերին նրան այդ անել զրութիւնից:

Դա 1855 թ. էր, երբ յայտարարուեց Ղրիմի պատերազմը: Թիւրքիան միացաւ երկու մեծ պետութիւնների հետ և կարճ ժամանակուայ ընթացքում իր կարգադրութեան տակ արդէն ունէր և նաւատորմի և տասնեակ միլիօններ: Իսկապէս այդ օրից է, որ նա մտնում է եւրոպական պետութիւնների կոմրինացիայի մէջ, որով և բացւում է Թիւրքիայի համար մի լայն ասպարէզ նրա ապագայ արտաքին փոխառութիւնների համար: Այդ օրից Պարիզի և Լոնդոնի բօրսանքը ընդունում են իրանց ժողովներում թրքաց արժէթղթերը, այդ օրից և սկսում է, իսկապէս, Թիւրքիայի ֆինանսների պատմութիւնը:

Ոչ մի բան այնքան հեշտ չի տըւում մարդու, որքան պարտք տնելու գիտութիւնը, ասում է արեւելեան առածը: Եւ Թիւրքիան՝ սկսած յիմնական թուականներից ամբողջովին տրոււմ է փոխառութիւն անելու սպորտին, մանաւանդ որ փողի առատութեան պատճառով՝ Եւրոպան ուրախութեամբ էր ընդունում թրքաց արժէթղթերը: Այդպէս, օր. Թիւրքիայի նոր դաշնակիցներից մէկը՝ Անգլիան 1856 թ. պատրաստ է նրա համար 30 միլ. բուրլու փոխառութեան 6 տոկոսով. պարտքը ապահոված էր Թիւրքիայի կողմից Եգիպտոսի եկամուտով: Մի տարի չանցած՝ Անգլիան և Ֆրանսիան միասին ընդունում են

Թիւրքիայի նոր փոխառութիւնը 50 միլ. բուլղու, 4 տոկոսով:

Բայց եթէ արտաքին փոխառութիւնները մեծ օգուտ են տալիս կարգին և տնտեսապէս կաղմակերպուած պետութեան, նոյն փոխառութիւնները համարեա ոչ մի օգուտ չեն ներկայացնում Թիւրքիայի նման երկրներին, վերջինիս ազգաբնակչութեան շահերի տեսակէտից. ուստի այդ նոր փոխառութիւնները ոչնչով էին կարող գոհացնել ժողովուրդը: Այդպէս չնայած փոխառութիւններին՝ ամենակարճ ժամանակամիջոցում կառավարութեան գանձարանի յատակը էլի դատարկ էր երևում: Բայց քանի որ կարելի չէր ապրել դատարկ գանձարանով, ուստի կառավարութեանը պէտք էր մի ելք. և իսկապէս նա գտաւ մի շատ՝ իր համար բնորոշ ելք նիւթական ներդրութիւնից ազատուելու համար: Թրքաց կառավարութիւնը գնեց մի լաւ տպագրական մեքենայ և սկսեց թղթէ փողեր պատրաստել, ամենակարճ ժամանակուայ մէջ նա թողեց 150 միլիօն Փրանկի այդ թղթէ փողերը և դրանցով իր առօրեայ ծախսերն սկսեց հոգալ:

Սակայն այդ էլ դեռ բաւական չէր: Պետական ամեն մի նախարարութիւն առանձին առանձին իր կողմից էլ տալիս էր մի տեսակ «գրաւական վկայագիր» առանց հոգս տանելու իր թողած վկայագրի գոնէ գումարը յայտնել պետական ընդհանուր գանձապետին: Պետական պարտքերը այդպիսով այն աստիճան մեծանում և կուտակւում են միմեանց վրայ, որ Ֆրանսիական դեսպանը իր կառավարութեան անունից Արգիւլ-Մէջիդի ուշադրութիւնն է դարձնում այդպիսի տարօրինակ ֆինանսական դրութեան վրայ:

Արգիւլ-Մէջիդը ուրիշ ելք չի գտնում, եթէ ոչ հրատարակել մի նոր իրազէ, որտեղ պետական ծառայողների լուրջ ուշադրութիւնն է դարձնում այն բանի վրայ, թէ պետական փողերը պէտք է խնայողութեամբ գործադրուեն: Բացի այդ՝ սուլթանը իր իրազէում առաջարկում է կրճատել պալատական ծախսերը:

Զուգընթացաբար սրա հետ կառավարութիւնը հաստատում է մի մշտական ելլամտից սխտեմ, պետական ծախսերի ու մուտքերի համար: Հաստատում է նոյնպէս պետական վերատուգող յանձնաժողով: Այդ բոլորից յետոյ հրատարակւում է նշանաւոր «Հաթիի Հումայուն» իրազէն, որը իր մէջ այնքան բարենորոգումներ էր խոստանում, որ կարճեա մի տեսակ թրքաց «Մարդիային իրաւունքների դեկլարացիա»—լինէր: Այդ իրազէն բայ էր անում Եւրոպայի զրամատէրերի առաջ «գործի» լայն և փայլուն հորիզոն: Իրազէում խօսւում էր և

ճանապարհների կառուցման մասին և ծովափների, նեղուցների, այգուեղ խօսք կար և առևտրական բանկերի մասին և ուրիշ «գլխաց նման հիմնարկութիւնների, որոնք ընդունակ են բարենորոգել երկրի փողային և ֆինանսական սխառմը»: Ի վերջոյ «Հաթթի Հումայուն»-ը խոստանում էր ոչնչացնել այն ամենը, ինչ խոչընդոտ է հանդիսանում վաճառականութեան և երկրագործութեան կանոնաւոր զարգացման. և այդ բոլորին հասնելու համար խոստացում էր որ «Թիւրք կառավարութիւնը ամեն ջանք գործ կը դնէ օգտուել Եւրոպայի գիտութիւնից, գեղարուեստից և... կապիտալներից»:

Եւ ամենեւին զարմանալի չէ, եթէ այդքան խոստումներից յետոյ Կ. Պոլիսը rendez-vous է դառնում եւրոպացի խոշոր ձեռնարկող կապիտալիստների համար: Շտապով պատրաստուում և առաջարկուում են զանազան կողմից նորանոր ծրագրերներ Թիւրքիայում իրագործելու նպատակով: Բայց այդ բաղմաթիւ ծրագրերներից միայն մի քանիսը ընդունուում են Թիւրք կառավարութեան կողմից. այդպէս՝ երկաթուղիի կոնցեսսիաներ, որոնց մասին դեռ խօսք կը լինի այստեղ առանձին: Թիւրքիայի հանքերը շահագործելու առաջարկը կառավարութեան կողմից մերժուեց, ինչպէս մերժուեցին և նոյնաման ծրագրերը, որոնք ընդունակ էին երկիրը արգելադրութիւնը զարգացնելու: Պալատում ամենամեծ ուշադրութեամբ վերաբերուում էին միայն այն ծրագրերին, որտեղ այս կամ այն ձևով առաջարկուում էր նաղդ փող կամ փոխառութիւն: Այդ տեսակ առաջարկութիւնները իհարկէ իսկոյն ընդունուում էին և պետական պարտքերը դրա հետ միասին մեծանում էին անսահման: Պալատական ծախսերի և փարթամութեան վերջ չկար: Բանը հասաւ այնտեղ, որ մինչև իսկ երոպական պետութիւնները չափազանց էին համարում սուլթանի պալատական ծախսերը: Այդպէս՝ Նապոլէօն III-ը դը այդ առթիւ մի օր իր գարմանքը յայտնեց Թիւրքաց գեսպանին. իսկ վերջինս իսկոյն իմաց տուեց սուլթանին: Եւ մինչդեռ գեսպանը ամեն օր զոգում էր, որ իրան չըրկեն պաշտօնից, Սուլթան Ապդ-իւլ Մէջիդը մի նոր իրադէ է հրատարակում, որտեղ խորհուրդ է տալիս իր ազգականներին ու պալատականներին ուշադրութիւն դարձնել անտեսութեան վրայ: Բնորոշ է նոյնպէս և այն, որ սուլթանը իր իրազեւում անանց քաշուելու դիմում է առևտրական տներին յայտարարելով նրանց, որ պալատի պատուէրները առանց իր ստորագրութեան չընդունուեն խանութպանների կողմից, «հակառակ զէպրում նրանք չեն ստանալու ապրանքների փողը»:

Իրազեւում խստիւ արգելում էր հարեմին էլ, որ հարե-

մականները աւելորդ ծախսեր չանեն. ամեն ոք պէտք է տընտեսէր պալատական ծախքերում: Դիւաւոր հսկողութիւնը պալատական ծախսերի վրայ յանձնուծ էր... պատերազմական միջոցառումներ:

Այդ իրադէպն ահադին աղմուկ բարձրացրեց հարեմում և մինիստրներին շրջանում: Եւ ահա սկսուած է «տնտեսութիւնը»:

Նախ և առաջ բոլոր մինիստրութիւններում վճռուած են զանազան գործի համար եկող մարդկանց չհիւրասիրել ընդունուած մի բաժակ սև դափէյով, ապա՝ հարեմի նարգիլներէ քանակութիւնը նոյնպէս՝ կիսով չափ փչացնուած են: Մեծ վէճերը փոխանակ 12 նաւաւարի՝ վճռուած է միայն երեքով բաւականամալ Բոսֆորի վրայով անցնելիս: Այս և սոյնանման բարենորոգումներով ու տնտեսութեամբ՝ սուլթանը և նրա շրջապատողները երազում էին բարուոքել պետական ֆինանսների դրութիւնը. մինչդեռ միլիոնները անվերջ ծախսուած էին պատերազմական և այլ միջոցառումներում աշխարհի բաների վրայ, որոնք իրանց ետեւից ոչ մի հետք չէին թողնում... Ճիշտ է՝ պէտք է ասել և այն, որ այդ՝ ամեն քայլափոխում տնտեսութիւն փնտռող բեժիմը սեւեց մինչև նոր փոխառութիւն: Եւ իսկապէս, քանի որ տնտեսութեան անհրաժեշտութիւնը ընդունուած էր պաշտօնապէս, ուստի միամիտ եւրոպացի դրամատէրերը կարելի համարեցին նոր փոխառութիւն անել թիւրքիային: Անգլիայի Դենթօ և Պիլմիս դրամատուներ յանձնառու եղաւ 50 միլ. յուրու թրքաց նոր փոխառութեան. ճիշտ է ամեն մի 100 ֆրանկի փոխարէն արժեքնելով 60 ֆր. և բայի այդ՝ 6 տոկոս ամեն մի 100 ֆր. անուանական գումարից: Այդ աստիճանին էր հասել թրքաց ֆինանսների վարկը: Բայց բաւական էր, որ այդ փոխառութեան ոսկիները հասնէին Կ. Պոլիս, և ահա այնտեղ ամենաքել մոռանում են իրանց վճռած տնտեսութեան մասին և / նորից սկսուած են նորանոր շուայլ ծախսեր: Նորից թրքաց փողը կորցնում է իր արժէքը, նորից պետական ֆինանսների վարկը սկսուած է տատանուել: Չկար կանոնաւոր հաշուապահութիւն և հսկողութիւն ծախսերի վրայ. ամեն ոք գողանում էր և եթէ միայն բարձր պաշտօնեայ էր—երբէք չէր պատժուած: Այդպէս՝ պալատական զանապաղան ամենեւին չէր կարող յիշել, թէ ո՞ւր է ծախսել պետական 25 միլիոն պիաստրը. այդ «մոռացութեան» համար նրան զրկում են իր պաշտօնից և զրա փոխարէն սուլթանը յանձնուած է նրան դատաստանական բարձր պալատի նախագահի պաշտօնը. վերջի պաշտօնը իսկապէս նախկին պաշտօնից շատ աւելի բարձր էր համարուած...

Մինչ այս մինչ այն, պետական ֆինանսները նորից նեղութեան մէջ են ընկնում. պէտք էր անդառաճառ մի ելք գտնել: Փաստերը ցոյց էին տալիս, որ կայ, սակայն, մի միջոց. այն է՝ հրատարակել մի մանրիֆեստ կամ իրադէ. այդ միջոցը միշտ կարողացել է թէ եւրոպացիներին և թէ թուրք հպատակներին և թէ ոչ գոհացնել, գոնէ հանգստացնել: Եւ իսկապէս հրատարակւում է մի նոր իրատէ, ուր սովորական հայրական հոգատարութեամբ ասւում է, թէ անհրաժեշտ է ժողովրդի դրութիւնը լաւացնել, եւրոպական քաղաքակրթութիւնից օգտուել... մի խօսքով մի շարք խոստումներ, որով եւրոպական հասարակական աչքին փչւում էր սովորական թողը, որպէսզի եւրոպական փողատէր հասարակութիւնը աւելի հաւատով վերաբերուէր թրքաց ֆինանսներին: Չպէտք է մոռանալ, որ թրքաց արժէթղթերը բաժանւում էին գլխաւորապէս այդ եւրոպական հասարակութեան շրջաններում՝ բանկերի ու բանկատէրերի միջնորդութեամբ: Ուստի այդ հատարակութեան լաւ կարծիքը գրաւական էր ապագայ փոխառութիւնների համար:

Ցոյց տալու համար, որ Թիւրքիայում շատ են զբաղուած ֆինանսական գրութեամբ, հրաւիրւում են Եւրոպայի ֆինանսիստները, որոնք ահագին դժուարութեամբ կարողանում են նախահաշուի սխառեմ կազմել: Աչքի է ընկնում նրանց համար այն տարօրինակ երևոյթը, որ ոչ մի միլիոնարութիւն, ոչ իր ծախքերի վաւերացիւթիւնը ունի, ոչ էլ գիտէ թէ ժողովրդապէս տարեկան ինչ մուտք պէտք է ունենայ: 1860 թ. առաջին անգամ ծրագրւում է թիւրքաց պետութեան նախահաշիւը, որից երևում է մուտք 1,200,000 պիաստր. ելք 1,950,000 պիաստր. այդպիսով սպասւում է ուրեմն 700 միլիոն պիաստր դեֆիցիտ:

Դեֆիցիտը փակելու համար յանձնաժողովը վճռում է դիմել Պարիզի երկու բանկերին՝ նոր փոխառութիւն խնդրելով: Թիւրք կառավարութիւնն էլ ձեռնում է, թէ իբր լուրջ գործերով է զբաղուած և նշանակում է «ֆինանսների Բարձրագոյն Խորհուրդ»: Միևնոյն ժամանակ եւրոպական դեսպաններից ամեն մէկը իր ծրագիրն էր առաջարկում Թիւրքիային: Ֆրանսիան առաջարկում էր առևտրական պալատներ հիմնել և Պոլսում, Աւստրիան—նոր փոխառութիւն՝ առահոված՝ Թիւրքիայի հոգերով. Անգլիան—փոխառութիւն եւրոպական հսկողութեան տակ և այլն:

Ամենքի համար այստեղ աչքի է ընկնում այն փաստը, որ այդ ժամանակ, առաջին անգամ, ճիշտ է թէ և իր սաղմում, խօսք է լինում Թիւրքիայի ֆինանսները դնելու եւրոպական ներկայացուցիչների հսկողութեան տակ. միևնոյն ժամա-

նակ երևում է որ ինքը Թիւրքիան անկարող է իր սեփական երկրի սնտեսական կեանքը կառավարել: Միւրք է ծաւում նոյնպէս մինչև իսկ մի միջազգային փոխառութիւն անել, այսինքն փոխառութիւնը միաժամանակ բաժանել—դա՛նսական երկրներ ընկերի մէջ:

Բայց որովհետև պետութիւններից ամեն մէկը ուրիշի առաջարկած ծրագրի մէջ տեսնում էր իր «ապագայ շահերի» որոշ խոչնդոտներ՝ ուստի և դեսպանները միայն միմեանց դէմ անվերջ խնդիրներ էին լարում, աշխատելով «պատառ» իրանց ձեռքը ձգել: Այդ շրջանի դեսպանական գրութիւնները և հեռագիրները ուղղուած իրանց կառավարութիւններին՝ աւելի նմանում էին մերձ իմաս հիւանդի ամենօրեայ ընկերակցներին, քան թէ դիպլոմատիական գեղուցումներին: Թիւրքիայի գրութիւնը վատթարանում էր նոյնպէս և այն բանից, որ նրա զինւորները ապստամբութեան նշաններ էին ցոյց տալիս ոռճիկ չստանալու պատճառով: Չպէտք է մոռանալ, որ նոյն ժամանակները Թիւրքիայի գաւառներից մէկում, Լիբանոնում, խլտումներ էին տեղի ունենում, մինչդեռ օգնութիւն Թիւրքիան չէր տեսնում ոչ մի կողմից:

Բարձրագոյն Դուռը մոռացած ինքնասիրութեան ամենատարրական պահանջները՝ ամենատոոր ձևերով դիմեց մի քանի անգամ անգլիական և ֆրանսիական պետութիւններին՝ խնդրելով նրանցից որևէ կերպով օգնել իրան: Բայց այդ պետութիւնները ի՛նչ կարող էին պատասխանել եթէ սչ ա՛յն, որ ամեն ինչ կատարած է դրամատէրներից և բորսայից:

Ֆինանսների մինիստր Ալի փաշան արդէն պատրաստում էր մի ծրագիր, որով Թիւրքիան յայտարարելու էր իրան սնանկացած, երբ ֆրանսիական մի փողային սինդիկատ օգնութեան է հասնում Թիւրք կառավարութեան, առաջարկելով վերջինիս մի մեծ փոխառութիւն: Այդ փոխառութեան պայմանները հետեւեալներն էին. տալ Թիւրքիային 400 միլ. ֆր. տարեկան 6 տոկոսով և 36 տարուայ ժամանակամիջոցով. այդ փոխառութեան արժէթղթերը սենդիկատը գնում էր 53-ով—փոխանակ 100 ֆր. անուանականի. այլ խօսքով ամեն մի 100 ֆրանկի փոխարէն էապէս տրւում էր Թիւրքիային միայն 53 ֆր. իսկ Թիւրքիան տալիս էր 6 տոկոս տարեկան՝ ընդունուած անուանական գումարի համար, թէև փոստօրէն օգտուել էր միայն գումարի կիսով:

Այդ փոխառութիւնից առաջ եւրոպական «բանխմաց» մամուլը, յայտնի բան է, ցոյց է տալիս, որ Թիւրքիայի ֆինանսները երեւելի գրութեան մէջ են, թէ երբէք չպէտք է վա-

խենալ Թիւրքիայից, թէ ինքը—Անգլիան 20 միլիարդ պարտք ունի, թէ համեմատած երկրի մեծութեան ու եկամուտի հետ Թիւրքիայի պարտքը խկապէս մի չնչին բան է կային:

Այդ վարձուած մամուլը ի հաւրկէ մոռանում էր յիշեցնել այն իրողութիւնը, որ գաղտնիքը պարտքերի քանակութեան մէջ չէր. թէ Անգլիան յայտնի էր, որպէս մի կառավարութիւն, որ առաջնորդում է ֆինանսական ամենակարեւոր սխաւմով ու հաշուետւութեամբ, մինչդեռ Թիւրքիայի ֆինանսները մի քաօս էին: Ինչ և է. չնայած այդպիսի լայն ընկալներին՝ եւրոպական միջին փողատէր հասարակութիւնը այդ արժէթղթերից գնեց միայն մի երրորդ մասը, այն է 133 միլ. ֆրանկի. միւսի համար պահանջ չկար: Բայց այդ ընկալները օգնեցին այն բանին, որ դրանից յետոյ վերջնականապէս հիմնուեց նըշանաւոր Բանկ-Օտտոման-ը (Banque-Ottomant)—Թիւրքաց կայսերական բանկը, որի բաժնետէրերը գլխաւորապէս Փրանսիայից, անգլիացիք և աւստրիացիք էին: Բայց հէնց որ հիմնւում է բանկը՝ Թիւրք կառավարութիւնը նոր փոխառութիւն է անում 80 միլ. ֆր.—6 տոկոս և 60 ֆր.—փոխարէն անուանական 100 ֆր. արժէթղթերի: Այդպիսով փոխարէնը մի անգամ ևս անցնում է Թիւրքիայի կողմից, առանց նրան դաշխու:

Բանկ-Օտտոմանի հիմնարկութեամբ Եւրոպայի անտեսական շահերը քանի գնում աւելի և աւելի միանում ու խառնւում, ձուլւում են Թիւրքիայի սեփական շահերի հետ. մի բան, որ անբան տեսչալի էր Թիւրք կառավարութեանը:

Կարելի է համարձակ ասել, որ եւրոպական ու թրքական անտեսական այդ համերաշխութիւնը, 19-րդ դարու ընթացքում մի քանի անգամ ազատեց Թիւրքիային վերջնական բաժանումից:

Այդ նորակազմ կայսերական բանկին, որ կառավարութիւնից մի անկախ մարմին էր ներկայացնում, իրաւունք էր տրուած իր ստորագրութեամբ և իր պատասխանատւութեամբ բաց թողնել թղթէ փողեր: Եւ շատերը Եւրոպայում կարծում էին, որ Բանկ-Օտտոմանի հիմնուելով՝ նոր փոխառութիւններ էլ չէին կարող տեղի ունենալ: Այդպէս կարծողները, ի հարկէ, չարաչար սխալուեցին:

Կարճ ժամանակուայ ընթացքում տեղի ունեցան նորից մի քանի փոխառութիւններ, որոնց ընդհանուր գումարը հասնում էր մօտ մի միլիարդ ֆրանկի: Դանայոսի անտակ տակառի կլասիկական առասպելը, կարծես, առաջին անգամ իրական փառաբան ձև էր ստացել, մարդկային պատմութեան մէջ: Թիւրքիայի անտակ զանձարանում անվերջ լցւում էին միլիոն-

ները և սակայն կարճ ժամանակուայ ընթացքում դատարկւում էր գանձարանը:

Ճիշտ է՝ շնորհիւ անվերջ փոխառութիւնների՝ մասնաւոր ժարդկանց ու առևտրական մի քանի տների գործերը շատ լաւ էին գնում: Մեծ եկամուտ էր տալիս և Բանկ-Օտտոմանը իր ակցիոններին, ինչպէս և Բարոն Հիւշի շինած երկաթուղիները—մի խօսքով որոշ գոտակարգ Կ. Պոլսոյ վրայ նայում էր իբրև մի երկրորդ Կալիֆոռնիայի վրայ:

Բայց որովհետև յայտնի չէր, թէ միլիոնները ո՞ւր էին գնում, ուստի անհրաժեշտ էր նախօրօք մտածել նոր փոխառութիւնների մասին: 1873 թ. երբ տեղի է ունենում Վիեննայի նշանաւոր տնտեսական կրիդիտը, որը միանգամայն անդրադառնում է բոլոր երկրների տնտեսական կեանքի ու զրամատէրներին վրայ, ոչ ոք էլ ցանկութիւն չի յայտնում հետաքրքրուել թրքական ձեռնարկութիւններով: Ռաշիդ փաշան մի պաշտօնագրով իմաց է տալիս պետութիւններին, որ սուլթանը մօտ ապագայում հրատարակելու է մի իրադէ, որից պէտք է երևայ, որ կառավարութիւնը մեծացրել է հոգային տուրքերը, հանքերի կոնցեսիաներ է տալու եւրոպացիներին, հետևապէս նոր տուրքերի ազդիւր է բացուելու: Դրանով մինիստրը ի հարկէ ցոյց էր տալիս, որ Թիւրքիայի եկամուտը մեծանալու է, որը հետևապէս իր կողմից թոյլ է տալիս և նոր փոխառութիւններ անելու:

Սպասելով լաւ լուրերի եւրոպայից, կառավարութիւնը, ի միջի այլոց, փոքրիկ փոխառութիւններ է անում տեղական հայ և յոյն բանկատէրերից՝ վճարելով նրանց 1½ տոկոս ամսական և կառավարութիւնը իրան շատ երջանիկ է զգում, երբ յաջողւում է նրան մի որեւէ տեղից պոկել մի քանի տասնեակ հազար ֆրանկ:

Բայց ամեն բան պէտք է սահման ունենար, մանաւանդ «փոխառութիւնների շտրուանը»: 1875 թ. հրատարակւում է սուլթան Աբդուլ-Ազիզի իրազէն, ուր յայտարարւում է, որ կառավարութիւնը ստաջիկայ հինգ տարուայ ընթացքում կաբող է վճարել իր օրլիգացիաների (արժէթղթերի) տոկոսի միայն կէսը, բայց «որպէս զի, առում էր, եւրոպացիների շահերը չղոհուին՝ մենք կը թողնենք 5 տոկոսանոց նոր օրլիգացիաներ և զրանցից ստացուած փողով կը վճարենք տոկոսի մնացեալ մասն էր»:

Այդ յայտարարութեան հետ զուգընթացաբար շարուած էին մի շարք ճոճաւան ֆրազներ «կառավարութեան սուրբ պարտականութիւնների», «եւրոպացիների շահերի պահպանման» և

այլն ի մասին. բայց դործի էութիւնը, իհարկէ, դրանից չէր փոխուում. դրանով յայտարարուում էր սնանկութիւն: Ճիշտն առած ղէպքերը այլ բան չէին էլ կարող պատրաստել և ամեն ինչ ղէպի այդ էր ընթանում: Մի բեժիմ որ ապրում է նորանոր պարտքերով, բեռնաւորուած՝ աստիճանաւորներ ի ահապին բանակով, իւրացած բռնապետական սկզբունքներով, անընդունակ որեւէ բարենորոգումների, առանց որեւէ տնտեսական սխտեմի ու հաշուետւութեան՝ ճակատագրօրէն պէտք է գլորուէր սնանկութեան անդունդը: Եւ վարմանալի բան. այդ ճգնաժամը՝ ինչպէս յաճախ է պատահում, երեւան եկաւ հէնց այն բողբոջին, երբ աւելի քիչ, քան երբէք, կարելի էր այդ սպասել: Ուստի 1875 թ. իրազէն մի չտեսնուած ցնցում յարուցեւրոպայում: Թիւրքիայի տարեկան վճարելիք միայն տոկոսների գումարը հասնում էր 318 միլ. ֆրանկի, որից 280-ը արտաքին, իսկ մնացեալը ներքին փոխառութիւններից: Թիւրքիայի պարտատէրներն էին ֆրանսիացիք, անգլիացիք և իտալացիք—ապա գալիս էին և միւս ազգութիւնները՝ գերմանացիք, աւստրիացիք և այլն—բացի ռուսից. դրանց թւում էր նոյնպէս իբրեւ բաւականին խոշոր պարտապահանջ և վատիկանը, որ թրքաց արժէթղթերի մէջ էր գրել Ս. Պետրոսի աթոռին պատկանած փողերը:

Եւրոպայի հասարակութիւնը մանաւանդ անախորժ վարմացած էր այն բանից, որ Թիւրքիան, հակառակ իր սովորութեան, այս անգամ պարզ և կտրողակի յայտնում էր սնանկութիւնը: Մոհամմատի յաջորդի այսպիսի կտրողական բացատրութեանը, ասում ենք, ոչ սովոր էր և ոչ պատրաստ կապիտալիստ Եւրոպան, ուստի վարմանքը փոխուեց պանիկայի, որ էլ չափ ու սահման չունէր:

Քսան տարուայ ընթացքում Թիւրքիան արել էր երկու և կէս միլիարդ ֆրանկի պարտք: Այդ թուի յանդիման չգիտես որ բանին աւելի զարմանալ՝ ամբողջ եւրոպական հասարակութեան միամտութեան, թէ Թիւրքիայի «պարտքեր անելու արուեստին», այն էլ առանց մի որեւէ շօշափելի հետք թողնելու: Ամբողջ գումարից հազիւ տասն տոկոսը գործածուում էր հասարակական շահաւէտ ձեռնարկութիւնների վրայ. (1250 վերստ երկաթուղի ձանապարհ):

Մնացեալ ամբողջ գումարի արդարացման համար կարելի էր ցոյց տալ Բոսֆորի ափում մի քանի գեղեցիկ պալատներ և մի քանի մարտահաւեր, որոնք սակայն թնդանօթների և կամ մեքենաների անհրաժեշտ մասերից զուրկ էին:

Մինչդեռ Թիւրքիայի պարտատէրերը սպասում էին վճա-

ընկեր տոկոսների երկրորդ մասին՝ հասնում է այդ ժամանակամիջոցն էլ, բայց այդ երկրորդ մասն էլ չի վճարւում. այդպիսով թէ էապէս և թէ ձեական տեսակէտից կառավարութեան սնանկութիւնը ամբողջովին էր:

Սակայն երկու և կէս միլիարդ կորցնելու պերսպեկտիվի հանդէպ Եւրոպան չէր կարող չյուզուել: Իսկոյն գումարւում է մի արտակարգ համաժողով, ուր և ընտրւում է այսպէս առած «պարտքերի պաշտպանութեան կոմիտէ»:¹ Բոլոր պարտատէրերը, թէ օտարազգի և թէ տեղացիներ՝ վճռում են պահանջել որ հիմնուի մի կենտրոնական մարմին, որի հսկողութեան և կարգապահութեան պէտք է ենթարկուին Թիւրքիայի բոլոր եկամուտները: Ենթադրւում էր, որ տարեկան եկամուտի մի մասը կը գնայ պարտքերի որոշ մասի վճարման համար: Այդպէս էին կարծում Թիւրքիայի պարտատէրերը, բայց ինքը Թիւրքիան այդ ժամանակները այլ հարցերով էր զբաղւած, որոնք աւելի լուրջ և հրատապ նշանակութիւն էին ստացել նրա աչքում: Դա 1876 թ. անցքերն էին, որ տեղի էին ունենում Թիւրքիայի սահմաններում. մի կողմից Հերցեգովինեան և Բուլղարիան իրանց ապստամբութիւններով, ֆրանսիական և դերմանական կոնսուլների սպանութիւնները Սալոնիկում, միւս կողմից Արդիւ-Ազիզի գահընկեցութիւնն և սուլթան Մուրադի գահակալութիւնը, որին, հակառակ օրէնսդրութեան ու սովորութիւններին՝ փոխարինում է բռնի միջոցներով Աբդուլ-Համիդը:

Իրերի դրութիւնը աւելի ևս հեռուն գնաց և տեղի ունեցան խոշոր պատմական դէպքեր. այն է՝ ռուս-թրքական պատերազմը, Թիւրքիայի պարտութիւնը, Բուլղարիայի ազատութիւնը, Սան-Ստեֆանօի պայմանագիրը, Բերլինի դաշնագիրը և այլն և այլն: Եւրոպական հասարակական կարծիքը թէև սաստիկ բողոքում է Բուլղարիայում տեղի ունեցած թուրք գաղանութիւնների դէմ, բայց այդ բողոքը հազիւ թէ այդ խիստ ձեռ ստանար, եթէ վրա ետևը չլինէր մի այլ պատճառ՝ այն է երկու միլիարդի կորուստը,

Մեր աշխատանքի ծրագրից դուրս է կանգ առնել այս բոլոր քաղաքական դէպքերի վրայ, որոնք վերջացան Բերլինի նշանաւոր դաշնագրով: Նոյն Բերլինի համաժողովում սկզբունքով ընդունուեց, որ Թիւրքիայի եկամուտների վրայ հսկողութիւն տնօրինուի եւրոպացիների կողմից: Սկզբում ճարահատուած, յետոյ ամենայն ուրախութեամբ Թիւրքիան ընդունում է եւրոպացիների աջակցութիւնը և հսկողութիւնը երկրի ֆինանսական հարցերում, ինչպէս և հարկահաւաքման և այլ հար-

ցերում: Այդ բոլորը պաշտօնապէս հրատարակում է նշանաւոր «Մուհարէմի» իրադէում, որը մեկնակէտ է դառնում Թիւրքիայի յետագայ գոյութեան:

Սկզբում հաստատում է մի յանձնաժողով, որը այսուհետև զբաղուելու էր Թիւրք եկամուտների հարցով. նրա կարգադրութեան է յանձնում նոյնպէս ժողովել Բուլղարիայի և Մոնտենեգրոյի տուրքերը:

Ռուս-թրքական հարցերը կողմնակի կերպով օգնեցին Թիւրքիային մի կերպ դուրս գալ ֆինանսների քառասկան դժբութիւնից: Պարտատէրերը նախ և առաջ բաւականացան աւելի համեստ պահանջներով, ապա փոքրացրին և տոկոսի չափերը: Թիւրքիայի բոլոր պարտքերը, բացի Ռուսաստանին պատկանելիք պատերազմական տուրքից, իբրև դառնատիւ ստացան կամ որոշ կոնցեսիաներ, կամ կառավարչական հարկեր: Այդպիսով եւրոպական կապիտալիստները համեմատաբար ազատուեցին, իսկ իրանց ստանալիք տոկոսը փոքրացրին մինչև մի տոկոս տարեկան. մի տոկոսից աւել Թիւրքիան անկարող էր վճարել. բայց եթէ մի տոկոս տալուց յետոյ մնար մի ինչ ուր գումար—դա պէտք է գնար իբրև մայր պարտքերի վճարման (ամորտիզացիայի):

Մի խօսքով անձայր փոխառութիւնների շրջանը փակուեց «Հանրային պարտքերի վարչութեամբ», որը կառավարւում է պարտատէրերի ներկայացուցիչներից կամ «խորհրդով»: Այդ խորհրդին արւում էր Թիւրքիայի եկամուտների հսկողութիւնը և տնօրինութիւնը: Միևնոյն ժամանակ Թիւրք կառավարութեան արւում է «խորհրդի» վրայ հսկելու իրաւունքը: Եւ կառավարութիւնը իրաւունք ունի միջամտել «խորհրդի» կարգադրութիւնների մէջ, եթէ միայն անհրաժեշտ է գտնում փոփոխել պետական հարկերի հաւաքման միջոցները և ձևերը:

Այդ է Թիւրք ֆինանսների առաջին շրջանը: Եւ Մուհարեմի իրադէի օրից, այսինքն այն օրից, երբ Թիւրք տնտեսական-ֆինանսական հարցերում միջամտում է Եւրոպան—ինքը Թիւրքիան մտնում է քաղաքական կեանքի մի նոր շրջան:

Բայց այդ նոր շրջանում Թիւրքիայի տնտեսական-ֆինանսական կեանքը անխուսափելի կերպով պէտք է երկու տարբեր ձևերի մէջ ամփոփուէր: Առաջի ձևը—այն բոլորն է, ինչ կախում է ուղղակի թրքաց ֆինանսների միևնուրից, իսկ երկրորդ ձևը—այն բոլորը ինչ յենում է «Հանրային պարտքերի վարչութեան» վրայ: Առաջին ձևը—արևելքում գործածուած հին սխտեմի քառասկան մնացորդն է. երկրորդը՝ ֆինանսների մի կազմակերպութիւն՝ կրոպացիների կողմից յատկապէս արև-

եւքի համար յօրինած: Այս երկուսի մասին էլ մենք կը խօսենք առանձին առանձին. և միայն զրանից յետոյ կը պարզուի ժամանակակից Թիւրքիայի իսկական պատկերը:

Ռուրէն Բերքերեան

(Կը շարունակուի)

ՆՈՒՆԻՐ ՕՐ. N. N.

«Երանի, ով ձգտում է գէպի աստղերը»:
Մեծն Բրանմա

Դու անցորդի պէս քեզ միայն զգաս,
եւ որպէս ճամբորդ այս երկրի վրայ՝
Ազատ հայեացքով նայիր ամենքին.
Եւ անվերջ քայլէ՝ քու անյայտ ուղին:
Միտդ սրբազան վշտով թաթախիր,
Հեռաւոր ամեր գնա, թափառիր,
Անյազ ուրոնիր մի վեհ ընկերի,
Միւրիւր, բայց սիրուն մի՛ լինիր գերի,
Միւրիւր, բայց և թող, և նորից գնա՝
Մռայլ ու մենա՛կ — աշխարհիս վրայ.
Հոգիդ մըըըրկիր խորի՛ն մտքերով.
Միտդ թող այրուի վսեմ երգերով.
Եւ երազ մի վառ, շքեղ, սուրբ և վեհ.
Այս հողի երկրից հողիդ թոցնէ.
Կարօտով ձգտիր աստղերին անշէջ
Եւ մեռիր աստղէ ոլորտների մէջ:

* * *

Անապատում, միրափի մէջ մի բեդուին
Շողքն է տեսնում մի աղջկայ գեղեցիկ.
Եւ վնդռում է հոգեւայաց, տենչազին
Ծով-կարօտով այն աղջկան գեղեցիկ:

Եւ ծարաւուտ անապատի հրավառ
Տատասկներում, արեւի տակ բոցափայլ
Փնդուում է նա նըրան անվերջ, անդադար
Եւ մեռնում է վեհ սիրոյ մէջ հոգեզմայլ:

Եւ քնի մէջ՝ աննիւթական, անվախճան,
Տեսնում է նա այնպէս քնքո՛ւշ ու սիրո՛ւն
Շողքը չքնաղ այն նազելի աղջկան
Եւ փնդուում է նըրան յաւէրժ երազում...

Աւ. Իսահակեան

Օ Բ Ե Ր Լ Է Ն Ե Ր Ը

Վ Է Պ

Բըճէ Բագլեի

(Թարգմանութիւն Ֆրանսերէնից)

I

Փետրուարի գիշերը Ալգասում

Լուսինը բարձրացաւ Հռենոսի մէզերի վրայ: Այդ ժամին
Վոփի լեռնային արահետով մի մարդ էր իջնում, մի յայտնի
որսորդ՝ յայտնի շրջիկ, որից ոչինչ չէր խուսափում: Նա նկա-
տեց լուսինը թաւուտ անտառակի բացուածքից: Թէև անմիջա-
պէս յետոյ մարդը ծածկուեց եղենիների ստուերում, բայց այդ
մի հատիկ հայեացքը, որ ցանցաւ ծառերի արանքից նա նե-
տեց պայծառ գիշերուայ վրայ, բաւական եղաւ ըմբռնելու շըր-
ջապատող բնութեան գեղեցկութիւնը: Հաճոյքի մի դող անցաւ
ճանապարհորդի մարմնով: Եղանակը ցուրտ էր և խաղաղ: Ձո-
րերից բարձրացող նոսր մառախուղը՝ ծաղիկների ու ելակի
բուրմունքի փոխարէն տարածում էր սեռիների, թօշնած տերե-
ւների, կանաչ խոտերի, ծառերից պոկուած թարմ եղենների
անուշահոտութիւնը: Մառախուղի մէջ զգացում էր նաև այն

լաւիտենական ծաղկի բուրմունքը, որի անունն է անտառային մաժուռ: Ճամբորդը լայն կրծքով շնչում էր իր սիրած այդ հոտը. տասը քայլ շարունակ՝ բերանաբաց նա կարծես խոշոր կումերով խմում էր այդ բուրմունքը. ինչքան և նա լաւ ծանօթ էր անտառի գիշերային այգալիսի հանդէսներին, այդ շողազարդ երկնքին, հողից բարձրացող այդ բուրմունքին, համար կեանքի ցնծութեան ադ թրթիւններին, այնուամենայնիւ մեղմիւ բացազանչեց. «Կեցցես ձմեռ, կեցցես Վոժի լեռները. նըլրանք չեն կարողացել ձեզ փչացնել:» Եւ յետոյ՝ կածանի աւագների ու եղենիների չոր փշերի վրայ աղմուկ չը հանելու համար, ձեռնափայտը թևի վրայ դրեց. ու յետ դառնալով բացազանչեց.

— Զգոյշ քայլիր, ֆիդել, իմ հաւատարիմ բարեկամ. տես, սրբան գեղեցիկ է:

Երեք քայլ հեռաւորութեան վրայ նրա յետևից վազում էր իսպանական մի երկայնասրուն շուն, վտիտ կողերով և բարակի պէս սուր զնչով: Նա թէև մոխրագոյն էր, բայց լոյսի առաջ ստանում էր կրակի կամ կաթնախառն սուրճի գոյն: Փափուկ մազերի կախկիւտած փնջերի տակից ծրագրւում էին նրա ոտները, փորը և պսչը: Կենդանին կարծես հասկացաւ իր տիրոջ ասածը, և շարունակեց քայլել այնքան հանդարտ, որքան լուսինը, որ սահում էր եղենիների կատարների վրայից:

Շուտով լոյսը թափանցեց ոստերի արանքը, փշեց և տեղ-տեղ սրեց տարաւ ստուերները, սողաց, ձգուեց զառիվայրերի վրայ, փարեց ծառերի բներին և շողերի կաթիլներով զարդարեց նրանց, ապա սառն, յեղյեղուկ ու կապոյտ՝ ծառերից ստեղծեց մի նոր հրաշալի անտառ, որ անծանօթ էր ցերեկներին: Տասը ըռպէ բաւական եղաւ այս անհուն, դիւթական և արագ ստեղծագործութեան համար, որ ընտրիւնը կանխաւ չյայտնեց և ոչ մի թրթիւռով: Ուլրիխ Բէհլերը շարունակեց իջնել, հետզհետէ աճող յուզմունքով բռնուած: Նա մերթ ընդ մերթ կռանում էր՝ ծառերի տակը լաւ տեսնելու համար. կամ սրտի թրթիւռով կախում էր հեղեղատների վրայ, զգոյշ պահելով գլուխը՝ ինչպէս այծեամները, որոնք պատրաստուած են թողնել ձորակը և վազել դէպի հովիտ:

Խանդավառ և հուզով երիտասարդ այս ճանապարհորդը, սակայն էլ ջանիլ չէր: Ուլրիխ Բէհլերը, կամ Ուլրիխը, ինչպէս նրան պարզապէս անուանում էին այդ կողմերում, վաթսուն տարեկան էր. այդ երեւում էր նաև նրա ալիսառն մազերից ու միւրուքից: Բայց նա երևի անցեալում երիտասարդութեան աւելի մեծ կորով էր ունեցել քան ուրիշները, այնպէս՝

ինչպէս մէկն աւելի քաջութիւն, միւսն աւելի գեղեցկութիւն է ունենում: Եւ այդ ունեցած երիտասարդութիւնից նա դեռ մի քան պահում էր: Նա ընակում էր Սէնտ-Օգիլ լերան կրճքին, ուղիղ չորս հարիւր մետր բարձրութեան վրայ: Եւ անկումած էր անտառի մէջ նրա անարուեստ տնակը առանց մի կտոր հողի ու առանց պարտիզի, եթէ չհաշուենք այն փոքրիկ գետինը, ուր հաստատուած էր շէնքը և յետևի այն փոքրիկ ծառատանը, որ խիստ ձմեռները աւերում էին պարբերաբար: Հայրը գնել էր այս տունը միմիայն արձակուրդներն այնտեղ անցկացնելու համար, իսկ որդին՝ Ուլրիխը, ժառանգելով այն, մընաց նրան հաւատարիմ և այնտեղ անց էր կացնում ամբողջ տարին մեռած-մենակ՝ չնայելով որ իր բազմաթիւ բարեկամները ինչպէս և իր հողերը գտնուում էին ներքևում՝ հարթութեան վերայ: Նա մարդատեաց չէր, բայց միևնոյն ժամանակ չէր սիրում իր կեանքը փռել, բաց անել ուրիշներին առաջ: Մի փոքրիկ լեզենդա պարուրում էր այդ կեանքը: Պատում էին, որ 1870 թուի պատերազմի բոլոր կռիւների մէջ նա գլխին կրում էր մի արծաթէ սաղաւարտ, որի վրայ ցցունքի փոխարէն ծածանւում էր մի փունջ կանաչի մազ: Ոչ ոք չէր կարող էր այդ սլառմութեան ճշմարտութիւնը հաստատել, բայց քսան ալգասցիններ կը վկայէին, որ Փրանսիական դրագոնների մէջ չկար աւելի անխոնջ ձիաւոր, աւելի յանդուգն խուզարկու, դժբախտութեան մէջ սեփական ցաւերը մոռացող, աւելի կարեկից ընկեր՝ քան Ուլրիխը, Սէնտ-Օգիլ լերան վրայ Հէյդենբրոնխի կալուածատէրը:

Գերմանական տիրապետութեան տակ՝ նա Փրանսիացի մնաց: Սա իր երջանկութիւնն էր, ինչպէս աղբիւրը այն բազմաթիւ անախորժութիւնների, որ նա կամ աշխատում էր հարթել կամ կրել մի հատիկ բարիքի փոխարէն—որ նրան թոյլ տան շնչել Ալգասի օդը:

Պարտուած և հսկողութեան ենթարկուած՝ նա գիտէր սակայն պահել իր արժանապատւութիւնը: Ո՛չ մի զիջում՝ որ թոյլ տաւ մտածել թէ նա մոռանում է Փրանսիան, բայց և ոչ մի գրգռում կամ անօգուտ ցոյց: Ուլրիխը շատ էր ճանապարհորդում Վոժում, ուր նա ունէր այստեղ, այնտեղ, անտառի կտորներ, որ ինքն էր կառավարում: Մտորին Ալգասում նրա անտառները ամենից աւելի լաւ էին խնամուած: Երեսուն տարուց ի վեր նրա դուռը փակ էր հիւրերի առաջ սգի պատճառով բայց նրա տունը յայտնի էր իր նուրբ, ճաշակաւոր կարգ ու սարքով: Այն ա՛յլ քանի անձինք, Փրանսիացի կամ ալգասցի, որոնք կոխել էին նրա շէնքը, գտնում էին տանտիրոջ սիրա-

լիբուրիւնը և հիւրընկալութեան արուեստը: Նրան սիրում էին մանաւանդ այն դիւղացիք, որոնք նրա հետ միասին մասնակցել էին պատերազմին և նրանց որդիները, որոնք գլխարկները հանում էին, երբ Ուլրիխը յայտնում էր առույտի արտերի կամ այգիների առաջ: Նրան հետուից հեշտութեամբ կարելի էր ճանաչել շնորհիւ իր բարակ, բարձր իրանի, թեթև զգեստների որ նա գնում էր Պարիզում:

Եւ նա ընտրում էր միշտ թուխ գոյնի դանազան երանգները, թունդ մուգից սկսեալ մինչև բաց մուգը: Խնամուած և սրածայր միտքը երկարաւուն ձև էր տալիս նրա սակաւարիւն և հազիւ կնճած գէմքին: Շրթունքների վրայ ժպիտն անպակաս էր, բարձր և ուղղադիժ քիթը վկայում էր նրա ազնիւ ցեղի մասին: Թուխ, ներողամիտ և նուրբ աչքերը հեշտութեամբ ընդունում էին հպարտ ու մարտական արտայայտութիւն, հէնց որ խօսք էր բացւում Ալզասի մասին: Այս կռուի մարդի արտաքինին մի փոքր խոհունութիւն էր տալիս այն ճակատը, որ երկու կողմից բարձրանում, թալւում էր կոշտ, խիտ և ուղիղ կտրուած մազերի թանձրութեան մէջ:

Այն երեկոյ Ուլրիխը աուն վերադարձաւ Բրիւխի լեռներից ու ձորերից, ուր գնացել էր տեսնելու թէ ի՞նչպէս են կտրում անտառը: Ծառաները չէին սպասում, որ նա նորից դուրս կերթայ և զարմացան, երբ ճաշից յետոյ Ուլրիխը ասաց իր սպասուհուն, պառաւ Լիզային, որ ծառայում էր սեղանին:

— Իմ քեռորդի ժանը այսօր պէտք է որ դարձած լինի Ալշէյսի: Եթէ սպասեմ մինչև վաղը, նա անշուշտ կը գայ ինձ այցելութեան: Բայց ես գերադասում եմ այսօր և եթ նրան տեսնել այնտեղ: Ես մեկնում եմ. բանալին թող դրան տակը, իսկ ինքը պառկիր, քնիր:

Ապա նա սուէց, կանչեց Ֆիդելին, վերցրեց ձեռնափայտը, իջաւ այն շաւիղով, որ Հէյդենրութից յիսուն քայլի վրայ կորչում էր անտառում:

Ուլրիխը՝ իր սովորութեան համեմատ՝ հագած ունէր բլուզ, չոր տերևի գոյնի անդրափարտիկ, իսկ գլխին կրում էր գնդաձև ռոտորդական գլխարկ մախմուրից: Նա քայլել էր արագութեամբ և համարեա կէս ժամից յետոյ, գտնւում էր արդէն այն կէտում, ուր շաւիղը միանում էր մի լայն ծառուղիի հետ, որ շինուած էր գրօնողների և Սէնտ-Օգիլի ուխտաւորների համար: Այս վայրը նշանակուած էր տեղացոյց գրքերի մէջ, որովհետև հարիւր մետր երկարութեամբ մի բարձրութիւնից կարելի էր տեսնել ներքեւում՝ հարթութեան վրայ հոսող ջրվէ-

ժը, որ անցնում էր Ալշէյմ գիւղի միջից: Բացի այդ հեղեղատների բացուածքներից հովտի և գաղիվայրերի կազմած անկիւնից կարելի էր ցերեկով տեսնել Ալգասի մի կտորը—գիւղեր, արտեր, հովիտներ: Աւելի հեռու, որպէս արծաթի շաւիղ՝ երևում էր Հոհնոսը և Սև-Անտառների կաղոյտ բոլորածն լեռները: Չնայելով գիշերային մթութեանը, Ուլրիխը հասնելով ծառուղիին, բաց սովորութեան առաջ նայեց և տեսաւ միայն պողպատի գոյն մի խաւար հոսանքիւնի, որից վեր փայլփլում էին իսկական աստղեր, իսկ ներքեում կային հաւասար մեծութեամբ վառ կէտեր: Վերջինները Ալշէյմ գիւղի ճրագներն էին աղօտ ու մշուշապատ, որոնք պլպլում էին լուսապսակների մէջ: Ճանապարհորդը մտածում էր իր քեռորդու մասին, որին նա քիչ յետոյ սղմելու էր իր կրծքին:

—Արդեօք ի՞նչ պիտի տեսնեմ ես, հարցնում էր նա ինքն իրան, երեք տարուայ բացակութիւնից յետոյ. երեք տարի Գերմանիայում անցկացնելուց յետոյ. ի՞նչպէս է նա այժմ:

Մի վայրկեան միայն նա կանգ առաւ. ապա անցաւ ծառուղին և ցանկանալով կտրուկ ճանապարհով անցնել, ծածկուեց հաճարի ծառերի անտառակի մէջ, որ սուր գաղիվայրով իջնում էր դէպի եղնինների անտառը, ուր և դուրս էր գալիս ճանապարհը: Քանի մի դեղնած տերեւներ դեռ թրթռում էին վարի ռատերի ծայրին. բայց մեծամասնութիւնը թափուած էր արդէն անցեալ տարուայ տերեւների վրայ, որոնք ամբողջապէս ծածկել էին գետինը:

Այդ մեծած տերեւները՝ նուրբ ինչպէս մետաքս և խիստ գունատ՝ կազմել էին սեղմ ու դեղին մի սալայառակ: Ծառերի մամուռապատ և սիւնածե բները ձգւում էին վեր և նրանց կատարները մօտենում, միանում էին իրանց նուրբ ճիւղերով, որոնք ծրագրում էին կամարը թոյլ տալով որ լոյսն անցնի: Քանի մի մացառներ միայն եղծում էին գծերի ներդաշնակութիւնը: Մօտ հարիւր մետր բարձրութիւնից դէպի վայր, ինչպէս մի կանաչ պատուար իջնում էր կանաչ ծառերի մի շարք, որ կարծես կազմում էր այս աւերակ մայր տաճարի միակ շէն պատը:

Ուլրիխը շարունակում էր իր ճանապարհը դէպի եղնինները, երբ յանկարծ առաջից լսուեց մի խիստ աննշան աղմուկ, այնքան թեթեւ, որ ուրիշի համար կ'անցնէր աննկատելի: Դա մի քար էր, որ զահավէժ ներքեւ գլորուեց սարից աւելի և աւելի արագ, զարկուելով արգելքների և վեր-վեր ցատկելով: Նրա աղմուկը քանի զնաց նուագեց ու ապա վերջացաւ նուրբ ու յստակ չրխտոցով: Պարզ էր որ քարը հասաւ հեղեղատի խը-

հապատ յատակին և փշրուեց: Անտառը հազիւ թէ խաղաղուել էր, երբ մի այլ քար, անշուշտ շատ աւելի փոքր, ինչպէս այդ երեսում էր հասած ձայնից, սկսեց գլորուել խաւարի մէջ: Նոյն վայրկենին շունը ցցեց իր մագերը և մրմոսալով վագեց դէպի իր տէրը:

— Սուս, Ֆիդէլ, պէտք չէ նրանք ինձ տեսնեն, ասաց նրա տէրը:

Եւ միևնոյն ժամանակ Ուլրիխը, հասկանալով՝ որ մէկը բարձրանում է անտառի միջով, շտապեց մի ծառի յետևում թաքնուել չիբխալու համար: Եւ յիշաւի եղնիկների մոթ ստուերի արանքից նա կարողացաւ տեսնել մի ձիու գլուխը, առաջի ոտները և ապա ամբողջ մարմինը. կենդանին ճգնում էր բարձրանալ խիստ թեք զառիվերով. նրա տենդոտ հեքը լայն քթածակներից ծխի պէս բարձրանում էր խաւարի մէջ: Զգերը ձգուած, առաջին ոտները կեռացրած՝ փոքր գետնին մօտիկ: Նա առաջ էր նետուում ոստումներով, բայց համարեա առանց աղմուկի: Նրա սմրակները թաղուում էին մամուռի և հողի բուսական թանձր ծածկոյթի մէջ, շարժելով միմիայն տերևները, որոնք սողում, թափուում էին իրար վրայ թեթև խշրոցով, ինչպէս ջրի կաթիլները: Զիու վրայ դէպի կենդանու պարանոցը կուցած՝ նստած էր մի գինուորական, բաց կապոյտ պիստով և հորիզոնական ձևով բռնած էր պահում իր նիզակը, ինչպէս վերահաս թշնամու հանդէպ:

Զիաւորի և ձիու շնչառութիւնները իրար էին խառնուում ցուրտ գիշերուայ մէջ: Նրանք առաջանում էին հեիհե, իրար պլլուած և թալրտալով. կարծես պայքարի մէջ լինէին: Շուտով Ուլրիխը նկատեց գինուորականի թիկնոցի վրայ կարած դեղին երիզները, մոթ գոյնի անդրվարտիկից վար սև երկարավիզ կօշիկները և ուղիղ սուրը կախուած թեք կերպով:

Նա հասկացաւ, որ եկողը Ստրասբուրգում բանակած Հոենոսեան հուսարների գնդից մի ձիաւոր է: Երբ նա աւելի մօտեցաւ, Ուլրիխը նշմարեց դէգի ծայրի սև և սպիտակ գոյնի դրօշի վրայ դեղին արծիւ: Զինուորականը ենթադրեց էր, Նրա մորթէ տափակ գլխարկի տակ Ուլրիխը տեսաւ հերթաթափ, կարմրատակած, քրտնած մի դէմք, լաժ, անհանգիստ, կատաղի և շարունակ դէպի աջ դարձած աչքեր, որոնց վրայ ծածանում էր սաղաւարտի ցցունքը: Ուլրիխը ճանաչեց. նրա սուսը Օրբերնէի ոտտիկան, Համմի որդի՝ Գոտֆրիտ Համմի էր, Հոենոսեան հուսարների աւագ Վախմիստրը:

Մարդն անցաւ քուռելով այն ծառին, որի յետևում թաք-

նուած էր Ուլլիխը: Զիաւորի ստուերը ընկաւ Ալզասցու և շրջապատի մամուռի վրայ: Զիւռ սարքի և քրանքի հոտ տարածուեց նրանից յետոյ: Ծառի մօտից անցնելիս, նա էլի մի անգամ գլուխը դէպի աջ դարձրեց: Ուլլիխն էլ նայեց դէպի աջն կողմը, ուր եղենիներն շարքն ամենից աւելի երկար էր իջնում: Մօտ երեսուն մետր հեռաւորութեան վրայ նա տեսաւ միենայն ոյժով բարձրացող մի ուրիշ ձիաւոր, յետոյ մի երրորդը: Վերջինները նշմարւում էին արդէն սրպէս ստուերներ ծառերի շարքի մէջ: Ապա աւելի հեռու, շնորհիւ ստուերների խաղին, նա նշմարեց ուրիշ զինուորներ և ուրիշ ձիեր, որոնք շանգուելով բարձրանում էին լեռն ի վեր: Եւ յանկարծ անտառի խորքում մի փայլակ լոյս տուեց, ինչպէս մի թռչող լուսատարիկ: Սա մի հրամանի ակղանշանն էր: Ամենքը մի քայլ արին դէպի աջ և մի գծի վրայ շարուելով, լուռ, անմոտնչ շարունակեցին իրանց խորհրդաւոր վարժութիւնները:

Անտառի խորքում էլի մի վայրկեան ստուերները երեւացին. թափուող տերեւների խշշոցը նուազեց, յետոյ իսպառ դադարեց, ապա գիշերը վերստին ամայացաւ:

—Ահաւի հակառակսրդ, որ վարժւում է օր ու գիշեր, մըմնաց Ուլլիխը:

Անշուշտ, ներքեում, շաւիղի վրայ մի սպայ կար և նրան էին նայում ամենքը: Նա երևի բարձրացրեց իր սուրը լուսնի շողերի յաղ, մօտիկ զինուորները այն տեսան և զրա համար ամենքը դարձան: Եւ որքան քիչ էին ակնուկ հանում: Ահ, եթէ պատերազմ լինէր, ես գոնէ նրանցից երկսին կը սպանէի:

Ապա դառնալով իր շանը, որ հանդարտ նայում էր տիրոջը, գունչը վեր ցցած և պոչը շարժելով, Ուլլիխն ասաց.

—Այո, այո, մեկնեցին, գիտեմ դու էլ չես սիրում նրանց, ինչպէս ես:

Նա մի փոքր էլ սպասեց, մինչև որ համոզուէր, թէ հուսարներն էլ դէպի իր կողմը չեն դառնայ: Նա չէր սիրում հանդիպել գերմանացի զինուորներին: Այդ հանդիպումը վիրաւորում էր պարտութեան ստուերով պատած նրա հպարտութիւնը, վիրաւորում էր նրա հաւատարմութիւնը դէպի Ֆրանսիան, նրա սէրը, որ միշտ վախճում էր մի նոր պատերազմից և պարմացած էր, թէ ի՞նչու է անվերջ ուշանում այդ պատերազմը: Պատահում էր երբեմն, որ նա ահազին շրջաններ էր կատարում խուսափելու համար ճանապարհով անցնող որևէ գնդից: Ինչո՞ւ համար այս հուսարները եկան խռովելու իր էջքը դէպի Ալշէյմ: Դարձեալ զօրախաղեր. նրանք մի վայրկեան չեն

մոռանում սահմանի արևմուտքը, գիշակեր գազանը՝ ձկուն, ճարպիկ, վերստին թափառում է Վոժի լեռնակատարներին վրայ և նայում է հեռուն իմանալու համար, թե արդեօք հարկաւոր չէ՞ վար իջնել...

Ուլրիխը՝ գլուխը քաշ ձգած, շնչում էր եղևինների բուրմունքը, հոգին լի էր տիտուր յիշողութիւններով, որոնք վերակենդանանում էին մի հատիկ բառով, նոյնիսկ աւելի չնչին աւիթով: Այդ յիշողութիւնները խառնել էին իրանց հետ և պահում էին նրա ամբողջ երիտասարդութիւնը, որ ամեն անգամ աշնայէս արագ բորձրանում էր անցեալից... Նա աշխատում էր աղմուկ չհանել. պահում էր շունը իր յետևում և նրան չէր փայփայում: Կենդանին գունչը քսում էր տիրոջ քաշ ընկած ձեռքին՝ կարծես ասելու համար՝ «ինչո՞ւ ենք սպասում, չէ՞ որ նրանք մեկնեցին արդէն»: Եղևնու պուրակի վերջում Ուլրիխը գտաւ մի աւելի լայն ճանապարհ և մի քսուորդ ժամում հասաւ անտառի մարզին:

Հարթութիւնը եզերող կաղնիների և ընկուզենիների վրայ հովաթից փչում էր աւելի սառն և աւելի ուժգին քամի: Նա կանգ առաւ մի վայրկեան, ականջ դրեց դէպի աջ և ուսերը բարձրացնելով գովամակութեամբ մրմռաց՝

— Ահա թե որտեղից կը գան նրանք վերստին և նրանց ոտնաձայնները ոչ որ չի լսի: Էհ, մոռանանք մի առ ժամանակ և գնանք բարի գալուստ ասելու ժան Օրերլէին:

Ուլրիխը իշաւ վերջին բարձրաւանդակը: Էլի մի քանի քայլ՝ և անցաւ մացառներից ու տունկերից, որոնք արգելում էին տեսնել հեռու հարթութիւնը: Երկինքը ամբողջապէս բացուեց. իսկ հեռուն, դէպ աջ ու ձախ, Ալգասի հողը՝ մառախուղի թափանցիկ քողի տակ, մեղմիւ կապտին էր տալիս: Յեղիւրի և ցօղազարդ խոտերի բուրմունքը բարձրանում էր գետնից: Գիշերը իր գեղեցիկ հարկն էր տալիս ընտելեանը: Քամին՝ Հեկնոսի այս թափառական ուղեկիցը, ընտանեբար սուրում էր զաշտերով և քշում, տանում էր այս բուրմունքը, հեռու, հեռու: Վաղորդեան կիսախաւարը արգելում էր տեսնել նիրհող Ալգասի որևէ մանրամասնութիւնը: Հազիւ մի քանի հարիւր մետր հեռաւորութեան վրայ նկատուում էին խիտ առ խիտ իրար սղմուած կուտերներ և նրանցից բարձր՝ մոխրագոյն ու սրածայր գանգակատունը: Ալշէյմ դիւզն էր այն. Ուլրիխը շտապեց: Նա շուտով գտաւ հեղեղատը, որով անցնում էր մի սրնթաց վըտակ: Լեռներում նա բոլոր ժամանակ քայլել էր այդ վտակի եզրով, այժմ էլ հետևեց նրա ընթացքին: Քիչ յետոյ նա տեսաւ Ալշէյմի սուղին տունը, որ պարտիզի մերկացած ծառերի մի-

Չից ցցուում էր իր բարձր զանգուածով: Սա Օրերլէների տունն էր. ճանապարհի աջ կողմը մի սպիտակ պատ և մի վտակ բաժանում էին տունը ճանապարհից. այդ վտակը երկու հարիւրից աւելի մետր տարածութիւն կտրում, անցնում էր Օրերլէների կալուածը: Տանտէրը ոչ միայն իր մեքենաների համար անհրաժեշտ ջուրը վերցնում էր այնտեղից, այլ և լայնացրել ու այնպիսի ուղղութիւն էր տուել վտակին, որ ջուրը մինչև կալուածի վերջը հոսում էր ծառերի միջից: Ուլրիխը մտաւ երկաթէ ցանցերով պատած լայն դռնից, որ բացւում էր ճանապարհի վրայ, անցաւ կամուրջը, յետոյ դռնապանի փոքրիկ խուզը, դէպի աջ թողնելով գերաններով լի սղոցարանը, ուր երևում էին խաչածն իրար վրայ դրուած տախտակներ, կտրած փայտեր, ձողեր, նաև չարդախներ: Ապա նա դարձաւ դէպի աջ, բռնեց այն ուղին, որ գալարւում էր հինաւուրց ծառերի և ժարգաղեանի մէջ: Շուտով նա հասաւ Օրերլէների երկյարկահի տան առաջ: Սաւերնի կարմիր քարէ այս շինութիւնը կառուցուած էր անցեալ դարի կէսին: Երեկոյեան ժամի ութ և կէսն էր, երբ Ուլրիխը ծածկուած աստիճաններով բարձրացաւ առաջին յարկը և ծեծեց մի սենեակի դուռ:

Մի ջահիլ ձայն ներսից կանչեց.

—Մտէք:

Ուլրիխը ժամանակ չունեցաւ իր գլխարկը հանելու: Իր քեռորդին՝ Ժան Օրերլէն, փաթաթուեց նրա պարանոցին և համբուրեց բացազանչելով.

—Բարե, մօրեղբայր Ուլրիխ, բարե, ի՜նչքան ուրախ եմ. ի՜նչ լաւ ես մտածել:

—Դէ, թող ինձ. բարե իմ Ժան. նմր ես եկել:

—Այսօր ժամը երեքին ճաշից յետոյ, ես արդէն պատրաստուում էի վաղը ձեզ տեսութիւն գալ, գիտէ՞ք:

—Ես հաւատացած էի, բայց համբերել չկարողացայ, պէտք եղաւ վար իջնել, քեզ տեսնել: Երեք տարի է, ինչ չեմ տեսել. Ժան, թող որ մէկ վրադ նայեմ:

—Ինչքան կամենաք, պատասխանեց երիտասարդը ծիծաղելով. ասացէք, մօրեղբայր, փոխուե՞լ եմ ես:

Վերջապէս Ուլրիխը նստեց մի կաշուեպատ բազկաթոռի մէջ. նրա հանդէպ պատի մօտ դրուած մի գիւննի վրայ տեղ բռնեց Ժանը: Նրանց բաժանում էր մի գրասեղան, որի վրայ վաւում էր միտադէ քանդակազարդ մի փոքրիկ հաւթի լամպ:

Լուսամուտների բարձրացրած վարագոյները թոյլ էին տալիս տեսնել բոլորովին մօտիկ խաղաղ պարտէզը, ուր անշարժ ծառերը ողողուած էին լուսնի շողերով: Ուլրիխը դիտում էր Ժա-

նին հպարտ ու սիրալիր հետաքրքրութեամբ: Պրոջուրդին մեծացել էր և նոյնիսկ մի փոքր աւելի բարձր էր իրանից: Երիտասարդ ալգասցու կորովի դէմքը այժմ աւելի հաստատուն գծեր ունէր, և աւելի կամք էր արտայայտում: Մոխրագոյն բեխերը աւելի խիտ էին, շարժումները ազատ, ինչպէս աշխարհ տեսած մարդու: Նրան կարելի էր հեշտութեամբ համարել հարաւեցի, շնորհիւ իր ամիլած այտերի, խաւաղան գունատութեան, իր երկար, ստուերոտ թերթերունքների, իր մուգ և կողքից լաժանուած մազերի, իր դունատ շրթունքների, որոնց տակից երևում էին սիրուն ատամները, ամեն անգամ, երբ նա ծիծաղում կամ խօսում էր: Սակայն մի քանի ուրիշ նշաններ ցոյց էին տալիս նրա ալգասցի լինելը: Այսպէս դէմքը լայն էր այտերի շրջանում, աչքերը ունէին Վոժի անտառների կանաչութիւնը, իսկ քառակուսի ծնօտը մասնում էր ձորերում ապրող զիւղացուն: Նա դեռ մի բան էր պահել այդ զիւղացիներից, որովհետեւ իր մեծ պապը մաճ էր բռնել: Նրանց պէս յաջողակ ձիաւորի կազմուածք ունէր: Ժանի այդ թարմ հայեացքից Ուլրիխը հասկացաւ, որ բսան և չորս տարեկան այս երիտասարդը, բարոյապէս շատ չէր տարբերւում իր նախկին տեսածից:

— Այն, ասոց նա երկար լուրթիւնից յետոյ, դու նոյնն ես, միայն տղամարդ ես դարձել: Ես վախճնում էի աւելի մեծ փոփոխութիւններից:

— Ինչո՞ւ համար:

— Ուրովհետեւ, իմ փոքրիկ, քո հասակում ճանապարհորդութիւններ կան, որոնք փորձութիւններ են. բայց նախ ասա ինձ իսկապէս ճիշտից ես գալիս:

— Բերլինից, ուր ես անցայ իմ Referendar Examen-ը:

Ուլրիխը հազիւ զսպեց իր չոր ծիծաղը, որի հնչիւնները կորան նրա ալեխառն միւրուքի մէջ:

— Անուանենք այդ իրաւաբանութեան գիտական աստիճան, եթէ քեզ հաճելի է (la licence en droit):

— Ի հարկէ հաճելի է, մօրեղբայր:

— Յետոյ, սո՛ւր ինձ խնդրե՛մ աւելի լրիւ, և որ դիտաւորն է, աւելի նոր տեղեկութիւն: Զե՞ որ մի տարի է արդէն ինչ, դու կրում ես ծոցումդ քո դիպլոմը: Ի՞նչ էիր անում այդ բոլոր ժամանակ:

— Պատմութիւնս կարճ է: Ինչպէս գիտէք, նախանցեալ տարի ես քննութիւն տուի Բերլինում, վերջացնելով իմ իրաւաբանական ուսմունքը: Անցեալ տարի մինչև օգոստոս մի իրաւաբանի ձեռքի տակ աշխատում էի: Այնուհետև հօգս թոյլ-

սուութեամբ մի ճանապարհորդութիւն կատարեցի Բոհեմիայում, Ունգարիայում, Խրուադիայում և Կովկասում, որ տեղեկաց միս: Ապա անցայ Բերլինով՝ իմ ուսանողական իրերը վերցնելու, մի քանի այցելութիւններ անելու համար և այժմ անապատեղ եմ...

— Ի դէպ, հայրդ լաւ յիշեցիր... քեզ տեսնելու շփոթութեան մէջ ես բոլորովին ժողացայ նրան... Ի՞նչպէս է:

— Նա այստեղ չէ:

— Ի՞նչպէս, քո վերադարձի երեկոյին նա ստիպուած է եղել բացակայել:

— Նա զնացել է մասնակցելու խորհրդական Ֆոն-Բոխերի մի հանգիստւոր ճաշին... քրոջս էլ հետն է տարել: Կաւ ընդունելութիւն է, այնպէս չէ:

Ժանի խօսքերի մէջ թեթեւ դաժնութիւն կար: Նրանք լըռեցին. ծիծաղը կորաւ: Կարճատե խօսակցութիւնից յետոյ նըրանք զգում էին բոլորովին մօտիկ, անխուսափելի, վրդովեցուցիչ, ճակատագրական հարցը. այն՝ որից անկարելի է ազատուել, որ միացնում և բաժանում է, որ թագնուած է ընկերական բոլոր յարաբերութիւնների, փոխադարձ պատիւների, հաւաքանքների, ինչպէս և հասարակական հաստատութիւնների տակը: Այն հարցը, որ երեսուն տարուց ի վեր Եւրոպային պահում է գինուած կացութեան մէջ:

— Ես մենակ ճաշեցի, շարունակեց ժանը, այսինքն պապիս հետ:

— Պապիկը ներկայութիւնը՝ հազիւ թէ ներկայութիւն համարուի. խեղճ մարդը ի հարկէ միշտ այնպէս թոյլ է և հիւանդ:

— Հաւատացնում եմ ձեզ, որ նա սգով խիստ առողջ է:

Մի երկրորդ լռութիւն վրայ հասաւ, որից յետոյ Ուլրիխը անհամարձակ ձեով հարցրեց.

— Իսկ իմ քոյրը... քո մայրը... նա էլ նրանց հետ է:

Երիտասարդը գլխով դրական նշան արեց:

Այս պատասխանի վրայ Ուլրիխի կսկիծն այնքան մեծ եղաւ, որ նա աչքերը դարձրեց չմատնելու համար իր ներքին աշխարհը: Ապա վեր նայելով՝ նրա հայեացքը կանգ առաւ Սպինդլեր նկարչի մի գործի վրայ, որ կախուած էր պատից և ներկայացնում էր ճօճանակով խաղացող երեք արզասցի աղջիկներ: Ապա նա շուտով դարձաւ քնոտրոտն, նայեց նրան շեշտակի և յուզմունքից ճաթած ձայնով ասաց.

— Իսկ դ՞ու... դ՞ու էլ կարող էիր ճաշել խորհրդական Ֆոն-Բոխերի հետ... ի նկատի ունենալով ձեր բարեկամական յա-

բարերութիւնները այս գերմանացիների հետ... Արդեօք դու ցանկութիւն չունէիր ծնողներիդ հետ գնալ այնտեղ:

—Ո՛չ:

Այս մի հատիկ բառն արտասանուեց վճռապէս և պարզ կերպով: Բայց և այնպէս Ուլրիխը չգտաւ իր փնդում տեղեկութիւնը, այդ պատասխանի մէջ: Այո, ժան Օրերլէն հասուն մարդ էր դարձել: Նա չէր կամենում պախարակել իւրայիններին, իր կարծիքը յայտնել, մեղադրելով միւսներին: Մօրեղբայրը վերսկսեց հեգնութեան նոյն շեշտով:

—Սակայն, սիրելի ժան, այս ամբողջ ձմեռ իմ տկանջները խլացրին Բերլինում ունեցած քո լաջողութիւնների պատմութիւններով: Ինձ չէին խնայում: Ես գիտեմ արդէն, որ դու գոռացրել ես մեր շիկահեր թշնամիների օրիորդներին. ես գիտեմ նոյնպէս անուններ...:

—Օ՛, աղաչում եմ, մօրեղբայր, ասաց ժանը լրջութեամբ. հանաքի չտանք այդպիսի ծանրակշիռ հարցերը այն մարդկանց պէս, որոնք սիրտ չեն անում իրերին ուղղակի նայել և իրանց կարծիքն ասել: Ծշմաբխ է, որ ես ձերինից տարբեր դատարարակութիւն եմ ստացել, գերմանական դատարարակութիւն, բայց այդ արգելք չի կարող լինել, որ ես քնքշութեամբ սիրեմ իմ երկիրը... Ընդհակառակն:

Ուլրիխը սեղանի վրայից մեկնեց ձեռքը և սեղմեց ժանի ձեռքը:

—Աւելի լաւ, պատասխանեց նա:

—Միթէ դուք կասկածում էիք:

—Ես չէի կասկածում, զաւակս, ես միայն անգիտանում էի: Ես տեսնում եմ այնքան բաներ, որոնք ինձ ցաւ են պատճառում և այնքան համոզմունքներ, որոնք խորտակում են:

—Ես որոշել եմ ապրել Ալշէյմում, մօրեղբայր, ապացոյց՝ որ ես սիրում եմ մեր Ալզասը:

—Ի՞նչպէս, բացաքանչեց Ուլրիխը սաստիկ զարմացած, դու չե՞ս ուզում մտնել գերմանական ծառայութեան մէջ, ինչպէս հօրդ ցանկութիւնն է: Բայց դա ծանրակշիռ խնդիր է զաւակս, դու ուզում ես քեզ աղատել հօրդ փառասիրութիւնից: Դու նրա ապագայ ծրագրների համար փառաւոր նիւթ կարող էիր լինել... Նա այդ գիտէ:

—Նա կասկածում է այդ մասին, թէ եւ իմ գալուց վեր մենք դեռ ժամանակ չունեցանք քացատրուելու:

—Բայց ի՞նչ է քո նպատակը:

Թարմ ժպիտը կրկին փայլեց ժանի շրթունքների վրայ:

—Իմ նպատակն է փայտի գործով պարապել, ինչպէս հայրըս, ինչպէս իմ պապ Թիւրպը: Երբ ես իմ քննութիւններից յետոյ ճանապարհորդում էի Գերմանիայում, Աւստրիայում՝ լիովին ժամանակ ունեցայ ուսումնասիրել անտառները, սղոցարանները, գործարանները, ինչպէս մերն են... Դուք լալիս էք:

—Լաց... չէ:

Ուլրիխը չէր լալիս, բայց նա ստիպուած էր մատի ծայրով չորացնել իր թաց արտեանունքները:

—Յամենայն դէպս դա կը լինէր ուրախութեան արցունք, իմ փոքրիկ, օ, մեծ և ճշմարիտ ուրախութեան: Տեսնել քեզ հաւատարիմ այն բոլորին, ինչ որ ես ամենից աւելի եմ սիրել աշխարհում... տեսնել քեզ մեզ մօտ... Իմանալ, որ դու հրաժարուած ես պաշտօններ և պատիւներ ընդունել նրանցից, որոնք բռնացան քո հայրենիքի վրայ... այո, սա մի երազ էր, որ ես այլ եւ չէի համարձակուում ունենալ... Սակայն, անկեղծօրէն ասեմ, ես չեմ հասկանում... Ես զարմացած եմ... Ինչո՞ւ դու նման չես քո հօրը, նման չես Լիւսիէնին, որոնք այնպէս բացարձակ կերպով... յարել են գերմանացիներին: Դու քո իրաւաբանական ուսմունքն առել ես Միւնխէնում, Բոննում, Հայդելբերգում, Բերլինում. դու չորս տարի ապրել ես Գերմանիայում, բացի քո կոլլեժում անցկացրած ժամանակը: Այդ ի՞նչպէս է որ դու չես դարձել գերմանացի:

—Ես նոյնիսկ քեզանից աւելի նուազ գերմանացի եմ, մօրեղբայր:

—Այդ ի՞նչպէս:

—Քեզանից աւելի նուազ, որովհետեւ ես նրանց աւելի լաւ եմ ճանաչում: Ես նրանց կարողացայ ճանաչել համեմատելով մեզ հետ:

—Յետո՞յ:

—Նրանք մեզնից վատ են:

—Տէր Աստուած. ի՞նչ հաճելի է լսել. մինչև այժմ միշտ հակառակն էին ասում: Մանաւանդ Յրանսիայում՝ 1870 թուի մեր յաղթողների գովասանքները վերջ չեն առնում:

Երիտասարդը՝ Ուլրիխի յուզմունքով ոգևորուած՝ մէջքը հեռացրեց դիւանի թիկունքից և դէպի առաջ կուացաւ. լամպի լոյսը ողողեց նրա դէմքը և կանաչաւուն աչքերի փայլը աւելի վառ դարձրեց:

Նա շարունակեց:

—Չսխալուէք մօրեղբայր. ես չեմ ատում գերմանացիներին. սրանով ես տարբերում եմ ձեզնից: Ես նոյնիսկ հիանում եմ նրանց վրայ, որովհետեւ սքանչելի կողմեր ունին: Նրանց

մէջ եւ ընկերներ ունիմ, որոնց խորապէս յարգում եմ: Կարո էի և ուրիշներն ունենալ: Ես պատկանում եմ այն սերունդին, որ չի տեսել ձեր տեսածները և ապրել է տարբեր կերպով: Ես պարտուած չեմ եղել...

—Երանի՜ քեզ:

Սակայն, որքան մօտիկից ճանաչեցի նրանց, նոյնքան աւելի խորը կերպով զգացի, որ ես ուրիշ եմ, ուրիշ ցեղից: Զգացի, որ նրանց համար անմատչելի իդէալների մի ամբողջ շարք ունենք մենք, որ ես համարում եմ գերազանց և որը առանց իմանալու, թէ ի՞նչու, անուանում եմ Ֆրանսիա:

—Բրավօ, իմ ժամ, բրավօ:

—Ծեր դրագունը նոյնպէս կռացել էր, զունատ էր, և նրանք բաժանուած էին իրարից միմիայն սեղանի լայնքով:

—Այն ինչ եւ անուանում եմ Ֆրանսիա, մօրեղբայր, ինչ որ ես պահում եմ սրտումս, ինչպէս մի երազ, դա այն երկիրն է, ուր աւելի մեծ գիւրութիւն կայ մտածելու...

—Այո:

—Պօսելու:

—Ճիշտ այդպէս:

—Ծիծաղելու:

—Ի՞նչ լաւ եւ ըմբռնել:

—Ուր հոգիները անհուն երանգներ ունին. այն երկիրը՝ որ սիրած կնոջ հմայքն ունի, Ալգասի նման մի երկիր, միայն աւելի գեղեցիկ:

Երկսով էլ միաժամանակ ոտքի ելան: Ուլրիխը գէպ ինքը քաշեց իր քրոջ որդուն՝ սղմեց կրծքին այս տաք գլուխ երիտասարդին:

—Ֆրանսիացի, բացազանչեց նա, ֆրանսիացի եւ մինչև ոսկորներիդ ծուծը, մինչև արեանդ գնդակները, իմ խեղճ, իմ անճշ փոքրիկ: Երիտասարդը շարունակեց՝ գլուխը միշտ յենած ծերունու ուսին:

—Ահա թէ ի՞նչու ես չեմ կարող ապրել այնտեղ, Հոկնոսի միւս ափին. ահա թէ ինչ՞ու եւ պէտք է ապրեմ այստեղ:

—Այդ դէպքում ես իրաւունք ունիմ ասելու՝ «Իմ խեղճ փոքրիկ», պատասխանեց Ուլրիխը... աւաղ, ամեն ինչ փոխուած է... մինչև իսկ այստեղ, քո տանը... Դու կը տառապես, ժամ, քո քնաւորութեան տէր մարդը չի կարող չտառապել... Այժմ ես բոլորը հասկանում եմ, բոլորը...

Նրանք նստեցին դիւանի վրայ կողք կողքի և երջանիկ: Ուլրիխը յարդարում էր իր միբուքը, որ նրա մշտական խնամքի առարկան էր: Յուզմունքից ուշքի եկած, նա ասաց.

— Գիտե՞ս, որ այս երեկոյ խօսելով Ֆրանսիայի մասին, այն էլ այս ձևով՝ մենք յանցանք գործեցինք, մի յանցանք, սովական, որ ես պաշտում եմ: Արդելուած է խօսել Ֆրանսիայի մասին... Եթէ մենք դրսում լինէինք և Համմը մեզ լսէր, մեր բանը բուրդ էր, անպատճառ մի արձանագրութիւն:

— Ես նրան հանդիպեցի այսօր ճաշից յետոյ:

— Իսկ որդին քիչ առաջ անտառի խորքում իմ առաջ ցըցուեց: Նա ենթասպայ է հոհնոսեան հուսարական գնդի... Քո ապագայ գնդի... Կառքի ձայն է լսուում, չէ՞:

— Ո՛չ:

— Մէկ ականջ գիր:

Երկսով էլ սկսեցին ականջ գնել: Միևնոյն ժամանակ լուսամուտից նայում էին գէպի դուրս: Լրիւ լուսինը իր շողերով ողողել էր պարտէզը, ուր երևում էին հաստատուն ծառերը, քընարած և շինուած կանաչ մարդը, երկու ճերմակ ուղիներով, իսկ աւելի հեռուն՝ սղոցարանի կղմինդրածածկ կառուները: Ո՛չ մի աղմուկ, բացի գործանոցի մօտիկ թմրի փոքրիկ ջրվէժի միակերպ ձայնից, որ կարծես մերթ հեռանում էր և մերթ մօտենում, նայելով փչող քամու զօրութեանը և ուղղութեանը: Վերջին քամին փչում էր հիւսիս-արևելքից կամ «մայր եկեղեցու պլատ-Ֆորմից»՝ ինչպէս սիրում էր ասել Ուլրիխը, ակնարկելով Ստրազբուրգին:

— Ո՛չ, տեսե՞՞ւմ էք, որ սա ջրվէժի ձայնն է, ասաց ժանը: Հայրս պատուիրել է կառապանին սպասել Մոլզէյմում, ժամը 11՝ 2-ի գնացքին: Մենք գեռ ժամանակ ունենք զրուցելու:

Նրանք ժամանակ ունէին և լաւ օգտուեցին այդ ժամանակից: Սկսեցին խօսել կամացուկ, առանց շտապելու և յոյզի, ինչպէս այն մարդիկ, որոնք էական սկզբունքների վրայ համաձայն լինելով՝ կարողանում են համարձակ կերպով շօշափել ամեն տեսակ և հուազ կարևորութիւն ունեցող խնդիրներ: Նրանք խօսեցին միամեայ կամաւոր զինուորական ծառայութիւնից, որ ժանը իրաւունք էր ոտացել յետաձգել մինչև իր քսան և չորս տարին: Խօսեցին այն նոր կեանքի մասին, որ ժանը պիտի սկսէր առաջիկայ հոկտեմբերին, այն բնակարանի մասին որ նա մտածում էր վարձել Ստրազբուրգում. չժողացան նաև յիշել, թէ որքան հեշտ կը լինի այնտեղից համարեա ամեն կիրակի գալ Ալշէյմ: Մի քանի անգամ կրկնուած այդ սիրելի անունը զարթեցրեց նրանց հոգում շատ վերջուէր իրանց երկրից. յիշեցին Մէնտ-Օդիլը, Հէյզենբուխի անտառի տունը, յիշեցին Օբերնէն, Սադլէնը, ուր Ուլրիխը անտառներ ունէր, Գերվիլերը՝ ուր նա աղգականներ ունէր: Ամբողջ Ալգասն էր

վերակենդանանում նրանց յիշողութեան մէջ: Նրանք լաւ էին հասկանում իրար: Ուտ ոտի վրայ և դիւանի երկու անկիւնները բռնած՝ նրանք ծխում էին, ազատութիւն տալով իրանց խօսքերին, ձայնին և ծիծաղին: Զրոյցն այնքան երկար տևեց, որ դրան վրայ կախուած Սև-Անտառի փայտէ ժամացոյցը զարկեց կէս գիշեր:

—Արդեօք չզարթեցրի՞նք պապիդ, ասաց Ուլրիխը վեր կենալով և ցոյց տալով այն պատը, որ բաժանում էր ժանի սենեակը հիւանդ ծերունու սենեակից:

—Ո՛չ, պատասխանեց ժանը, նա այժմ համարեա էլ չի քնում: Ես հաւատացած եմ, որ նա շատ գոհ է մնացել լսելով իմ ծիծաղը: Երբ ժամը 5-ին մերոնք մեկնեցին, ես բաւական երկար ժամանակ անցկացրի նրա հետ և նրան լաւ դիտեցի: Նա լսում է և հասկանում է ամեն ինչ: Նա ձեր ձայնը ճանաչած կը լինի, ես հաւատացած եմ, և գուցէ, նոյնիսկ քանի մի բառեր ըմբռնած...

—Իս նրան հաճոյք պատճառած կը լինի, իմ փոքրիկ: Նա պատկանում է հնագոյն Ալդասին, այն որ այժմ քեզ երևում է մտախռովի միջից, որին ես կապուած եմ, թէև աւելի ջահիլ եմ քան Օրերլէն: Այն Ալդասը ամբողջովին ֆրանսիական էր և այն ժամանակի մարդկանցից և ոչ մէկը փոխուած չէ: Տեսնում ես քո պապը, տեսնում ես ծերունի Բաստիանը: Մենք այն սերունդն ենք, որ տառապեց: Մենք մարմնացած վիշտն ենք. իսկ քո հայրը՝ հնազանդութիւնը:

—Իսկ ես:

Ուլրիխը շեշտակի նայեց երիտասարդին իր խորաթափանց աչքերով և ասաց.

—Դո՛ւ, դո՛ւ աւանդութիւնն ես:

Եւ նրանք կը կամենային ծիծաղել երկուով էլ, բայց չկարողացան: Կարծես թէ այս բառի ճշմարտութիւնն այն աստիճան կատարեալ էր, որին մարդկային սովորական դատողութիւնները չեն հասնում: Կարծես նրանք երկսով էլ զգացին, որ ճակատագիրն այնտեղ էր, այս սենեակում, անտեսանելի և որ նրանց սրտի խորքում կրկնում էր միաժամանակ՝ «Այո, ճշմարիտ է, սա աւանդութիւնն է»:

Միմիայն կեսնքի այս խորհրդի մերձաւորութեամբ կառելի էր բացատրել այն յուզմունքը, որ խեղդում էր նրանց: Եւ նա ցրիւ եկաւ: Ուլրիխը ձեռքը մեկնեց իր քեռորդուն աւելի հանդիսաւորութեամբ, քան այդ բառը ասելուց առաջ, որ նրա շրթունքից յանկարծակի դուրս էր թռել:

Նա չէր փոշմանում իր ասածի համար և այդ բանն այժմ նրանից չէր հեռանում:

— Ցտեսութիւն, իմ սիրելի ժան, ես գերադասում եմ չըպատահել իմ փեսային, որովհետեւ չգիտեմ, թէ ինչպէս կը հանդիպեմ նրան: Բոլորն ինչ գու ասացիր, ինչ կը ճնշի նրա ներկայութեամբ:

Իմ կողմից գու նրան բարի գիշեր մաղթիր: Ես շտապում եմ դէպի իմ անտառները լուսնկայ գիշերով: Ափսոս, այսպիսի ժամանակ մարդ հրացան ունենար և մեր եղենիների վրայ մի զոյգ փայտմորից տեսնէր:

Նրանք զգուշութեամբ մի քանի քայլ փոխեցին, նախասենեակի գորգի վրայ, աստիճաններին համեւու համար:

— Մօրեղբայր, ասաց ժանը կամացուկ, վատ չէր լինի, եթէ մտնէինք պապիս մօտ: Ես հաւատացած եմ, որ նա չի քնել և շատ գոհ կը լինի:

Ուլրիխը, որ քայլում էր առաջից՝ կանգ առաւ և յետ դարձաւ: Ժանը բացեց այն դուռը, որի առաջ կանգնած էին. նախ ինքը մտաւ և ասաց զսպուած ձայնով:

— Պապիկ, ես ձեզ մօտ հիւր եմ բերել. մօրեղբայրս Ուլրիխն է, որ ցանկացաւ ձեզ տեսնել:

Սենեակը մեծ էր, կիսախաւար և վարադրյունները փակ: Ձախ անկիւնը զբաղում էր անկողինը, իսկ նրա և լուսամտի մէջ դրած էր գիշերային թափանցիկ յախճապակայ փոքրիկ լամպ, որ աղօտ կերպով լուսաւորում էր սենեակը. գիշերային սեղանի վրայ լամպի շողերի լուսապսակի մէջ գրուած էր պղնձէ մի փոքրիկ խաչնութիւն և մի ոսկէ ժամացոյց. սենեակի միակ փայլուն իրերը: Անկողնի մէջ մի ծերունի աւելի շուտ նստած էր, քան պառկած: Նա հագել էր բրդէ մոխրագոյն թելից երկուտակ բաճկոն, մէջքը և գլուխը յենած բարձերին և ձեռքերը վերմակի տակ, որ պահում էր դեռ ծալքերը: Պատառի մի փնջածայր ժապաւէն, կախում էր մինչև անկողնի կէսը և ծառայում էր որպէս դանդակի թել: Ծերունին անգամաւոյժ էր. հեռուից դժուար էր իմանալ, քնած է, թէ արթուն, կեանքը կամաց-կամաց քաշուել էր նրա ներսի աշխարհը. նա չէր խօսում, դժուարութեամբ էր քայլում կամ շարժում գործում: Հաստ և դունատ այտերից վար՝ շրթունքները շարժում էին միայն այն ժամանակ, երբ նա ուտում էր և կամ երբ ասում էր իր սովորական խօսքը, ինչպէս երեք ճիշդ. «Բաղցած եմ, ծարաւ եմ, հեռացի՛ր»: Ծերերին յատուկ ծուլութիւնը քաշ էր ձգել նրա ծնօտը, որ հրամայել էր այնքան մարդկանց: Ուլրիխը և ժանը

առաջացան մինչև սենեակի կէտը, առանց որ ծերունին որևէ նշանով ցոյց տար թէ, հասկանա՞ւմ է նրանց ներկայութիւնը: Մարդկային այս խզճալի աւերակը սակայն այն մարդն էր, որ հիմնել էր Ալշէյմի գործարանը, որ կարողացել էր գիւղական փոքրիկ հողատիրոջ կացութիւնից վեր բարձրանալ, ընտրուել բողոքարկու պատգամաւոր և իր ձայնը հնչեցնել Բայստագում Ալզասի ոտնահարուած իրաւունքները յետ ուզելու և իշխան Բիսմարկից արդարադատութիւն պահանջելու համար: Ուրեք՝ դանդի մէջ բանտարկուած՝ արթուն էր, սակայն, ինչպէս այդ բոցը, որ լուսաւորում էր սենեակը, բայց այլ ևս չէր արտայայտում: Երազների անվերջ շարքի մէջ ճրքան մարդիկ և իրեր էին անցնում այդ մարդու աչքի առաջից, որ տեսել էր ողջ Ալզասը, որ նրան չափչփել էր ամեն ուղղութեամբ. խմել էր նրա սպիտակ գինին՝ հարստի և աղքատի սեղանից, իրրե ճանապարհորդ, վաճառական, անտառատէր, հայրենասէր... Եւ ահա նա, այս լերկ ու կնճռոտ գլուխը, այս քաշ ընկած դէմքը, այս ծանրացած կոպերը, որոնց արանքում, որպէս մի գունդ բոժոժի անշարժ բացուածքի մէջ, երևում էր դանդաղ ու տխուր աչքը:

Այցելուները նկատեցին սակայն, որ հիւանդի հայեացքը կանգ առաւ նրանց վրայ մի անսովոր հաճոյքով: Նրանք լռեցին, թոյլ տալով ծերունուն ճաշակել իր յուշերի հաճոյքը, որ նրանց համար յաւիտենական գաղտնիք էր: Ապա Ուլրիխը մօտեցաւ անկողնին և ձեռքը դնելով Ֆիլիպ Օրերլէի բազկի վրայ, մի փոքր կռացաւ ականջին մօտ, աշխատելով աչքը նրա աչքերին ձգել, որ ծերունին ջանք էր անում բարձրացնել:

—Մենք երկար խօսեցինք՝ ես ու ձեր թոռը, պարոն Օրերլէ... Լաւ տղայ է ձեր ժանը, ասաց Ուլրիխը:

Իրանի մի դանդաղ շարժումով ծերունին գլուխը շուռ տուեց իր թոռանը տեսնելու համար:

—Մի լաւ տղայ—շարունակեց անտառատէրը—որին չի կարողացել Բերլինը փչացնել: Նա մնացել է ձեզ արժանի, որպէս ալգասցի և հայրենասէր... Նա պատիւ է բերում ձեզ:

Չնայելով լոյսի ազատութեանը, Ուլրիխը և ժանը կարողացան նկատել մի ժպիտ ծերունու դէմքին. դա նրա տալուին երիտմասրդ հոգու պատառխանն էր:

Նրանք հեռացան առանց աղմուկի՝

—Բարձր գիշեր, պարոն Օրերլէ, բարի գիշեր պապիկ:

Գիշերային լամպի բոցը երերաց և նրա հետ շարժուեցին ստուերներն ու շողերը: Դուռը վերստին փակուեց և ընդհատուած կրազը վերսկսեց այն սենեակում, ուր արեւի մայր մըտ-

ներուց յետոյ ոչինչ ներս չէր մտնում, բացի Ալշէյմի եկեղեցու զանգակատան ժամացոյցի ձայնը:

Ուլրիխը և իր քեռորդին բաժանուեցին աստիճանների վրայ: Դրսում սառնամանիք էր և մարդերը ողջ սպիտակին էին տալիս, եղեամի շերտի տակ:

— Կաւ եղանակ է քայլելու համար, ասաց Ուլրիխը: Ես քեզ կսպասեմ Հէյդենբերգում: Նա սուրեց, կանչեց շանը և փափայեց նրա բոցազոյն դունչը:

— Առաջնորդիր ինձ, Ֆիգել, ասաց նա. բոլոր ժամանակ ես պէտք է խորհիմ այն բաների մասին, ինչ ինձ ասաց այս երեխան:

Հազիւ թէ նա հեռացել էր մի քանի հարիւր մետր, և դեռ հնչում էր նրա քայլերի ձայնը դէպի Ուլրիխին անտառները տանող ճանապարհի վրայ, երբ ժանը լսեց գիշերային խաղաղութեան մէջ մի ուրիշ աղմուկ: Այդ արդէն ձիերի տրոփիւն էր, որ լսում էր Օբերնէի կողմերից: Նրանց սմբակները զարկում էին խճապատ գետնին, ինչպէս ցորեն ծեծելու զործիքը, հեշանին:

Եւ այդ ձայնը գեղջկական էր. նա չէր խռովում, չէր խանգարում ոչ մէկի քունը: Մէկ Ֆիգելն էր, կատաղաբար հաջում դէպի անտառը. նա էլ, անշուշտ, ուրիշ պատճառներ ունէր... Ժանը ականջ դրեց մօտեցող կառքի ձայնին, որ կամաց-կամաց նուազեց: Նա հասկացաւ, որ կառքը ներս մտաւ բնակութեան շրջանը՝ փողոցները, կամ գոնէ պարտէզների մէջ, որոնք ամսու ժամանակ իրանց խնձորենիներով, կիտասենիներով և ընկուզենիներով ամբողջապէս ծածկում են Ալշէյմը: Յետոյ կառքի ձայնը յանկարծ լսուեց աւելի ուժգին ու բարձր, ինչպէս տուններից դուրս ընկնող գնացքի որոտը: Աւազը ճոռաց ծառուղիի ծայրում, երկու լապտերներ ծռուեցին և սլացան ծառաստանով. կանաչը, մացառները, ծառերի ընի ստորին մասը աղօտ լոյսի տակ յանկարծակի դուրս ցցուեցին խաւարից և յետոյ վայրկենապէս ծածկուեցին. կառքը կանգ առաւ տան առաջ: Ժանը կանգնած էր սանդուխների գլխին. ցած վազեց և րացեց կառքի դռնակը: Մի կարմրոտած ու սպիտակազգեստ աղջիկ առաջինը դուրս թռաւ կառքից. նա կրում էր սպիտակ կրկնոց, սպիտակ բրդից ծածկոյթ և սպիտակ կօշիկներ: Թեթևաբայլ ու արագ, նա համարեաւ թռաւ ժանի առաջից, անցողակի համբուրելով նրա ձակատը և քնաթաթախ շրթունքների արանքից շշնջաց.

— Բճրի երեկոյ, եղբայր:

Եւ բարձրացնելով փէշերը՝ թոյլ-թոյլ երերալով, գլուխը

ծանրացած, նա բարձրացաւ աստիճանները և ծածկուեց նախազաւթում:

— Բարի երեկոյ, բարեկամ, ասաց մի տղամարդի իշխող ձայն, դու մեզ սպասում էիր. ի դժբախտ... Շուտ արի Մոնիկ: Զիե՛րը խրտնեղ են... Օգիւտտ, վաշը նրանց տասներկու լիտր դարի կը տաս և կը տանես պայտելու... Ժան, դժբախտ տեղը դու մեզ չընկերացար: Շատ լաւ անցաւ: Պարոն ֆոն-Բիւխերը երկու անգամ հարցրեց քո մասին:

Խօսողը ցած իջաւ կառքից, սղմեց Ժանի ձեռքը, դարձաւ տիկին Օրերլէին, որ տակաւին նստած էր կառքի խորքում, Ժամանակ գտաւ փորձուած մարդու հայեացքով դիտելու աստիճանները և ձիերը, որոնց սև, բրնձաթոր մորթին կարծես սապոնած լինէր: Երկու կողմից, քունքերից վար կախուած միրուքի մասերը (favori) շրջանակում էին նրա լիքը և լուրջ դէմքը. արձակ ձգուած ամառային վերարկուի տակից երևում էր բաճկոնակն ու շապիկը, ուր փայլում էին հոնոսեան երկու քարեր: Այս բոլորը սակայն, ինչպէս և նրա հրամայող ձեռքը, երևացին միայն մի վայրկեան: Իր հրամանները և կարգադրութիւնները անելուց յետոյ, Ժողէֆ Օրերլէն, որպէս մի աշալուրջ տէր, որ երբեք ոչինչ չի մոռանում, թեթևութեամբ գլուխը բարձրացրեց, լարեց իր աչքերի բոլոր տեսողութիւնը, նայեց դէպի ջրվէժը, ուր նիրհում էին բրգաձև ծառերը, իմանալու համար, թէ արդեօք կրակի վտանգ չկայ, կամ որևէ ստուեր չի՞ թափառում սղոցարանների շուրջը: Յետոյ թեթևաքայլ, երկերկու աստիճան ցատկելով՝ նա բարձրացաւ սանդուխների երկրորդ մասը և ներս մտաւ: Որդին ոչինչ չպատասխանեց: Նա օգնում էր տիկին Օրերլէին կառքից իջնելու. վերցրեց հովհարը, ձեռնոցները և հարցրեց.

— Շատ չէ՞ք յոգնել, սիրելի մայրիկ: Եւ մօր անուշ աչքերը ժպտում էին. նուրբ ու երկար շրթունքները պատասխանում էին. «Ո՛չ, չեմ յոգնել, բայց սա էլ իմ տարիքի բանը չէ, սիրելի դաւակ. մայրդ արդէն պառաւ է»: Նա յենուեց իր զաւակի ձեռքին, ոչ այնքան յոգնածութիւնից, որքան մայրական հպարտութիւնից: Նրա դէմքի վրայ նկարուած էր անսահման տըխրութիւն և աստիճանները բարձրանալով՝ կարծես հարցնում էր Ժանին... «Դու չի՞ս զայրացել որ ես գնացի այնտեղ. ես չէի կարող ուրիշ կերպ վարուել. և ես տանջուել եմ»: Նա հագած ունէր սև անդուսէ շրջագգեստ. իր տակաւին խիստ սև մազերի վրայ կրում էր մի քանի ակներ, իսկ ուսերին՝ կապտաւուն աղուէսների վզնոցը: Ժանի համար նա մի դժբախտ թագուհու տեսք ունէր: Եւ որդին հիացած էր նրա քայլուածքի վա-

յելչութեան, գլխի գեղեցիկ կեցուածքի վրայ, որ ունէր ալլապան հին սերնդին պատկանող այս կիներ: Նա հպարտ էր, որ ինքը այս կնոջ որդին է, և այդ հպարտութիւնը միայն մօրը կ'ուզէր ցոյց տալ: Նա ընկերացաւ մօրը միշտ թեանցուկ, նրան աւելի մօտ լինելու հաճոյքն ունենալու և ամեն քայլում նրան կանգնացնելու համար:

— Մայրիկ, գիտե՞ս, ես մի շատ լաւ երեկոյ անցկացրի: Նա էլ աւելի լաւ կը լինէր, եթէ դուք էլ այստեղ լինէիք... Կարճ էք երեակայել, որ Ուլրիխ քեռին եկաւ ժամի ութ ու կէսին և մեկնեց միայն կէս գիշերին, քիչ առաջ...

— Նա երբէք մեզ համար այդքան երկար չէր մնայ, պատասխանեց մայրը տխուր ժպտով. նա միշտ խոյս է տալիս մեզանից...

— Դուք ուզում էք ասել, թէ նա հեռանում է. ես նրան այսուհետեւ կը բերեմ:

— Ա՛հ, երիտասարդութիւն, երիտասարդութիւն. եթէ դու գիտենայիր, թէ ես սրբան բան եմ տեսնում, որոնք հեռանում, խոյս են տալիս...

Նա կանգ առաւ իր հերթին. նայում էր որդուն, որին չէր տեսել ճաշից յետոյ և ժպտում էր աւելի ուրախութեամբ:

— Դու սիրում ես եղբօրս:

— Աւելի քան առաջ. ես նրան համարեալ թէ նոր գտայ:

— Առաջ դու շատ ջանիլ էիր...

— Մենք երկար զրուցեցինք, և երեակայեցէք, մենք համաձայն ենք բոլոր խնդիրներում:

Մայրը նայեց որդու աչքերին սանդուխի ազօտ լուսաւորութեան մէջ:

— Բոլոր, հարցրեց նա:

— Այո, մայրիկ, բոլոր:

Նրանք հասան վերջին աստիճաններին:

Մայրը ձեռնոցով պատած մատը շրթունքին դրեց և դուրս քաշեց թեւ որդու թևի տակից: Նա իր սենեակի դրան առաջն էր, Ֆիլիպ Օբէրլէի սենեակի դէմ ու դէմ: Ժանը համբուրեց մօրը, մի փոքր յետ քաշուեց, վերստին առաջացաւ դէպի նա և սզմեց իր կրծքին լուծեամբ:

Ապա նա մի քանի քայլ քնաց դէպի միջանցքի խորքը, կրկին յետ նայեց այս կնոջը, որին այնպէս բնականից պատշաճում էր սուգի պարզ զգեստը, նայեց նրա քաշ ընկած գունատ ձեռներին, նրա ուղղադիր գլխին, որոշ, բայց անուշ արտայայտութեամբ դիմագծերին և շնչաց ուրախութեամբ:

—Օրերլէի Սուրբ Մոնիկ, աղօթեցէք մեզ համար:

Մայրը կարծես չլսեց. բայց կանգ առաւ ձեռքը դրան կանթի վրայ, և մնաց այդպէս այնքան ժամանակ, մինչև որ որդին յետ-յետ գնալով ծածկուեց միջանցքի խաւարի մէջ:

Ժանը ներս մտաւ. իր սենեակը, սիրտն ուրախ և հոգին լի խոհերով, որոնք ծնունդ էին առել այդ երեկոյ և խուռնեցած գալիս էին թափով համատարած խաղաղութեան մէջ: Իսկոյն քնել չկարողացաւ և բաց արեց լուսամուտը: Մառը հովը փռւած էր կանոնաւորապէս դէպի հիւսիս արևելք: Մառախուղը վերացել էր: Իր սենեակից նա կարողանում էր նկատել լեռնալանջի մշակուած շերտերից աւելի բարձր ընկած անտառները, ուր ստուերը ամբողջ գիշեր ծածկւում էր ու բացւում, մինչև հասկածա լեռնակատարները: Այստեղ, այնտեղ, լեռները պոսակուած էին ծառերով, որոնք ընդհատում էին լեռնաշղթայի գիծը և թաղւում աստղերի մէջ: Նա աշխատում էր որոշել քեսի Ուլրիխի տան տեղը և երևակայում էր նրան իր տանը մօտենալիս: Յանկարծ անտառի կողմից երգի ձայներ լսուեցին: Հաճոյքի մի դող անցաւ երաժշտութեան սիրահար երիտասարդի մարմնով: Ձայները զուրեկան էին, մատաղ ու շիտակ: Անշուշտ մօտ քսան, գուցէ և երեսուն հոգուց բաղկացած մի խումբ էր երգում: Հեռաւորութեան պատճառով բառերը նրանից խուսափում էին, կարծես մի նուագաւորանի ձայն լինէր տարածութեան մէջ: Գոռոզ յանգեցող գերմանական մի երգ էր այն, որ յանձնւում էր Ալգա-սի բամուռ: Յետոյ երեք բառ, պարզ և որոշ հնչուեցին ժանի ականջին: Նա ուսերը բարձրացրեց դայրանալով իր վրայ, որ չկարողացաւ իսկոյն հասկանալ. վարժութիւններից վերադարձող գերմանական զինուորների մի խումբ էր, հռետեսան այն հուսարներից, որոնց պատահել էր լեռներում Ուլրիխ Բեհլերը: Ըստ սովորութեան նրանք երգում էին նախ զգաստ մնալու համար, և երկրորդ՝ որովհետև նրանց երգերի մէջ կար Հայրենիք խօսքի կորովը: Ձիերի տրոփիւնը միանում էր երգի եղանակին, որպէս քողապատ թմրուկի ձայն. բառերը հնչւում էին և թրթռում օդի մէջ:

«Երգեցէք ուժեղ, յստակ բարձրաձայն

Երգեցէք երգը բոլոր երգերի.

Թող արձագանքը սար ու ձորերի

Կրկնի այդ վսեմ գովքը հայրենի,

Քեզ ո՞վ հայրենիք հին երգիչների,

Ազատ հայրենիք պատուի ու փառքի,

Քաջ, անընկճելի ու ըմբոստ երկիր,

Դարձեալ քեզ համար մենք մեզ կը զոհենք»:

Ժանը ինչպէս կը կամենար լռեցնել այդ երգը: Քանի անգամ սակայն գերմանական համարեա ըլլոր զաւանդներում նա լսել էր այդ երգը զինուորներէ: Ինչո՞ւ համար այժմ, յատկապէս այժմ, նա այդպէս տխրում է նոյն երգի ձայնից, որ ցաւոտ միւսում էր նրա հոգու մէջ, չնայելով որ վաղուց հետէ նա գիտէ, նա կարող է անգիր կրկնել այդ երգի բառերը: Աւանից մի երկու հարիւր մետր հեռաւորութեան վրայ նրանք լռեցին: Լսում էին միայն ձիերի տրոփիւնը, որ մօտենում էր Ալշէյմին:

Ժանը կռացաւ տեսնելու համար, թէ նրանք ինչպէս են մտնում աւանը: Նա կարողացաւ նրանց տեսնել պարտիզի պատի վրայ շինուած մի ցանցապատ բացուածքից, որ գտնւում էր տանից մի փոքր հեռու: Նրա աչքի առաջից անցնում էր շարժուն դանդուածը մոխրագոյն փոշու մէջ, որ քամին տանում էր դէպի յետ, կամ ծուռում էր նրանց գլուխների վրայ, ինչպէս հասկի կռացած քիստը: Մարդիկ իրարից չէին զանազանւում, ինչպէս և նրանց ձիերը: Ժանը յարաճուն վշտով մտածում էր իր հոգու խորքում. «Ինչ բազմաթիւ են նրանք»: Բերլինում, Միւնխենում, Հայդելբերգում նրանք անմիջական նպատակից զուրկ մի ոյժի միտք էին միայն յարուցանում: Թշնամին որոշ չէր. գերմանական կայսրութեան մեծութեանը դէմ կեցողն էր թշնամին, ով և լինէր նա: Ժան Օքերլէն շատ անգամ էր հիացել շարժուող քնդերի շարքերի և այն անձի զարհուրելի կարողութեան վրայ, որ հրամայում էր այդքան մարդկանց: Բայց այստեղ՝ սահմանի վրայ, վերջին պատերազմի արիւնից դեռ միացող հողի վրայ, յիշատակներ կային, որոնք պարզ ցոյց էին տալիս, թէ ո՞ւմ են սպառնում, ո՞ւմ են ուզում հարուածել: Զինուորների տեսքը կամ ազմուկը մտածել էր տալիս սպանութիւնների, մահուան, զարհուրելի սգի մասին, որ դեռ իշխում էր: Նրանք անցնում էին տների արանքից: Զիերի և մարդկանց շարքերի ազմուկը զարկւում էր լուսամուտներին: Աւանը թւում էր քնած: Ո՛չ զինուորները և ո՛չ սպանները բան չնկատեցին, բայց շատ տներում մայրեր կային, որոնք զարթեցին և ցցուեցին անկողնի մէջ դողդողալով. մի մարդ բռունցքը մեկնեց և նոզվեց անցեալում յաղթողներին: Դրաման տեսաւ միայն Աստուած: Եւ նրանք անցան:

Երբ վերջին շարքի ստուերը վերացաւ ցանցապատ անցքի առջի ճանապարհից՝ Ժանը նկատեց իջնող փոշու մէջ մի

ձիաւոր՝ որ երեսը դարձրել էր դէպի իրանց տունը: Արդեօք ձիւն էր խրտնել և չէր առաջանում. բայց ոչ նա հանգիստ էր: Ձիաւորը մի սպայ էր: Կրծքին ինչ որ ոսկեղօծ բաներ մի քանի շարքով փայլւիւում էին: Թամբի վրայ լաւ նստած, երիտասարդ, բարձրահասակ՝ այդ սպան չէր շարժւում և նայում էր առաջ: Այդ տեւց հազիւ մի բռակէ: Յետոյ նա ցած թողեց սուրը, որ բռնած էր ձեռքին, ապա ողջունելով՝ խթեց ձիու կողերը և առաջ սլացաւ:

Այս տեսարանը այնպիսի արագութեամբ կատարուեց, որ ժանը ինքն իրան կը կարծէր աչքի պատրանքի զոհ, եթէ դէպի գունդը արշաւող ձիու ոտնաձայնը չլսուէր գիւղի փողոցներում:

«Տևտոնական մի կատակ, մտածեց ժանը, այս սպան երևի այդ միջոցն էր գտել ասելու, թէ տունը նրան դուր է գալիս: Շատ շնորհակալ եմք»:

Գունդը արդէն գիւղից դուրս էր և անցնում էր հովտի միջից: Տները վերստին նիրհեցին: Հովը փչում էր դէպի կանաչապատ Վոժերը: Հակառակ կողմում, արդէն հեռուից, որպէս մի կրօնական օրհներգ, վերստին հնչեց դերմանական զինուորների երգը, որոնք փառաբանում էին իրանց հայրենիքը, չիմելով դէպի Ստրապբուրգ:

(Կը շարունակուի)

ԿԱՆԱՆՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՏՐ- ՊԱՏԱԿԱՆՈՒՄ

I

Պարսկահայերի ընկերութիւնների շարքում պատուաւոր
և աչքի ընկնող տեղ է բռնում Թաւրիզի կանանց բարեգոր-
ծական միացեալ ընկերութիւնը, որ նշանակալից դեր է խա-
ղացել Ատրպատականի հայերի ցաւոտ կեանքում և ունի ամ-
բողջ 16 տարուայ պատմութիւն:

Այդ ընկերութիւնը դեռ երեք տարի առաջ ներկայացնում
էր իրարից բոլորովին բաժան, թէև՝ նպատակներով նման,
երկու ընկերութիւններ, որոնք կրում էին տարբեր անուններ.—
«Թաւրիզի կանանց բարեգ. ընկերութիւն» և «Ատրպատականի
կանանց բար. ընկերութիւն»: Դրանցից ամեն միւնը, մինչև
միութիւնը, ունի իր առանձին պատմութիւնը և ուրոյն գոր-
ծունէութիւնը, կանգ առնենք այդ գործունէութիւնների վրայ
առանձին-առանձին:

Սկսենք «Թաւրիզի կանանց բար. ընկերութիւնից» որին
պատկանում է առաջնութեան պատիւը:

Ե՞րբ և ի՞նչ պայմանների մէջ է ծնունել այդ ընկերու-
թիւնը:

Ընդհանուր խաւարի աշխարհում բացառիկ տեղ չէր բռ-
նում և Թաւրիզը, որը համարւում է Ատրպատականի մտաւոր
կենտրոնը: Թաւրիզում նոյնիսկ բացակայում էին սղայոց կա-
նոնաւոր դպրոցներ, իսկ աղջիկների կրթութեան մասին չէր
մտածւում: Մեծ թուով մանուկներ, թէ աղջիկ և թէ տղայ,
մնացել էին փողոցում անկիրթ, անուսում, և մեծանում էին
անգիտակից դէպի իրանց շրջապատող երևոյթները, ընդ-
հանրապէս դէպի կեանքը:

Այդ հանգամանքը մի կողմից, «Կովկասում և Կ. Պոլսում
յարաճուն և գործունեայ նպաստամատոյց ընկերութիւնների
բարերար գոյութիւնը, որոնք անշուշտ նոր գրգիռ և ազդու-
թիւն էին սփռում ամենուրեք», միւս կողմից, միտք է
յղանում Թաւրիզում փոքրաթիւ կանանց մէջ նման ընկերու-

թիւն ձեռնարկել, որը անուանւում է «Թաւրիղի կանանց բարեգործական ընկերութիւն»։ Այդ ընկերութիւնը թէև հիմնուել է 1890 թուին, բայց որոշ կաղմակերպութեան բնաւորութիւն է ստացել յաջորդ տարին, 1891 թ. օգոստոսի մէկին, Ստեփանոս եպ. Մխիթարեանի օրով և նրա հաստատութեամբ։

Ընկերութեան ղեկավարները ձեռնարկում են գործը միայն ունենալով մօտ 130 թուման զրամագլուխ. մի չնչին գումար։ Բայց այդ հանգամանքը չի յուսահատեցնում նրանց, այլ լցուած լինելով հաւատով դէպի սկսուած գործը, ձգտում են աւելի ու աւելի ընդարձակել, հաստատուն հիմունքների վրայ դնել և լայն չափով օգտակար լինել ժողովրդին։ Առաջին տարւում ընկերութիւնը ունէր 32 անդամուհիներ և միմիայն նըպաստում էր Լիլաւա թաղի օրիորդաց դպրոցին՝ տալով 12 աշակերտուհու համար հագուստ և դասական առարկաներ։ Այդ է միայն եղել 1891—92 ուսում. տարուայ նրա գործունէութիւնը, աւելին էլ հնարաւոր չէր անել, քանի որ ընկերութեան նիւթական միջոցները չէին թոյլ տալիս, ընկերութիւնը դեռ զոնւում էր անկերպարան և երերուն վիճակի մէջ։

Յաջորդ 1893/4 ուսումնական տարւում ընկերութիւնը մի քայլ առաջ է գնում. նա կարիք է զգում բանալ «չքաւոր աշակերտուհիների համար» կար ու ձեւ արհեստանոց, հոգալով և նրանց հագուստը։ Առաջին տարւում արհեստանոցում ունեւում են 10 աշակերտուհի, իսկ Լիլաւայի դպրոցում ձրիավարժ աշակերտուհիների թիւը հասցնում են 30-ի։

Ընկերութիւնը դեռ իր սկզբնական շրջանում որոշ ուշադրութիւն է գրաւում և վայելում է թէ պարսկահայերի և թէ կովկասահայերի համակրանքը, ստանում է և զգալի նիւթական աջակցութիւն։ Այդ հանգամանքը աւելի խրախուսում, հոգի և կենսք է տալիս ընկերութեան ղեկավարներին. նրանք աւելի ընդլայնում են իրանց գործունէութեան շրջանը և աւելի գօտեալողւած նետւում են գործելու ասպարէզը։

Վրայ են համնում 1894, 95 թուականները, ցաւի և ցասման տարիները։ Այդ այն սև տարիներն էին, երբ բռնակալութեան թափած արիւնը Տաճկահայաստանում յորդ գետեր էր կազմել, երբ ամբողջ հայ ժողովուրդը տնքում էր և անխիղճ տէրութիւնը ձգտում էր միանգամայն բնաջինջ անել մի ամբողջ ժողովուրդ։ Ահա այդ տարիներն էր, որ բովանդակ Վասպուրականը կամաց-կամաց հիւժւում, դատարկւում էր։ Եւ նրանք, հայերը, սրտի ցաւով թողնում են իրանց հայրենի երկիրը, որի հետ կապուած են այնքան քաղցր և միևնոյն ժամանակ նուիրական յիշողութիւններ, թողնում, և զլխիկոր և

սար զարդը կրծքներում թաղած, հեռանում են, չուժ են դէպի հեռու, օտար երկիրներ: Այդ՝ թշուառների մի երկար շղթայ էր:

Ատրպատականն էլ որպէս ապաստան հանդիսացաւ այդ թշուառները համար: Ատրպատականի համարեա բոլոր մասերումն էլ կային գաղթականներ: Անհրաժեշտ էր նրանց հովանաւորել, յարմարութիւններ տալ ապրելու և գէթ օտարութեան մէջ մի բոպէ մոռացնել տալ նրանց մեծ վիշտը: Եւ ինչքան գործ կար նրանց վերաբերմամբ անելու: Անխուսափելի կարիք էր զգացւում մի ընկերութեան, մի ժամնի, որ իր վրայ վերցնէր գաղթականներին խնամելու պատասխանատու գործը: Ահա այդտեղ ասպարէզ է գալիս «Թաւրիզի կանանց բարեգործական ընկերութիւնը» և վերցնում է այդ գործի ծանրութեան մեծադոյն բաժինը իր վրայ, սրով և բացւում է նրա համար գործելու լայն և նուիրական ասպարէզ:

Այդ պատասխանատու պաշտօնից պատուաւոր կերպով դուրս գալու համար անհրաժեշտ էր անշուշտ նիւթական մեծ օժանդակութիւն: Այդ հանգամանքի վրայ է հրաւիրում ընկերութիւնը հայ ժողովրդի ուշադրութիւնը և ձեռնարկում է հանգանակութեան և նրա կոչը չի մնում «ձայն բարբառոյ յանապատի»... այնպէս որ ընկերութիւնը հնարաւորութիւն է ունենում բաւարարութիւն տալ գաղթականների գէթ անհրաժեշտ պէտքերին:

1896—97 թուին Վասպուրականի գաղթականների վրայ աւելանում են նաև Դոթուրի և Վառ գիւղի հայերը, և ընկերութիւնը հարկ է համարում մարդ զրկել թէ Սալմաստ և թէ Խոյ, որպէսզի տեղն ու տեղը ուսումնասիրուի ամեն ինչ և այնպէս հոգան նրանց կարիքները:

Ընկերութիւնը ոչ միայն իր շրջանում օգնել, նպաստել է գաղթականներին, այլև 4767 դռան (105 օսմ. ոսկի) ուղարկել է գերապատիւ Իզմիրլեան պատրիարքին, իհարկէ, էլի տոճկահայոց օգտին:

Այդ ժամանակ միայն հիմք է դրւում մանկապարտէզի (1896), նպաստ է յատկացւում գոյութիւն ունեցող դպրոցներին:

Զմոռանանք ասել, որ 1895 թուին ընկերութիւնը բացեց գորգի գործարան, ուր աշխատանք էր տրւում աղքատ կանանց, բայց հէնց սկզբնական շրջաններում նկատուեց թէ ուրիշների կողմից, և թէ ինչպէս փորձով տեսաւ նաև ընկերութիւնը, որ գործարանը առանձին օգուտ չի տալիս, այն ինչ պահանջում է մեծ ծախս և աշխատանք, ուստի ստիպուած փակեցին: Թաւրիզում մանաւանդ կան այնպիսի գորգի գործարաններ թուր-

քերի մէջ, որոնք զրուած են շատ լաւ հիմքերի վրայ և տալիս են գեղեցիկ ապրանք. դրանց դէմ երբէք հնարաւորութիւն չէր ունենայ մրցելու ընկերութեան գործարանը:

Անցնում են «աղէտի օրերը», ընկերութիւնը իր ուշադրութիւնը կենտրոնացնում է կրթական գործի վրայ: Նա աւելի ընդարձակում է կար ու ձևի արհեստանոցը և մանկապարտէզը աւելի հաստատուն հիմունքների վրայ դնում: Բացի այդ՝ ընկերութիւնը աչքը յառում է աւելի հեռուն, դէպի գաւառները, ուր այնքան անհրաժեշտ են խնամող և փայփայող ձեռներ և ուր 1898/9, 1899—1900 ուսումնական տարիներում հնարաւորութիւն է ունենում Ազադան (Ղարաբաղ) Դիզա-Թաքէ (Բարանդուզ), Իքի-աղաջ (Ուրմի), Բաբառու (Բարանդուզ) և Ռահվա (Ուրմի) դիւղերում: Հինգ պլպլացող ճրագներ ամենախուլ անկիւններում: Այդ արդէն մեծ առաջադիմութիւն էր կահանց ընկերութեան համար և գրաւական նրա յարաճուն եւ աւանդի:

Բացի իր սեփական հաստատութիւններից, ընկերութիւնը միշտ էլ աշակերտուհիների հազուստ հոգացել է, նուազստ է տուել Լիլաւայի դպրոցին, Մուսուժրարի եւ Արամեան դպրոցներին:

Յաջորդ 1900—1901 ուսումնական տարում ընկերութիւնը գոյութիւն ունեցող հաստատութիւնների վրայ աւելացնում է միայն մի դպրոց—Մարաղա քաղաքում: Այնտեղ արդէն կազմուած էր կանանց ընկերութիւն, որ համարւում էր Թաւրիզի բար. ընկերութեան ճիւղը: Այդ թուին կազմալուծւում է ընկերութիւնը և նրա ղրամագլխով (500 թուման), և աւելացնելով ընկերութեանը գանձարանից 100 թուման բանում է երկսեռ դպրոց:

Ընկերութեան այդ վեց հիմնարկութիւնների մէջ սովորելիս են եղել 170 աշակերտներ և աշակերտուհիներ: Այդ թիւը, պիտի ասել, որ գաւառների, այդ խուլ-մոռացուած անկիւնների համար անշուշտ փոքր չէ:

Ընկերութիւնը մի կողմից ձգտում էր աւելի ընդլայնել իր գործունէութեան ասպարէզը, միւս կողմից աշխատում էր ձեռք ձգել նիւթական խոշոր օժանդակութիւն, դրամական մեծ գումար, որպէսզի հնարաւորութիւն ունենայ եղած հիմնարկութիւնները աւելի ամուր և հաստատուն հիմունքների վրայ դնել: Եւ այդ նրան աջողուեց: Ընկերութիւնը իր գործունէութիւնը սկսել է մի աննշան (130 թ.) ղրամագլխով և սակաւաթիւ անդամուհիներով, իսկ այժմ ունի խկապէս խոշոր ղրամագլուխ և մասնակցողների ստուար թիւ: Մանաւանդ աչքի

առաջ պիտի ունենալ այն, որ նրա նիւթական աղբիւրը կազմում են անդամուհիների տնտեսականները, հանդէսներից, տօնածառից ստացուած դրամը և զանազան պատահական նուէրներ: Դրանցից միայն առաջինն է յարատեւ, մշտական. միւս միջոցների վրայ անսպասելի վատանքի անկարելի է: Ուրեմն տարեկան ծախսը ծածկելու և դրամագլուխն աւելացնելու համար միմիայն պիտի յենուել անդուլ աշխատանքի և ընկերութիւն ղեկավարների ջանքերի վրայ: Եւ իսկապէս ընկերութիւնը աշխատել է. այդ երևում է հետեւեալ թուերից:

Մուտք		Ելք		Դրագլուխ տար. անդ.		մշտ. անդ պատ. անդ.	
1891/92	ուս. տ	2011	դ	779	դ.	1232	32
1900/901	»	29117	»	31,709	»	78475	60
							36
							8*)

Նկատենք, որ պատուաւոր և մշտնջենական անդամներ կարող են ընդունուել և սղլամարդիկ. և իսկապէս պատուաւոր անդամները մեծ մասը տղամարդիկ են: Այդ անդամները շատ մեծ չափով նպաստել են ընկերութեանը թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյական աջակցութեամբ: Այդ անձնաւորութիւնների ջանքերի շնորհիւ է որ ընկերութիւնը արժանացաւ վեհափառ Շահնշահ Մուղաֆէր-էզզիւնի բարձր շնորհին և ուղարկութեանը ու ընդունուեց նրա հովանաւորութեան տակ:

Ահա այդ Ֆէրմանը:

Ամենակարող Աստուծով ծագեց յաղթութեան ու փառքի աստղը և Ամենակալի օգնութեամբ Շահութեան կնիքն ստացաւ Մուղաֆէր-էզզիւն Շահը:

Որովհետեւ շարունակ մեր արքայական փափաղն է եղել տարածելու բարին ու գեղեցիկը և քաջալերելու այն անձանց, որոնք ձեռնամուխ են լինում նմանօրինակ գործերի, այս առթիւ Թաւրիզի հայուհեաց բարեգործական ընկերութիւնը աղերսարկու եղած լինելով առ ոտն օրհնեալ զահոյից ընդունելու յիշեալ ընկերութիւնը մեր արքայական (սուրբ անձնաւորութեան) պաշտպանութեան տակ, ուստի ցոյց տալու համար մեր համատարած շնորհը բարձր տէրութեան ըստը հպատակներին, թագաւորական այս լուսաճաճանչ Հրովարտակի ծագմամբ այդ ընկերութիւնը Մեր հովանաւորութեան ներքոյ ընդունելով, հրամայում ենք, որ այս առանձին ճնարհի պատճառով մեծարուի և յոյս ունենայ Մեր ողորմածութեան վրայ: Շէվվալ ամիս. 1318.

Ֆէրմանը կրում է նաև Աթաբէգ-Ազամ Սադրազամի և

*) Տարեկան անդամուհի գրուողը տալիս է 4 բուրլի, մշտնջենականը միանուագ 50 բ. իսկ պատուաւոր անդամ լինելու համար՝ նայած՝ թէ ի՞նչ չափով աջակցութիւն ցոյց են տալիս ընկերութեանը:

Մուշիրը-Դովլէի կնիքները: Վեհափառ Շահնշահի այդ առանձին շնորհը շատ թանգ է ընդհանրապէս բոլոր պարսկահայերի և մասնաւորապէս «Թաւրիզի հայունեաց բար. ընկերութեան» համար: Այդ երկրորդ քաղցր ուշադրութիւնն է, որ այդքան կարճ միջոցում Պարսկաստանի ինքնակալը ցոյց էր տալիս դէպի իր հպատակ հայ ժողովուրդը:

Այդ բարձր հովանաւորութիւնը շատ մեծ խրախուսանք և քաջալերութիւն էր ընկերութեան համար՝ աւելի ուժեղ թափով նետուելու կարիքների ծովը և աւելի ու աւելի ամրացնելու իր դիրքը և պատուաւոր ու բացառիկ տեղ գրաւելու հասարակական-կրթական հիմնարկութիւններին շարքի մէջ:

Այսքանս բաւական համարելով «Թաւրիզի կանանց բարեգ. ընկերութեան» մասին, այժմ անցնենք «Ատրպատականի կանանց. բար. ընկերութեան» անշատ գործունէութեան շրջանին:

II

Նոյն ծրագիրը և զործառնութեան նոյն շրջանը ունի նաև «Ատրպատականի կանանց բարեգործական ընկերութիւնը». ոչ միայն նման են նպատակներով կանանց այդ երկու ընկերութիւնները, այլ չեն տարբերում նոյնիսկ գործելու տակաւորիցով: Այդ ընկերութիւնների միակ տարբերութիւնը գուցէ կայանում է անունների և վարիչների մէջ:

Եթէ այդպէս է, էլ ինչո՞ւ համար է այդ: Անշուշտ ամեն մի ընթերցողի առաջ կը ցցուի այդ հարցը:

Այս հարցի պատասխանը Թաւրիզի կեանքին մօտիկից ծանօթ ամեն մի անհատի համար շատ պարզ է: Թաւրիզի մի բուռը հայ ազգաբնակչութեան մէջ շատ ընդհանրացել և բնորոշ երևոյթի կերպարանք է ստացել իրար հետեւելու, իրար նմանուելու սովորութիւնը: Հերիք է մի թաղում մի ընկերութիւն կազմակերպուեց, մի հիմնարկութեան սկիզբն դրուեց, և ահա միւս թաղում երևում է նմանօրինակ ձեռնարկութիւն, նման թէ իր ծրագրով և թէ գործելու եղանակով: Այնպէս որ Թաւրիզում բոլոր հասարակական-կրթական հիմնարկութիւններն էլ զոյգ-զոյգ են, երկուրեւակներ... Այսպէս ահա, երկու «Թատերասիրաց» ընկերութիւններ, երկու «գրադարան-ընթերցարաններ», երկու «գալրոյններ», երկուսն էլ գրեթէ նոյն բարձրութեան վրայ կանգնած, երկու «կանանց բարեգ. ընկերութիւններ» և այլն, և այլն:

Այդպէս է ահա Թաւրիզը. ընկերութիւնների մի երկար

շարք կայ այնտեղ: Ընկերութիւնների և հաստատութիւնների այդ «երկուորեակութիւնը», — թէ կարելի է այդպէս բնորոշել — անշուշտ արդիւնք է երկու թաղերի մէջ գոյութիւն ունեցող խորթութեան, որը չի թողնում միացած ուժերով և համերաշխութեամբ առաջ տանել գործը. մեծ տեղ է բռնում և այն, որ հայաբնակ թաղերը իրարից բաւականին հեռու են և կտրուած են թուրքաբնակ թաղերով: Բայց յամենայն դէպս պիտի ձգտին, որ վերանայ երկու թաղերի մէջ եղած սառը յարաբերութիւնը, ժողովուրդը ինչպէս և նրա հաստատութիւնները, կազմեն մի ամբողջութիւն: Այդ պիտի լինի իր կոչման բարձրութեան վրայ կանգնած ամեն մի հիմնարկութեան, ինչպէս և իւրաքանչիւր ինտելիգենտ անհատի սրբազան պարտականութիւնը: Հերիք է, ինչքան այդ խորթութեան պատճառով տուժեւ և տուժում են երկու թաղերն էլ, թէ նիւթապէս և թէ բարոյապէս:

Բայց անցնենք մեր բուն նիւթին:

Ատրպատականի կանանց բար. ընկերութիւնը կազմուել և վաւերացուել է 1895 թ. փետր. 26-ին: Այս ընկերութեան ղեկավարներն էլ, ինչպէս նոյնը տեսանք Թաւրիզի կանանց ընկերութեան վերաբերմամբ, գործի սկիզբը դնում են շատ աննշան դրամագլուխ և անգամուհիների փոքր քանակութիւն ունենալով:

Դեռ ընկերութեան կազմակերպութեան առաջին ուսումնական տարում հիմք է դրւում Թաւրիզում կար ու ձևի արհեստանոցի և մանկապարտէզի, և այդ հաստատութիւնների համար ուսուցչուհի է բերւում Կովկասից, որը երկար ժամանակ պաշտօնավարում է այդ հիմնարկութիւնների մէջ: Այդ երկու հաստատութիւններն էլ (Ղալա թաղում), դրուած էին կանոնաւոր հիմքերի վրայ և առաջ էին տարւում շատ զոհացուցիչ կերպով: Կար ու ձևի արհեստանոցը միշտ էլ ունէր բաւարար թուով աշակերտուհիներ և տուել է շատ ընթացաւարտներ, իսկ մանկապարտէզը աւելի բարելաւ և մխիթարական դրութեան մէջ էր, քան Թաւրիզի կան. բար. ընկերութեան մանկապարտէզը: Ընկերութեան ղեկավարները, մանաւանդ տիկին Հեղինէ Ժորժը, որը միշտ եղել է ընկերութեան ոգին, նրան կեանք տուողը, ամեն կերպ աշխատում, ջանք և եռանդ չէին խնայում հիմնարկութիւնները պահելու համար ցանկալի բարձրութեան վրայ:

Ինչպէս տեսնում էք, այս ընկերութիւնն էլ իր գործունէութիւնը սկսել է Թաւրիզից: Ընկերութիւնը բաւականին ուշ է աչքերը դարձնում դէպի հեռուն, մոռացուած և խաւար

գաւառները: Այդ ընկերութիւնը երեան եկաւ այնպիսի մոմենտում, այն ցաւի և լացի օրերում, որ բոլորն էլ զրադուած էին գաղթականներով, բոլորն էլ ասես շմեկ էին: Ամեն մարդ տալիս էր, ինչքան կարող էր. օգնում էր, ինչով հնարաւորութիւն ունէր: Ատրպատականի ընկերութիւնն էլ անտարբեր չէր կարող մնալ. նա էլ նետում է գործելու ասպարէզը, նա էլ իր լուծման է տալիս: Ընկերութեան վարիչներին զբաղեցրնում է նոյնիսկ գաղթականներին աշխատանք տալու հարցը և զրա վերաբերմամբ 1898/9 ուս. տարուայ տեղեկագրում կարդում ենք. — «Ուրպէսզի գաղթական քոյրերն ու եղբայրները հարկ եղած ինամքը և սփոփանքը ստանալուց յետոյ կարողանան հեռու մնալ մուրացկանութեան անարգ սովորութիւնից, վարչութիւնս հիմնեց Թաւրիզում մի արհեստանոց-գործարան զանազան տարազադրժութիւնների վերաբերող, ուր յարմար պարտումենք պիտի գտնեն գաղթական կանայք, աղջկերք և տղամարդիկ ու ըստ իրանց աշխատութեան պիտի վարձատրութիւն ստանան»:

Այս գործարանը միայն 7 ամիս է գոյութիւն ունենում. ընկերութեան միջոցները չեն ներում շարունակել, քանի որ պահանջում էր բաւականին ծախս. ստիպուած փակում են:

Ատրպատականի կանանց բարեգ. ընկերութիւնը միայն 1898/9 ուս. տարում հնարաւորութիւն է ունենում ուշադրութիւն դարձնել գաւառների վրայ, այն ժամանակ, երբ արդէն գաղթականների հոսանքը դադարել էր և նրանք տեղաւորուած էին:

«Կատարելապէս համոզուած լինելով, որ գաւառներում տիրող խեղճութեան և տառապանքների գլխաւոր պատճառներից մէկն է տգիտութիւնը, վարչութիւնս որոշեց, և իրան նըպատակն է, իր կարողութեան շաւիով նպաստել կրթական գործի առաջադիմութեանը, մանաւանդ աչքի առաջ ունենալով այն, որ այդ աննախանձելի վիճակի տեղութիւնը կարող է գաւառացիներին առաջնորդել դէպի բարոյական անումը» *):

Ահա այս շատ լուրջ հանգամանքը ի նկատի ունենալով՝ ընկերութիւնը Ուրմի գաւառի Գեարդաբադ հայաշատ գիւղում բացում է դպրոց, հոգալով ուսուցչի ուճիկը և աշակերտների դասական առարկաների ծախքը: Այդ արդէն ընկերութեան կողմից մի համակրելի և առաջադիմական քայլ էր, որով նրա գործունէութեան շրջանը աւելի ընդլայնում էր և սկիզբն դրում նրա գաւառական գործունէութեան:

*) Տես ընկերութեան 1898—99 ուս. տ. տեղեկագիրը:

Բացի այդ, ընկերութիւնը 500 զօան նուիրում է Մարազայի նորակառոյց դպրոցի շինութեանը, որոշում է հինգ տարի անընդհատ 200 զօան նպաստ տալ Մուժամբարի նորահաստատ դպրոցին: Դրանով էլ ընկերութիւնը մասամբ զարկ, մղում է տուած լինում կրթական գործին գաւառներում: Իսկ Թաւրիզում, իր սեփական հաստատութիւններէրէց զատ, ընկերութիւնը որդեգրուհիներ էր պահում Ղալայի Ս. Աննայեան դպրոցում, վճարելով նրանց թոշակը և հոգում հազուատը ու դասական պիտոյքը:

Յաջորդ 1899—1900 ուսումն. տարում ընկերութիւնը հնարաւորութիւն է ունենում իր կրթական հիմնարկութիւններէ թիւը մէկով աւելացնել: Պարսկական Քիւրդստանի Սուլզուզ գաւառամասի Նազադէյ գիւղում է բացւում դպրոցը, մի կարեւոր կենտրոնական վայրում: Բայց դժբախտաբար հէնց միւս տարին դպրոցը փակւում է, որովհետեւ, ինչպէս ընկերութեան վարչութիւնն է տրամաբանում, աշակերտների թիւը նուազ էր, դպրոցի համար յարմար չէնք չկար և ժողովուրդն էլ անտարբեր էր: Այդ դպրոցի փոխարէն հարեան Սօւլզուզ գաւառի Դէրէլէք գիւղում բացւում է ուսումնարան, աւելի յարմարութիւններով:

Այդ նոյն տարում ընկերութիւնը մտածում է դպրոց բանալ նաեւ Բարանդուզ գաւառում, բայց յարմար ուսուցիչ չգտնելով՝ հնարաւորութիւն չի ունենում իրադրութիւնը իր մտադրութիւնը:

Ընկերութիւնը գաւառական գործունէութեան մէջ 1900—1901 ուս. տարում մի կարեւոր քայլ էլ առաջ է գնում: Այդ կարեւոր քայլն այն էր, որ Ուրմի բաղաթի մէջ դպրոցի հիմք էր դրւում: Այդ չափազանց ուրախալի առաջագիմութիւն էր, որովհետեւ այդ կէտը, լինելով կենտրոն, ապագայում կարող է նշանաւոր տեղ բռնել և համարուել կենտրոնական դպրոց, որի շուրջը կը խմբուեն միւս դպրոցները և այդտեղից կը գնան հրահանգները, միկնոյն ժամանակ կը հանդիսանայ իբր կապող օղակ: Այդ հանգամանքը մի կողմից, օտարազաւան տարրերի պրոպագանդը և մրցումը միւս կողմից աւելի ու աւելի կարեւոր վայր են դարձնում այդ քաղաքը:

Իր ուժերի ամենամեծ մասը նուիրելով գաւառի կրթական գործին, ամեն տարի նոյր զարկ և մղում տալով նրան, ընկերութիւնը չէր մոռանում միկնոյն ժամանակ հսկել Թաւրիզի իր հաստատութիւնների կանոնաւորութեան վրայ և աւելի բարեկաւելու աջն:

Այս ընկերութիւնը դրամական օժանդակութեան կողմից չունեցաւ այն փայլուն յաջողութիւնը, ինչ տեսանք «Թաւրիզի կանց. բար. ընկերութեան» վերաբերմամբ, բայց յամենայն դէպս թէ պարսկահայերը և թէ ռուսահայերը անտարբեր չգտնուեցին նաև ղէպի այս կազմակերպութիւնը: Գտնուեցին նոյնիսկ անճնաւորութիւններ, ինչպէս պ. պ. Ս. Տէր-Օհանեան, Ա. Մելիք-Ազարեան ևայլն, որոնք ուրախութեամբ յանձն առին մի-մի զպրոցի ամբողջ ծախքը: Այդպիսի անճնաւորութիւններ ունի և Թաւրիզի կանանց բարեգ. ընկերութիւնը, որոնց մասին յետոյ առիթ կ'ունենանք խօսելու: Դրանց անունը անշուշտ միշտ էլ անմոռաց կը մնայ, իսկ նրանց օգտակար քայլը օրինակելի ուրիշների համար:

Ճիշտ է Ատրպատականի կանանց բարեգ. ընկերութիւնը միշտ էլ ունեցել է կողմնակի նուէրներ և օժանդակութիւն, բայց նրա, ինչպէս և նրա քոյր ընկերութեան, մնայուն աղբիւրները եղել են անդամավճարները, հանդէս-ներկայացումները և մասամբ տոկոսներ, այն էլ վերջին տարիներս:

Վերջին 1900—1901 ուսումնական տարում ընկերութեան անդամ-անդամուհիների թիւը հասնում էր 91-ի, որից 3-ը պատուաւոր, 3-ը մշտնջենական, իսկ մնացած 85-ը հիմնական և տարեկան: Ինչպէս տեսնում էք այս ընկերութիւնը ունի չորս տեսակ անդամուհիներ: Պատուաւոր անդամներ համարւում են նրանք, որոնք ընկերութեանը մի նշանաւոր ծառայութիւն են անում և զրանց ընտրում է ընդհանուր ժողովը: Մշտնջենական՝ նրանք են, որոնք առնուազն կը վճարեն միանուազ 50 թուման (100 ռ.), հիմնական, որոնք վճարում են 5 թուման (10 ռ.), իսկ տարեկան, որոնք տարեկան կը վճարեն միայն 2 թ. (4 ռ.):

Հէնց միայն անդամավճարներից բաւականին գումար է գանձոււմ, մանաւանդ տարէցտարի աճում է նրանց թիւը: Ընկերութիւնը 1901—1902 ուսումնական տարւան համար ունէր զուտ դրամադուրս մի համեատ գումար՝ 38,649 զուան:

Ատրպատականի ընկերութիւնը անտարբեր հանգիսատեսի դերի մէջ չի եղել նաև խոշոր արկածների ժամանակ և մեր կեանքում փոքր ի շատէ աչքի զարնող երևոյթների հանդէպ: Նա իր համիստ նուէրով մասնակցել է մանկավարժ պ. Մ. Մանդինեանի 15-ամեայ յորելեանին, տուել է համեատ նպաստ Ախալքալաքի պաւստում երկրաշարժից փնասուածներին: Այստեղ այնքան նշանակութիւն չունի գումարի խոշորութիւնը, որքան զգալու և մասնակցելու տրամադրութիւնը:

Ատրպատականի ընկերութիւնը հաստատել և վաւերացրել է Հայոց Վեհափառ Կաթողիկոսը:

III

Այդ երկու նոյն նպատակներով և գործունէութեան գրեթէ նոյն եղանակով՝ ընկերութիւնների գոյութիւնը միևնոյն վայրում արդէն վաղուց աչք էր ծակում: Միութեան հարցը դեռ շատ առաջ արծարծուել էր և երկու ընկերութիւնների վարիչների լուրջ ուշադրութիւնը հրաւիրել՝ այդ կենսական խնդրի վրայ: Միութեան հարցը զբաղեցրել է նոյնիսկ մամուլի էջերը, այն էլ շատ անգամներ և փաստալից ապացոյցներով նշանակել նրա օգտակարութիւնը: Այդ հարցի վերաբերմամբ խօսուել է նաև լսարանական և այլ հրապարակական դասախօսութիւնների ժամանակ և միշտ էլ ընդհանուրի ցանկութիւնըն է եղել տեսնել ընկերութիւնները միացած: Այդ առթիւ ստացւում է յորդորներ նոյնիսկ Վեհափառ Կաթողիկոսի կողմից, խորհուրդ են տալիս նաև «ընկերութեան մօտիկ և բարեկամ մարդիկ»: Մի խօսքով ամենքի կողմից ցանկալի և օգտակար էր համարւում միութեան հարցը:

Արդէն խնդիրը հասունացել էր, դժուար էր զիմազրել այդ ընդհանուր ցանկութեան: Եւ վերջապէս 1901 թուին միութեան հարցը դրւում է գործնական հողի վրայ և սկսւում՝ երկու ընկերութիւնների մէջ բանակցութիւնները: Լինում են մի շարք նիստեր, ուր խօսւում է միութեան պայմանների մասին, նշանակւում են ընկերութեան անունը, մշակւում են նոր կանոնադրութիւն և մի քանի անհրաժեշտ հարցերի վերաբերմամբ խորհրդակցութիւն է լինում, և զրականապէս միութիւնը կատարուած համարւում:

«Նոր կանոնադրութիւնը նորից քննուելով ընդհանուր ժողովներում և վաւերացուելով երկու ընկերութիւնների ստորագրութեամբ, ուղարկւում է ս. էջմիածին և հաստատւում է վեհափառ Կաթողիկոսի կողմից»:

Ընկերութիւնների միութիւնը վերջականապէս կատարւած հրատարակուեց 1901 թուին, սեպտ. 10-ին. և 1901—1902 ուս. տարուայ համար ընարւում է «Միացեալ» ընկերութեան վարչութիւնը, իսկ ընկերութիւնը կոչւում է «Թաւրիզի հայունհաց բարեգործական միացեալ ընկերութիւն»:

Միացման ժամանակ «Ատրպատականի» ընկերութիւնը ունէր մաքուր դրամագլուխ 25,041 դոսան 75 կոպէկ: «Թաւրիզի» հայունհաց ընկերութեանը կանոնադրութեան 40 և 38 յօ-

դռնածները տրամադրում են նպաստել Լիլաւայի «Թամարեան» դպրոցին. ուստի նախ քան միանալը, ընկերութիւնը 30,000 դրոսան նուիրում է «Թամարեան» դպրոցին, այնպէս որ մնում է զուտ դրամապլուս 47,265 դրան 35 կոպէկ: Ուրեմն «միացեալ» ընկերութիւնը ունենում է 72,307 դրան. 10 կ. իհարկէ սրա մէջ չեն հաշուած ընկերութիւնների զանազան հաստատութիւններում ունեցած կարասիները, դասական պիտոյքները և այլն:

«Թաւրիզի հայունեաց բար. միացեալ ընկերութիւնը» 1901—1902 ուս. տարուայ սկզբին ունէր 13 հաստատութիւններ.—երկու մանկապարտէզներ (Լիլաւա և Ղալա), երեք արական սեռի ուսումնարաններ Ուրմիում, Գեարդարադում և Գէրէշքում, երկու արհեստանոցներ (Լիլաւա և Ղալա), հինգ ուսումնարաններ Դիզէթէքէում և Բաբաու գիւղում (երկսեռ), Աղաջանում և Իքի-Աղաջում (տղայոց) և Ռահվայում (օրիորդաց):

Եւ 1901—1902 ուս. տարում ընկերութիւնները միացած և թարմ ոյժով ձեռնարկում են իրանց հանրօգուտ գործունէութեանը: Շատ յոյսեր էին դրուած այդ ոյժի վրայ. շատ ակընկալութիւններ սպասւում այդ գործունէութիւնից: Բայց, սրտի ցաւով պիտի ասենք, «Միացեալ» ընկերութիւնը չարդարացրեց իր վրայ դրած յոյսերը, և չտուեց ցանկալին: Ընդհանրապէս շատ խղճուկ է «Միացեալ ընկերութեան» 1901—1902 ուսում. տարուայ գործունէութիւնը: Ընկերութիւնը միմիայն Ռահվա գիւղում բանում է նաև տղայոց դպրոց և մէկ էլ Բարանդուզի Թումաթար գիւղում տղայոց դպրոց, ուր ունենում են միայն 14 աշակերտ: Այնպէս որ ընկերութեան գոյութիւնն ունեցող հիմնարկութիւնների վրայ աւելանում է միայն այդ վերջին դպրոցը (Թումաթարի): Ընկերութիւնն էլ գտնում է, որ իր արածը շատ անբաւարար է և աշխատում է բացատրել նրանով, որ նրանք, որոնց վրայ յոյս էր դրել ընկերութիւնը, աշակցութիւն ցոյց չտուեցին. այդ պիտի վերադրել այն տնտեսական տագնապին, որ տեղի ունեցաւ այդ թուին:

Պէտք է մօտիկից ծանօթ լինել դրութեան, ցաւելով ասում է ընկերութիւնը, պէտք է ուսումնասիրած չլինել մեր նահանգի հայ ազգաբնակչութեան ընդհ. մեծամասնութեան տնտեսական և բարոյական աննախանձելի վիճակը, պէտք է կարգաւ մեր գաւառական ուսուցիչների տուած տեղեկաւորերը, որպէսզի հնարաւոր լինի նախ ըմբռնել կարիքի այն մեծ չափը, որ թագաւորում է Ատրպատականի բոլոր գաւառներում և երկրորդ՝ զգալու գործի, օգնելու և զոհողութիւնների այն մեծ պահանջը, որի համար պատասխանատու պիտի համարուի իւրաքանչիւր պարտաճանաչ մարդ: Իսկ ի՞նչ կարող է անել մի ընկերութիւն

գործի այդպիսի մեծ պահանջների առաջ, հիմնուելով միմիայն իր ուժերի վրայ: Հարկաւոր է արտաքին օգնութիւն, հարկաւոր է շատերի աջակցութիւնը» *)...

Ընկերութիւնը, կարծում ենք, տրոնջալու տեղիք չունի, քանի որ այդ հաստատութիւնների դեռ սկզբնական տարիներից հայ ժողովուրդը առանձին համակրանք է տածել և չի խնայել իր նիւթական օժանդակութիւնը, այն էլ առատ օգնութիւնը. դրան ապացոյց կարող են ծառայել ընկերութիւնների դրամագլուխների արագ և զգալի աճումը: Իսկ 1901—1902 թ. **) բացառիկ տարի էր և ունէր, ինչպէս նկատեցինք, իր խոր և տնտեսական պատճառները: Կանանց հայուհեաց բարեգ. ընկերութիւնները երբ գործ, շօշափելի և դրական գործ են ցոյց տուել, միշտ էլ գտել են խրախուսանք, բարոյական և դրամական աջակցութիւն. անշուշտ նոյնը կը լինի այժմ, ինչպէս այսուհետև:

Ն. Փրանգեան

*) Տես 1901—1902 ուս. տարուայ տեղեկագիրը:

**) Միաց. ընկ. վերջին տարուայ գործունէութեան մասին տեղեկութիւն տրուած էր արդէն «Մուրճ»-ի նախընթաց համարում, ուստի պ. յօդուածագրի գրութեան այդ մասը բաց է թողած: Ծ. խմբ.

ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐԳ ՄԱՄՈՒԼԸ

Մահմեդական հասարակութիւնը մօտէն ճանաչելու պէտքը:—«Թէրջիմա-
նի» և «Շարքի-Ռուսի» բանակները համիսլամութեան մասին տպուած
յօդուածին առիթով:—Եղիպտոսի մէջ լոյս տեսնող «Թիւրք» լրագրի հայ-
եացքը համիսլամութեան մասին:—«Շարքի-Ռուսի» Բագու փոխադրու-
թեան պատճառով թուրք լրագրի ուղղութեան մէջ տեղի ունեցած փոփո-
խութիւնը:—Աղայեզ «Շարքի-Ռուսի» խմբագիրը:—«Շարքի-Ռուսի» հին
շրջանը, մատուցած ծառայութիւնները և նոր «Շարքի-Ռուսը»:—Աղայեզի
«հաւատոյ-հանգանակը»:

Այն բոլորին, երբ ձեռք կ'առնեմ զրիչը Կովկասի մահմե-
դական կեանքին ու մտքին արտայայտութիւնները արձանա-
գրելու, բախտի ահաւոր ու անակնկալ խաղով մը, դարեր շա-
րունակ իրարու հետ խաղաղութեամբ ապրող հայ և մահմեդա-
կան հասարակութիւնները, Բագուի փողոցներուն մէջ եղբայ-
րասպան կռիւ մը կը մղեն, արեան հեղեղներ հոսեցնելով:

Մենք որ միշտ ջանացած էինք իսլամ իրականութեան
մէջ ընդգծուող զաղափարական հոսանքները, մխիթարական
փաստներն ու յուսատու երևոյթները մեր ընթերցողներուն
մատնանիչ ընելով՝ հայ և թուրք ժողովուրդներու միջև բարե-
կամական կապը աւելի ամրապնդել, սրտի անհուն մորմոքով
մը երկու դրացի ազգիւր իրարմէ աւելի հեռացած կը գտնենք:

Միևնոյն երկրին մէջ ապրող, միևնոյն շահերն ունեցող
երկու ցեղերուն համար ալ Բագուի դէպքերը զարհուրելի ա-
ղէտք մը կը կազմեն: Երկու հասարակութիւններու մէջ զործող
զիտակից անձերու անյետաձգելի պարտակութիւնն է աշխա-
տիլ լեցնելու այն վիճը, որ փոքեցին երկու կողմէն ինկած
հարիւրաւոր դիակները: Մերձեցումը երկու տարրերուն մէջ
կարելի պիտի ըլլայ հաստատել իրար աւելի լաւ ճանաչելով,
զերար աւելի մօտէն ուսումնասիրելով: Մենք՝ հաւատարիմ մեր
ուղղութեան, պիտի ջանանք առանց փաստերը խեղաթիւրելու,
ինչպէս և առանց որեւէ նկատումի զօհելու ճշմարտութիւնը—
որքան որ ալ դառն ըլլայ—անվերապահութեամբ ու անկեղծ-
օրէն շարունակել մեր զործը:

«Մուրճի» նախորդ համարով մեր ընթերցողներուն ներկայացուցինք այն շահագրգիռ յօդուածը, որ հրատարակած էր «Շարքի-Ռուս»՝ «Համխալամութեան» մասին: Այդ յօդուածը ինչպէս կարելի էր գուշակել, և ինչպէս կ'երևայ, մեծ աղմուկ է բարձրացուցեր մահմեդական շրջանակներուն մէջ: Ղրիմ հրատարակուող «Թէրջիման» լրագիրը, իր խմբագրին՝ Կասպիրինսկիի բերանով սաստիկ կը յարձակուի «Շարքի-Ռուսի» վրայ, նոյն յօդուածը հրատարակած ըլլալուն պատճառով:

Ինչպէս մեր ընթերցողները կը յիշեն, այդ յօդուածը գրուած էր այնպիսի ձևով մը, որ խկապէս դիւրին չէր ըսել թէ հեղինակը համխալամութեան գաղափարին համակիր էր, թէ հակակիր: Յօդուածին գոնէ արտաքինէն դատելով մարդ այն տպաւորութիւնը կ'ունենար, որ հեղինակը համխալամութեան համակիր չէ: Բայց մենք դարձեալ դիտել կուտանք, որ յօդուածը գրուած էր այնպիսի տոնով, որ համարձակ եզրակացութիւններ հանել դժուար էր և այդ պատճառով ալ մենք մեզի թոյլ չէինք տուած որևէ մեկնութիւն տալու: Մենք բաւականացած էինք յանձնելով զայն մեր ընթերցողներու սեփական դատողութեան:

Արդ, Իսմայիլ բէգ Կասպիրինսկին գոհ չէ Մէհմէտ աղայի այդ վարմունքէն: «Թէրջիմանի» խմբագիրը կը ցանկար որ «Շարքի-Ռուսը» այդ հարցը երբէք չբարձրացնէր «լրագրութեան մէջ», որովհետեւ «այդ հարցի յուղումով հաւանական է որ «Շարքի-Ռուսը» ուսն կառավարութեան կասկածները հրաւիրէ Ռուսաստանի մահմեդականներուն վրայ»:

«Շարքի-Ռուսը» այդ ամբաստանութիւնը անհիմն կը գտնէ և հետեւեալ ձևով կը փաստաբանէ: Համխալամութեան հարցը լրագրական վիճարանութեան նիւթ դարձնելով չէ որ ուսն կառավարութեան կասկածները մահմետականներու վրայ կը հրաւիրենք, այլ, իրեն հրապարակաբար, այդ յայտնի հարցի մասին լուծիւն պահպանելով: Պէտք է խոստովանել որ այդ հարցը թագուն չէ, և ուսն կառավարութիւնը իր գեապաններու, հիւպատոսներու, գործակալներու, լրատուներու և լրագիրներու միջոցով մեզմէ հազար անգամ լաւատեղեակ է անոր էութեան և ամեն բոլոր ստացած կերպարանափոխութիւններուն:

Մեր փոքրիկ «Թէրջիմանի» և նորածին «Շարքի-Ռուսի» համխալամութեան մասին լուծիւն պահելը կը բացազանչէ Մէհմէդ աղա, միթէ ամբողջ քաղաքական աշխարհին մտազբաղութիւն պատճառող այդ քաղաքական և կրօնական հարցի չզոյութեան ապացոյց կարելի է համարելը:

Ու «Շարքի-Ռուսը» ինքզինքը պաշտպանելու համար կը յիշէ Եգիպտոսի մէջ Երիտասարդ-Թիւրքերու ձեռքով հրատարակուող «Թիւրք» լրագիրը, որ միաժամանակ արծարծած էր միևնոյն հարցը: «Շարքի-Ռուս» այն միտքը կը յայտնէ, որ Երիտասարդ-Թիւրքերը այդ հարցը յուզելով կուզեն Եգիպտոսի այժմեան տէր անգլիացիներուն ցոյց տալ, որ իրենք ալ հակակիր են համիլամուլթեան գաղափարին և ուրիշ աղգութիւններու և կրօններու դէմ ոչ մէկ թշնամութիւն չունին: Երիտասարդ-Թիւրքերու միակ ցանկութիւնն է Թուրքիան բարեկարգուած տեսնել: Ու իր ըսածները հաստատելու համար Կովկասի թուրք թերթը առաջ կը բերէ Եգիպտոսի Երիտասարդ-Թիւրքերու օրգանէն հետեւեալ հատուածը:

«Համիլամուլթիւնը օտարոտի գաղափար մըն է, որ ոչ մէկ ժամանակ խօսքէն գործի չանցաւ: Մինչև անգամ ձեռնարկութեան սկզբնաւորութիւն չունեցաւ: Եւ այդ՝ այն պատճառով՝ որ համիլամուլթիւնը իրականութեան հետ չի համաձայնիր, որովհետեւ երեւելայական անկարելիութիւններու շարքին կը պատկանի: Որպէսզի կարող ըլլանք համիլամուլթեան գաղափարը իրագործել, պէտք է այն աստիճան դօրեղ ըլլանք, որ կարողանանք դիմագրել ամեն տեղ մահմետականներուն վրայ իշխող պետութիւններուն—անգլիացիներուն, ֆրանսացիներուն, ռուսներուն և այլն: Պէտք է մինչև անգամ այն աստիճան հզօր ըլլանք, որ՝ ինչպէս երբեմն, ի վիճակի գտնուինք, ոչ թէ այդ աղգերուն, այլ ամբողջ քրիստոնէութեան դէմ մաքառելու և զանոնք նուաճելու: Մինչդեռ մենք ոչ միայն անկարող ենք յարձակուելու անոնց վրայ և յաղթելու, այլ նոյնիսկ ճար ու դարման կը փնտռենք ինքզինքնիս պաշտպանելու և պահպանելու: Կը փնտռենք և չենք գտներ: Ռումելիի (Մակեդոնիա) մահմեդականները պաշտպանելու անկարող ենք ու Հնդկաստանի մահմեդականները նուաճելու կը ձգտինք: Սա բացարձակ յիմարութիւն է: Մեր սուլթաններուն, մեր վեզիրներուն, մեր գրագէտներուն մէջ ռոճնք են որ այդ անկարելի գաղափարին իրագործման ջանք են գործ դրեր. մենք չգիտենք, չենք տեսներ: Մենք որ անկարող ենք պուլկարները, յոյները, թուրքերը իրարու հետ հաշտ ապրեցնելով ֆրանսացիներուն, գերմանացիներուն, իտալացիներուն պէս պետութիւն մը կազմել՝ ի՞նչպէս պիտի կարողանանք այժմ Ասիայի, Ափրիկէի, Եւրոպայի մէջ ցրուած մահմեդականները միացնել և իսլամական պետութիւն մը ստեղծել: Ասիկա գեղեցիկ, շքեղ, բայց անմիտ ցնորք մըն է: Դպրոցներու մէջ կրօնական դասերն աւելցնելով, Դամասկոսէն՝ մինչև Մէքքէ երկաթուղի մը կառուցանելով այդ մեծ ու անկա-

րելի գաղափարը իրագործելէն հետո Ենք: Երբ ուսու
նաւարութիւնը կ'աշխատի սլաւօնական տարրերը միացնել, ձու-
լել, երբ գերմանական պետութիւնը կը ջանայ գերման ժողո-
վուրդները մէկ դրօշակի տակ համախմբել—այս հասկանալի և
գովելի ճիգ մըն է, որովհետեւ իրագործելի է, որովհետեւ բոլոր
սլաւօններու և գերմաններու մէջ բացի կրօնական մերձաւո-
րութիւնէն կայ և բարբերու, մտքերու, հայրենիքի և կլիմայի
մերձաւորութիւն: Մանաւանդ անոնց մեծամասնութեան մէջ
գոյութիւն ունին լեզուի միութեան պէս այլ և այլեական կա-
պեր: Մինչդեռ աշխարհի մէջ զանազակ բոլոր մահմեդականնե-
րը՝ բացի կրօնքէն, ուրիշ ոչ մէկ միութեան կապ չունին: Գեր-
մանացիները ընդհանրապէս Եւրոպայի միջին մասը կը զբաւեն,
իսկ սլաւօնները արևելեան մասի մէկ ծայրէն միւսը: Եւստոյնք
կրնան իշխանութեան մը, վարչութեան մը տակ մտնել: Սա-
կայն մէկզի թողնելով իսլամներու միութեան ուրիշ գոտարու-
թիւնները, անոնք իրարմէ բաժանուած են աշխարհադրական
ահադին հեռաւորութիւններով, որը ինքն ըստ ինքեան խոշոր
արգելք մը կը հանդիսանայ համիսլամութեան մտքին»:

«Շարքի-Ռուս»-ը այս հատուածը մէջ բերելէ յետոյ կ'ա-
ւելցնէ. «Թիւրք լրագիրը օսմանցիներու տեսակէտով այս-
պէս կը դատէ, քսան և հինգ տարիէ ի վեր՝ Ելզըզի պալատին
համիսլամութեան անիրագործելի գաղափարին համար ի գուր
դործ դրած ջանքերը. իսկ «Շարքի-Ռուս»-ը՝ որ ուսու պետու-
թեան հպատակ եղող մահմեդականներուն լրագիրն է, տեսէք
թէ ի՞նչ կերպով կը ջրէ համիսլամութեան գաղափարը»:

Ու Մէհէդ աղա՝ առաջ կը բերէ «Շարքի-Ռուս»-ի № 162-ի
մէջ տպուած՝ և մեր ընթերցողներուն ծանօթ յօդուածին վեր-
ջին մասը, ուր Շահթախթինսկի կը յայտարարէր: Համիսլամու-
թիւնը քրիստոնեայ պետութիւններու հպատակ մահմեդական-
ներուն բարոյական այն փաստը կը պատճառէ, որ քրիստոնեայ
պետութիւնները իսլամական կրօնքին թշնամին ցոյց տալով՝
մահմեդականները կը մզէ ծուռ աչքով նայել եւրոպական քա-
ղաքակրթութեան վրայ և չօգտուել անկէ: Համիսլամականնե-
րու մեծագոյն փաստն այն է, որ անոնք կրօնքը բաղադրական նը-
կատումներու գործիք կը շինեն: Սուլթանը իր խալիֆէութեան
տիադոսէն օգտուելով կ'ուզէ օտար երկիրներու մահմեդական-
ները իրեն օթանդակներ դարձնել: Բայց Հնդկաստանի մահմե-
դականին համար օսմանեան կայսրութեան յարատեւութենէն
կամ անկումէն ոչ շահ կայ, ոչ փաստ: Աստուած մի՛ արասցէ, հ-
թէ օսմանեան կայսրութիւնը աշխարհէն վերցուի, Մէքքէի և
Մէդինէի պաշտպանութիւնը Եգիպտոսի խղիվին կը յանձնուի...

Մէկ խօսքով եթէ համխալամութեան գաղափարը ջնջուի, իսլամութիւնը աւելի կօզտուի քան կը փաստուի:

Մէհմէդ աղա Շահթախթինսկի անս այս մտքերը յայտնած էր իր յօդուածին վերջին մասին մէջ: Այդ կտորը անփոփոխ առաջ բերելէ յետոյ, խօսքը «Թէրջիմանին» ուղղելով յետագայ խորհրդածութիւնները կընէ:

«Մի զարմանալ եթէ «Շարքի-Ռուս» և «Թիւրք» լրագիրները այս խնդրին մէջ համակարծիք են: «Թիւրք»-ի հրատարակիչներն և «Շարքի-Ռուսի» խմբագրին պէս եւրոպական գիտութեամբ և փիլիսոփայութեամբ իրենց ուղեղը զարգարած ըլլալով՝ քաղաքական աշխարհի մէջ իրականութիւնը երևակայութենէն զանազանելու չափ խելք ունին: Եւ որովհետև որքան ուշիմ, նոյնքան ճշմարտասէր են, ճշմարտութիւնը՝ իրենց ազգին փրկութեան համար յայտարարելէ ևս չեն կենար: Ծճմարտութիւնը ամբոխին անախորժ պիտի երևայ եղեր և լրագիրքիչ պիտի ծախուի եղեր, թող այդպէս ըլլայ. ի՞նչ փոյթ: Նիւթական շահու համար ազնիւ մարդը ժողովուրդը չի մոլորեցըներ, անոր սխալ ճամբայ ցոյց չի տար:

«Թէրջիմանը» իր 78 համարին մէջ մեզ զրպարտելով կըսէ թէ՛ համխալամութիւնը Ռուսաստանի շիա և սիւննի ժողովուրդները իրարու սօտեցուցած էր. «Շարքի-Ռուսը» այս մերձեցումէն զոհ չէ, որովհետև այս մերձեցումը, անոր խռովարար երևակայութեան համեմատ, իբրև թէ ռուս տէրութեան փաստակար է եղեր և այդ պատճառով ալ «Շարքի-Ռուսը» խիստ կերպով քննադատեր է այդ մերձեցումը, որպէսզի ռուս կառավարութիւնը մահմեդականներուն վրայ կասկածանքով նայի: Եւ որովհետև մահմեդականները ռուս կառավարութեան հաւատարիմ են, իբրև թէ անոնք վշտացեր են «Շարքի-Ռուսի» իրենց վերադրած նենգամտութեան համար:

Եւ «Շարքի-Ռուս» կընդգծէ իր հակառակորդին՝ «Թէրջիմանի» հետեւեալ հատուածը:

«Շարքի-Ռուսը» իր № 172-ի մէջ բողոք կը յայտնէ նոյնպէս մահմեդականներուն դէմ: Հին ժամանակներէ ի վեր իրարու թշնամի եղող շիաներն ու սիւննիները հիմա իրար կը սիրեն և միմեանց ննջեցեալներու յուզարկաւորութեան ներկայ կըլլան եղեր (և իբրև թէ այս երևոյթը ռուս պետութեան անհանդուրժելի համխալամութեան մտքի մէկ արդիւնքն է եղեր կը նկատէ «Շարքի-Ռուսը»): Մենք այս լրագրին ինչ պատասխանենք. մենք հանդիպեր ենք շատ յուզարկաւորութիւններու, ուր մեռնող Ահմէդի մը կամ Մէհմէդի մը մարմինը պատուելու համար, ռուսներ և հայեր ալ գտնուեր են: Եւ հակառակը:

«Շարքի-Ռուսի» տրամաբանութեան համեմատ, այս անկրօնութիւնը, այս անտոհմասիրութիւնը ապացոյց է կոսմոպոլիտիզմի, մինչդեռ այդ բոլորը քաղաքակրթութեան և քաղաքավարութեան մէկ նշանն է, ուստական իշխանութեան տակ ապրող ժողովուրդներու համահարեհասիրութեան մէկ արդիւնքն է: Այս բոլորը «Շարքի-Ռուսը» չգիտէ: Գիտէ, բայց ժողովրդի կրթութեան մակարդակը բարձրացնելու փոխարէն, կաշկատի նմանիլ այն հովիւին, որ իր հօտը խրտնեցնելով լեռնէն վար կը գահավիժէ և համիսլամութեան գաղափարով մահմեդականները ուսուցանողութեան աչքին կասկածելի կը դարձնէ: Աստուած վկայ չգիտենք թէ ի՞նչ է շարքի-ուսականներուն նպատակը»:

Եւ Մէհմէդ աղա այս հատուածին կը հակադրէ իր յօդուածի այն մասը, ուր կը խօսէր շիաներու և սիւննիներու յարաբերութեան մասին և որը ծանօթ է արդէն մեր ընթերցողներուն: «Շարքի-Ռուսն» իր յօդուածի այդ կտորին մէջ պարզապէս կը հաստատէր, թէ մահմեդական կրօնի երկու գլխաւոր բաժանմունքներուն հետևողները իրենց նախկին հակառակութիւնն ու ատելութիւնը մոռցած են: Այժմ շիաներն ու սիւննիները իրարու հետ շատ սիրալիւր յարաբերութեան մէջ են:

Ու Շահթախթինսկի իր երկու համարի մէջ ամփոփած երկար պատասխանը կը վերջացնէ յայտարարելով, որ ինքը շիաներու և սիւննիներու մերձեցման ջերմ փափագող մըն է:

«Թէրջիման» յայտնած ըլլալով որ «Շարքի-Ռուսի» խմբագիրը շիա մըն է և հետեւաբար սիւննիները պէտք չէ անոր լըրագիրը կարդան, Մէհմէդ աղա կը բացագանչէ:

«Այո, Կասբիրինսկի ընդ, ծառանիդ շիա եմ որովհետև ծնողքս ալ շիա են եղեր և ես իմ ծնողներուս կրօնին մէջ հաստատուելուս: Սակայն իմ շիաութիւնս այն տեսակ շիաութիւն մըն է, որ զիս թշնամի չի դարձներ սիւննիներուն: Սիւննիներուն և շիաներուն կրօնական դաւանանքին մէջ գտնուող տարբերութիւնն այնքան քիչ է, որ օտար գիտնականներն իսկ կը հաստատեն այդ: Իմ շիաութիւնս այնպիսի շիաութիւն մըն է, որ ոչ միայն սիւննիներուն այլ և բոլոր էհլի-քիթաբներուն *) հետ թշնամանալ թոյլ չի տար, և ընդհակառակը կը մղէ սիրելի զանոնք: Իմ շիաութիւնս այնպիսի շիաութիւն մըն է, որ

*) Էհլի-քիթաբ—դրբի տէր—այսինքն այն բոլոր ժողովուրդները, որոնք լեզու և ս. գիրք ունին.

զիս կը դրդէ միևնոյն մարմնի անդամները դաւանել հաւասարապէս թէ հեթանոսը, թէ վայրենին և թէ քաղաքակրթութեամբ, մէկ խօսքով ամբողջ մարդկային ազգը: Ես մարդկանց՝ և՛ կրօնական և՛ փիլիսոփայական կարծիքներու մէջ սխալներ կը տեսնեմ, բայց այդ բանը զիս երբէք չարգիլելը—համարձակ և կատարեալ խղճով կարող եմ հաստատել—որ զանոնք իմ եղբայրներս ընդունեմ...»

Ու այս միևնոյն լարին վրայ Մէհմէդ աղա կը շարունակէ երգել ներողամտութեան, կարծիքներու ազատութեան, մարդասիրութեան գեղեցիկ, բայց առաձգական սկզբունքները...

*
* *

Մեր ընթերցողները հեռագրներէն տեղեկացան արգէն, որ «Շարքի-Ռուս»-ի հրատարակութիւնը փոխադրուած է Բագու, կառավարական թղթաւթեամբ: Թուրք լրագիրը փոխադրուելով թուրք աւելի խիտ ազգաբնակչութեան մը, իսլամական աւելի բաղմամարդ կեդրոնի մը մէջ, թէ լրագիրը և թէ ժողովուրդը մեծապէս պիտի շահին: Բայց «Շարքի-Ռուս»-ը իր հրատարակութիւնը փոխադրելով Բագու, պարզ տեղափոխութիւն մը չկրեց, այլ կատարեալ յեղափոխութիւն մը, իր խմբագրական կազմին ու իր ուղղութեան մէջ:

Յայտնի է որ Շահթաթիինսկին՝ ժամանակ մը թունդ կը ուրեւնէր մղեց Աղայեվի դէմ: «Շարքի-Ռուս»-ի խմբագրին համար Աղայեվը ոչ սկզբունք ունէր, ոչ բարոյական: Յետոյ, յանկարծ՝ մոգական գաւազանի հարուածով մը, նոյն Աղայեվը դարձաւ օրինակելի մարդ մը, ամբողջ մահմեդականներուն համար: Դոնէ այդպէս կը հաստատէր «Շարքի-Ռուս»-ի մէջ տպուած յօդուած մը: Ու Մէհմէդ աղան և Աղայեվը իրարու հետ համբուրուեցան: Այդ՝ պարզ հաշտութեան մը նախաբանը չէր, այլ կատարեալ համերաշխութեան մը, գործակցութեան մը ըսկիզբը: Այդ յօդուածին վրայ Աղայեվը սկսաւ կանոնաւորապէս աշխատակցիլ «Շարքի-Ռուս»-ին: Մենք՝ հեռուէն դիտողներս, բնականաբար զարմացանք այդ ապշեցուցիչ volte-face-էն: Ի հարկէ մենք կ'ուզէինք, որ «Շարքի-Ռուս»-ը իր առաջին քայլերուն իսկ համերաշխութեամբ գործէր Աղայեվի հետ, որը, յամենայն դէպս, թուրք ինտելիգենցիայի զրօշակակիրներէն մէկն է: Եւ եթէ համերաշխութեամբ չգործէր ալ, գոնէ Աղայեվը ցելի մէջ չքաշքշէր, գետնի հաւասար չընէր: Բայց Մէհմէդ աղան, միևնոյն ազգի ներկայացուցիչներէն մէկն ըլլալով և ի հարկէ մեզմէ աւելի լաւ ճանչնալով իր հայրենակիցը՝ իր ըրածը գիտէր: Մենք այդ բանի մէջ խառնուելու ոչ իրաւունքը ունէինք, ոչ ալ ձեռնհասութիւնը: Մեզի պարզ հանդիսատեսի

գեր մը վիճակուած էր ու տոտով ալ մենք գոհացանք: Բայց, յանկարծ, Շահթախթինսկին, ինչպէս ըսինք, հախկին հրէշին մէջ հրեշտակ մը տեսաւ: Սա՛ տրամաբանութեան, ատողջ դատողութեան զէմ զեղծում մընէր ու մենք այդ անհետեոյականութիւնը ժամանակին մատնանիշ ըրինք:

Արդ, Շահթախթինսկին ոչ միայն Աղայեվը իր աշխատակիցն ըրաւ, այլ և իր ընկերակիցը, գործակիցը, շահակիցը: «Շարքի-Ռուս»-ի խմբագիրը գնաց Պետերբուրգ և իր թերթը Բապու փոխադրելու արտօնութեան հետ թոյլաւութիւն ձեռք բերաւ Աղայեվը լրագրին երկրորդ խմբագիր նշանակելու: Եւ այսպէս, այժմ, «Շարքի-Ռուս»-ը ունի երկու տէր՝ Մէհմէդ տղան և Աղայեվը, որը այդ արտօնութեան համար, բնական է, վճարած է գումար մը, բաւական կարևոր գումար մը, թուրք թերթի հիմնադրին: Գուցէ այստեղ է պահուած՝ Շահթախթինսկին՝ Աղայեվի հետ հաշտուելու գաղտնիքը:

Բայց «Շարքի-Ռուս»-ը՝ Աղայեվին ալ ձեռքն անցնելով՝ արդեօք իր ուղղութեան մէջ փոփոխութիւն մը չկրնայ: Ահա հետաքրքիր հարցը:

Փաստերը մեզի ցոյց կուտան և ճշմարտութիւնն ալ մեր վրայ պարտք կը դնէ ըսելու, որ՝ «այո՛»: Եւ այդ փոփոխութիւնը աւելի յետադիմական, աւելի պահպանողական է, քան ազատական:

Մինչև հիմա «Թուրք մամուլը» վերնագրին տակ զրած մեր յօդուածներէն մեր ընթերցողները նկատեցին, որ մենք կատարեալ անկողմնապահութեամբ Մէհմէդ աղայի ուղիով քայլերը ծափահարեցինք, իսկ խոտորումները նշաւակեցինք: Մենք մեր դատողութիւններուն և գնահատումներուն մէջ նկատի ունէինք միմիայն արգարութիւնն ու ճշմարտութիւնը: Մեր վերաբերմունքը գէպի «Շարքի-Ռուս»-ը առ հատարակ, աւելի սիրալիր ու համակրակից եղած էր: Եւ այդ բանը, ինքը՝ «Շարքի-Ռուս»-ը նկատած էր, ու իր՝ էջերուն մէջ նոյնիսկ արձանագրած:

Շահթախթինսկին մեզի երեցած էր, եթէ ոչ անսայթար, խիստ սկզբունքներով, հրապարակախօսական առաջադէմ, արմատական ուղղութեամբ գործող մարդ մը, գոնէ աշխարհի մէկը, որ բարի կամեցողութեամբ օժտուած է իր տգէտ, խաւարի մէջ խաբխափող հայրենակիցներուն օգտակար ըլլալու, որքան կը ներեն մահմեդական աշխարհի մէջ տիրող նախապաշարումները, կանխակալ կարծիքները: Այսպէս «Շարքի-Ռուս»-ը յաճախ խօսեցաւ ազգերու համերաշխութեան մասին, մըտքալեց, որքան պայմաններն ու հանգամանքները թոյլ կու տային ժողովրդի առաջնորդները—հոգևորականները՝ իրենց անտարբերութեան և տգիտութեան համար, արծարծեց մահ-

մեզական հոգևոր բարձրագոյն դպրոց մը ստեղծելու միտքը, բարեգործական ընկերութիւն մը ստեղծելու գաղափարը, ծաղրեց թուրք հասարակութեան թերութիւնները և այս կարգի ուրիշ, օգտակար պայքարներու շարքին մէջ մեծ տեղ մը տուաւ թուրք կանանց ազատագրութեան հրատապ ու անյետաձգ-գելի հարցին, որու մասին մենք տեղեկութիւններ տուած էինք «Մուրճ»-ի նախորդ համարով:

Ասոնք արհամարհելի ծառայութիւններ չէին թուրք հասարակութեան համար: Բայց այս վերջինը այդ բոլորը շատ աժան գնահատեց և ստիպեց Մէմէդ աղան դիմելու Աղայեվի գործակցութեան:

«Շարքի-Ռուսը» իր այդ քայլը ծանուցանելու համար թուրք ժողովրդին, անընդհատ տպեց հետեւեալ «խմբագրական ազգը». «Բազումարնակ մեր հռչակաւոր գրագէտն ու հրապարակախօսը՝ Ահմէդ բէդ Աղայեվ՝ «Շարքի-Ռուսին» ընկերակից պիտի ըլլայ և խմբագրութեան գործը իր վրայ պիտի տանի. այսուհետեւ այս լրագրին ի՞նչ կերպով մասնակից ու ի՞նչ ուղղութեամբ գործակից ըլլալու մասին յայտարարած է մեր լրագրին № 256-ի մէջ»: Ու այս խօսքերէն յետոյ հոյն ազգը կը յայտնէր թէ Բալուրի մէջ «Շարքի-Ռուսի» համար գրասենեակ մը բացուած է, ուր լրագրի աշխատակիցներն ու բաժանորդները կարող են թէ անձամբ և թէ պոստով իրենց յօդուածներն ու փողը յանձնել կամ ուղարկել:

Իսկ Աղայեվին՝ «Շարքի-Ռուսի» № 256-ի մէջ տպուած յօդուածը, որ «Նէ հօլլա իշ կէօրէճէիք»—«Ի՞նչ ճամբով գործ պիտի տեսներ»—վերնագիրը կը գրէ, ամբողջ «հաւատոյ-հան-գոնակ» մըն է: Այդ յօդուածը իր գլխաւոր գծերուն մէջ պիտի ներկայացնենք մեր ընթերցողներուն, «Շարքի-Ռուսի» նոր գիմագծութիւնը ծանօթացնելու համար: Ինչպէս պիտի տեսնէք, Աղայեվ Մէմէդ աղայի հետեւած ուղղութեան վրայ նոր բան չաւելացներ, ընդհակառակը կը կրճատէ: Աղայեվ գլխաւորապէս կը ծանրանայ թուրք կանանց հարցի մասին, որը Մէմէդ աղա յուզելու քաջութիւնն ունեցած էր և որու վրայ Աղայեվ կը փութայ խոշոր խաչ մը դնելու: Բայց խօսքը տանք Աղայեվին:

«Շարքի-Ռուսի» հետ մեր ընկերակցութիւնը, կը գրէ Աղայեվ, շատերուն զարմանք է պատճառել. մինչև անգամ այլ և այլ անձերէ ծաղրական նամակներ կը ստանանք: «Երկու տարի առաջ ի՞նչ կը գրէիք և այսօր ի՞նչ կը գրէք: Ի՞նչ պատահեցաւ որ ձեր նախկին թշնամութիւնը այժմեան բարեկամութեան փոխուեցաւ»: Այս տեսակ հարցումներ շարունակ

կողմը ին մեզի և մենք մեզ սրարտաւոր կը դպանք այս մասին պէտք եղած բացատրութիւնները տալու:

«Մարդիկը իրարմէ զատող, իրարու թշնամի ընողը կըռնական գաղափարներու և սկզբունքներու տարբերութիւնն է: Անոնք զանազան ուղղութեամբ առաջնալով—ուղղութիւններ, որոնց լաւութեան համոզուած են—երբեմն իրարու կը հանդիպին և ընդհարուելով կը ձմլուին: Բայց ժամանակ յետոյ, փորձառութիւն ձեռք բերելով՝ մէկ կողմը իր սխալը, իսկ միւս կողմն ալ իր խիստ վերաբերմունքն ու զայրոյթը կը խոստովանին և հաշտութիւն կը կնքեն»:

Այս առաջին մասին մէջ Աղայեվ կը ջանայ մեր քիչ վերը ահնարկած անհետեւողականութեան պատճառները բացատրելու: Այդ զանազան ուղղութեան պատկանողները, ի հարկէ, Շահ-թախթինսկին և ինքը՝ Աղայեֆը են: Մէկ կողմը «Իր սխալը կը խոստովանի»-ն՝ Մէհմէդ աղային նետուած քար մըն է, իսկ «միւս կողմն ալ իր խիստ վերաբերմունքն ու զայրոյթը»՝ իր մասին: Այսպէս Աղայեվ կը հռչակէ իր կատարեալ յաղթանակը: Բայց կէտ մը մեզի բոլորովին անհասկանալի է. մարդիկ երբ ուղղութեամբ, գաղափարներով հակառակ են, միթէ կրնան իրարու զործակցիլ: Կարո՞ղ էք երեւակայել, որ Սուլդրի մը կամ Դլադըստըն մը, Ռիբօ մը կամ Պրեսանսէ մը ձեռք ձեռքի տուած զործեն: Եւ կամ երեւակայեցէ՛ք «Моск. Вѣд.»-ին և «Русск. Вѣд.» զաշնակցած: Սա անհետեւութիւն մը պիտի ըլլար: Գոնէ այն երկիրներուն մէջ, ուր ուղղութիւն և գաղափար զատարկ խօսքեր չեն:

«Նախ և առաջ մահմեդականներու պարծանքը կազմող համեստութիւնը, թէ տղամարդկանց և թէ կանանց, «Շարքի-Ռուսի» մշտական քարոզութիւններէն մէկը պիտի կազմէ այսուհետեւ: Ամօթխածութեան վերաբերեալ ազմկայոյզ հարցեր ասկէ վերջ, «Շարքի-Ռուսի» էջերը չին կարող զրաւել: Այնուհանդերձ մեր նպատակը տգիտութիւնն ու խաւարը քաջալերել չէ: Ընդհակառակը, «Շարքի-Ռուս» քաղաքակրթութեան սրբազան շաւիղէն դուրս պիտի չելլէ: Մահմեդականներու գիտական, արհեստական և ուսումնական յառաջադիմութիւնները միշտ պիտի քաջալերէ: Այս գերագոյն նպատակին հասնելու համար երկու կէտ աչքի առաջ պիտի ունենանք. մարդ՝ ինչպէս արարական իմաստալից առածը կըսէ, պէտք է ամեն բանի, մանաւանդ ուրիշներէ փոխ առած գաղափարներու, սովորութիւններու, բարքերու և բարոյականի մէջ, խեղացիութեամբ և զգուշութեամբ վարուի: Կապկուութիւնը ամեն պարագայի մէջ ֆուսսակար է: Մենք քաղաքակրթութենէն և յառաջադիմութե-

նէն այն բաները միայն վերցնենք, որոնք մարդկային դատողութեամբ և իրենց էութեամբ լաւ են: Օրինակի համար, կնոջ համեստութեան խնդրի մէջ, պէտք է որ մենք շարեաթի պատուէրները նկատի ունենանք և քաղաքակրթութեամբ ժողովուրդներու փորձառութենէն դասեր վերցնենք: Ահա այն երկրորդ կէտը, ուրկէ չպիտի շեղի «Շարքի-Ռուս»-ը: Քաղաքակրթութեան բարձր աստիճանի վրայ կեցող ժողովուրդները, կնոջ համեստութեան խնդիրներու մէջ իրենց գործած սխալներն այսօր կը խոստովանին: Պարիզի, Լոնդոնի, Բերլինի, Վիեննայի և Հռոմի փողոցները տեսնողներ գիտեն, թէ եւրոպացիներու այսօրուան անդամանելի ցաւերէն մէկն ու գլխաւորը՝ ռոն է: Ահա պէտք է որ այս փորձառութիւնները մեզի համար դաս ըլլան: Քաղաքակրթութենէն վերցնենք օգտակարը: Պէտք չէ որ քաղաքակրթութիւնը, ուսումը, գիտութիւնը գիմակ մը ըլլայ անպարկեշտութեան և անպատուութեան:

«Այո՛ քաղաքակրթութեւ, ուսում, գիտութիւն և արհեստ ստանալը մեզի անհրաժեշտ է, գոցէ ամեն բանէ աւելի անհրաժեշտ: Սակայն մեր ինտելիգենտները ուսում ձեռք բերելէ յետոյ չպէտք է ամօթխածութիւնն ու պարկեշտութիւնը մոռանան: Այս տեսակ ընթացքներ, ոչ քաղաքակրթութեան և ոչ ալ մահմեդականութեան վայել են: Ասկէ յետոյ «Շարքի-Ռուս»-ի գլխաւոր գործը պիտի ըլլայ այս կարգի զգուսլի և գարշիլի ընթացքներու առաջըն առնել: Պիտի աշխատի որ կերպով մը քաղաքակրթութիւնն ու իսլամութիւնը միանան, ձուլուին իրար և մարդը-ուսումնական դառնալով հանդերձ-անասուն չի մնայ...»:

Աղայեվ իր այս հատուածին մէջ դարձեալ քայլի կու տայ Շահթախթինսկիին, որ «թուրք կանայք բոց թէ գոց երեսով պատեղու են»-ի հարցը յուզեց և պաշտպանեց այն միտքը, թէ մահմեդական կիներն ևս պէտք է որ իրենց միւս քոյրերուն ազատութիւնը վայելեն: Այս հարցի արծարծումը մահմեդականներու մեծ մասին դուր չեկաւ. Մէհմէդ աղան բաղխեցաւ իսլամական նախապաշարումներու ժայռին: «Շարքի-Ռուս»-ի խմբագրին ձեռնարկած արշաւանքը շատ համակրելի էր սակայն: Թուրք կանանց յարաբերական ազատագրութեամբն է որ կարելի պիտի ըլլար քիչ մը լոյս, քիչ մը թարմութիւն մտցնել մահմեդական ընտանիքներու լճացած, մռայլ կեանքին մէջ: Կրթութեամբ, հարեմական նախապաշարումները թօթափած մայրերն է որ պիտի պատրաստէին ապագայ գիտակից սերունդը: Մահմեդական երեխաները, առհասարակ ընտանեկան դաստիարակութենէ բացարձակապէս զուրկ, իրենց

մօր կաթին հետ պիտի ծծէին կամաց կամաց առաջագէտ կեանքի լուսաւոր, մարդկայնական ձգտումներու սերմերը:

Բայց Աղայեւը կը յայտարարէ. «ամօթխածութեան վերաբերեալ աղմկայոյզ հարցեր, ասկէ հտըը «Շարքի-Ռուս»-ի էջերը չեն կարող գրաւել»: Թուրք հրապարակախօսին և թուրք տղամարդկանց զիտնալու բանն է իրենց կիները բաց կամ գոց երեսով պտտցընելը: Սակայն Աղայեւը չարաչար կը սխալի, երբ կը կարծէ թէ Պարիզի, Լոնդոնի, Բերլինի, Վիեննայի և Հռոմի մայրերուն վրայ իրենց մարմինը ծախու հանող կիներու ցաւին արմատը պէտք է փնտռել անոնց փակ կամ բաց երեսով ման գալուն և կամ անոց բարոյական հասկացողութեան մէջ: Ասիկա չափազանց պարզամիտ դատողութիւն մընէ. դատողութիւնը՝ այն մարդկանց, որոնք անկարող են հասարակական, սոցիալական երևոյթներու խորն իջնել: Աղայեւը Եւրոպայի երես տուած մարդ է, իր ուսումը Պարիզ առած մարդ՝ և պէտք է պիտնայ, որ այդ «անբարոյական» կոչուած կանայք՝ եթէ իրենց գգուանքները փողով կը ծախեն, այդտեղ մեղաւորը ոչ թէ իրենց վայելած ազատութիւնն է, իրենց բարոյական ըմբռնումներու խեղաթիւրումը, այլ իրենցմէ վեր, իրենցմէ բարձր, անխուսափելի ու անողոր իրողութեան մը հրամայական պահանջը—կեանքի կոխը: Ահմէդ բէգ Աղայեւը կարող է միանգամայն ապահով ըլլալ, որ ոչ մէկ կին, նոյնիսկ բարոյական ամենաբուրժ հասկացողութեան տէր կինը, իր սէրը չափի ուղէր շուայել իր դիմացն ելլող առաջին մարդուն: Եւ եթէ այն կինը՝ որ հակառակ իր զղուանքներուն և իր ատելութիւններուն՝ զգուանքներ ու հաճոյքներ մատակարարողի տաժանելի դերը կը ստանձնէ, պէտք է ենթադրել, որ ան աշխարհի ամենադժբախտ տրարածն է:

Բայց կարիք չկայ Եւրոպայի մայրաքաղաքները ման գալու: Նոյն տխուր երևոյթին կարելի է հանդիստես ըլլալ և Թէհրանի փողոցներուն մէջ, ուր սակայն մահմեդական կինը երեսը փակ կը շրջի: Միթէ ծածկուած պտըտելը տնտեսական ճնշող պայմաններու զոհ դարձած իսլամուսլին կը փրկէ իր Եւրոպացի բոյրերու դժբախտ ճակատագրականութենէն:

Այնպէս որ Աղայեւ, իբրեւ ժողովրդի առաջնորդ, իբրեւ հասարակական կարծիքներու ղեկավար, ցանկալի էր—և այդ իր պարտականութիւնն է—որ պէտք է աւելի շրջահայեաց ըլլար իրերն ու երևոյթները դատելու, վճիռներ արձակելու մէջ:

«Շարքի-Ռուսի» երկրորդ նպատակակէտը ուսս պետութեան անկեղծօրէն հպատակուող մահմեդականներուն ծառայութիւն մատուցանելը պիտի ըլլայ: Ամեն տեղ, թէ աղքատի,

թէ հարուստի, թէ ազնուականի և թէ ռամիկի, թէ շիա և թէ սիւննիի վրայ հաւատար աչքով նայելով, անոնց իրաւունքները պիտի պաշտպանենք: Անցեալին մէջ մահմեդականները ինչպէս են եղեր, ներկայիս մէջ ինչպէս են, ապագային ինչպէս պիտի ըլլան—այս բոլոր հարցերը մեր կարողութեան չափով պիտի լուսաբանենք: Եւ այս ուղղութեամբ՝ իսլամական պատմութեան, թուրք, արաբ, պարսիկ գրականութեան մասին զանազան ուսումնասիրութիւններ պիտի ներկայացնենք: Ասով հանդերձ, անոնց լաւ կամ վատ կողմերը պիտի ցոյց տանք: Որովհետեւ ամեն ժողովուրդի համար բարոյական հարցը ամենակարեւոր հարցն է:

«Աշխարհի վրայ միայն այն ցեղերը յառաջդիմելով բարեբախտութեան հասեր են, որոնք հաւատարմութեան, զուարճութեան, համերաշխութեան, ուղղամտութեան ճշմարտութեան սիրահար են եղեր... Ամեն մէկ խորհող մահմեդականին յայտնի է, որ մեր բարոյականը ներկայումս ռրքան ընկած է և մեր սովորութիւնները ռրքան ապականուած են. և իսկապէս, չկայ ժողովուրդ մը, ազգ մը որ բարոյականը ազնուացնելու կարիք զգայ այնքան, որքան մենք:

«Ահա «Շարքի-Ռուսը» ամենէն աւելի պիտի աշխատի մահմեդականներու այդ բարոյական ազնուացումին: Անհատականութիւններով և հասարակական երևոյթներու հետ կապ չունեցող հարցերով չպիտի զբաղուինք, այլ պիտի ջանանք ընդհանուր հասարակական թերութիւնները մատնանիշ ընել...»

«Մեր երրորդ նպատակէտը պիտի ըլլայ մահմեդականները դրդել ուսման, գիտութեան և արհեստներու: Ամեն խելանի անձի յայտնի որ մեր տգիտութիւնն է պատճառ մեր ցաւերուն և փորձանքներուն... Այս ուղղեգծի մէջ ևս՝ մեր միակ առաջնորդը սուրբ դուրանն ու իսլամական պատմութիւնը պիտի ըլլան: Թէ կրօնքի վիմաքարը եղող դուրանը ինչ ձևով կը նայի մարդկութեան, ուսման, գիտութեան վրայ, թէ անցեալի մէջ մահմեդականութիւնը ինչ ջանքեր գործ է դրած գիտութեան և մարդկութեան համար, այս բոլոր կէտերը «Շարքի-Ռուսի» մէջ պիտի պարզենք, որպէսզի մեր ներկայ տգիտութիւնը հակադրենք մեր պատմութեան և դուրանի հետ և այս կերպով մեր ազգի աչքը քիչ-քիչ բանալով փրկութեան նաւահանգիստը հասնինք:

«Մեր չորրորդ նպատակակէտն է Ռուսաստանի մէջ ապրող մեր հարկան ազգերու և ժողովուրդներու հետ մեր բարեկամական յարաբերութիւնները ամրապնդել: Մենք մահմեդական ըլլալով հանդերձ մարդ ենք, և մարդ ըլլալով՝ մեծապէս կը մե-

դանչենք, եթէ կղզիացած ապրինք: Պահելով մեր սովորութիւնները, պէտք է որ ամեն տեղ ուրիշ ժողովուրդներու հետ աւելի սերտ յարաբերութեան մէջ մտնենք, անոնց թերութիւններուն և յատկութիւններուն տեղեակ դառնալով անոնց լաւ կողմերը իւրացնենք և ամենքէն բարձր ըլլանք: Կրօնքն ու հաւատքը ոչ մէկ ժամանակ կեղծիքի և բաժանման պատճառ չէ եղած և չի կրնար ըլլալ:

«Գալով Կովկասաբնակ մահմեդականներուս, պէտք է որ իրենց դրացի ժողովուրդներուն, ուսմաներուն, հայերուն և վերացիներուն հետ բարուոք յարաբերութիւններ մշակենք: Ո՛չ անոնք առանց մեզ, և ոչ մենք առանց անոնց մէկ քայլ չենք կրնար ընել: Այս չորս ժողովուրդներու գործերը, անցքերն ու ընթացքը այնքան իրարու հետ կապուած են, որ անկարելի է զանոնք իրարմէ բաժնել և անոնց մէջտեղ պատուարներ կանգնեցնել...

«Ասոնք են ահա մեր նպատակակէտները—մահմեդականութեան ծառայութիւն, մարդկութեան համար ջանք և աշխատութիւն, ուսման և գիտութեան ծաւալումին ճիգ թափել: Եթէ այս ուղղութեան մէջ մենք սխալինք, ընթերցողներէն կը խնդրենք որ մեզի յիշեցնեն, մեր երեսին զարնեն մեր սխալը, որպէսզի մենք մեզ ուղղենք: Այգպիսով մեզ երախտապարտ կընեն: Յոյս ունինք որ մեր ազնուատոհմ (նէջիբ) ժողովուրդը մեզի հարկ եղած աջակցութիւնը չի վաճար»: »

Տիգրան

ՔՆՆԵԴԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՍՈՒԹԻՒՆ

Մ Ո Ւ Շ Ե Ղ Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ

(«Իրուագիւեր»-ու առիթով)

Թրքահայ հասարակութեան համար կրթութեամբ եկեղեցականներ պատրաստելու մտահոգութիւնը, ասկէ շուրջ տասնը-հինգ տարի առաջ, Կ. Պոլսի ազգային հոգևոր ու աշխարհական իշխանութիւնները մզեց զպրանոց մը բանալ Արմաշի մէջ:

Պոլսի աշխարհական և հոգևոր աչքի ընկնող անձնաւորութիւններէ բաղկացած խնամակալութիւն մը յանձն առաւ Արմաշի Դպրեվանքին նիւթակախ ու բարոյական մատակարարութիւնը: Սեմինարեան դըին բաւական ամուր հիմքերու վրայ: Կրթական վարչութեան գլուխ կանգնեցան Մաղաքեա եպիսկոպոս Օրմանեանի, Կ. Պոլսի այժմեան պատրիարքին՝ ու Նդիշէ եպիսկոպոս Դուրեանի, Պետրոս Դուրեան բանաստեղծին եղբօր՝ նման զարգացած ու հմուտ եկեղեցականներ: Օրմանեան արքեպ. Դպրեվանքի տեսուչը մնաց մինչև պատրիարք ընտրուիլը: Իսկ Նդիշէ եպ. Դուրեան, որ զարգացած եկեղեցականի մը համբաւն ունի, մինչև անցեալ տարի, Արմաշի զպրանոցի տեսչութիւնը կը վարէր: Շատ թեմեր զինքը առաջնորդ ունենալ փափագեցան, բայց ան չուզեց բաժանուիլ իր սիրած հիմնարկութենէն: Սակայն, երևի վերջերս, իր մէջ այնքան ուժ չի գտաւ կապուած մնալու Դպրեվանքին, որովհետեւ Պոլսի լրագրութեան հաղորդածին նայելով՝ Նդիշէ եպիսկոպոս ընդունած է Զմիւննիայի առաջնորդութիւնը, որ հանգուցեալ Մեղիսեղեկ արքեպ. Մուրադեանի մահուամբ բաց մնացած էր:

Արմաշի Դպրականքը, իր հիմնարկութենէն քանի մը տարի յետոյ տուաւ իր առաջին շրջանաւարտները, որոնց մէջ էր և Մուշեղ վարդապետ Սերոբեանը: Այդ առջինէկ շրջանաւարտներու շարքին մէջ, իրենց գրական փայլուն ընդունակութիւններ-

րով անմիջապէս ուշադրութիւն գրաւեցին մասնաւորապէս: Մուշեղ վարդապետ Սերոբեանն ու Բարգէն վարդապետ Կիւլէսէրեանը, Մուշի նախկին առաջնորդը:

Դպրոցի գրասեղանները հազիւ թողած՝ իրենց բոյնէն նոր դուրս ելլող դեռափետուր թռչուններու պէս, անոնք հըրճուանքով, խանդավառութեամբ նետուեցան գրական հրապարակը և սկսեցին այլևայլ թերթերու և հանդէսներու մէջ գրել կրօնական խնդիրներու մասին: Անոնք աշխատեցան տալ հայ ընթերցողներուն գլխաւորաբար օրուան տօներու մեկնութիւնը, բացատրութիւնը: Արմաշականները դեռ ևս հովուական պաշտօններ չստանձնած՝ գովելի ջանքն ունեցան ժողովուրդին հետ կապ հաստատելու տպագրական խօսքի միջոցով:

Բայց, գեղեցիկ օր մը, պոլսահայ մամուլի օրգաններու մեծամասնութիւնը, յանկարծ, վայնասուն մընէ փրցուց: Զերմեռանդ ու ոչ-Չերմեռանդ խմբագիրները գայթակղած էին: Ինչո՞ւ: Ահա թէ ինչո՞ւ:

Պոլսական շաբաթաթերթի մը մէջ Մուշեղ վարդապետ յօդուած մը տպած էր Հոգեգալստեան տօնի առիթով: Երիտասարդ կրօնաւորը՝ երեի «ամբարիշտ» ընթերցումներու ազդեցութեան տակ, առաքեալներու այլևայլ լեզուներով խօսելու աւանդութիւնը կը բացատրէր, ոչ այնպիսի ձևով, որ վայել է խոնկ ու մոմ հոտող իսկական հոգեորականին: Մուշեղ վարդապետ իր մեկնութիւններուն մէջ շատ քիչ տեղ կուտար «Սուրբ Հոգիի» գօրութեան, հրաշքին: Ամբողջ յօդուածին մէջ յայտնի ճիգ մը կար աւանդութիւնը բացատրելու գիտական, բնախօսական հիմունքներով: Արմաշական վարդապետը կղերականներու այն դասակարգին կը պատկանէր, որոնք կը ճգնին կրօնքը հաշտեցնել գիտութեան հետ: Մուշեղ վարդապետին համար կրօնքը՝ չոր ծէսերու, նեղ դոկմաներու ամբողջութիւն մը ըլլալէ աւելի, հոգիի թռիչքն էր դէպի անծանօթն ու անըմբռնելին: «Դրուագներ»-ու հեղինակը՝ խառնուածքով բանաստեղծ՝ գերագոյն բանաստեղծութիւնը կը տեսներ կրօնքին մէջ: Արմաշի Դպրեվանքը՝—ու ասիկա մեծ պատիւ մըն է կրօնական այդ հաստատութեան և անոր վարիչներուն համար—անոր մէջ չէր աշխատած խեղդել բանականութեան, առողջ դատողութեան ձայնը, քննական ոգին: Մեր կարգ մը «աստուածաբան» վարդապետներուն պէս, Մուշեղ վարդապետ՝ կրօնքը «արքայութեան», «անդրերկրային» կեանքի անունով տիրապետութեան ու հեղինակութեան գործիք մը չէր նկատեր: Քարացած հաւատալիքներու տարածումով չէր ուզեր ժողովրդին մտքի աչքերը կոյր պահել: Կրօնքը մեռած տառերու, ընդունուած

ու նուիրադործուած բանաձևերու դանգուած մը դաւանելու կը ձգտէր—միամիտ ձգտում, քանի որ այսքան դարերու կեանքը, իրեն պէս խորհող անկեղծ հոգեորականներու և անգամ աշխարհականներու նոյն ուղղութեամբ փորձած ջանքերը ապարդիւն եղան—մոլթ գիտակցութիւններու, բոլթ խղճմտանքներու լծակը դարձնել:

Այս ձգտումը բնաւ դուր չեկաւ Կ. Պոլսի լրագրութեան աշխատաւորներու մեծ մասին, որոնց աշխարհականի հագուածին տակ միշտ Ֆարաշայի մը սև փէշերը կը սարսռան: Ու յուզիչ համերաշխութեամբ մը սկսեցին Մուշեղ վարդապետի գլխուն վրայ հրաւիրել կրօնական բարձրագոյն իշխանութեան շանթերը:

Այդ դէպքէն յետոյ Մուշեղ վարդապետն ու իր ընկերները կասկածելի էին: Անոնք քոսոտ ոչխարներ էին, որ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ մարութ հօտին մէջ սպրտած՝ կը սպառնային վարակել ամբողջ հօտը:

Մուշեղ վարդապետը այնուհետև գնաց դաւառ: Արաբկիւրի ժողովուրդը ցանկացած էր զինքը հովիւ ունենալ: Լրագիրները անոր պաշտօնավարութենէն դժգոհ չմնացին, բայց չդադարեցան նորէն զայն նկատելէ «ըմբոստ» մը, որովհետև դաւառէն Պոլսի թերթերուն ուղարկած պատկերներն ու յօդուածները տիրացուական քիմքերը շոյելու յատկութիւնը չունէին: Կը յիշեմ որ երկիւղած լրագրողները կատաղի արշաւանք մը սկսան Մուշեղ վարդապետի դէմ յօդուածի մը առիթով՝ որ Արաբկիւրի առաջնորդը համարձակած էր գրել պոլսական թերթի մը մէջ:

Գայթակղութիւն պատճառող այդ յօդուածը, այս անգամ, Հայաստանեայց Եկեղեցու դարերու հիմքերը փորելու նկարագիրը չունէր, ոչ. խանդաղատագին ներքող մընէր բնութեան անսպառ, այլազան ու յուզիչ գեղեցկութիւններուն, որոնք աւելոծած էին բանաստեղծ վարդապետին հոգին: Այդ յօդուածին մէջ Մուշեղ վարդապետ դրած էր պանթէիստ լայն շունչ մը: Ահա ինչու համար ջերմեռանդ հոգիները վրդովուած էին:

Միթէ կարելի էր բնութեան առջև հոգեղմայլանքի անձնատուր ըլլալ, միթէ ևկեղեցականին կը վայելէր բնութեան շքեղութիւնները երգել, երբ անդին կային այնքան հոգեշունչ նիւթեր, խորանն ու բուրվառը, խաչն ու աւետարանը, երգելու և աստուածացնելու համար: Ու բարձրաձայն պահանջեցին, որ այդ աշխարհականի հոգի կրող վարդապետը հանէ իր վրայէն սքեմը, վար առնէ իր կեղծ հոգեորականի դիմակը:

Ու շատ հասկանալի տրամաբանութեամբ մը Պոլսի նոյն

թերթերը սկսան յարձակիլ Արմաշին վրայ, որը իր նորընծաներուն ուղեղը դոկմաներու տակ տրորելու, մահացնելու և «աստուածաբան» վարդապետներ պատրաստելու անընդունակ կը հանդիսանար: Արմաշի և արմաշականներու վրայ կատարուած այդ արշաւանքը յաւարժացաւ, ու, այս վերջերս, մագնաց որ յաղթանակը տանէր:

Եղիշէ եպիսկոպոս Դուրեան՝ Իզմիրի առաջնորդութեան պաշտօնը ընդունած ըլլալով՝ Արմաշի նոր վերատեսուչի մը ընտրութիւնը անխուսափելի կը դառնար: Փնտուած ու չզբտնուած առիթն էր այդ՝ հակարմաշեաններու համար: Ու յարձակումներն ու քննադատութիւնները նոր թափով մը ըսկըսան: Պահանջեցին որ Արմաշն իր «ամբարիշտ» ուղղութիւնէն հրաժարի: Անոր գլուխը կանգնի հին եկեղեցական մը, որ կարող ըլլայ ապագայ վարդապետներուն ուղեղին պտուկը թրծել եկեղեցիի սրբազան վարդապետութիւններու բոցովը: Այդ բուն քննադատութիւններուն վրայ Դպրեվանքի Խնամակալութիւնը — որուն էն աղբեցիկ անդամներէն մէկն է Արիկ Էֆէնդի Ունճեան — ժողով գումարուեցաւ պատրիարքի նախագահութեամբ և երկար խորհրդակցութիւններէ յետոյ, Օրմանեանի և Դուրեանի աղբեցութեան տակ, իհարկէ, վճռեց Արմաշի աւանդութիւններուն ձեռք չտալ: Եւ Եղիշէ եպիսկոպոսին յաջորդ նշանակուեցաւ Արմաշի առաջին շրջանաւարտներէն Թորգոմ ծ. վ. Դուշակեանը, որ ութ տարիէ ի վեր Դպրեվանքի ուսուցչական խմբին մէջ էր:

Այսպէս, Մուշեղ վարդապետի և առհասարակ բոլոր արմաշականներու դատը յաղթանակեց:

* * *

«Դրուագներ»-ու հեղինակին մտաւոր ու բարոյական դիմագծութիւնը բնորոշելէ յետոյ, անցնինք այժմ անոր գրական ու արուեստագիտական գէմքի ուրուագծումին: Մուշեղ վարդապետ բանաստեղծի ուժով խառնուածք մը ունի: «Դրուագները» ծայրէ ի ծայր կրօնական քնարերգութեան երփներանգ ու փարթամ փունջ մըն է:

Բայց Մուշեղ վարդապետի քնարերգութիւնը ճշ երկնքի սարսափովը, մեղքի մտալիկումովը հիպնոսացած Նարեկացիի մը տարերային, անսանձ, յորդող ու ցնցող տղազակն է, և ճշ ալ յաւիտենական երանութիւններուն ժպտող, հոգիի խաղաղութիւնը գտած Սրբունի Թերեզայի մը եթերային, բիւրեղեայ, երգող ու փառաբանող մըմունջը: Իր քնարերգութիւնը

Ռենանը կարգացած, մարսած հոգևորականի մը բնաբերգութիւնն է: «Դրուագներ»-ուն մէջ կան նոյնիսկ այնպիսի էջեր, որոնք իրենց բնապաշտ, նաստուրալիստ շունչով աւելի Երգ-Երգոցը, Զոլան կը յիշեցնեն, քան Շնորհալին ու Թովմաս Ագուինային:

«Դրուագները» Հին և Նոր Ուխտի պատմութեան մեծ դէպքերու նկարագրութիւնն է: «Դրուագները», Ս. Գրոց մեկնութիւն մը չէ—կը գրէ ինքը՝ Մուշեղ վարդապետ, իր առաջարանին մէջ—և ոչ ալ ամբողջական պատմութիւնը անոր: Խտայութիւն է Կրօնի պատմութեան մեզի աւանդած մեծ դէպքերուն: Մեր աշխատութիւնը կղած է իրարու մօտ բերել անոնց ցրքուն գիծերը, և անոնց սեղմ ու կուռ համադրութիւնովը կազմել «Դրուագներ»-ը, որ հակառակ իր միատիք ու բանաստեղծական յօրինուածութեան, գուրկ կը դնուի Աղօթագիրքը ըլլալու հանգամանքէն ալ:

Մուշեղ վարդապետ իրաւունք ունի իր աշխատութիւնը աղօթագրքի հանգամանքէն գուրկ նկատելու, որովհետեւ այն գունագեղ, ջղուտ, բայց երբեմն արուեստական ու բռնազբօսիկ ոճը, որ գործածած է, անմատչելի կը դարձնէ իր գիրքը հասարակ ժողովուրդին: Մուշեղ վարդապետ «Դրուագները» գրած ըլլալ կը թուի անոնց համար, որոնք հոգևոր շինութենէ աւելի, մտքի հաճոյք մը կը փնդուն իրենց ընթերցումներուն մէջ: Ուրիշ խօսքով՝ Մուշեղ վարդապետ աշխատած է աւելի գրական գործ մը արտադրել, իր գրական պահանջներուն բաւականութիւն տալ, քան հաւատքի ու ջերմեւանդութեան յիշատակարան մը ստեղծել: Եւ միջանկեալ նկատենք, որ Մուշեղ վարդապետ, եթէ միայն կը ձգտէր արժանանալ գրասէրներու գնահատութեան, իր նպատակին հասած է, որովհետեւ «Դրուագները» հըրատարակիչ Նշան—Պապիկեան գրատան յայտարարութեան նայելով՝ գիրքը համարեա թէ սպառուած է արդէն:

Մուշեղ վարդապետի բացատրութեան համեմատ «Դրուագները» երկու նպատակ ունին.

«Ա.—Ընթերցողներուն տալ զուտ Աստուածաշնչական ոգիով ու նիւթով գրուած գիրք մը:

«Բ.—Իր ընթերցողները տանիլ՝ իր պարունակած նիւթերովն ու բնագրական ցուցումներով, բուն իսկ Ս. Գրոց ընթերցումին, որ մեր ժողովուրդին համար ամենէն անտեսուածը կղած է:

«Ասանց Աստուածաշունչի ընթերցանութեան օժանդակութեան, նոյնիսկ գիտնական ընթերցողին համար կնքուած փոքր պիտի մնայ «Դրուագները»:

«Դրուագներն» իրենց մէջ կամփոփեն Հին Ուխտի պատմութենէն քաղուած ԺԲ. հատուածներ Ա. Պիղծ պաշտամունքը: Բ. Երկինքի կրակը: Գ. Օրհնութեան գողը: Դ. Մովսէս՝ Մարգարէ կըլլայ: Ե. Պատիժները: Զ. Անցքէն առաջ ու ետքը: Է. Ոսկի հորթը: Ը. Առաջին իշխանը: Թ. Հալածանք: Ժ. Պատշգամներու բուն: ԺԱ. Եղեալ և Յեղարէլ: ԺԲ. Դէպի Բաբելոն:

Եւ Նոր-Ուխտի պատմութենէն հետեւալ ԺԱ. դրուագները: Ա. Ծնունդը: Բ. Նազովրեցին: Գ. Յորգանանու եղերքը: Դ. Փորձութիւնները: Ե. Քարոզիչը: Զ. Ծովուն վրայ: Է. Լերան վրայ: Ը. Երեք սեղաններ: Թ. Գեթսեմանի. Ժ. Դատն ու վճիռը: ԺԱ. Գերեզմանին շուրջը:

Իսկ գիրքը՝ իբրև վերջաբան, կը պարունակէ անջատ հատուած մը, որուն տիտղոսն է «Իրական կեանքը»:

Գաղափար տալու համար մեր ընթերցողներուն Մուշեղ վարդապետին յղացումի և արտայայտութեան եղանակին վրայ, պէտք է ըսել, որ Մուշեղ վարդապետն ունի թրքահայ գրողներու բնորոշ, գլխաւոր արժանիքներն ու թերութիւնները: Կուռ, կտրուկ, հնչուն ոճ մը, վարպետ ձեռքով կատարուած նկարագրութիւններ, որոնց մէջ, երբեմն, բառերու անսովոր բարդութիւնները ու կրկնուած ասութիւններէ խոյս տալու մտահոգութիւնը տեղ-տեղ պարբերութիւններու ընթացքը կը դանդաղեցնեն:

Մուշեղ վարդապետի յատկութիւններէն մէկն է լեզուի դիւրաթեքութիւնը, երանգներու ճոխութիւնը: Անիկա կ'աւել տէ արտայայտութեան ծեծուած եղանակները: Անկասկած, ձևի կատարելութիւնը՝ ամեն արուեստագէտ գրողի, նոյնիսկ, ամեն ինքզինքը յարգող զրագէտի առաջին մտածումներէն մէկը ըլլալու է: Այն գրողը, որ քիչ ու շատ գիտակից է, կ'աշխատի միևնոյն բառը, միևնոյն երեսին մէջ քանի մը անգամ չկրկնել, իւրաքանչիւր ածականը իր ճիշտ տեղը գործածել. բայց տափակութիւններէ, հասարակ տեղիքներէ խոյս տալու նպատակով ընկնել արուեստականին, անբնականին մէջ—այս ալ ուրիշ անպատեհութիւն մըն է, ուրկէ նոյնքան անհրաժեշտ է խուսափիլ: Մուշեղ վարդապետ, զժախտաբար, արուեստականին ու բնագրօսիկին մէջ յաճախ կ'ընկնի: Օրինակ այս տեսակ ֆրագներ ունի, որոնք հասարակ տեղիքի մը չափ անհամըդուրժելի են:

«Իմայեղած մարդկութիւնը իսկացնոր շուաքին մէջ լըումի կոծերով կ'ողբայ կեանքերու թարթափումը»: (Երես 39):

«Ներշնչումներու կենդանութիւնը իր մագլոխնձ գալար-

ուսմներով օձաձև պրկուած հովուական ցուպի հրաշալիքը կ'արտափայլէ» (Երես 34):

«Իր ցցուած ճակատին վրայէն դուրս նետուող սև աչքերը կայլն, ...» (Երես 29):

«Զգացումի շեղ մոլորումը մեքենականութեան մը դժոխայնութիւնը կը սարքէ օրէ օր հալող մարդու մը մէջ» (Երես 68):

«Հիմա երջանկութիւնը դիմայեղած ջատուկի մը ծիծաղը ունէր բերնին մէջ՝ հիւժած կմախքի տեսքն էր անիկա անցած գեղօրերու սեթեթնքերով, որուն առջև կսկծուտ սիրտը կը պոռթկայ դժբախտ հօր մը հանդերձներու պատուածքներուն տակ» (Երես 69):

Մուշեղ վարդապետն այնքան բանաստեղծական թռիչք, այնքան բնական ներշնչում ունի, որ այդ արհեստական միջոցներուն դիմելու պէտքը մեզ կը զարմացնէ: Ինքը չի պատմեր իր նկարագրած անցքերը, այլ կը նկարէ: Օրինակ, «Օրհնութեան գող»-ին սկիզբը դրուած հետեւեալ նկարագրութիւնը, ուր մէկ քանի խոշոր գծերով՝ մեր մտքին առջև կը վերակենդանացնէ պատկերը որսորդին, որ լեռներու և անտառներու ամայութեան մէջ երէններու կը հետապնդի:

«Լեռնէ լեռ որսորդները թեթև այծեամբերու ետեւն կը վազեն, ծերունի հօր մը վերջին տարիներու ցաւը մեղմելու համար (Ծննդ. ԻՅ 1—4): Աղեղները կը ձգտին նետերու երկայնքէն, որոնք կը շաչեն օդերուն մէջ, քարերուն կը զարնուին և աւազին մէջ կը խրին: Մարդկային զէմքերը կը խանձին արևէն: Ու արևէն զգուած այծեամբեր աւազին հետ կը շփոթեն իրենց մութ կարմիր թիկունքը, արևին անհաղորդ սպիտակ փորերնին տալով դէպ ի վեր: Յանկարծ իրենց կայտառ՝ առոյգ մարմինը երկշոտի վազք մը կ'առնէ. որսորդներու առթած խուճապէն, անոնց լերկ ականջները կը ցցուին: Լեռներն ու անտառները նոր շարժունութիւն մը կ'երկնեն իրենց ծոցը, վախկոտ անասուններու խշրտոցներէն: Երբեմն կանգ կ'առնէ խումբը խեղճ կենդանիներուն, որոնց գեղեցիկ աչուրները կը յետադարձին վտանգին մեծութիւնը չափելու համար: Եղջերուները, թեթև ու բարձրադիր, կը տատամսոտին իրենց կայքերուն մէջ, ու եղջիւրնին ցցած դէպի վեճ, կամ հակած դէպի թիկունքը, կը խուսեն հետապնդողներու յոգնած զուարթութենէն»:

«Եսաւ կը քալէ անտառէ անտառ, կտաւարճը իր ուսէն կախ, նետերով լեցուն. տէգն ու նիզակը երբեմն իբր յենացուպ կը ծառայեն վերելքի միջոցին, երբ պատուքը իրենց կո-

կորզները կը մազկոնճէ: Քաբերը կը թնդան պարապ դողուածքներու պէս»:

Եւ կամ, տեսէք, Իսրայէլի ժողովուրդը Եգիպտոսէն դուրս հանելու համար, երկինքէն Փարաոնի գլխուն ուղարկուած պաաիժներու նկարագրութեան հետեւալ մասը:

«Սինայի մարդուն ձեռքը օգը կը ծեծէ օձաձև գաւազանով. սոսկումը կը սաւառնի ճախճախուտ շամբերէն ու նեխած ջրերէն: Կոշկոռոտ գորտեր ու լերկազլուխ գողոշներ քաղաքներու բնակչութիւնը կ'ահաբեկեն: Ո՛վ Տէր, ի՞նչ են այդ ողորմագլին ճիչերը: Հացի տաշտերէն հեռու կը փախչին կիներ, իրենց թեզանքները հանգրիճած: Գորտերու անթարթ աչքերը, պնդ իրենց նայուածքին, ու մերկ իրենց լերկութեան մէջ, կը խռովեն հանդարտ քունը դիցանուշներուն, որոնք անդուտ անկողիներու հեշտանքը կը վայելէին: Բամբռիչները իրենց առագաստի սենեակները կը լքեն, մեղրալուսիններու ցայգերը կը լռէ քինորներու և կիթնիտներու թելերէն, զազիր գորտերու սևերես ներկայութիւնով»:

«Դրուագներ»-ուն մէջ այս տեսակ հատուածներ շատ կան, որոնք ցոյց կուտան թէ՛ հակառակ ոմանց կարծածին՝ որքան ձկուն է աշխարհաբար լեզուն, որքան դիւրաթեք՝ արտայայտայտելու համար մտածումի ամենանուրը ձևերը, զգայութեան ամենախուսափուկ երանգները:

Տ. Զաւէն

«Повесть Гражданской скорби». Избр. стихотв. арм. поэта Рафаэла Патканяна. Издание Аракеда Дервяша, Москва 1904 г. цѣна 80 коп.

Առաքել Դերվիշը երկու տարի առաջ լոյս ընծայեց «Современные армянские поэты» անունով գիրքը, որով մեր նորագոյն բանաստեղծներն էր ծանօթացնում ոչ միայն ռուս հասարակութեան, այլև հայ հասարակութեան «Ինտելիգենտ» և «Բուրժուա» կոչուած զսոսկարգեբին, որոնց ներկայացուցիչների մեծագոյն ժառը հայերէն չի կարդում, չի հասկանում: Պ. Ա. Դերվիշի այդ համակրելի ձևաւարկութիւնը առանձին ուշադրութեան արժանի էր նմանապէս այն պատճառով՝ որ հայ բանաստեղծները երեսն էին հանում ռուս բանաստեղծների թարգմանութեամբ. բանաստեղծութիւնը լաւ թարգմանել կարող է միայն բանաստեղծը:

Իր նոր հրատարակած երկրորդ գրքում պ. Դերվիշը ծանօթացնում է հայերէն չիմացողներին մեր ամենանշանաւոր ազգային բանաստեղծ՝ Ռաֆայէլ Պատկանեանի հետ,

նոյնպէս ուսն յայտնի. բանաստեղծներն թարգմանութեամբ: Գրքի ներածութիւնը գրել է պ. Դերվիշը: Իր համառօտ տեսութեան մէջ նա տալիս է հայոց նոր գրական լեզուի զարգացման ուրուագիծը, Ռ. Պատկանեանի կենսագրութիւնը և նրա բանաստեղծական գրութեան գնահատութիւնը: Այդ տեսութեան մէջ ոճի մի անճշտութիւն կարող է կարծեցնել, թէ ոչմերօսը, Վիրգիլիոսը, Շատոբրիանը կային թարգմանուել են Հնդկաստանում և ոչ Վենետիկում (տես եր. 6)...

Դիրքը նուիրուած է Գ. Ի. Քանանեանի յիշատակին, որ Ռափայէլ Պատկանեանի ամենամտերիմ բարեկամն էր: Ընթերցողի ուշադրութիւնն ենք դարձնում այս համարում գետեղուած Ռ. Պատկանեանի նամակների վրայ, որոնցից մէկում նա շատ լաւ բնորոշում է իր ուղղութիւնը և, կ'առենք, նշանակութիւնը մեր գրականութեան մէջ (տես երես 89—90):

Na.

Pousrof, «Թուրքի գրադմանք» մասն առաջին, թարգմ. ուսերէնից. Ս. Պետերբուրգ, 1904, գինն է 25 կոպ. (նուէր մանուկներին):

Դժբախտ հայ մանուկները զուրկ են լաւ հայերէն գրքերից: Մանաւանդ 5—7 տարեկան երեխաները մեզանում համարեա ոչինչ չունին մատչելի իրանց հասկացողութեան և ձրգտումներին: Բերած վերնագիրը կրող գիրքը վալիս է մասամբ լրացնելու այդ պակասը. մատչելի նիւթը, լեզուն, բազմաթիւ նկարները, մաքուր հրատարակութիւնը—բոլորը լաւ են, և հայ մանուկը կարող է իսկ որ ուրախանալ այդ նուէրով: Ամեն մէկը ու մանուկների հետ գործ ունի, գիտէ թէ օրէցօր նրանց աճող ուղեղը որքան հարցեր է առաջարկում մեծերին. «այդ թ'նչ է. ինչի՞ համար. որ թ'նչ լինի» կայլն կայլն: Մեզանում մեծերը սովորաբար կամ անմիտ պատասխաններ են տալիս կամ լռեցընում են հարցոսէր մանուկին ասելով. «զմլհէս տարար, սոլս ալա»: Եւ թ'նչ անեն յաճախ իրանք ևս մանուկներից ոչ պակաս ազէտ ծնողները... Այո, պէտք է մտածել որքան կարելի է շատ տալ մեր մանուկներին այդպիսի նուէրներ...

Ն.

Ղազ. Բաճ. Յովսէփեան՝ «Աղետակներ Ուտիացի եւ մահմեդական հայերի մասին», Քիֆլիզ, 1904, գինն է 40 կոպ.

Հեղինակը, ինչպէս երևում է թէ վերնագրից և թէ ամբողջ գրութեան քից, հաւատացած է, որ ուտիացիները ոչ միայն հաւատակից են հային, այլև «աղղակից»։ Նա ամեն տեղ գործ էածում «ուտիացի հայ» կամ «ուտիացեաց աշխարհի հայ ժողովուրդ» խօսքերը։ Անշուշտ իրան՝ «իբրև ուտիական անբախտ երկրի նժդեհ գաւակին՝ աւելի քան յայտնի են այդ ժողովրդի նիստն ու կացը, նրա բարքերն ու սովորութիւնները, քան թէ ուրիշ որևէ մէկին» (եր. 9), սակայն աւելի արժէքաւոր աշխատանք կատարած կը լինէր հեղինակը, եթէ այնքան արհամարհանքով չվերաբերուէր օտար աղբիւրներին, որոնցից կարող էր նա իմանալ որ ուտիացիները աւելի ազգակից են լեզգիներին, քան հայերին, որոնց կրօնը ընդունելով մասամբ միայն են թարկուել են հայկական կուլտուրայի ազդեցութեան։ Հեղինակի գրածի մէջ շատ աւելի մեծ սխառեմ կը լինէր, եթէ նա հետեւէր, ազգագրական նիւթեր մշակելիս՝ մեր գրականութեան մէջ եղած բազմաթիւ հետազոտութիւններին։ Սխառեմ չունենալով՝ նա խառնիխուռն աւելորդաբանութիւններով ճիշտը միացնում է ենթադրութեան հետ, առասպելը՝ պատմական տեղեկութիւնների, ստատիստիկան՝ բժշկական խորհուրդների հետ, քարոզը հրապարակախօսական խորհրդածութիւնների և շեղումների (օր. եր. 6-ի) հետ. և դուրս է գալիս մի խառնաշփոթ գրութեան, որի ընթերցումը պահանջում է բաւական մեծ համբերութիւն։ Այնպէս որ Ղազ. քահ. Յովսէփեանի գիրքը կարող է ծառայել իբրև հում նիւթ ապագայում գիտնականօրէն աւելի պատրաստուած որևէ անձի հետազոտութիւնների համար։ Չնայած յիշեալ պակասութիւններին՝ այդ գիրքը այնուամենայնիւ բաւական ծանօթացնում է մեզ Նուխուայ գաւառի հայաբաւն ուտիացիների և մահմեդականացած հայերի հետ։

Na

ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- ✓ 1) L'Arménie et les pays voisins, Հայաստան և հարևան երկիրները, քարտէս, դժագր. և փորագր. Հ. Պ. Մանխասճեան, Բազէլում, հրատարակութիւն Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան: Գինը 1 ֆրանկ, (50 կոպ.) Հասցէն՝ Rue de l'Ecole de Chimie 2, Genève:
- ✓ 2) Լէօ, «Ռուսահայոց գրականութիւն»-ը սկզբից մինչև մեր օրերը (բանաստեղծութիւն, թատերագրութիւն, վիպագրութիւն), Վենետիկ, Ս. Հազար, 1904 թ., գինը 1 ռուբլի:
- 3) Пѣвецъ гражданской скорби, избранныя стихотворенія Рафаэла Патканьяна, съ портретомъ Патканьяна и снимкомъ съ его надгробнаго памятника. Москва, 1904 г. цѣна 80 коп.
- ✓ 4) Քսէնոս, «Անդրոնիկէ», յունական յեղափոխութեան հերոսուհին, թարգմ. Ի. Ա. Երան, Բոստոն, 1905 թ.:
- ✓ 5) Ա. Ահարոնեան, «Ժողովածու երկերի», հատոր Ա., Պետերբուրգ 1904 թ., գինն է 1 ռուբլի:
- ✓ 6) Զ. Մօրիէր, «Հաջի Բաբայի արկածները Պարսկաստանում», թարգմ. անգլիերէնից, լորդ Կըրզընի ներածութեամբ, Թիֆլիզ, 1905 թ. գինն է 2 ռուբլի:
- ✓ 7) Մ. Տէր-Դանիէլեան, «Բուզգաւաւաշի զոհը», պատկեր, Բազու, 1904 թ. գինն է 3 կոպ.:
- ✓ 8) Սէյլան, «Հայթա-Ֆիրատ», Թիֆլիս, 1904 թ., գինն է 35 կոպ.:
- ✓ 9) Նար-Դոս, «Նորածին Մանուկը», Վաղարշապատ, 1904 թ. գինն է 3 կոպ.:
- ✓ 10) Արման Սիլվեստր և Մարսէլ Պրէլօ, «Յանցաւոր մօր խոստովանութիւնը», թարգմ. Թիֆլիս, 1905 թ., գինն է 5 կոպ.:
- ✓ 11) Դոստոեւսկի, «Ազնիւ գող», վիպակ, հրատ. Գ. Գալստեանի, գինն է 10 կոպ.:
- ✓ 12) Կլ. Լուկաշևիչ, «Ուրբ Աննան» թարգմ. ռուսերէնից, նուէր մանուկներին, Թիֆլիս, 1904, գինն է 12 կոպ.:
- 13) Բօստրօմ, «Ռուբէնի Զբաղմունքը», մասն առաջին, թարգմ. ռուսերէնից, Ս.-Պետերբուրգ, 1904 թ., գինն է 25 կոպ.:

- † 14) Ղազ. րահ. Յովսէփեան, «Ակնարկներ Ուտիացի և մահմեդական հայերի մասին», Թիֆլիս, 1904 թ. գինը 40 կոպ.:
- 15) «Изъ Исторіи Геродота, персы, египтяне, скиѣы. Чтеніе для юношества и для самообразованія.». Составиль П. Д. Первовъ, преподаватель Лаз. Инст. вост. яз., Москва, 1905 г., цѣна 60 коп.
- 16) Գրիգոր Վանցեան, «Հայ հեղինակներ, ընտիր հատուածներ միջնակարգ դպրոցների համար», Թիֆլիզ, 1905, գինն է 1 ռ.:
- 17) Ա. Մարգար, «Երախտիք», պատմուածք, 1904 Բաղու, գինն է 10 կ.:
-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներքին կեանքի հիւանդոս արտայայտութիւնները:—Քաղաքի արիւնքանեղ անցքերը:—Հասարակութեան եւ էջմիածնի ցոյց տուած նախաձեռնութիւնը եւ ինքնագնութիւնը:—Կովկասեան ազգերի համերաւելութեան գաղափարի յաղթանակը:—Շահի հեռագիրը:—Պատշտական հաղորդագրութիւն Թիֆլիսի, Բաքուի եւ Երևանի եւ Կովկասի այլ քաղաքի գոնական խառնակութիւնները:—Թիֆլիսի երգ, հաւատ, կազմած յանձնաժողովը:—Հայերի պատգամաւորութիւնը Պետերբուրգում:—Մեծ իշխ, Սերգէյ Ալեքսանդրովիչ:—Կարպ, կողմից Կովկասի փոխարկային ուղարկած հեռագիրը եւ նրա պատասխանը:—Գործակալն գործերը:—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ:—Տիֆլէսի Հախումեան:

Այն օրից երբ սկսել է պատերազմը Հեռուոր-Արեւելքում լայնածաւալ պետութեան ներքին կեանքի մէջ տեղի են ունենում յուզումներ, բազմաթիւ տխուր դէպքեր և արիւնալի անցքեր, որոնք ցոյց են տալիս որ մեր ներքին կեանքը տառապում է ծանր, թէև ոչ անբուժելի հիւանդութիւնից: Ներքին գործոց նախկին մինիստր Սվետոպոլկ Միրսկին իր կարճատև գործունէութեան ընթացքում կարողացաւ հնարաւորութիւն տալ հասարակական արթնացած ինքնադիտակցութեան՝ ճիշտ դիպչող զննելու այդ ներքին հիւանդութեան և միջոցներ առաջարկելու՝ կանոնաւոր զարգացումից շեղած կեանքին տալ քաղաքակիրթ երկրին վայել կազմութիւն: Այդ հիմնական միջոցների մասին մենք ասիթ ենք ունեցել մի քանի անգամ յիշելու: Մենք տեսանք որ գեկտամբերի 12-ին Ուկրաին նպատակն էլ հէնց կեանքի հասունացած պահանջներին գոհացում տալն էր: Սակայն մինչ մինիստրների Կոմիտէտը երկար ու բարակ անում է թէ ինչպէս կեանքի մէջ իրականացնել Բարձրագոյն Ուկրաին մէջ ուրուագծած կէտերը, ներքին կեանքը կանգ առնում և խառնակ դրութիւնը ամենուրեք նորանոր արտաբերութիւններ է գտնում, աւելի ևս բարդացնելով և ծանր դնելով ահագին օրգանիզմի տառապանքը: Իրար յետևից թափվում են, ինչպէս առատութեան եղջիւրից, անկարգութիւններ, ազգույն, թէ անհատական և թէ մասսային սպանութիւններ, և տերրորդի փողոցներում յունուարի 9—11 անցքերից յետո՛ւ ան դէպքեր

պատահեցին Մոսկուայում, Վարշավայում, Հելսինգֆորսում, Թիֆլիսում, Փութայիսում և այլ քաղաքներում: Բանուորական ընդհանուր գործադուլը ահագին հարուած տուաւ երկրի արդիւնարեւութեան և առևտրին, օրերով և շաբաթներով լրագրներ չէին լոյս տեսնում, երթևեկութիւնը երկաթուղիներով և քարշակներով ընդհատուել էր, բարձրագոյն գալրոցները փակուել են, և այդ ընդհանուր քաօսի մէջ գեռ նոր էին մտնացում Քիշնևի և Գոմելի հրէական ջարդերի սարսափները, որ ազգերի կուլտուրական, խաղաղ առաջադիմութեան ու համերաշխութեան թշնամիներին աջողուեց սարքել աւելի ևս զարհուրելի կոտորածներ թուրքերի և հայերի մէջ Բագուում:

Քսան տարի է որ Անգրկովկասում հայերի և թուրքերի մէջ մասսային ընդհարումներ տեղի չեն ունեցել: Եւ այն ինչ որ քսան տարի առաջ պատահել է Երևանում—մի չնչին կռիւ էր համեմատութեամբ այն սարսափներին, որոնք ընդ միշտ անմոռաց կը գարձընեն, ոչ միայն Բագուի, այլ և Անգրկովկասի պատմութեան մէջ արիւնքները տանջանքներով և գազանային անգթութիւններով՝ զրօշմուած փետրուար 6, 7, 8 և 9:

Տգէտ, մարդասպանութեան և թալանի բնազդներով շուտ բռնկուող թուրք ամրոխը, ինչ-որ մութ ուժերի կայէնական ձեռքերում կոյր գործիք դարձած, չորս օրուայ ընթացքում աշխարհին ցոյց տուեց վայրագութեան այնպիսի տեսարաններ, որոնց նմանը աներեւակայելի է ոչ միայն բաղաքակիրթ երկրների խաղաղ կեանքում, այլ նոյնիսկ պատերազմական դրութեան մէջ, ուր մահուկների խողխողումը, կանանց բռնաբարութիւնը, խաղաղ անգէն քաղաքացիների սպանութիւններ տեղի չեն ունենում և քաղաքացիների սները, կայքը, կեանքը ապահովուած են լինում թշնամու յարձակումներից: Իսկ Բագում սրիկաների վոճմակներ զինուած հրացաններով և ատրճանակներով, օր ցերեկով, իշխանութեան աչքի առաջ, գիւային որսորդութիւն էին սարքել և գնդակահար էին անում ամեն մի պատահած հային, պաշարում էին նրանց տները, որ կիզում, ներս խուժում այնտեղ և մորթոտում մեծ ու փոքր, կին և աղամարդ, կոտորատում ու ոչնչացնում նրանց կահկարասին, փրկանք պահանջում, փախցնում կանանց և այլն և այլն:

Բարբախտաբար թուրք ժողովուրդը ցոյց տուեց որ նա ընդհանուր առմամբ արդէն այնքան հասունացել է և քաղաքակրթուել որ պատապարտելով դատապարտում է իր կրօնակիցների այդ տեսակ վայրենի և տմարդի քաջագործութիւնները: Կոտորածի ժամանակ շատ թուրքեր պահպանել են և ազատել իրանց աներում հայերին: Եւ բաւական էին թուրք ժողովրդի

մի քանի հեղինակաւոր անձանց հանդարտեցնող խօսքեր որ սթափուէր իր կատաղի խելագարութիւնից գաղանացած ամբոխը և հաշտութեան ձեռք մեկնէր համաքաղաքացի հային:

Այդպիսով խաւարի և շարութեան որդիք այս անգամն էլ, ինչպէս և միշտ, սխալուեցան իրանց սպասելիքների մէջ: Թուրքը և հայը, սարսափելի կոշմարից սթափուած, արինաշաղախ փողոցներում ընկած դիակների, միտղ տների, աւերուած և թալանուած խանութների առաջ զարհուրեցին, տեսան այն վիճը, որ բացուած էր նրանց առաջ և աւելի ևս մեծ գիտակցութեամբ փարեցին համերաշխութեան գաղափարին: Պէտք է անաշտու և ազատ քննութիւնը լոյս աշխարհ հանի այդ եղբայրասպան երկպառակութեան իսկական հեղինակներին, որոնք կարող են և ազապաշտւած առաջ բերել նման սարսափներ...

Իսկ մինչև այդ քննութիւնը բոլորին համար պարզ են հետևեալ կէտերը. 1) ամբողջ ամիս Բագուում խօսուում էր թիւրքերի և հայերի մէջ սպասուող ընդհանրութեան մասին և հայերը, հաւատ չընծայելով այդ շշուէններին, անհոգարար ոչ մի ջանք դրած դրին աղէտի առաջն առնելու և պաշտպանուելու համար. 2) թալանողների, հրկիզողների և մարդասպանների ամբողջ խումբը կազմուած էր թուրք ժողովրդի տականքսից, որին միացել էին շրջակայ գիւղերից հրաւիրած սրիկաներ: Յարձակողները բոլորն էլ զինուած էին հրացաններով, նոր բեմովներներով և դաշոյններով. 3) այդ խումբը առաջուց կազմակերպուած էր, դորժում էր սրու ծրագրով, որի իրադրծումը նպաստաւոր պայման էր գտնում պոլիցիայի թուլութեան մէջ. 4) ոչ մի կրօնական, ցեղական կամ տնտեսական պատճառ չի յարուցել այդ արիւնալի երկպառակութիւնը հայերի և թուրքերի մէջ:

Սուգի այդ օրերում մխիթարական էր տեսնել այդ աղէտի առաջն առնելու գործում հասարակական ինքօգնութեան նախաձեռնութիւնը: Կարելի է ասած որ եթէ աջողուեց սահմանափակել ամբոխային կատաղութիւնը համարեա Բագուով և այդ տեղ էլ շուտ հանգչնել բոլորեցուած կիրքերը—այդ բանում ամենամեծ դերը կատարեց հասարակութիւնը ինքը, իր ներկայացուցիչների միջոցով: Բոլորին յայտնի է արդէն թէ ինչ արաւ հասարակութիւնը: Մենք ուզում ենք նորոգել ընթերցողի յիշողութեան մէջ այդ ինքնօգնութեան գլխաւոր արտայայտութիւնները, որպէսզի ընդգծենք թէ աղբերի համերաշխութեան գործում ինչ ահագին ոյժ են կազմում հանգստացնող, խաղաղասիրական միջոցները:

Ամենից առաջ ցնցուեց Թիֆլիսը. բարեբախտաբար Կովկասի մայրաքաղաքի քաղաքապետին էր Ք. Վերմիշեանի պէս մի անձ, որ ազգերի համերաշխութեան և խաղաղ-կուրտութեան զարգացման ամենահամոզուած ներկայացուցիչն է: Ք. Վերմիշեանը փետրուարի 9-ին ներկայացրեց Կովկասի կառավարչապետի պ. պաշտօնակատարին հետեւեալ զեկուցագիրը. «Սարսափելի լուրերը Բագու քաղաքից արիւնահեղ բռնութիւնների մասին, որոնք կատարուած են օր ցերեկով, սաստիկ ցընցեցին Թիֆլիսի ազգաբնակութիւնը: Մարդու սիրտը ուղղակի արիւնոտուած է լսելով այդ խմբային սպանութիւնների, խաղաղ ժողովրդի այդ կոտորածի մասին, այն ժողովրդի, որ իւրան պատսպարուած էր կարծում ուստաց օրէնքների հովանուտակ սոսկալի պաշտութիւններից, որոնք նախատինք են կազմում մեր ժամանակի համար: Ո՞վ է յանցաւորը այդ սարսափների մէջ, ո՞ւմ ոճրագործ արարքներով պայմանաւորուած է այգալիսի արիւնահեղ դէպքերի հնարաւորութիւնը—այդ, իհարկէ, երևան կը հանէ անաչառ քննութիւնը: Բայց մինչև որ արդարադատութիւնը կ'արտասանէ իր վճռական խօսքը—Բագուից թնդացող ողբերը և հառաչները պարտաւորութիւն են դնում ինձ վրայ, իբրև ներկայացուցիչ Թիֆլիսի ազգաբնակութեան, որի կազմի մէջ մտնում են նշանաւոր չափով թէ հայերը և թէ մուսուլմանները, հայցել ձեզ, ձերդ գերազանցութիւն, ձեր անձնական հեղինակաւոր միջամտութեամբ վերջ դնել կոտորածին, որ անջնջելի արատ է սփռում մեր պատմութեան վրայ: Թիֆլիսի ժողովրդի անունից թոյլ եմ տալիս ինձ արտայայտել հաստատ յոյս, որ երկրի բարձր պետը, օժտուած մեր թագաւորի թագաւորի բոլոր արտակարգ լիազօրութիւններով, այնպիսի մի բոլակին, երբ ազգաբնակութեան երկու խմբեր, կատաղած դրութեան մէջ, ներկում են իրանց ձեռքերը իրանց եղբայրների արիւնով, կարտասանէ իր խաղաղարար խօսքը: Մեծ է այն պատասխանատւութիւնը, որ դնում է իշխանութիւնը, բայց մեծ են և խորին բաւականութեան զգացումները, երբ իշխանութիւնը իր բարոյական հեղինակութեան ոյժով մտցնում է խաղաղութիւն և անդորրութիւն եղբայրասպան երկպառակութեամբ ծուլատուող ժողովրդի մէջ: Բագուից եկած չարագուշակ լուրերին նայելով, պէտք է արագ և իրական օգնութիւն: Այլապէս քաղաքին սպառնում է այնպիսի կոտորած և այնպիսի աւերում, որի առաջ դունատուած են միջնադարեան ֆանատիկոսութեան բոլոր սարսափները: Տեղական իշխանութիւնները Բագուում, ըստ երևոյթին, անզօր են հանդիսացել ձնշել կոտորածը իրանց միջոցներով: Արագ և իրական

օգնութիւն ցոյց տալ կարող է միայն բարձր իշխանութիւնը, որ յանձին ձեր գերազանցութեան վայելում է բարոյական հեղինակութեան ամբողջ ոյժը: Ձեր վճռից է կախուած հարկւրաւոր անմեղ մարդկանց կեանքի փրկութիւնը: Միայն այն որ — Աստուած չանէ — Բագուում վառուած հրդեհի բոցը իր արինահազանգ շողը կը գցէ մեր երկրի ուրիշ մասերի վրայ, գուցէ նաև Թիֆլիսում, տալիս է ինձ համարձակութիւն և սլարտաւորեցնում է խնդրել շուտով օգնութիւն հասցնել Բագուի ժողովրդին»:

Զբաւականանալով այդ գեկուցումով, Թիֆլիսի քաղաքագլուխը փետրուարի 9-ին հեռագրներ ուղարկեց Բագուի մահմեդական ազգաբնակչութեան մի քանի հեղինակաւոր ներկայացուցիչներին հետեւեալ մտքով. «Դիմում եմ ձեր ազդեցութեան ձեր դաւանակիցների վրայ, և խնդրում եմ յանուն այն ամենի ինչ որ թանգ է ձեզ համար, նպատակ ժողովրդի խաղաղացման և արիւնահեղ դէպքերի դադարեցման, որոնք անջնջելի արատ են դնում և ծանր պատասխանատուութիւն մեզ ամենքիս՝ խաղաղ կուլտուրայի մարդկանցս վրայ: Ուշ դարձրէ՞ք, թէ ինչ խորին վիճ է բացւում մեր դաւանակիցների դարևոր եղբայրական յարաբերութիւնների մէջ այդպիսի արիւնահեղ աւերումներով»:

Այս հեռագրիւններին ի պատասխան քաղաքագլուխ Վերմիշեանը ստացու հետեւեալ հեռագիրը Ֆարուխ բէկ Վեյկերովից. «Հայ և մահմեդական հոգևորականութիւնները նահանգապետի և պատուաւոր մարդկանց հետ շրջելով փողոցները, հանգստացրին ժողովրդին»:

Զբաւականանալով դրանով Թիֆլիսի քաղաքային դոման ընտրեց մի յատուկ յանձնաժողով, որ պէտք է փաստեր և տեղեկութիւններ հաւաքէ Բագուում կատարուած արիւնալի դէպքերի մասին, հարց ու փորձի ենթարկէ այնտեղից ժամանած անձերին, որպէսզի հնարաւոր լինի իմանալ, թէ ով է այդ հրէշաւոր դէպքերի պատճառը, նրանց պատասխանատուն և թէ ում պէտք է, իբր չարիքի հեղինակի, քաշել դատարանի առաջ:

Քաղաքագլխի նախաձեռնութեամբ Թիֆլիսի ազդարնակութեան բոլոր խաւերի պատգամաւորները ներկայացան փետր. 13. ին գններալ լէյտենանտ Ե. Դ. Մալամային, և Թիֆլիսի նահանգի ազգաբնակչութեան անունից իշխ. Դ. Զ. Մելիկով դիմեց կառավարչապետի պ. պաշտօնակատարին մի զգացուած ձառով, որի մէջ յայտնեց, թէ պատգամաւորութիւնը եկել է խնդրելու ոչ պաշտպանութիւն, ոչ արդարադատութիւն,

որովհետև նա համոզուած է, որ այդ բոլորը տրուելու է և առանց նրա խնդիրքի, այլ հայցում է՝ միացնել Կովկասի բոլոր ազգութիւնները ընդհանուր հայրենիքի սիրոյ մէջ: Այդ իսկ պատճառով պատգամաւորութիւնը խնդրում էր ուղարկել Բագու ցաւալի անցքերի պատճառների քննութեան և խաղաղութիւն մտցնելու համար բոլորից յարգուած իշխան Ի. Գ. Ամիրխորուն: Գեն.~լ. Մալաման յայտնեց որ ինքը արդէն խնդրել է այդ մասին իշխան Ամիրխորուն և կարգադրել որ Բագու գնան, բացի մի քանի օր առաջ մեկնած շէյխ-իւլ-իսլամից, նաև մուֆտին և Թիֆլիսի հայոց առաջնորդը: Էջմիածինը ևս ցոյց տուեց այդ աղէտի ժամանակ շուտափոյթ գործելու ընդունակութիւն և մեծ տակտ:

Թիֆլիսի առաջնորդը ստացաւ Վեհափառ Կաթողիկոսից հետեւեալ հեռագիրը՝ «Հրամայում ենք ձեզ անյապաղ դիմել ձեզ յանձնուած վիճակում բոլոր միջոցներին՝ հայերի և թուրքերի մէջ ընդհանումների առաջն առնելու համար. ներշնչեցէք մահմեդական հոգևորականութեան հետ միասին՝ փոխադարձ եղբայրական յարաբերութեան անհրաժեշտութիւնը դարևոր հարեանների մէջ. ամեն ջանք գործ դրեցէք այդ յարաբերութիւնը պահպանելու համար: Մեր հրամանը առաջարկում ենք յայտնել ձեզ ստորագրեալ անձանց և հիմնարկութիւններին»:

Եւ ինքը Վեհափառ Կաթողիկոսը մեկնեց Էջմիածնից և փետրուարի 12-ին ժամանեց Թիֆլիս:

Ի նկատի ունենալով, որ Բագուի սոսկալի աղէտը արձագանգ կարող էր գտնել Պարսկաստանում, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը ամսիս 13-ին հետեւեալ Փրանսերէն հեռագիրը ուղղեց Պարսկաստանի պետ Մուզաֆֆէր Էդլին Շահին. «Թէհրան, Նորին Արքայական Մեծութեան Մուզաֆֆէր Էդլին Շահնշահին Խրանի, Սրտի խորին ցաւով իմացայ, որ Բագուի մուսուլման և հայ ազգաբնակութիւնները, այդ բազմադարեան համադրացիները, արիւնահեղ և անմիտ ընդհարումներ են ունեցել միմեանց հետ երեք օրուայ ընթացքում և տուել են անմեղների բազմաթիւ զոհեր, որոնցից սարսում են մարդկային սիրտը և զգացմունքը: Յայտնելով այս մասին Ձերդ Արքայական Մեծութեան, աղաչում եմ սփոփել և խնամել Ձեր Արքայական ողորմածութեան հզօր գալիսոնի ներքոյ գտնուած իմ խոնարհ հօտը: Մկրտիչ, ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

Ահա և Շահի պատասխանը «Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին.

Նորին Սրբութեան Կաթողիկոսին Ամենայն Հայոց.

Ես ինքս շատ վշտացած եմ Բաղուի դէպքերից: Երջանիկ եմ հաստատելու, որ Պարսկաստանի հայերը օրինապահ հպատակներ են, որոնց համար ես կարող եմ Ձեզ հաւաստիացնել ամբողջ իմ բարեացակամութիւնս և բարձր պաշտպանութիւնս»:

Մուգաֆֆեր-եղլին

Թիֆլիսի թեմի հայոց առաջնորդն հրամայել էր այս ամսի 13 և 14-ին հոգեհանգիստների ժամանակ մահմեդական հոգեւորականների կողմից արտասանուած քարոզները թարգմանել տալ և ուղարկել իր թեմի ղանադան մասերը. մտածուած էր նոյն թարգմանութիւններն ուղարկել և Թաւրիզի ու Պարսկաստանի այլ հայաբնակ մասերը:

Այժմ տեսնենք Թիֆլիսի հայ հասարակութեան նախաձեռնած միջոցները:

Ուրբաթ, փետրուարի 11-ին, երեկոյեան ժամը 8-ին Թիֆլիսի հայոց առաջնորդարանում կայացաւ առաջնորդ Գաբրիէլի եպիսկոպոս Սաթուհեանցի նախագահութեամբ մի մեծ և բազմամարդ ժողով, որին մասնակցում էին հայ հասարակութեան ղանադան դատակարգների և խաւերի ներկայացուցիչներ մօտ 100 հոգի:

Բանալով նիստը սրբադանը յայտնեց, որ ներկայ ժողովը գումարել է՝ խորհրդակցելու համար այն միջոցների մասին որ պէտք է ձեռք առնել խաղաղութիւն և անվտանգութիւն հաստատելու թուրք և հայ տարրերի մէջ, և ապագայ աղէտների առաջն առնելու ու առհասարակ մտածելու, թէ ի՞նչ անել ներկայ ծանր պատմական ճգնաժամին: Այդ ժողովը կայացրեց հետևեալ որոշումները.

1) Ի նկատի ունենալով, որ Վեհափառ Կաթողիկոսը մեկնել է Էջմիածնից՝ Բազու գնալու, յատուկ պատգամաւորութեան միջոցով խնդրել Նորին Վեհափառութեանը՝ կանգ առնել Թիֆլիսում:

2) Ընտրել մի յանձնաժողով, բաղկացած 12 հոգուց և դնել այդ յանձնաժողովը Վեհափառի տրամադրութեան տակ, իբրև աջակից և խորհրդատու ժարմին: Այդ յանձնաժողովը, որ կը գործէ Վեհափառի անմիջական ղեկավարութեան ներքոյ, նրա կամ նրա կողմից լիազօր իրաւունքներով կարգուած մի եկեղեցականի նախագահութեամբ, կարող է խորհրդակցութեան հրաւիրել իրաւագէտ և ձեռնհաս անձանց թէ հայ և թէ զանազան ազգութիւններին պատկանող:

3) Յանձնաժողովը պէտք է քննէ թէ ի՞նչ միջոցներ պէտք է ձեռք առնել խաղաղութիւն պահպանելու, որպէսզի Բազուի

աղէտալի և զարհուրելի դէպքերը չկրկնուեն, չբռնկուեն ուրիշ քաղաքներում և գիւղերում, ուր ապրում են խառն հայերը և թուրքերը:

4) Դիմել շրջաքերականներով բոլոր քաղաքների և վիճակների հայ հոգևորականութեան ներկայացուցիչներին—առաջնորդներին, յաջորդներին և զործակալներին, որ նրանք խորհրդակցելով թուրք հոգևորականութեան և տեղական բանիմաց ու դիւր ունեցող անձնաւորութիւնների հետ, թէ հայերից, թէ թուրքերից, միջոցներ ձեռք առնեն բարոյական ազդեցութիւն գործել և ամեն մի թիւրիմացութեան առաջն առնել ու խաղաղութիւն սկսեցնել:

5) Աշխատել որ եկեղեցիներում և մզկիթներում հոգևորականութիւնը քարոզներ տայ ժողովրդին նոյն նպատակով:

6) Սաղաղացման համար վերոյիշեալ միջոցները գործադրել և Պարսկաստանում, ուր Բագուի աղէտալի դէպքերը կարող են արձագանք գտնել. այդ նպատակով օգտուել Թիֆլիսի պարսից ընդհանուր հիւպատոսի սիրալիր առաջարկութիւնից, որ ինքը պատրաստ է ամեն կերպ աջակցել—ամեն հնար գործ դնել, որ Պարսկաստանում հայերի և սլաւոնների մէջ որևէ խլրատում առաջ չգայ:

7) Սկսել անմիջապէս հանգանակութիւն՝ նիւթական անյապաղ օգնութիւն հասցնելու աղէտի զոհ եղած հայերի ընտանիքներին և հայ դժբախտացածներին և օգնութիւն հասցնելու զործը կենտրոնացնել յանձնաժողովի ձեռքում:

8) Հրաւիրել Թիֆլիսի գլխաւոր քաղաքներից հայ ազգաբնակութեան ներկայացուցիչներ՝ խորհրդակցելու համար ձեռք առնուելի միջոցների մասին:

9) Ի նկատի ունենալով, որ ապացուցուած իրողութիւն է թէ թուրքերը Բագում վաղօրօք զինուած են եղել, սլաւտաւորութիւն դնել յանձնաժողովի վրայ, որ նա հայ և ռուս իրաւագէտների և ձեռնհաս անձանց աջակցութեամբ մանրամասն և անաչառ քննութիւն կատարէ աղէտի ծագման խսկական պատճառների մասին և սլաւտաւորէ մի մանրամասն ղեկուցադիր՝ ներկայացնելու Վեհափառին, որ իր կողմից ևս ներկայացնէ ում հարկն է:

Ժողովում երկար վիճաբանութիւններ անդի ունեցան. եղան նոր առաջարկութիւններ: Ի վերջոյ ժողովն ընդունեց բոլոր վերև յիշած կէտերը մի քանի փոփոխութիւններով և նշանակեց կիրակի, փետրուարի 13-ին, Վանքի մայր եկեղեցում հոգեհանգիստ ընկած զոհերի յիշատակին:

Ապա ժողովը գաղտնի քուէարկութեամբ ընտրեց յանձ-

Նաժդոզով, բաղկացած հետևեալ անձերից (այբբենական կարգով) Աւ. Ահարոնեան, Հ. Առաքելեան, Իշխ. Ալ. Արղունեան, Ար. Բարեան, Ալ. Մէլիք-Ազարեան, Ս. Մէլիք-Ադամեան, Տ. Յովհաննիսեան, Բժ. Ա. Խատիսեան, Ա. Սահակեան, Լ. Սարգսեան, Բժ. Կ. Ստեփանեան, Ալ. Քալանթար, և 4 փոխ-անդամ. Բժ. Արծրունի, Աւ. Արասխանեան, Ե. Թովհեան և Յ. Սպէնգիարեան:

Յնցող արիւնալի անցքեր էին կարծես հարկաւոր որ մեծ զարկ տրուի հայ-թուրք-վրացական համերաշխութեան դադարին: Ամեն տեղ այդ ազգերի ներկայացուցիչները ցաւակցութիւն են յայտնում պատահած դժբախտութեան համար և միջոցներ են ձեռք առնում որ չարամիտ մարդիկ չզրգուեն կրքերը և նման դէպքեր չառաջացնեն և զաւանդուած: Հայերի հոգեհանգիստներին ներկայ են լինում թուրք հոգևորականութիւնը և ժողովուրդը, իսկ մահմեդականների հոգեհանգիստներին հայ հոգևորական, և աշխարհական ներկայացուցիչներ: Եկեղեցիներում և մզկիթներում համերաշխութեան և եղբայրութեան ճառեր են արտասանում: Իստեղիզենցիան և ժողովուրդը խառն ազգաբնակչութիւնների հետ միտնիզներ են կազմում... Մի խօսքով զեռ երբէք այնքան անկեղծ խօսքեր և փոխադարձ համակրանքներ չեն արտայայտել Կովկասի հարևան ազգութիւնները, ինչպէս Բազուի սարսափներից յետոյ. այժմ քէնի, վրէժխնդրութեան ձայներն խեղդում են մասսաների «կեցցէ՛ եղբայրութիւն և համերաշխութիւն» աղաղակների մէջ: Պէտք էր տեսնել զլուսնների այն ծովը, որ լքցուել էր փետրուարի 13-ին և 14-ին Թիֆլիսի Վանքի ընդարձակ բակը, պէտք էր լսել ամբոխի ձայնը, լսել թուրք, վրացի և հայ ճառախօսներին՝ համոզուելու համար որ Բազուի զոհերի արիւնով համերաշխութեան մի ուխտ է կնքուած Կովկասեան ազգերի մէջ:

Այդ ազգերի մամուլի ներկայացուցիչներն ևս, մոռացած մի քանի անհատների ատելութեան քարոզները, ազգուած մասսային տրամադրութիւնից, ցաւալի անցքերին նուիրեցին տողեր, որոնք ցոյց են տալիս որ մեր կեանքում Վելիչկո—Ճավ—ճավաձեան ուղղութիւնը մահուան է դադապարտուած: «Այսօր, ասում է «Յնոր. Փուրց.» երբ ամբողջ Ռուսաստանը սթափւում է իրան կաշկանդող խոր քնից, երբ ամեն տեղ տիրում է ընդհանուր շարժում լաւագոյն ապագայ ստեղծելու համար, այո՛, այսօր, ընդհանուր ոգևորութեան ժամանակ Բազուի դէպքերը, այս վերին աստիճանի ցաւալի անհամաձայնութիւնը իրրև դարհուրելի դիստոնանս են ներկայանում մեզ: Այս դէպքերի դիմաց մարդու սիրտը պատուում է, լքցւում, և արիւնն երակներում սառ-

չուժ: Չես հաւատում, երա՞զ է, թէ իրականութիւն. չէ՞ որ այս հոմահաւասար է սեփական ամենաթանկագին իղձերից հրաժարուելուն, չէ՞ որ այս նշանակում է ոտնակոխ անել մարդու սրբութեանց սրբոցը, իղէալը: Եւ յետո՛յ, Թրբ է տեղի ունենում այդ բոլորը. —այն ժամանակ, երբ պիտի վերջ դրուի բռնութեան, երբ պիտի ոչնչացուին այսօրուայ կարգերը, երբ մեր երևակայութեան մէջ արդէն այնքան պարզ նկատուում է մարդկային ազատ կեանքը, երբ հարկաւոր է, որ բոլոր կովկասեան ազգերը ձեռք-ձեռքի տուած եղբայրաբար կռուեն կովկասեան արշալոյսի համար: Եղբայրական միութեան, համաձայնութեան, դաշինքի փոխարէն—արինահեղութիւն եղբայրների և եղբայրասպան պատերազմ: Մի՞թէ սա էր հարկաւոր մեզ այսօր, մի՞թէ սա է մեր պատասխանը մեր թշնամիներին... Ո՞վ զտրիւցրեց չար և խաւար ուժերը, ո՞վ զինեց իրար դէմ երկու հարեան ազգերին, ո՞վ և ի՞նչը յարուցեց եղբայրասպան կոտորածը.— թող ամենասաստիկ քննութիւնը պատասխան տայ այս հարցերին:

Իսկ առ այժմ այս բազմաթիւ զոհերի առաջ, այսքան արտասուների, նեղութեան և թշուառութեան առաջ թող բոլոր կովկասցիք, բոլոր հասկացող ուժերը անյողդողդ երզում, սուրբ խոստում դնեն, որ մեր միտքը, հոգին, մեր ամբողջ կեանքը նուիրուած կը լինեն այսուհետեւ Կովկասի ազգերի եղբայրութեան և միութեան ամրապնդման: Կովկասեան ոչ մի ազգութիւն չէ կարող ապրել առանց կովկասեան այլ ազգութիւնների, և նա, ով սիրում է իր ազգութիւնը, իր հայրենիքը, նա պիտի սիրէ Կովկասը և կովկասեան բոլոր ազգութիւնները: Կովկասեան որ և իցէ ազգութեան ազատութիւնը և բարեկեցութիւնը հնարաւոր է միայն ազատ Կովկասում: Թող Բաղլում թափուած անմեղ արիւնը և կոտորուած կովկասցիք իրրեւ զոհ ծառայեն կովկասեան ազգերի եղբայրութեան և դաշինքին: Գոնէ այսուհետեւ սթափուենք, ըմբռնենք մեր պարտաւորութիւնները, և այդ կորուստի, այդ թանկագին, անմեղ կորուստի վրայ կանգնեցնենք կովկասեան միացած ազգութիւնների եղբայրական դաշինքի փառաւոր արձանը: Եւ թող չծիծաղեն թշնամիները.—մենք մի ենք, և միացած ուժով դէմ կը դնենք բռնութեան և չարութեան: Կովկասցիք, Բաղլում թափուած եղբայրական արիւնը, այնտեղ մորթուած անմեղ երեխաների հոգիները կը տան մեզ եղբայրութիւն, միութիւն և դաշն: Եւ մենք չենք կարող լուր:

Ահա և «Каспий» լրագրի խմբագիր Ալի Մարդան բէգ Թովչիբաշեւի կարծիքը, որ արտայայտուած է փետր. 16-ին Թիֆլիսի քաղաքագլուխ Վերմիշեանին ուղղած նրա հեռագրի մէջ: «Այս

րոպէին վերջացած հայ-թուրքական միտինգի թարմ տպաւորութեան տակ, բարոյական պարտքս եմ համարում ուրախացնել յանձին ձեր Թիֆլիսի ազգաբնակչութեան մահմեդականներին և հայերի ներկայացուցիչներին սրտ աւտայայտած բողոքի համար այն կեղծ հաւաստիացման դէմ՝ թէ գոյութիւն ունի որ և է թշնամութիւն երկու եղբայր ազգերի միջև, որը աննկարագելի ուղեորութեամբ ընդունուեց անհամար թուով ժողովուած հայերից, թուրքերից և ուրիշ ազգութիւններէց։ Անկեղծօրէն ցաւում եմ, որ մի քանի հանգամանքներ արգելք են հանդիսանում տպել իմ խմբավորութեամբ լոյս տեսնող լրագրի մէջ արտառանուած ճառերի էութիւնը, որոնք հրաւիրում էին երկու ազգերին յաւիտեանս յաւիտենից խաղաղ և միաբան մնալ։ Ժողովի վճռի մէջ անկեղծ շնորհակալութիւն է յայտնուած ձեզ ի նպաստ խաղաղութեան ձեր ցոյց տուած գործունէութեան համար։ Անձամբ ողջունում եմ ձեզ, սրտագին շնորհակալութիւն»։

Բազուի Նաւթարդիւնագործների համաժողովում ևս ուռւած արդիւ իրանց ճառերում ցոյց տուին թէ որքան ծանր է նրանց համար մեր իրականութեան պայմաններով առաջացած աղէտը և որքան անկեղծ կողմնակից են նրանք համերաշխութեան գաղափարին։ Փոխադարձ համակրութեան նման արտայայտութիւն տեղի են ունեցել և Բաթումում, Գանձակում, Երևանում, Ասխաբադում, Վլադիկապկասում և այլ քաղաքներում։

Վերջացնում ենք հասարակական դիտակցութեան և ինքնօգնութեան արտայայտութիւնների շարքը գրութեամբն այնպիսի մի միջազգային հիմնարկութեան, ինչպիսին է Բազուի Նաւթարդիւնագործների խորհուրդը, որ փետրուարի 12-ին ուղարկեց հետեւեալ հեռագիրը ֆինանսների և պետական կալուածների մինիստրին. «Պրաւոսլաւ, հայ և մահմեդական հոգեւորականութիւնը բոլոր ազգերի պատուաւոր անձերի հետ միասին, բաղաժող և Նաւթահորերի շրջանում երկու անգամ շրջելով՝ կոտորածը դադարեցրեց, բայց կրած ծանր օրերի տպաւորութիւններն այնքան ուժեղ են, որ կարգը բոլորովին վերահաստատուած համարել չէ կարելի։ Բնական սարսափի ազդեցութեան տակ քաղաքից մեկնում են ահագին խմբերով, բարձի թողի անելով ստացուածքները և գործերը—արդիւնագործներ, վարպետներ, բանուոր։ Արդիւնագործութիւնը և առևտուրը առանց բանուորական ձեռքերի մնալու վտանգի մէջ են։ Ազգաբնակչութիւնը հանգստացնել և խաղաղ սովորական կարգը վերահաստատել կարող է միայն այն լիակատար համոզմունքը, որ ազգաբնակչութեան կեանքը և գոյ-

քը պաշտպանութիւն կը գտնեն կառավարութեան կողմից: Նախարարիւնաբերողների խորհուրդը և բորսայի կոմիտէտը ենթադրում են, որ այդպիսի հանգստացում ազգաբնակչութեան մէջ մտցնել և արդիւնագործութեանն ու առևտրին հնարաւորութիւն տալ շարունակելու իր գոյութիւնն այսուհետև կարող է միայն Թագաւոր Կայսրի տիրական խօսքը Կովկասի բարձր իշխանութեանն ուղղած՝ ամենահեռանդուն միջոցներ ձեռք առնել՝ կարգը վերականգնելու և միաժամանակ անկողմնակալ քննութիւն կատարել սարսափելի դէպքի վերաբերմամբ՝ յանցաւորներին գտնելու համար: Նախարարիւնաբերողների խորհուրդը և բորսայի կոմիտէտն ամենախոնարհաբար խնդրում են ձեր բարձր գերազանցութեանը արկանել առոտոս Նորին Մեծութեան ներկայ միջնորդութիւնը և չզլանալ ձեր աջակցութիւնը այս խնդրին բաւարար վախճան տալու:—Միւս կողմից նախարարիւնաբերողների խորհուրդը և բորսայի կոմիտէտը այս հեռագրի պատճէնը հաղորդելով Աստրախանի, Սարատովի Նիժնի-Նովոքոբոլի, Մոսկուայի և Պետերբուրգի բորսաների կոմիտէտներին, խնդրում են նրանցից պաշտպանել այդ հեռագրում յայտնուած իրանց միջնորդութիւնը:

Այդ ընդհանուր բարձր տրամադրութիւնների շնորհիւ աղէտից փրկուածների նիւթական օգնութեան գործն էլ շատ աջող է գնում. դժբախտացածների օգուտին Բադուի նախարարիւնադործների ժողովը որոշեց 100 հազար յատկացնել և Բադուի քաղաքային վարչութիւնը՝ 50 հազար, առատօրէն նուէրներ են հաւաքում նաև բոլոր թերթերի խմբագրութիւններում ու զանազան քաղաքների վարչութիւններում: Առանձին ուշադրութեան արժանի է վրաց տպարանի բանուորների նուիրատուութիւնը, որին կցած է հետևեալ նամակը, «Յնորիս Փուրցէլ»-ում տպուած.

«Պ. խմբագիր. խոնարհաբար խնդրում ենք ձեր յարգելի լրագրի միջոցով յայտնել մեր ցաւակցութիւնը Բադուում պատահած աղէտի պատճառով, թիֆլիսում համարեա ամենքից շուտ մինք իմացանք այդ սարսափելի և միևնույն ժամանակ կասկածելի լուրը, մեր, գրաշարներիս ձեռքերը համարեա թուլանում էին այս բառերի շարելիս, մեր տխրութեանը չափ ու սահման չկար: Մտածում էինք, միթէ այս բոլորը ճիշտ է և եթէ ճիշտ, միթէ մենք այս տեսակ հեռագիրների և նամակների շարելուն էինք սպասում: Այն էլ երբ, այսօր, այժմ, երբ մեր արեան ամեն մի կաթիլը անգնահատելի է: Միթէ ներկայումս այդպէս ի դուր և բոլորովին անօգուտ պէտք է թափուի մեր արիւնը: Հազարաւոր դիակներ փողոցում ընկած լինեն և ինչո՞ւ,

նւմ համար: Թափուեց այն եղբայրների արիւնը, որոնք մինչև այսօր իրար վիրաւորանք չեն հասցրել: Ուրեմն, ի՞նչը խառնակութիւն գցեց ժողովրդի մէջ, ի՞նչն էր պատճառը: Միթէ մեր հարեան թուրքերը իրանք չեն հեռացրել անպատիժ, ֆլաւակար և չար անհատներին: Սրանով վերջացնում ենք մեր նամակը, որովհետև դիտենք, որ տեղը մեզ թոյլ չի տայ, որ ինչ ցանկանում ենք և գիտենք—նկարագրենք... Համբերութիւն, եղբայրներ և ընկերներ, ապագան ցոյց կը տայ որ չենք սխալուել: Այս նամակի հետ ուղարկում ենք 34 ր. 60 կ., որ հաւաքել ենք մեր միջից Բագուի հաղարաւոր դժբախտացած ընտանիքների և մեր վիրաւորուած եղբայրներին օգնելու համար»:

Պէտք է յոյս ունենալ որ և Ռուսաստանի միւս մասերն ևս ցոյց կը տան բարոյական և նիւթական աջակցութիւն—արմատախիլ անելու համար նման դէպքեր առաջացնող կեանքի հիմնական պատճառները:

Լ. Ս.

17 Փետր.

—«Кавказъ» պաշտօնական լրագրից իմանում ենք, որ Սիմբիրսկի, Սամարայի, Սարատովի և Կազանի նահանգներից եկած ռուս բանուորները թողնում են նաւթահանքերը և ընտանիքներով մեկնում են Սիվերան, Երկիւղից ստիպուած, որովհետև չարամիտ մարդիկ լուր են տարածել թէ կոտորելու են ռուս բանուորներին: Փետրուարի 17-ին մեկնեցին 400 հոգի, չորս օրում մեկնել են 1000-ից աւելի: Ամեն օր հեռացողների թիւն աճում է: Հայերի և թուրքերի խաղաղ միացման պատրուակով կազմում են բանկէտներ: Դուժայի արտակարգ նիստը չէ թոյլատրուած:—Արձանագրուած են 202 սպանուած. 155 հայ, 25 թուրք և 7 ռուս, մնացածները միւս ազգութիւններից: Վիրաւորուած են 159 հայ, 75 հայ, 41 թուրք և 24 ռուս: Ձերբակալուած են 19 հոգի, մեք մեղադրուած են թաւանի մէջ:—Առաւօտեան ժամը 10-ին իշխան Ամիրխանովի նախագլութեամբ կայացաւ դատական քննութեան ներկայացուցիչների, երդուեալ հաւատարմութեան, ծայնաւորների, քաղաքագլխի, հայ և թուրք ազգային անձերի խորհրդակցութիւնը: Հրաւիրուած էին լրագրողների խմբագիրները, որոնք չեկան:

—Փետրուարի 18-ին Նորիկ Երական Մեծութիւնը

բարեհաճել է հրամայել յայտարարել Բագու քաղաքը և Բագուի նահանգը պատերազմական դրութեան մէջ, լիազօրութիւն տալով Կովկասեան կառավարչապետի պ. պաշտօնակատարին ընտրել այդ դրութեան գործադրուելու ընթացքում մի գէներալ նահանգապետ: Այդ պաշտօնի համար գէներալ-լէյտենանտ Մալաման ընտրեց գէներալ-ադիւտանտ իշխան Ամիրխորուն:

Պաշտօնական տեղեկութիւն Բութայիսի եւ Նրեւանի դէպքերի մասին

Փետրվարի 14-ի առաւօտեան Բութայիսում տեղական արական գիմնազիայի աշակերտները, հաւաքուած գիմնազիայի մօտ, իմանալով պարապմունքների դադարման մասին, աղմուկով անբաւականութիւն յայտնեցին և ցրուեցին իրանց տները. այդ ժամանակ նրանցից մէկը կոտրեց շէնքի դրան երկու ապակիները: Իսկ բէալական դպրոցի աշակերտները, երբ նրանց յայտնեցին դասերի դադարումը, մօտան դպրոցի բակը և, կազմելով 200 հոգուց մի խումբ, սկսեցին «ուրա» դռնել, պարզեցին 2 կարմիր դրօշակ, ատրճանակներ արձակեցին, որի ժամանակ պատահարար վիրաւորվեց 6-դ դասարանի աշակերտ Ալէքսանդր Կոսիանովը: Այդտեղ գտնուող պրիստան ուզեց մտնել դպրոցի բակը ոստիկաններով միասին, բայց տեսուչը խնդրեց չանել այդպիսի բան, խոստանալով ինքը հանդիստացնել: Դպրոցից դուրս գալով, բէալիստները հաւաքուեցին Բալախանսկի փողոցում, մօտ 200 մարդ, որոնց հետ միացան շատ գիմնազիստներ: Այդ ամբոխը, երգով և աղմուկով դիմեց դէպի ս. Նունէի իգական դպրոցի շէնքը, ուր նրանց վրիճարանը ոստիկանապետն ուրիշ պրիստաւի հետ միասին: Աշակերտների մի մասը փախել են իրանց տները, միւս մասը մօտ 70 հոգի, ձերբակալուել և յանձնուել իրանց տեսուչներին, որոնք նրանց ազատ թողին՝ աղնիւ խօսք առնելով, որ այլ ևս ոչ մի անկարգութիւն չեն առաջացնի: Յետոյ օրուայ և երեկոյեան մնացած ժամանակը բէալիստները հաւաքուել էին բուլվարում և գլխաւոր փողոցներում, բէլովէրներ արձակելով, և չէին կատարում ոստիկանութեան պահանջը՝ ցրուել և տները դնալ:

Նրեկոյեան ժամը 5-ին երիտասարդների մի մեծ խումբ, որին միացան մի քանի գործակատարներ, (200-ից աւելի մարդ) սկսեց քարեր նետել և ատրճանակ արձակել ստրաժնիկների պահակի վրայ, որից վիրաւորուեցին երկու ձիեր: Մտրաժնիկներն էլ, ստիպուած՝ կրակ բաց արին ցուցարարների վրայ: Ամբոջ էրեկոյի ընթացքում բուլվարի կողմից, տների լուսամուտներից և պատշգամբներից կրակ էին տնում կազակների և

ստրաժնիկներին վրայ, որը դադարեցնելու համար, ստիպուած գիմուեց զէնքի: Մի քանի կազակներ ստացան քարերից բաւական զօրեղ վէրքեր, իսկ ցուցարարներէից սպանուեց գործակատար Տեփլորաձէն և ծանր վիրաւորվեց Խաբուրգանիեա արհեստաւորը, գործակատար Բոկէրիան և Թեթև վէրք ստացան գիմնազլիստ Գոգոբէրիձէն, բէալիստ Չիզուան և ծառայ Բասանաշ-վիլին»:

Փետրուարի 19-ին Երևանում, Երեկոյեան ժամը 7-ի մօտերը, նահանգապետի տան ճանապարհին, խէնջարի մի քանի հարուածով անյայտ յանցաւորները սպանել են նահանգական բժիշկ Ուրազովին: Խնչպէս երևում է, սպանութիւնը կատարուել է քաղաքական նպատակով:

Փետրվարի 20-ի առաւօտեան ժամը 11-ի մօտերը, փայտի հրապարակի վրայ, երկու մահմեդականներ կուռեցին և իւրար վրայ կրակ արին: Այդ պատճառով աղմուկ բարձրացաւ, շրջապատ տներէից և խանութներէից կրակ արին, մեծ մասով դէպի օդը: Սպանուեցին 3 հայ և մի թուրք, վիրաւորուել են մի տեղացի հրէայ, 2 մահմեդական և 7 հայ: Անմիջապէս խառնակութեան տեղը եկած հերթապահ վաշտը, ոստիկանութիւնը և ստրաժնիկները դադարեցրին անկարգութիւնները: Նահանգապետը զօրքերի հրամանատարի, հայոց վիճակաւոր առաջնորդի, քաղաքագլխի, հայ և մահմեդական հասարակութիւնների ներկայացուցիչների հետ միասին շրջեցին քաղաքը, որը քիչ յետոյ, ըստ երևոյթին հանգստացաւ:

Փետրվարի 21-ին ոստիկանութիւնը, պատուաւոր հայերի և մահմեդականների հետ միասին, վաղ առաւօտից շրջում էր բազարում և շուկաներում. ամեն ինչ խաղաղ էր: Առաւօտեան ժամը 10-ի մօտերը բազարում մի քանի անգամ կրակ բաց արին, իսկոյն քաղաքի զանազան մասերում հրաձգութիւն սկսուեց: Անկարգութիւնները ¹/₂ ժամուայ մէջ խաղաղացրին ոստիկանութիւնը և զօրքերը: Վաճառատները փակուել էին: Այդ օրն սպանուեցին 7 մահմեդական և 1 հայ, վիրաւորուեցին 12 մահմեդական և 6 հայ: Հանգստութիւնն ապահովելու համար նահանգապետը, բերդապահ զօրքի գլխաւորի հետ համաձայնութեան գալով, նշանակեց քաղաքի մէջ ուժեղացրած պահանութիւն բացի ոստիկանական պահակներից նաև զօրքերի օգնութեամբ:

—Դուրիայում, Սև ծովի ափին Օղուրգէթի գաւառում լուրջ անկարգութիւններ են ծագել: Առանձին պատգամաւորութիւն՝ բազկացած Թիֆլիսի նահանգապետից, ազնուակա-

նութեան գաւառային պարագլուխներէից, Թիֆլիսի, Բաթումի և Օզուրգէթի քաղաքապետներէից, Քուծայիսի քաղաքային ինքնավարութեան ներկայացուցչից, Թիֆլիսի ազնուական հոգային բանկի նախագահից, «Յնորիս Փուրցելի» և «Իվերես» լրագրների խմբագրներից և այլ անձերից, փետրուարի 16-ին ներկայացան երկրի կառավարչապետի պաշտօնակատար գեներալ Մալամային, խնդրելով որ լիազօրութիւն տրուի կառավարչապետի խորհրդի անդամ Ն. Ա. Կրիմ-Գիրէյին պարզել տեղի ու տեղը Օզուրգէթեան գաւառում բոլոր այն պատճառները, որոնք ստիպել են ուղարկելու այնտեղ զեներալ-մայոր Ալիխանով—Ավարսկոն ատանձին լիազօրութիւններով: Փետրուարի 17-ին պատգամաւորութիւնը ստացաւ զ.-լ, Մալամայից պատասխան, այն ժառով, թէ նա՝ պարզելու համար Գուրիայում տեղի ունեցած շարժումների պատճառը, ուղարկում է Ն. Ա. Կրիմ-Գիրէյին, որին տրւում են Ալիխանով—Ավարսկոն լիազօրութիւնները, թէ տեղական մամուլին կարելիութեան սահմաններում տրուելու է իրաւունք յայտնելու իր կարծիքը գուրիական գործերի մասին և թէ ատմինիստրացիայից նշանակուած գիւղական տանուտէրերը հեռացուելու են և գիւղական համայնքներին իրաւունք է տրուելու նրան փոխարէն ընտրել իրանց ներկայացուցիչներին:

—«Յնորիս Փուրցելի» լրագիրը հաղորդում է, որ զեներալ Ալիխանով—Ավարսկոն հրամանատարութեամբ Օզուրգէտ ուղարկեցին մի քանի հազար զօրքեր, արտիլէրիա և պատերազմական հիւանդանոց: Որպէս Նատանէրիից հաղորդում են նոյն լրագրին, այնտեղ իջել են գրէնադէրների արտիլէրիական մի զօրաբաժին, 3 օֆիցէր, հարիւրի չափ ձիաւորներ և երկու թնդանօթ: Նոյն տեղն է գնացել ելիսաւետպոլի գնդից վեց վաշտ: Փետրուարի 15-ին գնացել է այնտեղ էլի պլաստունեան գունդը:

—Զուգղիդից գրում են «Յնորիս-Փուրցելի» լրագրին, որ փետրուարի 15-ին այնտեղ անկարգութիւններ են տեղի ունեցել: Այդ պատճառով երկու հարիւրի չափ կազակներ են գնացել Զուգղիդ:

—«Յնորիս-Փուրցելի» լրագիրը հաղորդում է, որ յունուարի վերջերում Թէլաւի գաւառի մի քանի գիւղերի գիւղացիներ, մօտաւորապէս 200—300 մարդ, մտել են տեղական կալուածատէրերի, ի միջի այլոց իշխան Ն. Գ. Ճաւճալաձէի անտառը և սկսել են ծառերը կտրատել: Թէլաւի գաւառապետը օլնական զօրք է խնդրել նահանգապետից՝ ժողովուրդը խողալացնելու համար: Նահանգապետը գիւղացիներին հանգստա-

ցնելու դործը յանձնել է Թիֆլիսի գաւառապետ իշխան Զանդիբեիին, որը այժմ Կախէթումն է:

Պաշտօնական տեղեկութիւն Գուրիայի ղեպքերի մասին

«Կերչին 3 տարիների ընթացքում Գուրիայի մէջ (Գուրիայի նահանգ, Օզուրգէթի գաւառ) և նրա զրացի տեղերում նախ ծագեց հողային շարժում գիւղացիների մէջ հողատէրերի դէմ, իսկ յետոյ ակներև հակակառավարչական խլրտում, մի ամբողջ շարք քաղաքական սպանութիւններով և սպանութեան փորձերով կառավարչական, հասարակական պաշտօնատար և հողերական անձերի դէմ, նոյնպէս և աւագակային յարձակումներով, հրձգութիւններով և այլն: Կովկասի գլխաւոր վարչութեան ձեռնարկած միջոցները խաղաղութիւնը վերականգնելու ազդաբնակութեան մէջ՝ չհասցրին ցանկալի հետևանքի: Չարափաւ պրոպագանդը չէր զաղարում և այժմ դառել է արդէն ակներև սպառնալուծիւն օրինական կարգի դէմ:

Այդ պատճառով Կովկասի գլխաւոր վարչութիւնը ստիպուած էր դիմել արտակարգ միջոցների պետական կարգը և հասարական հանդստութիւնը վերահաստատելու համար: Կովկասի կառավարչապետի № 15 հրամանով՝ փետրուարի 18-ից՝ Գուրիայի նահանգի, Օզուրգէթի գաւառը և Բաթումի շրջանի Կլիտրիշեան գաւառակը հանուած են Գուրիայի և Բաթումի զինուորական նահանգապետների վարչութիւնից և ենթարկուած են քաղաքացիական տեսակէտից, մինչև այդ վայրերում լիակատար կարգ վերահաստատուելը, Կովկասեան զինուորական շրջանի զօրքերում ծառայող գեներալ-մայօր Ալիխանովին, որի հրամանատարութեան տակ դրուած է մի յատուկ զօրամաս: Սակայն Կովկասի կառավարչապետի պաշտօնակատարը հնարաւոր համարեց դիմել վերջին միջոցին—համոզել և հասկացնել ազգաբնակչութեանը յատկապէս ուղարկուած անձի միջոցով ենթարկուել հաստատուած իշխանութիւններին և հպատակուել օրէնքին: Այդ նպատակով գեներալ լէյտէնանտ Մալաման Օզուրգէթի գաւառն է ուղարկել կառավարչապետի խորհրդի անդամ գաղտնի խորհրդական Սուլթան-Կրիմ-Գիրէյին, որին յանձնուած է շրջել Գուրիայի ըլուր գիւղական համայնքները, ծանօթանալ ազգաբնակչութեան կարիքների հետ և պարզել նրա դժգոհութեան պատճառները և յայտարարել, որ ըլուր օրինական և արդարացի խնդիրները, եթէ նրանք կառավարչապետի իշխանութիւնից դուրս չեն, անյապաղ բաւարարութիւն կը ստանան, իսկ տեղական իշխանութեան իրաւունքից դուրս հարցերի մասին եղած միջնորդութիւնները անյապաղ կը հասցնուեն Թաքաւոր Կայսրին ի գիտութիւն:

Փետրուար, 1905.

—«НОВОСТИ» լրագրում տպուած է. «Պետերբուրգ է եկել հայերից մի պատգամաւորութիւն միջնորդելու, որ հայ հասարակութեանը վերադարձնեն այն իրաւունքները, որ խլուել էին նրանից ֆոն-Պլէվէի օրով,—կարգադրել հոգևոր զրամագլուխները: Ինչպէս լսել ենք, այդ միջնորդութիւնը պէտք է ենթարկուի մինիստրների կոմիտէտի քննութեանը, որին ներկայացրուած է այդ մասին մի մանրամասն զեկուցում»:

Վեհափառ Կաթողիկոսի կողմից Պետերբուրգ գնացած պատգամաւորութիւնը, ինչպէս հաղորդում են «Մշակին», հեռագրել է Նորին Վեհափառութեան, որ փետրուարի 16-ին ներկայացել է Ներքին գործերի մինիստր Բուլգինին և ներկայացրել է Վեհափառի զեկուցագիրը:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ներկայ փետրուարի 4-ին պէտք է քննութեան ենթարկեն հայոց եկեղեցական կալուածների վերաբերեալ խնդիրները:

—Ռուսներին Անդրկովկաս գաղթեցնելու համար գանձարանը մեծ գումար յատկացրեց: Այդ գումարից, ինչպէս հաղորդում է «Յնոր. փուր.» Թիֆլիսի նահանգում ծախսելու համար կառավարչապետի պաշտօնակատարը նշանակեց 33,7000 ռուբլի:

—Թիֆլիզի քաղաքային խորհուրդը յունուարի 17-ի նիստում միաձայն որոշեց՝ յարուցանել հաստատուած կարգով միջնորդութիւն որ քաղաքային միջոցներով պահպանուող բոլոր ուսումնարանները յանձնուեն քաղաքի լիակատար տնօրինութեան ոչ միայն տնտեսական, այլև կրթական կողմից:

—Ներքին գործոց մինիստրը հաստատել է «Կովկասում տպագրական գործով զբաղողների փոխադարձ օգնութեան ընկերութեան» (Общество взаимопомощи лицъ, занимающихся печатнымъ дѣломъ на Кавказѣ) կանոնադրութիւնը:

Պաշտօնական հաղորդագրութիւն
Թիֆլիսի, Բաթումի եւ Կովկասի այլ տեղերի բանուորական խառնակութիւնների մասին

—«Յունուարի 21-ի երեկոյեան գործադուլի զրդիչները եռանդով տարածեցին Թիֆլիսում հակա-կառավարչական կոչեր, որի ժամանակ ոստիկանութիւնը ձերբակալեց մի քանի յանցաւորների: Յունուարի 22-ին բանուորների գործադուլը շարունակուում էր, բայց օրը խաղաղ անցաւ:

Կիրակի, յունուարի 23-ին, Թիֆլիսում նկատուեց աստիճանաբար աճող մի բանուորական հոսանք զէպի Գոլովինսկի պրոսպեկտ, Սալլատսկի բազար և Երևանեան հրապարակ:

Յերեկուայ ժամը 12-ի մօտերը Թատրոնական փողոցի կից, Կայսերական Թատրոնի կողքին, յանկարծ Գոլովինսկի պրոսպեկտ խուժուեց մի ամբոխ, որին անմիջապես միացան պրոսպեկտում եղած բանուորները: Յուցարարները, մօտ 300 հոգի, պարզեցին կարմիր դրօշակ, սկսեցին ամեն կողմ կոչեր ցրել և ատրճանակներից կրակ բանալ ոստիկանների վրայ, որոնք յարձակուել էին դրօշակը խլելու: Այն ոստիկանը, որ դրօշակը խլում էր ցուցարարի ձեռքից, ստացաւ երկու լուրջ վէրք, և վայր ընկաւ. միւս ոստիկանը, որ նորից խլեց դրօշակը, նոյնպէս վիրաւորուեց և ընկաւ, իսկ երրորդը, որ վերջնականապէս խլեց դրօշակը և ձերբակալեց զդրօշակակրին, ստացաւ խէնջարի մի վէրք:

Անկարգութիւնը 5 բոպէից աւելի չտևեց: Յուցարարների ամբոխը, որի անդամներից շատերը զինուած էին, արագ ցրւաւ եկաւ քաղաքային ոստիկանութեան և պահապան ոստիկանների ձեռքով:

Ձերբակալուեցին 30 ցուցարար: Հաւաքեցին 2 պարկ կոչեր կամ պրոկլամացիաներ: Դրանից յետոյ դէպքի տեղը հասան կազակներ և զօրամասեր, բայց նրանք ստիպուած չեղան զէնք գործածել: Ամբոխի մի մասը, հալածուելով կազակներից և ձիաւոր ոստիկաններից, փախաւ մօտաւ Բարեատինսկի փողոցի ծայրին եղած մեծ շինութեան մէջը և փակեց նրա դռները: Երբ ոստիկանութիւնը կողմնակի ճանապարհով մօտաւ այնտեղ, բանուորները յարձակուեցին ոստիկանի վրայ և խէնջարով մի քանի վէրք հասցրին նրա զլխին, որոնցից թուլացած նա վայր ընկաւ: Շինութեան մէջ փակուած ամբոխին շուտով ցրեցին, փախցնելով զանազան կողմեր: Փախած ցուցարարները, ըստ երևոյթին, ուզում էին նորից հաւաքուել Բաղարնաեա հրապարակում, բայց ցրուեցին նրանց:

Վնասուած ցուցարարների թիւը դեռ իսկապէս չէ որոշուած, բայց յայտնի է, որ հիւանդանոցները տարուած են 10 վիրաւոր, որոնցից մէկը ծանր վէրքերով: Ոստիկաններից վիրաւոր են 4 հոգի, որոնցից մէկը ծանրապէս. մի քանիսն ստացել են քերծուածքներ և կտրուածքներ:

Արդրկովկասի երկաթուղու գծի վրայ գործադուլը շարունակուած է տարածուել վերջին օրերս: Յունուարի 22-ին գործադուլ արին Կիւմոնի, Նիգօխտի, Սաջէվախօ, Կոպիտնարի, Աբաշա և Չալոդխաի կայարանների «ստրելոչնիկները» և պահապանները:

Փոթի կայարանում մի և նոյն օրը, բացի նաւահանգստի բանուորներից, գործադուլ արին մարդանցի բանուորները,

խակ յունուարի 23-ին՝ բոլոր շոգեշարժների մեքենավարները, վերջիններս շոգեշարժները թողին գծերի վրայ և դէպօներում՝ առանց կրակի:

Յունուարի 22-ին, ցերեկուայ մօտ ժամը 1-ին, զինուորական պնայքը, որ տանում էր Կուրախակի գունդը գէպի Բաթում, խորտակուեց, որովհետև չարամիտները Սամորէզի կայարանի մօտ հանել էին գծերը: Մարդկանց դժբաղդութիւն չէ պատահել:

Վերջին օրերի ընթացքում գործադուլը թիֆլիսում տարածուեց սպանդանոցում միւս մորթողների մէջ, իսկ յունուարի 25-ի երեկոյից գործադուլ արին և դեղագործներն ու դեղատների աշակերտները, նպատակ ունենալով փակել տալ տեղատները: Նրանց՝ աշխատանքից հեռացնող անձերից ձերբակալուած են 12 հոգի:

Յունուարի 24-ի առաւօտեան ժամը 7-ին, գործադուլ անողների սպանդանոցների ազդեցութեան տակ, Բաթումի երկաթուղու գէպօի բանուորներն ու արհեստաւորները աշխատանքները դադարեցրին և ցրուեցին իրանց տները:

Յունուարի 25-ից թքվիրուլիում գործադադար են արել ածխահանքերի բանուորները:

Կուրիլի և Շորապան կայարանների դէպօներում, իսկ վերջինում նաև ամսով վարձուած վերանորոգիչ բանուորները, բռնակիրները և բռնեք վարձողները ցրուեցին, առանց անկարգութիւններ առաջացնելու:

Մի և նոյն օրը Գանձակում, երկաթուղու գէպօի բանուորները, 200-ից աւելի մարդ, աշխատանքները դադարեցրին և պահանջեցին իրանց նիւթական վիճակի բարելաւում, իսկ երեկոյեան դէմ՝ գործադադարների սպանդանոցների ազդեցութեան տակ աշխատանքները դադարեցրին երկաթուղու միւս ստորին ծառայողներն էլ:

Յունուարի 26-ին գործադուլը տարածուեց նաև Չխատուրիում:

Յունուարի 28-ի առաւօտեան Կուրիլիում գործադադարները խումբը մտադրութիւն ունէր ցոյց անել, բայց փողոցներում թափօր կազմելու հէնց սկիզբում, տեղական ոստիկաններից մէկը, որին ամբողջ ծեծեց, երկու անգամ կրակ արեց. ամբողջը ցրուեց:

Յունուարի լոյս 29-ի գիշերը՝ Լանչխուտի կայարանի մօտը կամուրջից մէկի վրայ նկատուեց գծի փչացրած լինելը. երկաթէ գծերից մէկը հանուած էր, իսկ գերանները փչացուած: Վնասուեան իսկոյն վերաշինեցին:

Յունուարի 26-ից վերսկսուեց Բագուի տպարանական բանուորներին գործադուլը, որից առաջացաւ այն, որ նորից լրագիրները զաղարեցին: Յունուարի 28-ին դրանց միացան երկու գործարանների բանուորներ: Անկարգութիւններ չեղան:

Յունուարի 25-ին Բաթումում բոլոր գործարանները գործադուլ արին: Խանութները և վաճառատները բաց արին ոստիկանութեան ստիպումով: Կառքերը դուրս չեկան փողոց: Յունուարի 26-ի առաւօտուանից բոլոր խանութները բացուեցին և կառքերի մի մասը գործի սկսեց ոստիկանութեան ձեռնարկած միջոցներին աչքի առաջ ունենալով: Մի շողենաւում ուսւ բանուորները, ոստիկանութեան պաշտպանութեան տակ վերսկսեցին աշխատանքը: Նոյն օրը երեկոյեան ժամը 6-ին 3 բանուոր սպանեցին աւագ ոստիկան Կոնդրատելիչին: Սպանողները փախան: Յունուարի 28-ին գործադուլ արին մասնաւոր անձերի և հիւրանոցների ծառաները: Մի և նոյն օրը սպանուեց երկաթուղու կոնգուկտոր Իւսիւնչուկը անյայտ չաւրամիսների ձեռքով:

Քութայիսում անկարգութիւններն սկսուեցին յունուարի 19-ին: Երեկոյեան ժամը 6-ին քաքաքային բուլվարից դուրս եկող ամբոխից շոկուեցին 100 հոգու չափ երիտասարդներ, որոնք «Մարսէյեզ» երգելով, բղաւելով և շուացնելով շարժուեցին Միքայէլեան փողոցը՝ Ուպրավայի մօտերը, դէպի պասսաժը: Այդտեղ ցուցարարներին զիմաւորեց ոստիկանութիւնը, որը և կարողացաւ վերջապէս ցրել ցուցարարներին: Ամբոխը ճանապարհին կոտորատեց փողոցների լապտերները, խանութներ, ուպրավայի, թատրոնի, արական գիմնազիայի և Բէլլիզիօնի դեղատան ապակիները: Ցուցարարներից ձերբակալուած են 7 հոգի: Հետեւել օրը նայնպէս 100-ի չափ երիտասարդներ ուղեցին վերսկսել ցոյցը, բայց «Րոսիա» հիւրանոցի մօտ պատրաստ դտնուած ոստիկանական պահապանները անմիջապէս ցրեցին ամբոխը, որը կարողացաւ կոտորատել միայն մի քանի լապտերներ: Տեղի ունեցած ընդհարման մէջ մի ոստիկան զըլխին թեթեւ վէրք ստացաւ: Ձերբակալուեցին 40 հոգի: Յանցաւորներին ենթարկում են դատաստանի: Յունուարի 25-ին Քութայիսում նորից խառնակութիւններ տեղի ունեցան, բայց ոստիկանութեան ձեռք առած միջոցների շնորհով անյասպաղ դադարեցին:

Բագուի նաւթահանքերի բանուորներին մէջ ծագած խմորումն արդէն զեկտեմբեր ամսին ազդեց Բաթումի բանուորներ-

րի տրամադրութեան վրայ: Բագուից եկած ագիտատորների ազդեցութեան տակ դեկտեմբերի 20-ի առաւօտեան Ռոտշիլտի և Մանթաշեանի գործարանների բանուորները, 300—400 մարդ, խմբով հաւաքուեցին Բարցխանա գետի կամուրջի վրայ՝ սպարանքային կայարանի մօտերը, պարզելով մի քանի կարմիր դրօշակներ՝ յեղափոխական մակադրութիւններով և ատրճանակները դէպի վեր կրակելով, երկաթուղու գծերով դիմեցին գէպի երկաթուղային գէպօն, կոչեր ցրելով: Սակայն 10 բուլէ յետոյ նկատելով մօտեցող կազակներին, ամբոխը ցրուեց՝ առանց որևէ դիմադրութեան: Ձեռք չառնուեց ոչ մի ծայրայեղ միջոց, և հետեակ օրն արդէն բոլոր գործարաններում բանուորները խաղաղութիւնով վերսկսեցին աշխատանքները: Բայց խմորումը բանուորների մէջ չհանդարտուեց:

Յունուարի 17-ի առաւօտեան Բաթումի նաւահանգստում երեացին 500-ի չափ բանուորներ և Ռուսական և Ռոսսիական շոգենաւային ընկերութիւնների երկաթուղային և նաւամատուցների բոլոր բանուորներին հետները տարան, արգելելով նրանց աշխատել՝ մահուան սպառնալիքի տակ: Պահապաններին թողին իրանց տեղերում, որ հսկեն ապրանքների կոյտերի վրայ: Անկարգութիւններ չկատարեցին. բռններ նաև դնել, նաւից հանել և տեղափոխելը մի առ ժամանակ դադարեց: Գործադուլ անողները պահանջում են օրավարձի յաւելում: Մի և նոյն օրը գործադուլ արին Ռիօն կայարանի բուֆէտի ծառաները, պահանջելով որ ռոճիկներն աւելացնեն 1½ անգամ և բնակարան տան: Զիջելով կայարանի գլխաւորի համոզեցուիչ խօսքերին, ծառաները մնացին աշխատելու մինչև յունուարի 20-ը: Հետեակ օրը, յունուարի 18-ին՝ գործադուլ արին բոլոր վերանորոգող բանուորները, նոյնպէս և գծի վրայից անցնելու գործում բանող պահապանները, որոնք ծառայում են Բաթումից մինչև Սաջէվախօ. վերջիններս էլ թողին իրանց պաշտօնատեղերը և հեռացան, պահանջելով վարձագնի աւելացում:

Յունուարի 10-ին Բաթումի գործարաններում միայն մի աննշան աշխատանք էր կատարւում: Երկաթուղու և ուրիշ բոլոր հիմնարկութիւնների բոլոր կանտորշիկները և կշռողները, սպառնական նամակներ ստանալով, աշխատանքները դադարեցրին: Կառապանները, որ ոստիկանութեան պահանջով դուրս էին եկել փողոց, տուն վերադարձան, վախենալով գործադուլ անողների սպառնալիքներից:

Գործադուլից ազատ չմնաց և Թիֆլիսը: Այստեղ նա սկսուեց յունուարի 18-ին: Անդրկովկասեան երկաթուղու ար-

հետանոցներին, բոլոր մասնաւոր տպարաններին և մեքենաշինական բոլոր գործարաններին բանուորները դադարեցին դործելուց: Գործադուլ անողներին ընդհանուր թիւն էր 3000—4000 մարդ: Բացի «Кавказ»-ից, ոչ մի լրագիր լոյս չտեսաւ: Յունուարի 19-ին գործադուլին միացան Ադելիսանովի կաշու գործարանի բոլոր համքարները, ծխախոտի «Միր» գործարանի բոլոր բանուորները և Թամամշևի քարվանսարայի բոլոր գործակատարները: Այդ օրն էլ ընդհանուր առմամբ, գործեկուց դադարեցին մինչև 4000 մարդ:

Յերեկուայ ժամը 3-ին Դիդուբէի Բաթումեան հրապարակը հաւաքուեցին 2000-ի չափ երկաթուղային բանուորներ, որոնք պրիստաւին ցանկութիւն յայտնեցին ընտրել իրանց միջից պատգամաւորներ՝ նահանգապետին յայտնելու իրանց կարիքները և խնդրեցին, որ ապահովեցուի այդ պատուիրակներին անձեռնմխելիութիւնը: Բանուորներին այդ ցանկութիւններին բաւարարութիւն տրուեց, այն պայմանով, որ կը յայտնեն գործաւորների միայն տնտեսական կարիքների մասին ե հարցերը կը քննուեն միայն այդ սահմանների մէջ: Սակայն բանուորները պատուիրակներ ընտրել չցանկացան և պահանջեցին նախընթաց օրը ձերբակալուած անձերին ազատել:

Այդ օրուայ ընթացքում ձերբակալուեցին երկաթուղային բանուորներից մի քանի ադիտատուներ, ուրիշ առևտրական և արդիւնաբերական հիմնարկութիւնների բանուորներին աշխատանքները թողնելու ստիպող անձեր և մի քանի մարդիկ, որոնք փորձ արին ճառեր արտասանելու:

Յունուարի 20-ի առաւօտուանից Թիֆլիսում դադարեց էլէքտրաքարշի և ձիաքարշի շարժումը, բայց ձեռք առնուած միջոցների շնորհով, ցերեկուայ ժամը մէկից յետոյ մասամբ վերսկսուեց միայն ձիաքարշի շարժումը զինուորների հսկողութեան տակ և նրանց ձեռքով:

Յունուարի 21 և 22-ին գործադուլը Թիֆլիսում շարունակուեց: Նրան միացան Բոգարշեանի ծխախոտի գործարանի և Տոլլէի, Թայիրովի ու Ալիխանովի սապոնի գործարանների բանուորները, բայց գործադուլ անողներն առանձին ընդհանրում չունեցան ոստիկանութեան հետ: Զիաքարշը շարունակում էր բանել զինուորների հսկողութեամբ և նրանց ձեռքով:

Յունուարի 20-ի առաւօտեան՝ բանուորների մի ոչ մեծ խումբ յարձակուեց քաղաքի ծայրերից մէկում Աւճալեան ձիաքարշի վագոնի վրայ, ստիպեց ճամբորդներին վայր իջնել և սկսեց կոտորատել վագոնը, բայց նրանց արգելեց մօտ վազող 6 զինուորնոց պահակը: Բանուորներն իսկոյն շրջապատեցին

զինուորներին: Տեղի ունեցաւ ընդհարում, որի ժամանակ մի զինուոր թեթեւ քերծուածք ստացաւ գլխին և ձեռքին: Զինուորներն սկսեցին ցրել անկարգութիւն անող բանուորներին հրացանի կոթերով, և օգնութեան հասած զրազուներէ խմբի շնորհով, գործադուլ անողների ամբոխը շուտով ցրուեց: Ձերբակալուեցին 6 հոգի:

Աշխատանքները շարունակել ցանկացող բանուորների համար ձեռք առնուեցին պաշտպանութեան բոլոր միջոցները: Այդ բանի շնորհով՝ երկաթուղու բանուորների մի մասը վերադարձաւ աշխատելու:

Բաթումում գործադուլը նոյնպէս շարունակուեւ էր: Կշուղ բանուորները նորից թողին աշխատանքները:

Յունուարի 21-ի առաւօտեան Սամտրէզի կայարանում բանուորները, մօտ 300 մարդ, աղմուկով, շուռցով և գէնքերի պայթիւններով գնում են երկաթուղու կայարանը, բռնի հեռացնում են գործից բոլոր «ստրելոշնիկներին», վազոններն իրար կապողներին և գնացք կազմողներին, — կայարանի դրասնեակներէ շէնքից ներս են խուժում և դուրս տանում բոլոր կանկանտորշնիկներին, կշուղներին և հեռադրական պաշտօնեաներին, որոնց արգելում են գործել՝ ժահուան սպառնալիքով: Կայարանից ամբոխը գնում է գէպի մօտակայ Սամտրէզի գիւղի շուկան, ուր նոյնպէս բռնի՝ փակում են բոլոր խանութները, վաճառատները և միւս առևտրական հաստատութիւնները: Այդտեղ աղմկող բանուորների հետ միանում են գիւղացիները: Տեղի է ունենում ընդհարում. սպանուում է գիւղապետը և գիւղը կրակի տրուում. այրում են խանութները:

Գիշերը, Սամտրէզիից 3 վերստ գէպի Բաթում, չարամիտները հանել էին երկաթուղու գծերը, բայց այդ բանը նկատուեց վաղօրօք: Այժմ ուղին կարգաւորուած է:

Փոթիում գործադուլ են արել նաւակայանի բանուորները, և ապրանքների տեղափոխութիւնները դադարել են:

— Թիֆլիսի երգուեալ-հաւատարմատարների և նրանց օգնականների արտակարգ ընդհանուր ժողովը՝ յունուարի 30-ին փետրուարի 2-ին՝ վճռեց, ի միջի այլոց, կազմել մի յատուկ յանձնաժողով՝ իրաւաբանական օգնութիւն հասցնելու Թիֆլիսում յունուարի 23-ի փողոցային ցոյցի ժամանակ քնստուածներին: Այդ առիթով սկսուելիք դատաւտանական գործերը պէտք է երգուեալ-հաւատարմատարները վարեն ձրի, և բացի դրանից, այդ օրուայ թշուառացածների ընտանիքներին նիւթական օժանդակութիւն հասցնեն:

Փետրուարի 4-ին, ցերեկուայ ժամի 3-ին Մոսկուայի Կրեմլում նետած ուժմբի պայթիւնով սպանուեց մեծ իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչը, Ալէքսանդր II կայսրի չորրորդ որդին, որ ծնուել է 1857 թուականին և 1891 թ. փետրուար 26-ից վարում էր Մոսկուայի գնահատելի և Մոսկուայի զինուորական շրջանի հրամանատարի պաշտօնները:

—«НОВ.» լրագիրը հաղորդում է. «Վերջին օրերս պտտող լուբերը հրէաների ջարդի մասին Թէօդոսիայում, դժբաղդաբար, հաստատում են: Պետերբուրգում ստացուած մամուլը անգիւղիստների համաձայն, կոտորածն ու կողոպուտը անգլիէն ունեցել փետրուարի 7-ին: Կան սպանուածներ և վիրաւորուածներ: Թէօդոսիա են գնացել նահանգապետը և նահանգական զատարանի պրոկուրորը:

—Յարձրագոյն հրովարտակ. «Աստուծոյ ողորմութեամբ Մենք, Նիկողայ երկրորդ, Կայսր և Ինքնակալ Համայն Ռուսաստանի, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիայի կայլն կայլն: Յայտնում ենք Մեր բոլոր հպատակներին. Աստուածային Անիմանալի Տնօրինութեան հաճելի եղաւ ուղարկել Մեր հայրենիքին ծանր փորձանքներ: Հեռաւոր Արևելքի արիւնահեղ պատերազմը յանուն Ռուսաստանի պատուի և արժանաւորութեան և Պազազ ովկեանոսի ջրերի վրայ իշխելու համար, որ այնքան էականապէս կարևոր է ոչ միայն Մեր, այլ և ուրիշ քրիստոնեայ ազգութիւնների երկար դարերի խաղաղ զարգացման համար, պահանջեց ուսւ ժողովրդից ոյժերի մեծ լարումն և խլեց Մեր սրտին հարազատ ու թանկագին շատ զոհեր: Այն ժամանակ, երբ Ռուսաստանի փառապանծ զաւակները կռուելով օրինակելի քաջութեամբ, անձնուիրաբար զոհում են իրանց կեանքը հաւատի, Թագաւորի ու հայրենիքի համար, Մեր բուն հայրենիքում բարձրացել է խառնակութիւնը, յուրախութիւն Մեր թշնամիների և խոր վիշտ Մեր սրբաւորին: Այդ խռովարար շարժման չարամիտ ղեկավարները հրպարութեամբ կուրացած՝ յանդգնաբար ձեռք են մեկնում ուղղափառ ս. եկեղեցու և օրէնքների կողմից հաստատուած Ռուսաստանի պետական հիմքերի վրայ, ենթադրելով կտրել անցեալի հետ եղած ընական կապը, քանդել զոյութիւն ունեցող պետական կազմը և նրա փոխարէն հիմնել երկրի նոր կառավա-

բուժիչն այնպիսի հիմունքներով, որոնք յատուկ չեն Մեր հայ-
րենիքին: Չարագործ յարձակումը Մեծ Իշխանի կեանքի դէմ,
որը ջերմագին սիրում էր նախամեծար մայրաքաղաքը և ան-
ժամանակ մեռաւ չար մահով, սրբազան յիշատակ հարուստ
Կրեմլում, խորապէս վիրաւորում է իւրաքանչիւր մարդու ժո-
ղովրդական զգացմունքը, որին թանկ են ողորմական պա-
տիւն ու Մեր հայրենիքի բարի համբաւը: Խոնարհութեամբ
ընդունելով աստուածային արդարադատութեան ուղարկած այս
բոլոր փորձութիւնները, Մենք ոյժ և մխիթարութիւն ենք
ստանում, հաստատապէս հաւատալով Աստուծոյ ողորմածութեա-
նը, որ դարերի ընթացքում ցոյց է տուել Ռուսական պետու-
թեան և Մեր հաւատարիմ ժողովրդի դէպի Գահը տաժաժ անձ-
նուէր հաւատարմութեանը, որ յայտնի է Մեզ: Ուղղափառ ու
եկեղեցու աղօթքներով, Թագաւորական Ինքնակալ իշխանու-
թեան ներքոյ Ռուս Երկիրը շատ անգամ է անց կացրել
մեծ պատերազմներ և խռովութիւններ, միշտ էլ փորձանքների
ու դժուարութիւնների միջից դուրս գալով նոր, անյաղթելի
ուժով: Բայց վերջին ժամանակների ներքին անկարգութիւնը
և մտքի երբեմն, որոնք նպաստում էին խռովութեան և ան-
կարգութիւնների տարածման, Մեզ պարտաւորեցնում են յիշե-
ցնելու պետական հիմնարկութիւններին ու ամեն կարգի ու
աստիճանների իշխանաւորներին՝ ծառայութեան և երդման թե-
լադրած պարտականութիւնը և հրաւիրելու՝ կրկնապատկել իրանց
աշակրջութիւնը՝ օրէնքը, կարգը և ապահովութիւնը պաշտպա-
նելու համար, լաւ հասկանալով իրանց բարոյական և պաշտօ-
նական պատասխանատուութիւնը Գահի և հայրենիքի առաջ:
Անդադար մտածելով ժողովրդի բարօրութեան մասին և հաս-
տատ հաւատացած լինելով, որ Տէր Աստուածը, փորձելով Մեր
համբերութիւնը, աջողութեամբ կ'օրհնէ Մեր ղէնքը, Մենք
հրաւիրում ենք բոլոր դասակարգերի, պաշտօնների բարեմիտ
մարդկանց, իւրաքանչիւրը իր կոչման ու տեղի համեմատ, մի-
անալ համերաշխութեամբ խօսքով ու գործով օգնելու Մեզ՝ մեծ
և սուրբ գործում, այն է յաղթելու արտաքին յամառութչամուն
և արմատախիլ անելու Մեր երկրից խռովութիւնը և խելացի կեր-
պով դիմադրելու ներքին խառնակութիւններին, յիշեցնելով, որ
միայն ամբողջ ազգաբնակչութեան ոգու խաղաղ ու առոյգ դրու-
թեամբ հնարաւոր է յաջողութեամբ իրագործել Մեր մտադրու-
թիւնները, որոնց նպատակն է ժողովրդի հոգեկան կեանքը
նորոգել, բարօրութիւնը հաստատուն դարձնել և պետական
կարգը կատարելագործել: Թող պինդ կանգնեն Մեր Գահի
շուրջը բոլոր ողորմաբան մարդիկ, որոնք հաւատարիմ են հայրենի

աւանդութիւններին, ազնւութեամբ և խղճով աջակցեն Վեհապետին ամեն գործում, Մեզ հետ համամիտ և թող տայ Աստուած Ռուսական Պետութեան հովիւներին՝ սրբութիւն, իշխանաւորներին՝ գատաստան ու արդարութիւն, ժողովրդին՝ խաղաղութիւն ու հանդարտութիւն, օրէնքներին՝ ոյժ, և հաւատին՝ զարգացում, որովչսզի հաստատուի ճշմարիտ Ինքնակալութիւնը Մեր բոլոր հաւատարիմ հպատակների բարօրութեան համար:

Տրուած է Յարսկոէ Մելօում, փետրուարի 18-ին, Քրիստոսի 1905 թ., իսկ Մեր Թագաւորութեան տասնեմէկերորդ թուականին: Իսկականի վրայ Նորին Մեծութեան սեփական ձեռքով ստորագրուած է ՆԻԿՈԼԱՅ:

—Ներքին գործերի մինիստրի անունով տրուած ընկերպտը. «Ալէքսանդր Գրիգորեիչ, Հաւատարիմ մնալով ռուսական ժողովրդի հնաւանդ սովորութեանը՝ Գահին մատուցանելու իրանց զգացմունքների արտայայտութիւնները հայրենիքի կրած վշտերի և ուրախութիւնների օրերին, ազնուական և գեմատվային ժողովները, վաճառականական, քաղաքային և գիւղական հասարակութիւնները Ռուսաց երկրի ամեն ծայրերից բազմաթիւ շնորհաւորութիւններ մատուցին Գահաժառանգ Յեսարեիչի ծննդեան ուրախալի առիթով և պատրաստականութիւն յայտնեցին զոհել իրանց զոյքը՝ պատերազմը յաջող վերջացնելու համար և իրանց բոլոր ոյժերը նուիրել պետական կարգի կատարելագործման մէջ Ինձ աջակցելու համար: Նորին Մեծութեան Կայսրուհու և Իմ կողմից պատուիրում եմ ձեզ հաղորդել Ինձ բարեմաղթութիւններով դիմած ժողովներին և հասարակութիւններին Մեր սրտաբուզիւ շնորհակալութիւնը նրանց արտայայտած՝ հաւատարիմ հպատակութեան զգացմունքների համար, որոնք Մեր ապրած ծանր ժամանակներում մանաւանդ մխիթարական են Մեզ համար. քանի որ այդ դիմումների մէջ յայտնած պատրաստականութիւնը՝ զալ ըստ Մեր կոչի աջակցելու Մեր ազդարարած բարենորոգութիւնների յաջող իրագործմանը՝ լիովին համապատասխանում է Մեր ցանկութեանը, որ է կաւալարութիւնն և հասարակական հասուն ոյժերը ձեռք-ձեռքի տուած աշխատել՝ ժողովրդի բարօրութեանն ուղղուած Մեր մտադրութիւնները իրագործուած տեսնելու համար: Յաջորդաբար շարունակելով Իմ Պսակակիր Նախորդների արքայական գործը՝ Ռուսաց երկրի ժողովուհն ու կարգաւորումը, ես մտաբեր եմ այսուհետեւ Աստուծոյ օգնութեամբ արժանաւորագոյն, ժողովրդի վստահութեամբ լիազօրուած՝ ազգաբնակչութեան կողմից ընտրուած մարդկանց մասնակից անել օրէնսդրական նախագիծների նախնական մշակմանն ու քննութ-

եանը: Աչքի առաջ ունենալով Մեր ընդարձակ հայրենիքի առանձին պայմանները, նրա ազգարենակութեան բազմազան լինելը և քաղաքակրթութեան թոյլ զարգացումը նրա մի բանի մասերում, Ռուսաց Թագաւորները Իրանց խմաստութեամբ միշտ շնորհել են, հասունացած պահանջները համեմատ, անհրաժեշտ բարենորոգութիւնները միայն որոշ չափորդական կարգով և շրջանկատութեամբ, որը անքակտելի է պահում և ապահովում է անցեալի հետ եղած ամուր պատմական կապը. իրրև այդ բարենորոգութիւնների հաստատութեան և անսասնութեան գրաւականը ապագայում,—և այժմ, ձեռնամուխ լինելով այս բարենորոգութեանը, Ես հաւատացած եմ, որ տեղական պահանջների գիտութիւնը, կենսական փորձառութիւնը և լաւագոյն, ընտրուած մարդկանց խոհեմ, ճշմարտասէր խօսքը բեղմնաւոր կանեն օրէնսդրական աշխատութիւնները՝ ժողովրդի իսկական օգտին: Միաժամանակ ես նախատեսում եմ թէ սրչափ բարդ է և ծանր այդ բարենորոգութիւնը իրականացնել անուսան պահանջելով կայսրութեան հիմնական օրէնքները, ուստի, լաւ գիտենալով ձեր բազմամեայ վարչական փորձառութիւնն ու գնահատելով ձեր բնաւորութեան անզորը վստահութիւնը, Ես բարուոք եմ համարում հիմնել ձեր նախագահութեամբ առանձին խորհուրդ՝ միջոցներ գտնելու այս իմ կամքը իրագործելու համար: Թող Աստուած օրհնէ այս իմ նախանձեռնութիւնը և թող աջակից լինի ձեզ ի կատար ածելու ինձ յանձնուած ժողովրդի օգտին: Մնամ դէպի քեզ անսխալ լինալու բարեհաճ»: Իսկականի վրայ Նորին Մեծութեան սեփական ձեռքով ստորագրուած է. «ՆԻԿՈԼԱՅ» 1905 թուի փետրուարի 18-ին, Ցարսկոէ Սելօ:

—Ներքին գործերի մինիստրը, ցենզուրական կանոնադրութեան 155-դ յօդուածի հիման վրայ, որոշել է արգելել «Саратовский Дневник» լրագրում մասնաւոր յայտարարութիւններ տպագրելն՝ իբր պատիժ:

«Каспий» լրագիրը հազորդում է, որ Թիֆլիսում լոյս է տեսնելու ուղեւորէն ամենօրեայ լրագիր «Кавказская Жизнь» անունով: Այդ լրագրի խմբագիր-հրատարակիչն է լինելու երդուեալ հաւատարմատար Ա. Ս. Ֆրենկէլ:

Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ 3 ամսով զաղարեցրուած են «Наша Жизнь» «Наши Дни» թերթերը: Իրաւունք է տրուած «Լուսայ» երկամսեայ հանդիսին հրատարակուել ամիսը մի անգամ, լրացնելով իր ծրագրի մէջ «Ներքին տեսութեան» բաժինը: «Նոր-Դար»-ի խմբագրութեան կողմից յայտարարուած է «Телефонъ» թերթի մէջ, որ շուտով կը

վերսկսուի նրա հրատարակութիւնը նախկին ծրագրով և ուղղութեամբ:

—Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը անցեալ երեկոյեան Պետերբուրգ ուղարկեց հետևեալ հեռագիրը:

«Նորին պայծառափայլութեան Կովկասի փոխարքայ Կոմս Իլլարիօն Իվանովիչ Վորոնցով-Դաշկովին:

«Իմ և ամբողջ հայ հօտիս անունից խնդաղին շնորհաւորում եմ Ձեր Պայծառափայլութիւնը այն բարձր պաշտօնի համար, որին դուք կոչուած էք ներկայ ծանր օրերում Միապետի ինքնակալ կամբով: Խորապէս հաւատում եմ, որ Ձեր յայտնի բարեսպասկամութեամբ դէպի Կովկասի ազգաբնակութիւնը՝ Դուք, Կովկասեան հին տրադիցիաներով համակուած, կը լուծէք այժմ Կովկասը հանգստացնելու և խաղաղեցնելու դժուարին խնդիրը: Աղօթում եմ Աստծուն Ձեզ առաքելու ոյժ՝ Ձեզ սպասող մեծ աշխատանքը կատարելու համար: Սրանով յանձնում եմ Պետերբուրգում գտնուող հոգևոր պատգամաւորութեանը մատուցանելու անձամբ Ձեր Պայծառափայլութեանը շնորհաւորութիւններ իմ և հայ ազգաբնակութեան կողմից»:

19 փետրուարի, 1905 թ. Թիֆլիս:

Ս'կրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց»

Նորին Վեհափառութիւնն ստացաւ այդ հեռագիրն հետևեալ պատասխանը:

«Թիֆլիս, Նորին Սրբութեան Կաթողիկոսին Ամենայն Հայոց:

«Խորապէս շնորհակալ եմ Ձեր Սրբութիւնից համակրական հեռագրի համար: Աղօթում եմ Աստծուն տալ ինձ ոյժ և հնարաւորութիւն ի կատար ածելու Թագաւորի կամբը—խաղաղացնել ազգաբնակութիւնը և յարատեւել իմ ջերմապէս սիրած Կովկասի խաղաղ զարգացումը: Յանձնում եմ ինձ Ձեր սուրբ աղօթքներին: 20 փետրուարի, 1905 թ. Պետերբուրգ:

Կոմս Վորոնցով Դաշկով»

—Պարիզում ծանր հոգեկան հիւանդութիւնից յետոյ վախճանուել է Սիմէօն Հախումեան, որ բաւական յայտնի դեր է կատարել մեր մամուլի մէջ: Նա աշխատակցել է «Մշակին», «Արձագանքին», «Տարապին» և «Նոր-Դարին»։ զրել է և տեղական ուսու թերթերում: Փորձել է հիմնել սեփական օրգաններ. «Դործ» ամսագիրը Շուշի քաղաքում և «Ժամանակ» հանդէսը Պարիզում, սակայն այդ հրատարակութիւնների համարները երկուսից դէն չեն անցել: Սիմէօն Հախումեանը տաղանդից ոչ դուրկ իր հրապարակաստական գրիչը համարեա միշտ թաթախել է անձնական հաշիւների, քէն և ոխի մաղձով:

Նա՝ ըմբոստ, կծու խօսքերի և լուպեական տալառորութիւն գործելու համար, պատրաստ էր գոհել ճշմարտութիւնը, սկզբունքը: Հանգուցեալը շուշեցի էր, իր սկզբնական կրթութիւնը ստացել էր տեղական հայոց սեմինարիայում, իսկ միջնակարգը՝ Էջմիածնի ճեմարանում:

—Փետրուարի 7-ին Թիֆլիսում վախճանուեց «Բողարճեան» ծխախոտի յայտնի գործարանի հիմնադիր Ն. Ի. Բողարճեանը, 75 տարեկան հասակում: Հանգուցեալը բնիկ արաբկիրցի էր և մանկութեան օրերում գալով Թիֆլիս, կարողացել էր իր եռանդով, աշխատութեամբ հիմնել ծխախոտի գործարան և լայն առևտուր: Հանգուցեալի ժառանգները «Քելէխ» կոչուած ֆաբրիկայի սովորութեան փոխարէն վճեցին նուիրել 1000 ռուբլի դանազան բարեգործական նպատակներին համար, այն է. 1) Քաղաքային գիշերային ապաստարանի օգտին 100 ռ. 2) Հայոց բարեգործական ընկերութեան Թիֆլիսում 200 ռ. 3) Հայուհեաց Բարեգործական ընկերութեան 200 ռ. 4) Կոյրերի դպրոցին 100 ռ. 5) Ներսիսեան դպրոցի չքաւոր աշակերտներին ուսման վարձ 100 ռ. 6) Քահանաների գանձարանին 50 ռ. 7) Էթանագին ճաշարանին 50 ռ. 8) Էթանագին գրադարանին 100 ռ. 9) 5 օրինակ «Մշակ», 3 օրինակ «Մուրճ», 8 օր. «Առողջապահիկ թերթ» ձրի տարածելու չքաւոր գրադարաններին 100 ռ.:

ՆԱՄՍԿԻ ԲԱԳՈՒԻՑ

Այժմ օրուայ հարցը՝ հրատապ խնդիրը, փետր. 6—9-ի աւրիւնահեղ դէպքերն են, որոց մանրամասնութիւնները յայտնի են լրագրներից: Պէտք է ասել, որ շատ վաղուց զանազան լուրեր էին պտուտում հայերի և թուրքերի մէջ լինելիք ընդհարումներին մասին: Դեռ անցեալ տարի բարեկենդանի վերջին կիրակի օրուայ համար պատմում էին, թէ թուրքերը պէտք է կոտորեն հայերին. դրա համար էլ այդ օրը շատերը տանը փակուած՝ փողոց դուրս չեկան, բարեբաղդաւար ոչինչ չպատահեց: Յետոյ էլ բաւականին անցած՝ լուր տարածուեց, թէ հայերն են յարձակում գործելու թուրքերի վրայ նրանց կրօնական մեծ հանդէսի՝ «Աշուրէի» (դլուխ ճղելու) ժամանակ: Այդ լուրը դուրս եկաւ ճիշտ այն ժամանակ, երբ աշուրէին մօտ էր, երբ նոյն հանդէսին մասնակցող թուրքերը մեծ մասով զինուած են լինում սրերով ու այլ տեսակ զէնքերով. երբ նրանք կրօնական զգացմունքներով տաքացած ու վառուած են լինում, երբ նրանց համար երկրաւոր կեանքը դառնում է շատ-շատ աննշան, երբ ոչ միայն խանգարողին ու յանդուգն յարձակողին, այլ մինչև անգամ այդ

կրօնական հանգիսաւոր օրերում թեթե վիրաւորանք պատճառողին էլ կարող են պատառ պատառ անել: Շատ յարմար էր վերջրած ընկնել, ժամանակն ըստ ինքեան բարեյաջող կարող էր լինել: Բայց դարձեալ ոչինչ չպատահեց: Հէնց մօտ եկու երեք ամիս առաջ նորից սարքովի լուրեր տարածուեցին, թէ կամ հայերն են թուրքերին կոտորելու և կամ թուրքերը՝ հայերին: Այս բոլոր հակասական լուրերը որքան էլ անհեթեթ ու անհիմն լինէին, բայց և այնպէս որոշ չափով կարող էին թուրք ու հայ ազգաբնակչութեան մտքերը պղտորել, նրանց մէջ մտցնել տարակուսանք, անվստահութիւն դէպի միմեանց: Սաղաղ ու քիչ թէ շատ հասկացող թուրք ու հայ տարբեր չէր հաւատում այդ լուրերին, խոր կերպով համոզուած էր, որ այդ բոլորը սուտ է, հասկանում էր, որ հայ ու թուրք միմեանց կոտորելու ոչ մի պատճառ չունին: Մինչդեռ միանգամայն ուրիշ բան է խաւար մասը. նա շինծու և սուտ լուրերին այլ կերպ էր վերաբերւում, թերահաւատ էր, շուտ բռնկուող: Այդ շինծու լուրերը ամբարում են այրուող նիւթեր, որոնք սպասում են մի կայծի հրդեհուելու համար: Այդ կայծը փետրուար 6-ի սպանութեան դէպքն էր, որը ինչպէս յայտնի է, այսպէս պատահեց:

Նոյն օրը՝ պատարագի ժամանակ հայոց եկեղեցու պարըսպի մօտ, մէկ թուրք անձնական վրէժխնդրութիւնից զրգուած փորձում է սպանել մի հայ ղինուորի. փորձը անյաջող է անցնում, փոխանակ նրան սպանելու ինքն է սպանւում հայերից: Այս տեսակ բան ամեն տեղ կարող է պատահել, և շատերը համոզուած էին, թէ դրանով ամեն բան վերջացաւ: Դժբաղդարար այդպէս չեղաւ: Նոյն օրը գիշերուանից թուրքերը սկսեցին ընդհանուր կոտորած «Շեմախինկա» թաղում. միւս օրը կոտորածը և աւերումը կատարուեց և միւս թաղերում:

Հայերը փախչում, պատսպարւում են, ուր կարողանում են: Քաղաքում կատարուող անցքերի լուրը կայծակի արագութեամբ, հեռախօսով՝ տարածւում է Բալախանի և միւս մօտիկ տեղերը, Սև ու Սպիտակ քաղաքները և այլն:

Փետրուար 7-ին կէսօրուայ ժամը 2½-ին մեկնող գնացքով դուրս եմ գալիս Բալախանիից դէպի Բագու: Սովորական ժամանակ այդ դէպի վրայ երթեկող վազոնները համարեա միշտ լիքն են լինում մարդկանցով, շարժուելու տեղ չէ լինում. բայց այդ օրը ամբողջ գնացքում հազիւ 20—30 մարդ կար: Գնացքը ժամը 3-ին կանգ է առնում քաղաքի կայարանի առաջ. ընկերիս հետ դիմում եմ, դէպի փողոց. տարօրինակ տեսարան. ոչ մի կառք չկայ, նոյնպէս և ձիաքարշ. աղմկալի Բագուն բոլորովին հանգիստ է. մեռելային լուրժիւն, սարսափ ազդող լը-

ուսթիւն: Փողոցները դատարկ են, դուքանները փակ ամեն տեղ: Ընկերքիս հետ առաջ ենք գնում, կայարանին մօտիկ երկուսում են երկու թուրք. ձեռքերին ոչինչ չկայ. նրանց շարժումներն ու զէմբի արտայայտութիւնը ցոյց են տալիս, որ ծածկարար զինուած են. զիրքեր են բռնում, որ սրանք էլ իրանց բաժին որսն անեն: Մի քիչ էլ առաջ ենք գնում, հատ հատ մարդիկ են երևում. շտապ քայլերով, այլայլուած զէմբերով դիմում են զէպի քաղաքի կենտրոնը. մեզ մօտենալով ծանօթներէցս մէկը ասեց, որ ինքը Բալասանիից եկել է՝ քաղաքում սովորող զաւակներին տուն տանելու: Մտնում ենք Տելեֆոնայա փողոցը, որ կայարանին մօտ է. մի քիչ հեռուից մի-մի, երկու-երկու թուրք են գալիս փողոցի երկու կողմից, սրտերի տակով. ատրճանակները ձեռքերին ազատ, համարձակ շարժւում են. ոչ ոք չի խանգարում նրանց: Այս բոլորի հետ միասին ինձ ամենից շատ դարձացնող հանգամանքը այն էր, որ ոչ մի պոլիցիականի, ոչ մի զինուորի, ոչ մի էօզակի չտեսայ. կատարեալ անիշխանութիւն: Տուն մտայ լմէ չէ, մի երկու բազէ անց լուսեղին ատրճանակի ձայներ. մեր հայաթում սկսուեց խռնաշփոթութիւն, իրարանցում, աղմուկ. մէկը վազում է հայաթի դուռը փակելու, միւսը վախից դողում է, երբորդը լաց է լինում: Լսում են ձայներ, լմէ թուրքերը յարձակում գործեցին քաղաքի այս մասի վրայ էլ:

Զինուած թուրք ամբողջ կամաց կամաց առաջ էր շարժւում, ամեն տեղ աւեր ու կոտորած առաջացնելով. բարերալտաբար մի խումբ կտրիճ հայեր 5—15 հոգուց կազմուած՝ փոքրիկ խմբերի բաժանուելով, սկսում են հայ եկեղեցու շրջակայ փողոցները մաքրել զինուած թուրքերից մինչև երկաթուղու կայարանը. այստեղ զիմաղրում և թոյլ չեն տալիս Բալասանիից եկած թուրք ամբոխին քաղաք մտնելու. վտանգ սպասուող կէտերում այդ տեսակ խմբեր են երևում և զիմաղրութեամբ փրկում են անգէն ու անպաշտպան հայերին: Զինուած թուրքերը արգելքի հանդիպելով՝ ստիպւում են յետ քաշուել իրանցով խիտ բնակուած թաղերը:

Փետրուար 8-ին՝ կէսօրից յետոյ երկու ժողովուրդների հոգևորական ու աշխարհական դասերից կազմուած խառն թափօրը, անցնում է փողոցներով և բարձրաձայն յայտնում է կայացած հաշտութեան մասին: Վայրկենապէս աղաքնակութիւնը թափւում է փողոցները. մարդիկ երևում են զոների, լուսամուտների առաջ, լցւում են պատշգամբները: Ամեն կողմում լսւում են ցնծութեան, ուրախութեան աղաղակներ: Երկու կողմի հոգևորական ներկայացուցիչները, աշխարհական

աղբեցիկ մարդիկ բոլոր ժողովուրդի առաջ համբուրում են միմեանց հետ ի նշան հաշտութեան. այս օրինակին են հետևում ուրիշ շատ թուրքեր ու հայեր: Քաղաքը սկսում է մի քիչ իր սովորական կերպարանքն ստանալ, չորս օրուայ բանտարկուած ու պաշարուած զրութիւնից յետոյ մարդիկ իրանց ազատ են զգում:

Թափորի երևալու հետ միասին հաշտութեան լուրը արագ կերպով տարածւում է քաղաքի բոլոր մասերը. վնասուած թուրք ամբոխը զաղարում է անմիտ սպանութիւնից ու աւերածութիւնից. հասարակական կեանքի ապահովութեան համար ոտքի կանգնած հայ խմբերն էլ ցած են դնում իրանց զէնքերը:

Բազուի կոտորածը արձագանք է գտնում Բիրի-էյրաթում և Բալախանիի Սարունչի ու Բամանի գիւղերում: Վերջին երկու գիւղերում կոտորածն սկսւում է փետրուար 7-ին, տեւում՝ մինչև փետր. 11-ը. այստեղ սպանութիւնները շարունակւում են հաշտութիւնից յետոյ էլ: Չար մարդիկ լուր են տարածում Բալախանում, թէ քաղաքում հայերը սրի են անցկացրել շատ թուրք ընտանիքների ու հոգևորականների: Գրգռուած թուրք ամբոխը առանց հաշիւ տալու սկսում է իր կոտորածն ու աւերումը. Բամանու Փիթօսի նաւթահորերում աշխատող հայ բանուորների ննջարանն է խուժում թուրք ամբոխը վաղ առաւօտեան և քնած մարդկանց մորթոտում է. ամենամեծ սպանութիւնը կատարւում է այստեղ: Բալախանիի զոհերի թիւը համեմատաբար աւելի օրոշ է և հաշւում են. — վիրաւորուածներ՝ 36 հայ, 5 թուրք, 4 լեզգի և 1 վրացի. — սպանուածներ՝ 30 հայ և 5 թուրք, ընդ ամենը 81 մարդ:

Բիրի-էյրաթում կոտորածը սկսւում է և տեւում է փետրուարի 8—9-ը: Սպանւում են 10 մարդ և վիրաւորւում 8-ը: Սպանուածների թւում միայն մէկ ուրա է լինում, մնացածները հայեր են (Бакинск. Изв. № 24): Չոհերի, մանաւանդ քաղաքի զոհերի թուի մասին ճիշտ բան ասել առ այժմ շատ դժուար է. առ ժամանակ ընդհանրապէս զոհերի թիւը հաշւում են մինչև 500 *):

Երբ թուրքերի կրօնապետ Շէյխ-Ուլ-Իսլամն էլ հասաւ Բազու, հաշտութեան, միութեան ու եղբայրութեան ձևը մեկնելու հոսանքը աւելի ու աւելի ուժեղացաւ: Թուրք, հայ ժողովուրդն ու հոգևորականութիւնը խուռն բազմութեամբ փոխադարձաբար զնային միմեանց ազօթատեղին փետրուար 12-ին

*) Դրանց թւում եղել են ուսաներ, հրէաներ, վրացիներ և մի գերմանացի՝ ընդամենը 15 մարդ:

և լսեցին երկու կողմի հոգևորական ներկայացուցիչների յորդորական քարոզներն ու խրատները միմեանց հետ հաշտ ու եղբայրաբար ապրելու. ամեն տեղ, ամեն անգամ, թուրք ու հայ ժողովուրդը խոստանում և երդւում էր խաղաղ ու բարեկամաբար ապրել միմեանց հետ:

Մտքերը խաղաղացնելու և հաշտութիւնը կատարեալ դարձնելու համար երկու կողմի աշխարհական ու հոգևորական անձնավորութիւնները գնացին նաև Բալթիանի: Գուառները և ամեն տեղ հանդսաացուցիչ հեռագիրներ ուղարկուեցին ազդեցիկ մարդկանց ստորագրութեամբ՝ աւետելով հաշտութեան լուրը և հրաւիրելով թուրք ու հայ ժողովուրդներին միմեանց հետ սարսափներից յետոյ: Անցան արիւնոտ օրերը. ժողովուրդը մի փոքր խաղաղուեց, ազատ շնչեց: Նոր ուշքի եկաւ ազգաբնակչութիւնը. տեսաւ աւերող, հրդեհող ու սպանող ձեռքերի հետքերը, տեսաւ ու նորից սարսափեց... Տեսաւ գիւղեր, անվերջ դիակներ՝ վիրաւատ ու այլանդակուած, տեսաւ ու կարեւելք խոցոտուեց իր սրտի խորքում: Գերեզմանոցը պատերազմի դաշտից աւելի վատ, աւելի դժոխային տեսարան էր ներկայացնում: Գրգռուած, իր գլուխը կոտրած թուրք ամբոխը սչինչ չէր խնայել, անխտիր ամեն հատակի մարդկանց կոտորել էր. նա ձեռք էր բարձրացրել նոյն իսկ մի յղի կնոջ վրայ, պատռել մօր արգանդը և՛ դուրս գցել մանուկին...

Բազուի հայկական կոտորածը ոմանք աշխատում են ցոյց տալ իբր կրօնական ատելութեան, ազգային թշնամութեան հետեանը. բայց 1). եթէ կրօնական ատելութիւն գոյութիւն ունենար, մի՞թէ այդքան հեշտ կերպով կարող կը լինէին համաձայնութեան գալ հայ ու թուրք ժողովուրդների աշխարհական և հոգևորական դասերը: Ի՞նչպէս բացատրել այն երևոյթը, որ երբ յստն թաղիորը երեսց փողոցներում, թուրք ու հայ ժողովուրդները սրտանց ու գրկաբաց ընդունեցին հաշտութեան լուրը. վայրկենապէս ցած գրին երկու կողմից բարձրացրած դէնքերը. կոտորածն ու աւերը դադարեցին: Դէպի միմեանց կրօնական ատելութիւն և ցեղական թշնամութիւն ունեցող ժողովուրդները բոպէսպէս անկարող էին այդ աստիճան փոխուել, ամեն բան իսկոյն մոռանալ: 2) Եթէ իսկապէս հայերի ու թուրքերի մէջ այդ տեսակ հակառակութիւն կար, հազա ի՞նչպէս բացատրել այն հանգամանքը, որ աւերի ու կոտորածի ժամանակ խաղաղ ու խնայաճանաչ թուրքերը պաշտպանում էին հայերին և հայ ընտանիքներին, ոմանց ազատում, փրկում էին կորսալից, տալով նրանց նաև ուտելու պաշար: Նոյն տեսակ են

վարուել հայերը իրանց մէջ ապրող թուրքերի վերաբերմամբ: Այդ մասին այստեղի թերթերում լոյս են տեսել բաղմաթիւ փաստեր և շարունակում են լոյս տեսնել: Եւ էլ ասեմ իմ գիտցածներից: Իմ բարեկամներից մէկը իր ընտանիքով ապրում էր Շեմախինկա թաղում մի թուրքի հայաթում, նրան մօտիկ հայ ընտանիքներ չկան. ամեն կողմից շրջապատուած է թուրքերով. կոտորածի ժամանակ զրութիւնը եղել է հափազանց անտանելի. բարեկամս պատմում է. «Տանտէրս՝ բարի թուրքը՝ շուտ շուտ մոտնում էր սենեակս, անցած դարձածի մասին նոր նոր տեղեկութիւններ էր տալիս, արտապընդում էր մեզ բոլորիս, յորդորում էր չվախենալ, քանի ինքը կայ, ոչ ոք չի կարող մեզ ձեռք տալ. այս բոլորի հետ միասին բարի տանտէրս տալիս էր մեզ ուտելու պաշար, ջուր. նրա շնորհիւ մեզ ոչինչ չպատահեց, ազատ պրծանք»: Նոյն բարեկամս մի ուրիշ հետաքրքիր դէպք պատմեց. բարեկամիս աներորդին տպրելիս է եղել դարձեալ թուրքերի թաղում. սա ունեցել է թուրքերի մէջ անձնական թշնամիներ, որոնք ցանկացել են խռոն ժամանակից օգտուել և նրան սպանել: Բայց թուրք վրացիները այդ պատանին պարանով ջրհորն են կախ տուել և երեք օր շարունակ այնտեղում են նրան պահել, իսկ պարոնի կնոջն ու երեխային թուրքի շորեր հագցրած պատըսպարել են իրանց մէջ. թշնամիները նրան վնասուելով և չգտնելով թողել հեռացել են. այս ընտանիքի կեանքն էլ այդպէս է ազատւում:

Մեր հայաթի կողքին առևտրով է պարապում մի թուրք խանութպան. սղոնութիւններն սկսուելուց յետոյ այլ ևս չի կարողանում տուն գնալ և իր եղբօր հետ միասին երեք օր շարունակ վազուած մնում է խանութում. դուքանը դէպի մեր հայաթը բացուող դուռ ունէր. հէնց այս դռնով նրանք հաղորդակցութիւն էին պահում հայաթի բնակիչների հետ. հայ տանտիրուհին հայթայթում էր նրանց ուտելու, պաշար և ջուր. նրանք վայելում էին հայաթի հայ և ուրիշ ազգութեան պատկանող բնակիչների պաշտպանութիւնը, լսում էին սրանցից հանգստացուցիչ խօսքեր և սիրտ առնում, չնայած որ նրանք ամեն կողմից հայերով էին շրջապատուած, բայց ոչ մի միայն չպատահեց, մնացին սղ և առողջ: Մի ուրիշ ծանօթս պատմում է, որ այդ տեսակ խնամք են վայելել իրանց հայաթում ապրող եօթը թուրքեր: Երկու կողմից էլ այսպիսի անթիւ փաստեր կան. չեմ ուզում նրանց վրայ կանգ առնել. այդպիսի փաստեր բաց արուեցին և տպւում են «ԲԱԿ. ԱՅՅ.» թերթում:

3) Մինչդեռ Բալխանի Սարունջի ու Բամանի դիւղե-

բում տիրելիս է եղել աւեր, կոտորած, դարձեալ թուրք ու հայ խաղաղ ազգաբնակութիւնը փոխադարձաբար միմեանց պաշտպանել է: Բամանի գիւղում տեղի ունեցող սպանութեան դէպքերից անմիջապէս յետոյ՝ հայ ու թուրք ազգերից մարդիկ հաւաքուելով՝ կոտորածի առաջն առել են և թոյլ չեն տուել լայն ծաւալ ստանալու: «Բալախանի» կոչուող գիւղի թուրք ազգաբնակութեան հասկացող մասը ցոյց է տուել նոյն իսկ ասպետական ոգի. նախ յայտնել և զգուշացրել են իրանց եղբայրակից թուրքերին, որ հայերին ձեռք չտան. երկրորդ, զինուած պատելիս են եղել փողոցներով, որ պաշտպանեն հայերին. դրա համար էլ «Բալախանի» գիւղում սպանութեան ու թալանի ոչ մի դէպք չի պատահել: Այս փաստերը պարզապէս ցոյց են տալիս, որ հայ ու թուրք հարեան ժողովուրդների մէջ գոյութիւն չեն ունեցել ոչ կրօնական ատելութիւն և ոչ էլ ցեղական թշնամութիւն:

Նաև խօսք չի կարող լինել թուրք ու հայ ազգաբնակութեան տնտեսական շահերի ընդհարման մասին: Հէնց վեր առնենք Բագուն. կը տեսնենք, որ թուրք տարրը թէ փողով և թէ անշարժ կալուածքներով աւելի ապահով, աւելի բարձր է հայից. ապա ուրեմն նրան նախանձելու ոչինչ չունի. նա իր առևտրական գործով աւելի կապուած է հայի հետ. տուն ու դուքան մեծ մասով վարձու է տալիս հային. թուրքին երբէք ձեռնտու չէ հայի հետ թշնամանալ և սրան փնտսել: Տնտեսապէս հայ ու թուրք այնպէս պինդ են կապուած միմեանց հետ, որ փոխադարձ թշնամութիւնը երկուսի նիւթական վիճակի վրայ էլ հաւասարապէս վատ կազդէր:

Պարզ է, որ այս կոտորածը չարամիտ մարդկանց գործ է: Թուրք ժողովուրդից ոտքի են կանգնել նրա տականքները, որոնք նայած հանգամանքներին դէնք կը բարձրացնեն ոչ միայն ուրիշ ազգութիւնների, այլ և իրանց ազգակիցների դէմ: Արդեօք ինչն ստիպեց թուրք ամբոխին այնպէս զինուած ու կազմակերպուած դուրս գալ հայերի դէմ. այս հարցի պատասխանը պիտի տայ մեզ մանրագնէին քննութիւնն ու արդար դատաստանը, որին սպասում է ոչ միայն Բագուն ու Ռուսաստանը, այլ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը:

Անցան կոտորածի օրերը, բայց դեռ չէ անցել սարսափի ու վախի ազդեցութիւնը. համարեա ոպանութեան դէպքերի առաջին օրից մինչև հիմա սկսուել է Բագուից ու Բալախանիից փախչողների, գաղթողների մի մեծ հոսանք: Բագուն ու Բալախանին դատարկուած են: Անխտիր հեռանում են բոլոր ազգութիւններին պատկանող անհատներ ու ընտանիքներ:

բայց ամենից շատ հայեր:

Բագունն սպառնում է անտեսական քայքայում, որը անշուտ կ'ազդի շատ ասպարէզների, շատ մարդկանց և շատ տեղերի վրայ: Աշխատող ձեռքերը պակասում են, շատ գործեր կանգ են առնում, կամ կիսատ պռատ առաջ տարւում:

Բագունն առաջուայ շարժուն ու կենդանի քաղաքը չէ, գաղթականութեան պատճառով գործերը, առևտուրը բաւականաչափ ընկած են: Բագուն յիշեցնում է այժմ դատաւական մի խուլ անկիւն, մանաւանդ երեկոյեան ժամը 7-ից և 8-ից յետոյ: Փետրուարի 11-ին տեղական իշխանութեան կողմից արձակած հրամանի համաձայն ոչ ոք առանց իշխանութեան գրաւոր թոյլտուութեան իրաւունք չունի փողոցում լինել երեկոյեան ժամը 8-ից ուշ եւ առաւօտեան ժամը 6-ից առաջ: Հակառակ վարուողները կ'ենթարկուեն 500 բուրլի տուգանքի կամ մինչև 3 ամիս բանտարկութեան: Իր սովորական կենդանութիւնից զուրկ Բագուն մի տեսակ վախ ազդող հանգստութիւն է ներկայացնում:

Բագունի արիւնոտ օրերը՝ հարիւրաւոր ապացոյցների վրայ աւելացրին մէկն էլ, որ ժողովրդի խաւար մասը սոսկալի պատուհաս է թէ հասարակութեան և թէ պետութեան համար: Այս և այն ազգութեան կոտորածը չի փնտսում միմիայն կոտորուող տարրին, այլ և ամբողջ ազգաբնակչութեան ու ամբողջ պետութեան շահերին: Արդէն ժամանակ է, որ հասարակութիւնը և պետութիւնը ոչինչ չիմայեն խաւար մասսայի մտաւոր ու բարոյական կրթութեան համար: Սկզբնական կրթութիւնը պէտք է դարձնել ձրի և պարտաւորիչ: Թէ մատաղ սերունդի և թէ հասակաւորների կրթական գործում շատ մեծ տեղ պէտք է տալ մայրենի լեզուին. դա մանաւանդ անհրաժեշտ է Կովկասում բնակուող բաղմացիդ, բաղմալեզու և յետ մնացած ժողովուրդների համար: Պէտք է բաց անել հասակաւորների համար կիրականօրեայ և երեկոյեան դպրոցներ, որտեղ աւարկաները պիտի աւանդուեն մայրենի լեզուով. այդ հիմնարկութիւններին կից անհրաժեշտ է պահել գրադարան-ընթերցարաններ դարձեալ մայրենի լեզուի գրականութեամբ ու պարբերական թերթերով. պէտք է տալ էթնագիրն ժողովրդական ներկայացումներ և այլն և այլն. այն ժամանակ խաւար մասսան արագ կերպով առաջ կը գնայ, աւելի շուտ կը հասկանայ իր չարն ու բարին և պատուհաս չի դառնալ ոչ հասարակութեան և ոչ էլ պետութեան համար:

Տիգրան Ռաշմանեան

16/18 Փետրուարի 1908 թ.

Բագու

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՅԽԱՐՅԻՑ

«Թիթեոնների կոիւր»՝ Զուգերմանիւ—«Թագի համար»՝ Ֆ. Կոպպէի—
«Վանիւշիկի զաւակները»՝ Նայդեօնովի—«Պաշտպան»՝ Տիմկովսկիի—
«Պարզաւանք և Սէր»՝ Շիլլերի, Շիլլերն իբրև թատերագիր—«Դոկտոր
Շտոկման»՝ Իբսէնի, նորվեգիացի մեծ թատերագրի աշխարհայեացքը.
«Դոկտոր Շտոկմանի» մէջ գործող անձերը և նրանց բնորոշումը—«Հանե-
լուկ»՝ Պօլ Էրվիօի, մեր դերասանները և ֆրանսիական պիէսները. «Մեծա-
պատիւ Մուրացկաններ»՝ Պարոնեանի—«Դաւաճանութիւն»՝ Իշխան Սում-
րատովի—Տ. Վարդուհու յորեկեանը—«Նոր կեանքի շէմքում»՝ Քիշմիշեանի:

Հայոց Դրամատիկական խմբի երկրորդ ներկայացումը տեղի ունեցաւ յունուարի 7-ին: Ներկայացուցին «Թիթեոնների կոիւր» Զուգերմանի չորս գործողութեամբ կոմէդիան, որու մասին անցեալ տարի խօսուեցաւ արդէն այս էջերուն մէջ:

* *

Ուումբի յաջորդ ներկայացումը յայտարարուած էր Տիմ-
կովսկիի «Պաշտպան» դրաման, բայց գլխաւոր դերակատարնե-
րէն մէկուն հիւանդութեան պատճառով խաղացին ուրիշ պիէ-
սա մը, Ֆրանսուա Կոպպէի «Թագի համար» դրաման:

Բանաստեղծ Ֆրանսուա Կոպպէն՝ իբրև թատերագիտ՝ մի-
ջակ անուն ունի և Ֆրանսայի արդի թատերական գրականու-
թեան մէջ աննշան տեղ կը գրաւէ. իր արտադրած սակաւա-
թիւ թատերախաղերուն մէջ հոգեբանական տարրն ու իրակա-
նութեան ուսումնասիրութիւնը շատ թոյլ են: Այդ պատճառով
ալ ջերմեւանդ ու նասիօնալիստ բանաստեղծին գործերուն
խաղաղ քունը ոչ մէկ ֆրանսական բեմ չուզեր խանդարել:

«Թագի համար»-ը էֆֆէկտաւոր տեղեր շատ ունի: Շունդա-
լից պարբերութիւններ, հայրենասիրական ուռուցիկ ճառեր՝
հոգեբանական խորունկ վերլուծումներու պարապը կըսքօղեն:
Եւ այն հասարակութիւնները, որոնք անընտել են զուտ ա-
րուեստի նուրբ ու իսկական գեղեցկութիւններուն, մեծ հաճոյք
կը զգան այս տեսակ պիէսներէ:

Ահա ինչո՞ւ համար յունուար 10-ի երկուշաբթի գիշերը,
հալ հանդիսատեսները գոհ ու զուարթ հեռացան Արտիս-

տական թատրոնէն, հակառակ նոյնիսկ այն բանին, որ դերասաններուն մեծ մասը՝ ովկէսը հապճեպ բեմ հանուած ըլլալուն պատճառով՝ իրենց դերերուն անտեղեակ, յուշարարի օգնութեամբ կը խաղային:

«Թագի համար»-ի նիւթը պատմական է և հետևաբար շատ յարմար է ֆիզիկոսներու և դիւցազներդա-հոեոորակոն խաղերու:

Միջայէլ Բրանկովիւր իշխանը (Ջարիֆեան) առիւծի մը պէս քաջ է ու անվեհեր: Բալկանեան կիրճերուն մէջ ամբողջած՝ շատ անգամներ հերոսաբար կռուած է օսմանցի բանակներուն դէմ և իր երկիրը բռնութենէ ազատած: Բալկաններու թագաւորը մեռած է. պէտք է նոր թագաւոր ընտրեն: Իշխանը իր յաղթանակներուն կռիւնած՝ անհամբեր կը սպասէ որ իր ընտրութեան լուրը բերեն: Ժողովուրդը՝ Միջայէլ իշխանի կտրիճ, բայց ամբարտաւան, գոռոզ նկարագրէն խըրտչած՝ արքայական թագը կը դնէ Ստեփան եպիսկոպոսի Յարութիւնեան) աղկարդ գլխուն վրայ, որուն համար խաչը՝ որքան քրիստոնէական ներողամտութեան, նոյնքան ապստամբական արիւթեան խորհրդանշան մըն է: Ստեփան եպիսկոպոս զինուոր-հոգևորականներու ցնդէն է:

Միջայէլ իշխանը այդ ընտրութենէն չափազանց դժգոհ է: Նախանձը, փառասիրութեան տենջը՝ իր խորամանկ և նոյնքան փառասէր կնոջ՝ յոյն Բագրիլիդայի (տ. Ջարիֆեան) գրգռումներուն միացած՝ զինքը յանձնառու կընեն, նոյն իսկ դաւաճանութեան գնով՝ թագաւորական գահին տէր դառնալու: Այդ գնով՝ պատիւներն ու վաղամեռիկ յաղթանակները միշտ, ու ամեն տեղ պատրաստ են: Օսմանեան զօրքերու հրամանատարը, կիրճերէն դուրս բանակ դրած՝ թափառական երգիչի դիմակին տակ ծպտեալ լրտեսներէն մէկը (Տէր-Դաւթեան) կուղարկէ իշխանին մօտ, խոստանալով Բալկանեան գահը, եթէ Միջայէլը իր հրոսակներուն առջև բանայ կիրճերու դուռը: Միջայէլ նախ կը վարանի, կը վրդովուի, կը վախնայ հերոսի անունը դաւաճանի փոխելու զարհուրելի արարքէն, բայց նենգաւոր Բագրիլիդայի զրդումները, աղաչանքները, թախանձանքներն ու սպառնալիքները շուտով կը խեղդեն անոր անապառ հոգիին մէջ խղճի վերջին խայթոցները: Վճիռէն իրականութեան անցնելու մէկ քայլ կայ: Պէտք է կիրճի պահակին փոխարինել այդ գիշեր ու թողուլ որ թշնամի բանակը մտնէ ներս ու զինքը բազմեցնէ խոստացուած գահին վրայ: Բայց դաւաճանին կանթեղը շուտ կը մարի: Միջայէլը որդին՝ Կոնստանտին (Արէլեան) Միլիդայի (տ. Մայսուրեան) իր ձեռ-

քով կորուստէ ազատաւած, հաւատարիմ ու անձնուէր գնչուհիին շնորհիւ իր հօր ոճրագործ զիտաւորութեան թափանցած՝ նոյն գիշերը կը վազէ կիրճի պահպանութեան հսկելու և արգելելու ոճրին կատարածութիւնը: Հօր և որդուն մէջ տեղի կունենայ անխուսափելի ընդհարում: Կոնստանտին՝ հայրենիքը փրկելու համար կըստիպուի հայրասպան ըլլալ: Բայց թուրքերը՝ Միքայէլի վրայ յոյս դրած՝ կը շարժուին դէպի կիրճերը: Կոնստանտին անմիջապէս կը վառէ վտանգի խարոյկը ու հայրենիքի պաշտպանութեան համար փութացողներուն հետ սրտեւրագմի դաշտը կիջնէ, կը կռուի. պարտութիւնը մօտ է, երբ եպիսկոպոս թագաւորը իր խաչով ու սրով գինուած՝ խանդավառ ժողովրդին օգնութեամբ հտ կը մղէ օսմանցիները:

Պատերազմը վերջանալէ յետոյ, ժողովուրդը կողքայ իր Միքայէլ քաջ իշխանը, որ հայրենիքի պաշտպանութեան համար մեռած կը կարծուի: Բայց Կոնստանտինի վարմունքը կասկածելի է: Ամէն անգամ, հօրն անունը լսելուն՝ տարօրինակ ու անբացատրելի դողով մը կը ցնցուի. ընկճուած կերպարանք ունի, բայց ոչ թէ հօրը կորուստին պատճառով, այլ ինչ որ մտածմունքներով: Գիշերները կը զառանցէ, հօրն ուրուականին դէմ կը կռուի: Ամբոխը՝ տարտամ կասկածներով լեցուած՝ հազար բերանով, անկիւնները, մութին մէջ, դատապարտութեան բառեր կը արմուսնայ:

Բազիլիդան՝ ինչ որ Միքայէլի հետ չկրցաւ դուռն հանել, կը փորձէ Կոնստանտինի ձեռքով յաջողցնել: Թագուհի դառնալու երազը իր քունը սպանած է: Կոնստանտինին կ'առաջարկէ դաւաճանութեան միջոցն խաղը, և անոր ցոյց կուտայ արքայական զահի այն խոստմնագիրը, որ օսմանցի հրամանատար փաշան ուղարկած էր Միքայէլի և որուն տակ ստորագրած էր այս վերջինը: Կոնստանտին զայրոյթի, կատաղութեան ըռպէի մը մէջ ամեն բան կը յայտնէ: Բազիլիդա Կոնստանտինի կամակորութենէն վրէժ առնելու համար, զայն, իբրեւ դաւաճան և իբրեւ հայրասպան, կը նետէ ամբոխի ցատումին առջև, հօր յանցանքը բեռնալով որդուն վրայ: Կոնստանտին կը զատուի կրկին ոճիրներու ամբաստանութեան տակ: Բայց ան՝ իր հօր անունը փրկելու նպատակով ինքզինքն արդարացնելու համար բառ մը անգամ չարտասաներ: Յամառօրէն կը լռէ: Ամբոխն անոր գլուխը կը պահանջէ, բայց ծերակոյտը առելի սարսափելի պատիժ մը կը գտնէ: Կը վճռուի Կոնստանտինը շղթայով կապել իր հօր արձանին, որ իբրեւ հայրենիքի հերոսի՝ կը բարձրանայ քաղաքի հրապարակին վրայ: Կոնստանտին՝ որու երեսին ամեն անցորդ պէտք է շարտէ իր թուքն ու անէծքը,

իրեն յաւիտեան հաւատարիմ ֆնացող Միլիցայի դաշոյնով մի-
այն փրկութիւն կը գտնէ:

Ահա «Թազի համար»-ը իր խոշոր դժերուն մէջ: Ինչպէս
կը տեսնէք ծայրէ ծայր ջիղեր թունդ հանող դրամա մը: Եւ
մանաւանդ այնքան դիւրագրգիռ՝ մեր ջիղերուն համար:

Նազը, ընդհանուր առմամբ, թոյլ էր, որովհետեւ ինչպէս
ըսինք, պիէսը անպատրաստից բեմ հանուած էր: Բայց պէտք
է շեշտել որ Արեւեան իր գերի մէջ այնպէս էր, ինչպէս
ձուկը ջրին մէջ: Զարիֆեան ընդհանրապէս բարեխիղճ և ու-
շաղիւր գերասանի տպաւորութիւն կը թողու: Յարութիւնեան
առհասարակ իր արտասանութեան հանդիսաւոր տոնով՝ յար-
մար էր հպիսկոպոս արքայի գերին և մեծապէս նպաստեց խա-
ղի ներդաշնակութեան: Տ. Մայսուրեանի խաղը սկզբէն միջև
վերջը սահուն չէր. գուցէ անոր համար որ անպատրաստ էր:
Բայց, այնուամենայնիւ, տիկինը ունեցաւ անկեղծ յուզումի բոպէ-
ներ: Մենք չէինք դադրիր կրկնել, որ տիկինը պէտք է շարու-
նակ ուշադրութիւն դարձնէ լեզուի վրայ, մայրենի լեզուի
ներդաշնակ ու կոկ արտասանութեան վրայ: Տ. Զարիֆեան
դժգոյն էր Բազիլիդայի գերին մէջ:

*
*
*

Դրամատիկական խմբի չորրորդ ներկայացումը տեղի ու-
նեցաւ հինգշաբթի երեկոյ, յունուարի 13-ին: Նաղացին Ս.
Նայգեօնովի «Վանիւշինի Զաւակները» դրաման, որու մասին
նոյնպէս խօսուած է մանրամասնօրէն այս էջերուն մէջ:

*
*
*

Խմբի վեցերորդ ներկայացումը եղաւ Շիլլերի «Պարզա-
ւանք և Սէր» դրաման: Այս պիէսան նոյնպէս նորութիւն մը
չէր Թիֆլիսի թատերական հասարակութեան համար, որովհե-
տեւ, նախորդ տարին, պ. Արեւեան իր բենեֆիսին տուած էր:

«Պարզաւանք և Սէրը» այն պիէսներու կարգէն է, որոնք
կոչուած են հանդիտականներու վրայ տպաւորութիւն թողելու
նչ թէ իրենց պարունակած իրական, բաբախուն կեանքի շնորհիւ
այլ իրենց բեմական էֆֆէկտներով, զգացումի յախուռն ու
անասնձ յորդորումներով: Մէկ խօսքով Շիլլերի դրաման սան-
տիմանտալ, ումանտիկ գործ մըն է, որուն մէջ, մէկ ծայրէն
միւսը, գործող անձերը կը խօսին «վսեմ» լեզուով, այնպիսի
պերճախօսութեամբ մը, որը որքան գեղեցիկ, նոյնքան անիրա-
կան է: Որովհետեւ Շիլլեր՝ գերազանցօրէն ումանտիկ հանճար
մը, աւելի զգացումներու, երեակայութեան թափին կը հնազան-
դի, քան իրականութեան ու ճշմարտութեան: Իր ներկայացուած

տիպերը, նկարագրած զէպերը երևակայական են ու զուտ արստրակցիայի ծնունդ: Անոնք կը շարժին, կը գործեն բանաստեղծի նախապէս առաջադրած «գաղափարի», «թէզի» պաշտպանութեան նպատակով: Այսպէս Շիլլէր մտադրած է ցոյց տալ ճշմարիտ, անկեղծ, խորունկ սիրոյ ուժը, ապացուցանել, որ ոչ մէկ արդելք, մարդկային ոչ մէկ հնարք չի կրնար խորտակել անոր տարերային, անդիտակից թափը: Երիտասարդ կուրծքերու տակ բռնկած սէրը հզօր է, ժահէն աւելի հզօր: Այս միևնոյն թէման փորձած է և անգլիացի հանճարը, մարդկային հոգն ու մեծ ու անբաղդատելի ճանաչողը՝ Շէկսպիր: Բայց մինչդեռ «Ռոմէօ և Շիլլէր»-ի հեղինակը մեր առջև կը մերկայացնէ հերոսներու հոգին իրենց ամենանուրբ գաղտնիքներուն, իրենց ամենածածուկ խորշերուն մէջ, Շիլլէր մեզի ցոյց կուտայ իր հերոսներու հոգեբանութենէն պատահելու միայն և շատ յաճախ հոգեբանական վերլուծումներու փոխարէն կը դիմէ հստորական ճոճաւորութեան, քնարերգութեան: Այնպէս որ Շիլլէրի ստեղծած անձնաւորութիւններուն ետև միշտ Շիլլէրը կը գտնենք, և այն ալ ոչ թէ Շիլլէրի հոգին, այլ անոր երևակայութիւնը:

Նախագահ Փոն-Վալտէր (Յարութիւնեան) երկրի բոլոր ու արիւնարբու իշխողին, զուքսին մօտ իր աղբեցութիւնը անվթար պահելու, աւելի բարձր պատիւի ու փառքի հասնելու նպատակով՝ կուգէ իր որդին Ֆէրդինանդը (Արէլեան) ամուսնացնել զքսի սիրուհիին՝ Լէդի Միլֆորդի (Տ. Զարիֆեան) հետ: Բայց Ֆէրդինանդի սիրտը բռնուած է հասարակ մարդու մը, երաժիշտ Միլլերի (Զարիֆեան) աղջկան՝ Լուիզայի (օր. Ադամեան) սիրոյ ցանցերուն մէջ: Երաժիշտը իր աղջկէ խոստացած է Վուրմի (Անդրանիկ) նախագահի քարտուղարին՝ տղեղ, խորամանկ ազուաւի մը, որը կը փափաքի իր գաղափարներու տխրութիւնը զուարթացնել մատաղ, անմեղ մարմնի մը գգունքներով: Բայց, երբ Ֆէրդինանդ իր սիրոյ լրջութիւնը կը խոստովանի Լուիզային ու անոր ծնողքին, այս վերջինները անտանելի Վուրմը իրենց տնէն դուրս կընեն: Նախագահ Փոն Վալտէր անկարող իր զաւակը «անհամապատասխան» ամուսնութենէն ետ կեցնելու, կատաղած Վուրմի, Հոֆմարշալ ֆոն Կալբի (Մամիկոնեան), իշխողներու ոտքին տակ սողացող արարածի մը օգնութեամբ և մերենայութիւններով խանգարել գործը: Բայց այդ վտանգաւոր խաղը շատ թանգ կը նստի թէ իր զաւակին և թէ անոր սիրուհիին: Ֆէրդինանդ, որուն կեղծ նամակով մը հաւատացուցած էին թէ Լուիզան իր սիրոյն դրժած է, վերջին արարուածին թոյն կըն-

դունի և կը թունաւորէ նոյնպէս իր սիրականը, դոնէ մահուան մէջ իրարու միանալու համար: Մահէն առաջ, ի հարկէ, անխու սափելի խոստովանանքը, մեքենայութիւններու քօղամերկումը, որը վիւրին է երևակայել, թէ ոգևորութեան, յուզումի լինչ փոթորիկներ կարող է շղթայաղերծել զգայնիկ, սանտիմանտալ հանդիսատեսներու հոգիին մէջ:

Պէտք է ասել յայտնի, որ Արէշեան՝ երիտասարդ վիճակաւորականի իր շողողուն հանդերձանքով, պաթետիկ տեսարաններու մէջ իր ցոյց տուած ձայնի ու խաղի կըրօմով անվերջ ծաղիւրու և օվայցիտներու առարկան եղաւ: Յարութիւնեան դարձեալ իր համապատասխան դերին մէջ էր, բայց իրմէն, իրրեւ բարեխիղճ դերասանէ՝ կարելի էր սպասել, որ Փոն Վալդերի մէջ զնէր քիչ մը աւելի մարդկայնութիւն: Ուրովհետեւ ամենէն հրէշաւոր մարդիկն անգամ ունին ըրալներ, ուր սովորական էակներէ չեն զանազանուիր: Եւ վերջապէս, անոնք՝ ամենէն առաջ մարդ են: Զարիֆեան՝ երաժիշտ Միլլերի՝ դէմքին չտուաւ այն պարզամտութեան, շիտակութեան և հպարտութեան երանդը, որ յատուկ է իր ճակտի քրտինքով սպրոզ, իր իրաւունքներուն դիտակից ժողովրդի մարդուն: Այնուամենայնիւ իր խելօք խաղով—միջակէն բարձր էր: Անդրանիկ և Մամիկոնեան լաւ էին: Օր, Ազամեան անկեղծութեան մէկ քանի ըրալներու մէջ, Լուիզայի մէջ զրաւ կենդանութիւն, յուզող միամտութիւն և յուսահատ վիշտ: Բայց օրիորդէն կարելի էր աւելին սպասել: Տ. Զարիֆեան լեդի Միլֆորդի բարդ տիպին բոլոր գծերը թէն ամբողջապէս չկրցաւ ցայտեցնել, բայց դերը չփչացուց: Ռշտունին, դուքսի սպասաւորի դերին մէջ, իր փառքիկ տեսարանը լաւ տարաւ և իր զգաւորած tirade-ով ցնցեց հանդիսականները:

* *

Յունուար 17-ին—խումբը տուաւ իր հինգերորդ ներկայացումը, Տիմկովսկիի «Պաշտպան» դրաման: Ահա թատերախաղ մը, որ արժէր պահել ընդերտուարի մէջ, որովհետեւ ունի ներքին թէ արտաքին խոշոր արժանաւորութիւններ: Հոգեբանական, դրամատիք այնպիսի ուժեղ, ցնցող տեսարաններ կան, որոնց շատ քիչ անգամ կը պատահինք ոռոտական կամ, առհասարակ, մեր բեմի լոյսը տեսնող թատերախաղերուն մէջ: Տիմկովսկի իր յաջողութեան գաղտնիքը փայլուն նախադասութիւններու, էֆֆէկտներու մէջ չի փնտռեր բնաւ, այլ ամենօրեայ կեանքի հարազատ պատկերացումին, յոյզերու, կիրքերու, շահերու ողբերգական ընդհարումի տաղանդաւոր վերլուծումին մէջ:

Տիմոկրատի վերցուցած է կեանքի սովորական դրամաներէն մէկը: Ընտանիք մը, որ իր երջանկութիւնը կը հիմնէ ուրիշ ընտանիքի մը քայքայումին վրայ, կը զրկէ զայն իր իրաւունքներէն, իր կարողութենէն, բախտաւորութեան իր արդար բաժիժինէն: Բայց արդարութեան պաշտամունքին նուիրուած հաւուադիւտ անհատներէն մէկը՝ իր անձնական շահերն ու իր խնամիական կապերը արհամարհելով «պաշտպան» կը կանգնի այդ զրկուածներու իրաւունքին:

Կեանքի այդ ամենօրեայ փաստին է որ Տիմոկրատի տաղանդը տուած է հոգեբանական բարդ ու խռովիչ դրամայի մը լայն համեմատութիւնները:

Փաստարան Միխայիլով՝ (Արէլեան) իր զորանշին ու բենիին դէմ կը պաշտպանէ որը ընտանիքի մը ժառանգութեան իրաւունքը, որ ոտնակոխ եղած է առաջիններու կողմէ: Միխայիլով՝ պաշտպանութեան իբրեւ զէնք ունի կանոնաւոր կտակ մը ի նպաստ որբերուն:

Միխայիլովի կէնը՝ Ելենան (տ. Մայսուեան) մասամբ իր նենգամիտ մօր (տ. Զարէլ) և թեթև քրոջ (տ. Մելիքեան) զրգուռններէն ազդուած և մասամբ ալ մղուած խանդոտութեան, նախանձի զգացումէն, որ կարթնցնէ իր մէջ որը ընտանիքի հասուն, գեղեցիկ աղջիկը (օր. Ադամեան) իր ամուսնին հետ յաճախակի շփմամբ—փաստաբանի դործունէութեան դէմ է: Բայց Միխայիլովի հետ սրտագին, յուզիչ բացատրութենէ մը յետոյ Ելենա կը համոզուի, որ պէտք է իր ամուսնին միանայ արդար դատը յաղթանակել տալու համար:

Անգամ մը, Ելենա՝ երբ իր ամուսնին աշխատասենեակը կը մտնէ, զայն զբաղուած կը գտնէ ինչ որ թղթով: Որբերու միակ աղաւէնը, հռչակաւոր կտակն է: Բուռն հետաքրքրութենէ մը մղուած՝ Ելենա կը փափաքի զայն տեսնել, իր ձեռքերուն մէջ ունենալ: Միխայիլով՝ բնագոյական վարանումի մը մէջ, առաջին ըոպէին կը վախնայ թանկագին փաստաթուղթը Ելենային յանձնել, բայց քիչ յետոյ կը յանձնէ: Այստեղ Ելենայի հոգիին մէջ կը կատարուի ամենախոր դրամաներէն մէկը: Ան իր ձեռքին մէջ բռնած է այն թուղթը, որը իր ամբողջ ընտանիքին դաւերուն, գաղտուկ փափառններուն, ստեղծութեան, չարախօսութիւններուն, վրէժխնդրութեան և խռովքին առարկան է: Այդ այն թուղթն է, որու պատճառով, գուցէ և պատրուակով իր ամուսնին կը զոհէ ամեն բան, իր ժամանակը, իր խնամիական կապերը, թերևս և իր ամուսնական սէրը, որբերուն, որբունիին պաշտպանութեան համար: Եւ այդ թղթի կտորը այնքան թանկագին է—աւելի թանկագին բան կ'նոջ

անձը—որ Միխայիլով կը վարանի, կը վախնայ դայն իրեն յանձնելու: Եւ յանձնելէն յետոյ ալ կարծես փշերու վրայ կանգնած է, իր իւրաքանչիւր շարժումին կը զողզողայ, կը դժգունի, սարսափի մէջ է: Ելենա թղթի պատառը դիտմամբ ձեռքերուն մէջ կը խողցնէ և միաժամանակ կը զննէ ամուսին դէմքը, որ վախի, անվստահութեան տակ կը զալարուի, թուղթի ոստոստումներուն հետ կ'ոստոստէ, ճմլումներուն հետ կը ճմլուի և երեխայի մը պէս ուղորմուկ, կաղաչէ, կը պաղատի որ անհամ կատակը դադրեցնէ և իրեն դարձնէ թուղթ: Ու Ելենա խենթութեան, անգիտակցութեան, վրէժի շարժումով մը պատառ-պատառ կանէ կտակը: Անգամ մը որ անդարմանելին կատարուած է, Միխայիլով կը բաժնուի իր կնոջմէն, բայց համոզուած՝ որ աղջիկը մօր գործիքը չէ: Այդ վիրաւորիչ ամբաստանութիւնը իր կնոջ գլխէն հեռացնելու համար, կտակի ոչնչացման պատասխանատուութիւնը իր վրայ կը վերցնէ: Բայց ի՞նչպէս շահել այժմ դատը, որուն արդէն ընթացք ցրուած է: Դատարանին մէջ ինզինքը մեղադրելով իբրեւ յանցաւոր: Ելենա, որը իր ակամայ, անգիտակից ոճիրին պատճառով խղճի չարաչար խայթոցներով կը տանջուի, դատաստանի օրը, յանկարծ ընդհանուր շփոթութեան և յուզմունքի մէջ իր յանցանքը կը խոստովանի: Որքերը կը յաղթանակեն: Բայց Ելենա, անկարող դիմադրելու իր կրած հոգեկան վիթխարի ցնցումին, անձնասպան կըլլայ:

Խաղը՝ իր ամբողջութեան մէջ աջող էր ու տպաւորիչ: Դրամայի առանցքը կազմող դերակատարները կարող էին սակաւն աւելի տալանդ ցոյց տալ, որովհետեւ «Պաշտպանը» հոգեբանական ուսումնասիրութիւններու շատ բեղուն հող մը կը ներկայացնէ:

* *

Մինչև այժմ ներկայացուած պիէսներուն մէջ գուցէ—և ամբողջ սէզոնի—լուազոյն պիէսը պէտք է համարել Իրսէնի «Դոկտոր Շտոկման» կամ «Ժողովրդի թշնամին» դրաման: Զարմանալի է, որ մեր դրամատիկական խումբը այդ գլուխ-գործոցը չէր մտածած աւելի տուաճ բեմ հանել: Ծիշտ է, «Դոկտոր Շտոկմանի» մէջ չկան հասարակ ժողովուրդը թունդ հանող, ջղախններուն և սատնիմանտալներուն արցունքի կրիզիսներ պատճառող տեսարաններ, թունաւորութիւններ, սպանութիւններ, սիրոյ և դրժումի զինաթափ ընող պատմութիւններ, բայց Իրսէնի ստեղծագործութեան մէջ կայ գործողութիւն, կեանք զազափար, փրկիսոփայութիւն, վերջապէս այն ամենը, ինչ որ հարկաւոր է իսկական թատերախաղի մը համար:

Նորվեգիացի մեծ թատերգակը շատ գլուխ-գործոցներ ունի, բայց «Ժողովրդի թշնամին» Իբսենի այն պիեսներէն է, ուր հիւսիսի հանճարը ամենէն քիչ մշուշ, ամենէն քիչ խորհրդապաշտութիւն, սէմբոլիզմ պրած է: «Ուրուականներու», «Վայրի Բազի», «Ճարտարապետ Սոլնէսի», «Բրանդի», «Նորայի» հեղինակը ընդհանրապէս իր շօշափած բարդ ու կնճռոտ հարցերը, իմաստակի պէս մէկ հարուածով լուծելու, վճռելու սովորութիւնը չունի: Ան կը բաւականանայ հանդիսականներուն առջև դնելով հոգիի ու միտքի խոռովիչ վիճակներ, հասարակական ծանրակշիռ հարցեր, և կը թողու որ ամեն մարդ իր խառնուածքին ու իր հասկացողութեան համեմատ քրքրէ, խորունկցնէ այդ հարցերը և համի ընդհանուր եղրակացութիւններու: Ասոր համար ալ, ամեն անոնք որ բեմէն ծիծաղ կամ արցունք մ'լայն կը ռալասեն, որ չեն սիրեր թատրոնի սրահին մէջ ուղեղային գործունէութիւնը՝ խոյս կուտան Իբսենի բարձր յուզումով ու գեղեցկութեամբ բարախուն դործերէն:

«Դոկտոր Շտոկման»-ը սակայն, իր յստակ ու մարուր փիլիսոփայութեամբ, իր խոր, խեղդող զրամատիլմով, իր մէջ պարունակած յաւիտենական, արտում ճշմարտութեամբ—ամենուն մատչելի, ամենէն սիրուած ու ծափահարուած թատերախաղերէն մէկն եղած է:

«Ժողովրդի թշնամին» այն պիեսն է մանաւանդ, ուր Իբսեն մերկացուցած է իր ամենամտերիմ մտածմունքը, իր ամենախորին համոզմունքը, իր ուղեղն ու իր հոգին: Կարելի է հաստատել՝ որ Դոկտոր Շտոկմանը՝ երիտասարդ, գեւեւ ևս իր փառքի լուսնապակով չանմահացած Իբսենն է, իր հայրենակիցներու տիմար հալածանքին, անդիտակից ու սրբապիղծ ատելութեան առարկայ դարձած ու օտար հողի վրայ, հեռաւոր երկիրներու տակ քաշ եկող Իբսենը:

Դոկտոր Շտոկմանը այն հաղուսագիւտ մարդն է, որուն համար ամեն բանէ բարձր, ամեն բանէ վեր է ճշմարտութիւնը: Անիկա, ի հարկէ, իր բնական ունի իր խաբխափումները, սխալանքները, բայց անգամ մը որ տեսաւ ճշմարտութեան լոյսը, անգամ որ իջաւ ստուգութիւնը ճանհալուղառնութեան յատակը, ալ ոչ ոք, ոչինչ չի կրնար անոր բողոքող խղճմտանքին ձայնը խլացնել, Սուտին, Սխալին ու Նախապաշարմունքին համար մահացու ճիշերով ու շանթերով լիցուն քերանք փակել: Անճնական շահը, ընտանիքին շահը հասարակութեան շահը՝ Սուտի վրայ հիմնուած՝ Շտոկմանի համար հրէշաւոր անհեթեթութիւն մըն է: Օգտակար սուտ չկայ: Եւ անգամ մը որ օգտակարութեան, շահու

գաղափարը կապեցիք Արդարութեան և ճշմարտութեան գաղափարին հետ, պէտք է առ յաւէտ մնանք բարով ըսէք այդ վերջիններուն: Որովհետեւ աշխարհն ու ընկերութիւնը այնպէս են շինուած, այնպիսի հիմքերու վրայ են դրուած՝ որ շահերու համեմերաշխութիւն չկայ: Ինչ որ շահաւէտ է այս դասակարգի մարդկանց համար, փաստակար է միւս խումբի մարդկանց: Ուրեմն ճշմարտութեան շուշանէ մարմինը չպէտք է ցեխոտել այս կամ այն խումբի մարդկանց շահուն համար. ո՛ր մնաց որ գաղափարը միջոց մը չէ, այլ նպատակ մը, և հետեաբար անոր հասցուած արիւննոտ նախատինքով, եթէ սոյնիսկ ամբողջ մարդկութիւնը բախտաւորուէր, ազնիւ մարդը, իր հոգիի խորքին մէջ իդէալի համար խորան կանգնած մարդը, ո՛չ մէկ գնով չպիտի համաձայնուէր այդ սրբապղծութեան:

Ահա այս աշխարհայեացքով՝ Իրանը կը մտնէ, ու առաջին տեղը կը զբաւէ այն սակաւաթիւ խորհողներու շարքին մէջ, որոնք անհատի բացարձակ ու ամբողջական ազատութեան կողմնակից են: Ո՛չ այն անհատական ազատութեան, որու շահանքի քարոզիչներն են, հասարակական ներկայ կարգերէն նպաստաւորուած բուրժուա իդէոլոգիան ու թէօրիափկոմները և որոնց համար անհատական ազատութիւնը անոր համար և անով միայն թանկագին է, որ իրենց թոյլ կուտայ ուրիշներու հաշուին և ուրիշներու քրտինքով ապրիլ: Այլ այն անհատական ազատութեան, որուն հիմքն է ճշմարտութիւնն ու արդարութիւնը, և որը բռնաբարելու իրաւունք չունի սոյնիսկ հասարակութիւնը՝ յանուն իր ընդհանուր շահերուն: Որովհետեւ Իրաններու մտքին մէջ անհատը, անհատի իրաւունքներն ու շահերը հասարակութենէն, հասարակութեան իրաւունքներէն ու շահերէն բարձր ու գերազաս են:

Այս մէկ քանի խորհրդածութենէն յետոյ, այժմ մեզի հասկանալի է, թէ ինչո՞ւ գոկտոբ Շտոկման ճշմարտութեան համար զոհ կը բերէ իր սեփական քաղաքի, իր հայրենիքի, շահը, իր ընտանիքի, իր զաւակներու շահը: Իոքաոր Շտոկմանի տիպը ախուր է. ախուր է, աւանդ, անոր համար միայն, որ անհատանքի է, որ մարդկութիւնը իր ստորաքարշ, զգուշի գոյութեան մէջ անկարող է իր մութ, պղտոր ծոցէն լլխեցնելու՝ այդպիսի բերեղէ հոգիներ: Ու Իրանի փառքը պիտի մնայ, իր ամենօրեայ գծծութիւններուն, ստորութիւններուն ու ոճիրներուն անհատուր եղած, անանցմով հարբած մարդկութեան բուր աչքերուն՝ մարդու մը լուսաւոր դէմքը ճառագայթեցուցած ըլլալը:

Մենք «Իոկտոբ Շտոկմանի» նիւթը չենք պատմեր, որովհետեւ «Մուրճի» 1902 թուի համարներուն մէջ այդ աշխատանք

ըը կատարուած է բաւական մանրամասնօրէն. կը խօսինք միայն տիպերու և խաղի մասին:

Նախ նկատենք, որ «Դոկտոր Շտոկմանը»՝ եթէ բեմ հանուեցաւ այս տարի, գուցէ այդ անոր համար էր, որ Թիֆլիսի ուսու դերասանական խումբը զայն ներկայացնելով՝ մեր խումբին յիշեցուց, թէ «Ժողովրդի թշնամին»-ի պէս գլուխ-գործոց մը կայ: Երկրորդ՝ «Դոկտոր Շտոկմանը» ներկայացուեցաւ գրեթէ այն ձևով, որով ներկայացուցած էր Մէյէրհոլդի խումբը: Եւ թէ ուսաներու և թէ մեր խումբի խաղը, չնչին տարբերութեամբ—ուսականը իր ուժերու ամբողջութեան մէջ աւելի հարթ էր—նոյն աստիճանի վրայ կանգնած էր, այսինքն միջակ:

Պարիզի մէջ Իբսէնի պիէսներու յաջողութեան ու ժողովրդականացման գլխաւոր գործաւորը եղած է Լիւնէի Պօէ, նորվեգիացի տաղանդաւոր արտիստը: Լիւնէի Պօէն է, որ առաջին անգամ, Théâtre de l'Oeuvre-ի միջոցով Իբսէնի գործերը ներկայացուց այնպէս, ինչպէս յղացած էր մեծ թատերադիրը—տիպերու կատարեալ ըմբռնումով:

Լիւնէի Պօէի Շտոկմանը իր շարժումներով ժլատ է, գրեթէ միշտ ինքն իր մէջ ամփոփուած, լուրջ, ոչ այնքան բղաւող, ճղաւող, ինչպէս կը ներկայացնէր ուսու դերասանը և ինչպէս ներկայացուց Արէլեան: Դոկտոր Շտոկման մանաւանդ երբեք լալկան չէ. իր ամենադժուար բոլորներուն մէջ անգամ, օրինակ այն ժամանակ, երբ կինը Պետերսի սպաննալիքին տակ ընտանիքի կործանման վտանգը տեսնելով՝ կը պաղատի յանուն երիտաներուն հանգիստ կենալ—Շտոկման կը գոռայ.

—Երբէք, երբէք, եթէ ամբողջ աշխարհը քանդուի, ևս վիզս չեմ ծոխ բռնութեան լծի տակ:

Եւ անխնայ, կոյր, ոճրագործ հալածանքի ժամանակ, ուր ինքն ու վարժուհի ազջիկը իրենց պաշտօնէն կը զրկուին, երեխաները գպրոցէն կը հեռացուին, նոյնիսկ տան տէրը անէն կը վռնդէ, Շտոկման իր հոգու արիւթիւնը չի կորցնէր, իր ուժին բացարձակապէս վստահ, ստոյիկեան հերոսի մը պէս կը մաքառի: Հազիւ վայրկեան մը, իրրեւ մարդ, իր և իր ընտանիքի բաղդաւորութեան հիմնայատակ կործանումին առջև կը տկարանայ, կը մտադրէ ոտքին փոշիները թափ տալով հեռանալ այդ անարգ ու անարժան քաղաքէն, գնալ Ամսթրդամ. բայց այդ տկարութեան բոլոր վաղանցուկ է. նոյնիսկ այդ բնական ու սովորական զիջումը չի ընէր ամբողջային հալածանքին: Կը վճռէ մնալ իր տեղը, խաւարի ու բռնութեան

ուժերուն մէջտեղ, ու կռուել, շարունակ ու անդադար կռուել ճշմարտութեան համար:

«Ժողովրդի թշնամիին» երկրորդ գլխաւոր տիպը, Շտոկմանի եղբայր, քաղաքագլուխ և հանքային բաղնիքներու կառավարիչ Պետերսի տիպը. նոյնպէս սխալ ըմբռնուած էր: Միւրադեան՝ Պետերսին տուաւ ողորմելի, տգէտ չինովնիկի մը գոյնը: Փակագծի մէջ նկատենք որ Միւրադեան դերը չէր գիտեր: Պետերս, բռնապետական երկրի ծնունդ, խորհելու և դատելու բոլորովին անկարող պաշտօնեայ մը չէ, այլ, յամենայն դէպս, ազատ քաղաքացի մը, որ ճշմարտութեան դէմ կը կռուի, ոչ թէ կոյր բնազդով, նախապաշարումներէ դրդուած, այլ որովհետեւ այդ ճշմարտութիւնը իր անձնական շահին, կամ իր սեփական խօսքերով «իր բարոյական հեղինակութեան» համար աղիտաբեր է: Եթէ հանքային բաղնիքներու ջուրը թունաւորուած է, պատասխանատուն ինքն է, որովհետեւ բաղնիքներու շինութեան ժամանակ ինքն է կղած վերահսկողը և չէ ուղած իրագործել այն լաւագոյն ծրագիրը, որ Շտոկման աստիճանած էր: Հետեւաբար Պետերսի տիպը պէտք էր ըմբռնել ոչ թէ ստրկամիտ, նեղահայեաց, այլ ազատամիտ՝ բայց բուժուական ողիով վաքակուած: Այս՝ Պետերսի ներքինի մասին: Իսկ գալով արտաքինին՝ Պետերս երբէք այնքան ծեր չէ, որքան ուսու և հայ խումբը կը կարծէ: Գոնէ Լիւնեէ Պօէի կազմակերպած ներկայացման մէջ Պետերս այդքան հասակն առած չէր. 38—42 տարեկան, կայտառ, լեզուանի, զիւրաշարժ տղամարդ մը, որ գիտէ ճարպիկօրէն իր շահերը պաշտպանել, հասարակական օգուտի վահանին ետեւ պատսպարուած: Անկասկած, Պետերսի հասակի մասին: Լիւնեէ Պօէի հասկացողութիւնը աւելի նպատակայարմար է այն պատճառով մանաւանդ, որ եւրիստանդ Պետերս մը իր շարժումներով, իր ձայնով, իր գիւրադրութեամբ աւելի զբաւմտիք կրնայ ըլլալ, քան զառամած, կքած, սմքած Պետերս մը, որու մէջ կիրքերը որքան որ ալ բուռն ըլլան, իր աստիճանած հասակին պատճառով չեն կրնար լայն համեմատութիւններ ընդունիլ և արտայայտուիլ: Պիտի զարմանալի թուի, եթէ աւելցնեմ, որ Դոկտոր Շտոկմանը աւելի տարիքոտ երեւոյթ ունէր, քան քաղաքագլուխ Պետերսը:

Գործող միւս անձերէն՝ «Ժողովրդական լրագրի» խմբագիր Հոֆստադը (Անդրանիկ) նոյնպէս բնորոշ չէր: Անդրանիկ չէր ուսումնասիրած տիպը: Հոֆստադ՝ օպպորտունիստ հրապարակախօսի տիպարն է, որ պարագաներուն համեմատ գիտէ ամեն տեսակ մորթի մէջ մտնել, յեղափոխականի, յետադիմականի, չափաւորի: Հրապարակախօսի այդ տիպերը լեցուն են մանա-

ւանդ Եւրոպայի մէջ: Անոնք անզուսպ յեղափոխականներ, իշխանութեան դէմ որոտացողներ են մինչև այն ատեն, երբ կը յաջողին իշխանութեան, իշխանաւորներու՝ ուշադրութիւնն ու քարեացակամութիւնը զրաւել:

Բիլլինգը՝ (Մամիկոնեան) Հոֆստադի աշխատակիցը՝ նոյն դպրոցի ծագիկներէն է, բայց նուազ canaille, որովհետև նուազ ուղեղի տէր է: Մամիկոնեանի խաղը կարելի էր բաւարար համարել, եթէ քիչ մը պակաս կոտորուող, զաւէշտական բընաւորութիւնով ներկայացնէր Բիլլինգը:

Ասլաքսէնի՝ (Յարութիւնեան) տպարանատէրին դէմքը նմանապէս խիստ որոշ գծագրուած է: Ասլաքսէնը բուրժուայի տիպն է. սեփականատէր՝ ազատութիւնը, ազատամտութիւնը կընդունի այն չափով, որով կարելի է անխախտ պահել գոյութիւնն ունեցող հասարակական կազմակերպութեան հիմքերը: Լսելով Շտոկմանի գիւտը, կը վստօյ անոր մօտ զայն շնորհաւորելու, իր ազդեցութիւնն ու օժանդակութիւնը անոր տրամադրութեան տակ զնելու համար. բայց, երբ կիմանայ, որ այդ գիւտը վտանգաւոր է իր դասակարգային շահերուն, անմիջապէս երես կը դարձնէ Շտոկմանէն և անոր դէմ կը զինուի: «Չափաւորութիւն»՝ ահա Ասլաքսէնի նշանաբանը: Չափաւորութիւն բառը անոր բերնին մէջ ամբողջ պրոպրամ մըն է և այդ պատճառով ալ, Յարութիւնեան այդ շատ նշանակալից խօսքը արտասանելու ժամանակ, միշտ պէտք է մասնաւորապէս շեշտէր:

Իսկ Շտոկմանի աները՝ Մորտէն-Կիլ՝ (Տէր-Դաւթեան) հին սերունդի մարդն է: Նախապաշարուծի, տգիտութեան ներկայացուցիչը: Դիտութեան առաջադիմութիւնները անոր համար մեռած տառեր են: Երբ Պետրա, Շտոկմանի վարժուհի աղջիկը անոր կը յայտնէ հօրը գիւտը, կը բացատրէ թէ հանքային ջուրը վարակուած է միկրոբներով, պացիլներով, Մորտէն-Կիլ կը զարմանայ: Միկրոբ, պացիլ, ի՞նչ բաներ են ատոնք: Կը վազէ Շտոկմանի մօտ հարցնելու համար՝ որ «այդ բոլորը ուղի՞ւ են»: Ի՞նչը.—որ փոքր կենդանիներ մտեր են ջրի խողովակների մէջ: Եւ «դրանք շատ բազմաթիւ են, չէ՞, ինչպէս պատմում էր Պետրան—բիւրաւոր»:—«Այո, բիւրաւոր»:—«Եւ ո՞ր չէ կարող նրանց նկատել, այնպէս չէ՞: Դրողը տանի ինձ, թէ ես կեանքումս սրանից աւելի զուարճալի բան լսած լինեմ»: Ու կը քոքոսայ, անվերջ կը քոքոսայ իր պառաւած, կուցած իրանը ցնցելով ինքնաբոլոր ու անզուսպ ծիծաղի մը մէջ:

Դալով նաւապետ Հորոտերին՝ (Օհանեսան) շիտակ, ազնիւ մարդ է այն, որ քաղաքականութենէ, հասարակական գործու-

նէութենէ հետու կը կենայ, որովհետեւ նպատակ չունի այդ գործունէութիւնը պատուանդան շինելով մաղցիլ բարձրաստիճան դիրքեր: Բայց Հորստէր միակ մարդն է, որ հաւատարիմ կը ֆնայ Շտոկմանին մինչև վերջը, իր վճանգաւոր բարեկամութեան պատճառաւ կորցնելով նոյնիսկ իր պաշտօնը: Երբ Շտոկման տուն չի գտներ բնակուելու, նաւապետ Հորստերն է, որ իրենը անոր տրամադրութեան տակ կը դնէ: Եւ սակայն այս մարդը ոչ մէկ անգամ չի պարծենար իր իսկական ու լուռ հերոսի գործերով:

Կատարինէ՝ Շտոկմանի կինը՝ (Տ. Վարդուհի) միամիտ, միայն զգայմունքներով շարժուող կնոջ տիպարն է: Պետրան՝ (Տ. Զարիֆեան) կըթուած, աղատագրուած կնոջ տիպարը: Վերջին դիտողութիւն մըն ալ: Մենք չհասկացանք թէ ինչո՞ւ հրապարակական ժողովի ժամանակ ոստիկան մը կանգնեցուցած էին դռան առաջ: Նոյն սխալը գործած էին և ուրա ներկայացման ժամանակ: Նախ Եւրոպայի մէջ հրապարակական ժողովները ոստիկանական հսկողութեան տակ չեն կատարուիր երբէք. եթէ ոստիկաններ «կարգապահութեան» հսկեն, դուրսը կը կենան և ոչ թէ սրահին մէջ: Երկրորդ որ այդ ժողովը տեղի կ'ունենայ անհատական, մասնաւոր բնակարանի մը—նաւապետ Հորստէրի տան դահլիճին մէջ: Հետեւեալը անսերելի սխալ մըն է անհատական բնակարանի մը ազատութիւնը բռնաբարել տալ ոստիկանական ներկայութեամբ: Պէտք է ամեն բանէ առաջ նկատի ունենալ, որ գործողութիւնը կ'անցնի ոչ թէ Ռուսաստանի, այլ եւրոպական քաղաքի մը մէջ:

Կը փափաղէինք, որ մեր խումբը աւելի լաւ ուսումնասիրած՝ «Ժողովրդի թշնամին» յաճախ դնէր մեր բեմին վրայ: Շատ քիչ թատերախաղ այնքան կըթիչ, հրահանգիչ է, որքան «Իոկուոր Շտոկման»-ը:

Յաջորդ ներկայացումը տեղի ունեցաւ յունուար 27-ին հինգշաբթի երեկոյեան: Խաղացին Պօլ Էրվիէօի «Հանելուկ» 2 գործողութեամբ դրաման և Յ. Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկանները»:

Պէտք է ըսել, որ թէ Էրվիէօի դրաման և թէ Պարոնեանի յայտնի գործէն քաղուած կատակերգութիւնը, աւելի ճիշտ գաւէշուր, շատ թոյլ անցան: Հայ դերասանական խումբը, առ հասարակ, ֆրանսական թատերախաղերը անկարող կըլլայ ներկայացնելու այնպէս, ինչպէս որ պէտք է: Փայլուն չէին անցած «Փողի Հերոսը»՝ Միրբօյի ողբերգական մեծութեամբ դրաման, Բրիէօի «Կարմիր պատմուճան» և «Ծծմայրեր» գեղեցիկ պիէսաները, փայլուն չանցաւ և ֆրանսայի ժա-

մանակակից լաւագոյն թատերագիրներէն մէկուն՝ Պօլ Էրվիէօի «Հանելուկը»։ Ի՞նչ է արդեօք այս երևոյթի պաճառը։ Ահա թէ ինչ։

Ֆրանսական պիէսներու մէջ գործող անձերէն կը պահանջուի անպայման աշխուժութիւն, նրբութիւն և ճկունութիւն։ Ֆրանսական տիպերը՝ ընդհանրապէս, գերմանական կամ ռուսական տիպերուն պէս դանդաղ, հայեցող, լուրջ չեն։ Անոնց գլխաւոր հմայքը կը կայանայ լաւ նիստ ու կացի, սրբամիտ, արագ խօսակցութեան ու մանաւանդ կրակոտութեան մէջ։ Ֆրանսական թատերգութեանց էական յատկութիւններէն մէկն է գործողութեան սրնթացութիւնը և մանաւանդ «լաւ գրուած» ըլլալը։ Ֆրանսացի թատերագրին առաջին մտածումն է իր տիպերը լաւ խօսեցնել։ Թոյլ գրուած պիէս մը ֆրանսացի մէջ հանդիսատես չունենար։

Իսկ մեր գերասանները, առ հասարակ, արուեստագէտ գերասանի նուրբ ու լայն շարժումները, *présentable* նիստն ու կացը չեն իւրացրած։ Ինչ որ ամենագլխաւորն է իրենց մայրենի լեզուն լաւ չգիտնի։ Անոնց մեծ մասին բերնէն բառերը դուրս կ'ելլեն, կարծէք, բռնի, կացինի հարուածներու պէս։ Եւ հրաշքի պէս բան մըն է, եթէ ո'չ մեր բեմէն լսել մենախօսութիւն մը, ուր գերասանի շրթունքներուն վրայէ բառերը հոսին ներդաշնակ ալիքներով—երևի, անկարելի երազ մընէ այդ—գոնէ տեսնել՝ որ գերասանը կարող կ'ըլլայ շեշտերն իրենց տեղը դնել, նախադասութիւններու քերականական կապը ջարդ ու փշուր չընել։

Այս բանը սակայն անկարելիութիւն մը չէ, և պէտք է որ մեր գերասանները եթէ ոչ յանուն մայրենի լեզուի, գոնէ յանուն իրենց արժանապատուութեան, բիշ մը աւելի բարձր կամեցողութիւն, քիչ մը աւելի բարեխղճութիւն ցոյց տան դէպի իրենց արուեստը։ Ո՞ր գործը, մեր արուեստն իր դժուարութիւնները չունի։

«Հանելուկ»-ը ֆրանսական բարբերու պատկեր մըն է, զրոմատիքական չափազանց սեղմ, չափազանց ուժեղ հիւսուածքի մը տակ ներկայացուած։

Ժէստ և Ռէյմոն դը Գուրփիրանները ընդամենիբով ամառն անցնելու դնացած են իրենց պատմական զգեսկին՝ որսի պովիլիօնի մը մէջ։ Իրենց մօտ հիւր է ազգական մը, մարկիզ դը Նեստ և զպրոցի վաղեմի ընկեր մը՝ Վիվաուս։ Վիվաուս սիրային յարաբերութիւններ ունի երկու եղբայրներէ մէկուն կընոջ հետ։ Դիշեր մը, մարկիզ դը Նեստ, որ կը բնակի Վիվաուսի կողքի սենեակը, սիրային արկածին վերահասու կ'ըլլալ և

յարմար առիթէ մը օգտուելով՝ կը զգուշացնէ անխոհեմ հիւրը ստոյգ վտանգէն: Նեստի և Վիվաուսի խօսակցութեան օրն իսկ Վիվաուս կը բռնուի, յանկարծակի, իր սիրականին մօտէն վեռադառնալու ժամանակ: Զայրացած ամուսինները ի զուր կ'աշխատին Վիվաուսի բերնէն խել սիրուհիին անունը: Երկու կիսերը կը հարցաքննեն: Անոնք յանցանքը իրարու վրայ կը նետեն: Հանելուկ: Վիվաուս՝ այդ ատելութեան, զայրոյթի, դուցէ և ոճիրի մթնոլորտին մէջ խաղաղութիւն և ժողացում մտցնելու համար կը վճռէ անձնասպան ըլլալ: Անձնասպանութեան լուրը մեղսակից կնոջ բերնէն կը խլէ ցաւի, յուսահատութեան և համարձակ խոտովանութեան ազդեղանք, և «հանելուկը» կը պարզուի: Ու մինչդեռ խաբուած ամուսինը, կատաղութեան բուռն շարժումով մը կը յարձակուի իր կնոջ վրայ, որ սրտի կակիժէն մահ կը պաղատի, դը Նեստ միջամտելով կը գոչէ:

—Այնտեղ մի դիակ, այստեղ բանտարկուածի հեծեծանքներ... Եւ դուք, անողորմներ, անշուշտ պարծենում էք, որ ձեր կողմն է ճշմարտութիւնը, ձեր կողմն է արդարութիւնը:

—Մեզ նման մարդիկն են, կը պատասխանէ ամուսինը, որ դարերի ընթացքում սպանվում են ամուսնութեան տիրապետութիւնը, հսկելով նրա վրայ գէնք ի ձեռին, ինչպէս մի վեհապետի վրայ:

—Իսկ մենք կեանքի ջերմեռանդ ու յարգալից բարեկամներս, մենք մեղաւորներս՝ (վերցնելով դժբախտ կնոջ) որ մարդկային էակի մէջ մեր տկար քրոջն ենք պաշտպանում, մենք է որ պիտի ջնջենք Կայէնի տիրապետութիւնը:

Իսկ գալով «Մեծապատիւ Մուրացկաններուն»՝ ամենքը բացի Զարիֆեանէն, այնպիսի չափազանցութիւններու մէջ ընկան, որ Պարոնեանի կողմէ արդէն խտացուած գոյներով այդ տիպերը բոլորովին անհոգի ու անբնական դուրս եկան:

Ի հարկէ մենք խօսք անգամ, չեն ըներ պիէսի լեզուի մասին, որ արեւելեան և արեւմտեան բարբառներու այլանդակ խառնուրդ մը կը ներկայացնէր:

*
*
*

Արտիստական թատրոնը քիչ անգամ այնքան մեծ բազմութիւն տեսած էր, որքան յունուար 31-ի երկուշաբթի երեկոյեան: Գեանայարկը, օթեակները, պատշգամները, գալէրեան գլուխներու ծովի մը պէս կը ծփար: Նստարաններ դրուած էին նոյնիսկ նուագախմբի բաժնին մէջ: Ներկայացումը հանգիստ էր, արտակարգ: Չալա-ի նկարագիր ունէր:

Պիտի խաղային «Դաւաճանութիւն» պիէսը, որուն համար

Բագուէն յատկապէս հրաւիրուած էր տ. Սիրանոյշ: Իշխան Սումբատովի զրամայի մասին խօսել աւելորդ պիտի ըլլար, որովհետեւ մեր ընթերցողները այս էջերուն մէջ իսկ կարգացին ամբողջ թատերախաղը:

«Դաւաճանութիւնը» բեմական մեծ յարմարութիւններ ունի, աւելի շատ արտաքին փայլ գուցէ, քան թէ ներքին, խորունկ, հոգեբանական արժանիքներ: Եւ ինչպէս, առ հասարակ, ամեն պատմական պիէս, որ աւելի մեր զգացումներուն, երեակայութեան կը խօսի, քան մեր ուղեղին և մտքին, «Դաւաճանութիւնը» Թիֆլիսի հասարակութեան կողմէ գտաւ խանդավառ ընդունելութիւն: Այդ ընդունելութեան խոշոր գործաւորներէն մէկը եղաւ, ի հարկէ, տ. Սիրանոյշ, որու սահուն, տաղանդաւոր խաղն ու ներդաշնակ, հարազատ լեզուն՝ ամիսներէ ի վեր չէր տեսած ու լսած Արտիստական թատրոնը:

Ներկայացումը միւս օրերուն համեմատելով աւելի աջող էր, որովհետեւ այս անգամ դերասանները գոնէ իրենց դերերը անգիր ընելու ներութիւնը յանձն առած էին:

Փետրուարի 3-ի երեկոն հուրիւրուած էր տ. Վարդուհի-ին: Տիկնոջ համակրողները նախաձեռներ էին պարզ, բայց իր պարզութեան մէջ յուզիչ ցոյցի մը, տօնելու համար անխոնջ դերասանուհիին 25-ամեայ յորելեանը:

Տիկին Վարդուհին արուեստագիտական կրթութիւն չէ ստացած—մեր մէջ քանիններն են ստացած—բայց իր բնական ընդունակութիւններով, իր ուշադիր, բարեխիղճ վերաբերմունքով դէպի իր դերերը, յաջողեցաւ զրաւել մեր բեմական պատմութեան մէջ պատուաւոր տեղ: Տիկին Վարդուհի տաղանդին գաղտնիքը տեղական տիպերու արտայայտութեան մէջն է: «Պանուս», «Պախօ», «Շուշան» այն դերերն են, որոնք համարեա ինքն է ստեղծած, և որոնց ներկայացումին մէջ իր նմանը չունի: Իսկ տեղական կեանքէն դուրս, յարգելի դերասանուհիին տաղանդը խաբխափումի և անստուգութեան մէջ է: Բայց չնայելով այդ հանգամանքին՝ տիկին Վարդուհի իրեն յանձնուած դերերուն մէջ միշտ աչքի է ընկած իր տոկուն աշխատասիրութեամբ, անվհատ կամքով և դէպի լաւը, լաւագոյնը անդադրում ձգտումով: Յատկութիւն մը՝ որ մեր բոլոր դերասաններուն տրուած չէ դժբախտաբար:

Օր. Աննան (տ. Վարդուհի) ծնած է 1862 թ. օգոստոս 15-ին Թիֆլիսի մէջ: Նախ օր. Աշխէն Դուլանեանի և ապա Սոփիէն Ստեփանէի Մարիմեան դպրոցներուն մէջ քանի մը տարի ուսման հետեւելէ յետոյ, ծնողքին սուղ միջոցները ստիպած են կրթութիւնն ընդհատել: 17 տարեկան հասակին մէջ ըն-

տանեկան յամառ ընդդիմութիւններէ յետոյ, օր. Աննան կը դառնայ զերասանուհի Վարդուհի, մահաւելցելով տեղական սիրողներու կազմակերպած ներկայացումներուն:

Վարդուհի՝ 1879 թ. սեպտեմբերի 3-ին, արքունական թատրոնին մէջ, Կ. Պոլսէն նոր եկած դերասանական խմբի, օր. օր. Աստղիկ, Սիրանոյշ, և Աղամեանի կազմակերպած առաջին հանդիսաւոր ներկայացման ժամանակ—«Սէր առանց համարման»—կը կատարէ փոքրիկ դեր մը, աղախնի դերը, և այդ օրէն սկսած կանոնաւոր անդամը կը դառնայ հայ դերասանական խմբին:

Յորեկեանական հանդէսէն առաջ տ. Վարդուհի երեցաւ երեք տարբեր դերերու՝ Մոլիէրի «Տարտիւֆի» II գործողութեան՝ աղախին Գորինայի դերին մէջ, յետոյ Օստրովսկիի «Արդիւնաւոր պաշտօն»-ի IV գործողութեան, Կուկուշինկա մօր դերին մէջ, ապա «Պէպօի» II գործողութեան, Շուշանի դերին մէջ:

Աւելորդ է ըսել, որ տ. Վարդուհի ամենէն աւելի փայլեցաւ վերջին դերին մէջ, որը ծափահարութիւններով, օվացիաներով ողջունուած՝ կատարեալ յաղթանակ մը եղաւ:

Այնուհետեւ սկսաւ յորեկեանի տօնումը: Երբ վարագոյրը բարձրացաւ, առատօրէն լուսաւորուած բեմին վրայ տեղ ընած էին ամբողջ դրամատիքական խումբը, ի դիմաց վարչութեան՝ մէկ երկու անդամները, յորեկեանի կազմակերպիչ յանձնաժողովը, վրաց դերասանական խմբի և դրամատիքական ընկերութեան ներկայացուցիչները, Թիֆլիսի ժողովարանի և Բագուի՝ հայ դերասանական խմբի պատգամաւորութիւնները՝ պըսակներով, ուղերձներով, նուէրներով և այլն:

Տիկին Վարդուհի՝ Տէր-Դաւթեանի թեմայով, երեցաւ: Երկարատեւ ծափահարութիւններ՝ թէ՛ բեմէն և թէ՛ թատերասրահէն՝ ողջունեցին յորեկեարի մուտքը:

Առաջին անգամ, յորեկեանի յանձնաժողովի անունով խօսք առաւ տ. Մամուլեան, որը դրուատեց յորեկեարի արժանիքը: Յետոյ խօսեցան վրաց պատգամաւորները, ծերունազարդ Սունդուկեան՝ որ մէկ քանի զգածուած խօսքով շնորհակալութիւնը յայտնեց իր ստեղծած կանացի տիպերու տաղանդաւոր արտայայտութեան համար, պ. Միրազեան՝ յանուն Թիֆլիսի ժողովարանի սիրողներու, պ. Յարութիւնեան՝ Բագուի հայ դերասաններու կողմէ, տ. Մայսուքեան՝ որ յորեկեարի մէջ բարեխղճութեան, աշխատասիրութեան, իր կոչումին սրտագին նուիրման օրինակը փառաւորեց, պ. Տ. Յովհաննիսեան՝ յանուն դրամատիկա-

կան վարչութեան: Խօսեցան և Միլով առևտրական տան կողմէ կայլն կայլն: Կարգացին տ. Սիրանոյշէն, պ. Պետրոսեանէն և ուրիշներէ ստացուած հեռագիրներ, մատուցուեցան պատկներ, նուէրներ, ընծաներ: Եւ այս բոլոր արարողութիւնները ընդմիջուեցան բուն ծափերով և ողջոյններով:

Ամենէն յետոյ խօսք առաւ յորեկտարը և մօտաւորապէս հետեւեալն ըսաւ: «Ես ուսում չեմ ստացած, բայց թափած եմ բոլոր ջանքերս, ըրած եմ ինչ որ կրցած եմ, իմ կոչումիս արժանանալու համար: Դուք երբեմն ինձմէ գոհ մնացած էք, երբեմն ոչ: Բայց այսօրուան ձեր ինծի ցոյց տուած համակրանքն ու քաջակերութիւնը թանկագին խթան մը պիտի ըլլան իմ պարտականութիւնս կատարելու, բարեխղճօրէն, մինչև վերջը»:

Համեստութեան, յուզումի այս կարճ խօսքերը բուն ծափահարութիւններով ողջունեցան: Վարադոյրն իջաւ ու հանդիսատեսները թատրոնէն հեռացան այն հաստատ համոզումով, որ բարի կամքն ունանալով աշխատանքը հրաշքներ կարող են գործել ամեն բանի մէջ:

*
* *

Այս տարին մեր թատերական գրականութեան համար բաւական բեղուն տարի մը կերեայ: Պ. Շիրվանզադէի նոր դրամայէն յետոյ, ահա ուրիշ ինքնուրոյն պիէս մը. պ. Ալեքսանդր Քիշմիշեանի «Նոր կեանքի շէմքում» 4 գործողութեամբ դրամատիքական էտիւդը, որը ներկայացուցին փետր. 7-ի երկուշաբթի երեկոյեան:

Պ. Քիշմիշեանի գործը, ինչպէս առ հասարակ մեր ամեն ինքնուրոյն թատերախաղերը, աչքի կ'ընկնի իր հետեւեալ յատկանիշով. համակրելի, լարձ գաղափարի, ձգտումի տեսակէտէն, իսկ դանդաղ, թոյլ՝ բեմականութեան, դրամատիզմի կողմէ:

Պ. Քիշմիշեանի «Նոր կեանքի շէմքումը» թատերական արուեստի դէմ մեղանշումներ, և այն ալ խոշոր մեղանշումներ ունի: Պ. Քիշմիշեան կը մոռանայ, որ դրամատիկ գրուածքի մը մէջ ամեն տեսարան, ամեն շարժում, նոյնիսկ ամեն բառ պէտք է ձգտի աստիճանական զարգացումով մը դէպի ինտրիգի լուծումը, դէպի պիէսի տրամաբանական վախճանը, և թէ գործողութեան արագութեան համար պէտք է զոհուին բոլոր կողմնակի, երկրորդական ընդլայնումները, որովհետեւ թատերախաղը վէպ մը չէ: Բայց այս բոլորին հակառակ, եթէ պ. Քիշմիշեանի գործը պէտք եղած տալաւորութիւնը չգործեց, յանցանքին մէջ մեծ բաժին մը ունին և մեր գերասանները: Դերասաններու խաղը ահագին, կարելի է ըսել ճակատագրական նշանակութիւն ունի պիէսայի մը յաղթանակին կամ տա-

պալուսին մէջ: Առանց չափազանցութեան նկատենք, որ Եւրոպայի մէջ գերասաններն են որ կը շինեն թատերախաղերու յաջողութիւնը: Կան պիէսներ, նոյնիսկ շատ ժամանակակից պիէսներ, որ պրուած են միմիայն մէկ գերասանի համար: Եւ այդ միակ գերասանը՝ խելացի ու ճարպիկ ամբողջութեան մը հետ, կը յաջողի պիէսային տալ կատարեալ յաղթանակի մը դափնին:

Մեր գրամատիկական խումբը իր փետր. 7-ի խաղով ապացուցեց, որ այդ հրաշագործ գերասաններու աստառը չունի: Ամենքը՝ բացի Արէլեանէն և մասամբ Ջարիֆեանէն, կարծես խօսք մէկ բրած էին «Նոր կեանքի շէմքում»-ը տապալելու: Դարձեալ կը կրկնեմ, պիէսը ունէր բնական շատ խոշոր անյարմարութիւններ, օրինակ առաջին գործողութեան՝ հեղինակը մեզ կը փոխադրէ այնպիսի շրջապատ մը, ուր գործող անձերը մեծ մասամբ երկրորդական են, մեզ կը զբաղեցնէ այնպիսի հարցով մը, որ միջանկեալ է—Սամսոն բէգի և Լիւսիի ամուսնութիւնը.— և յետոյ, երեւի ցոյց տալու համար թէ խաղամոլութիւնը որ աստիճան վարակած է որոշ շրջանի մարդկանց, տանտէրը կը տանի բնակն խաղի սենեակը և բոլորովին մինակ կը թողու երկու հիւրեր, որոնք նոյնիսկ պարզ էտիկէթի տեսակէտով կարելի չէ առանձին ձգել: Այս ամենը, և ուրիշ թերութիւններ—որոնց մանրամասնութեան մէջ չենք ուզեր մտնել—խոստովանելով հանդերձ՝ գերասաններու անփութութիւնը չենք կարող արդարացնել: Մեծ մասը ոչ միայն իրենց ներկայացուցած անձերու հոգեբանութիւնը քրքրելու մտահոգութիւնը չէին ունեցեր, այլև խօսքերը յուշարարէն կ'առնէին:

Պ. Քիշմիշեանի յուզած հարցը ամենուն սրտին մօտիկ հարց մըն է—մտաւոր ուժերու գործունէութիւնը մեր երկրի խուլ անկիւններուն մէջ: Պ. Քիշմիշեան ոչ թէ հնարովի, այլ կեանքէն վերցուցած իրականութեան պատկերացումով ցոյց կուտայ թէ որքան անպատրաստ է այն հողը, ուր կոչուած է գործելու մեր մտաւորականութիւնը: Թէ այդ «բարի մարդերու» շրջանին մէջ որ աստիճան կեղտոտութիւններ կան, թէ բռնապետական կարգերը որ աստիճան անընդունակ դարձուցած են գիւղի մարդիկը մտածումի և արամաբանութեան:

Իւզըաշեան (Ջարիֆեան) ուսում ստացած գիւղացի երիտասարդը նուիրուած է իր համագիւղացիներու շահերուն. իր ամբողջ ուժը կը թափէ արդարութիւն ու լոյս մտցնելու համար մեր գիւղերու մոայլ մթնոլորտին մէջ շարժուող կոյր գիտակցութիւններուն մէջ: Իր ճամբուն վրայ կը հանդիպի քոյր հոգիի մը՝ այլի տիկին Աշխարբէգեանի (տ. Ջարիֆեան) և ձեռք ձեռ-

քի տուած կը գործեն ըստ ի դատին համար: Եւ երբ այդ երկու գործիչներու մէջ զաղափարի մտերմութիւնը զգացումներու ալ մտերմութեան կը փոխուի, երբ երկուքը կը վճռեն իրենց կեանքը իրարու կապել աւելի եռանդով գործելու համար, Մէջլում բէգ՝ (Արէլեան) այլի տիկնոջ հօրեղբայրը՝ իր նախկին զինուորականի համարձակ, ու միջոցներու մէջ ոչ մէկ խտրութիւն չդնող բրտութիւնն ու բռնութիւնը կը նետէ անոնց սէրերուն մէջտեղ: Եւ իր եղբօր աղջկան անյողգողդ վճռակա՜նութեան ժայռին զարնուելով՝ կը դիմէ միակ, և աւանդ սովորական միջոցին. իշխանութեան առջև խռովարար կը ներկայացնէ Իւզբաշեանը և գիւղէն արսորելու հրաման ձեռք կը բերէ: Իւզբաշեան սրտի մորմորով կը ստիպուի հեռանալ գիւղէն, վերջին յուսահատ, անպատասխան կոչէ մը յետոյ սիրոյ ու իղէալի ընկերին, տիկին Աշխարբէգեանի: Կը հեռանայ գիւղէն, գնալ գործելու համար ուրիշ մտերիմ, զփքախտ երկիրներու տակ, ուր միշտ միևնոյն բռնութիւնը կը ծանրանայ ցաւի անհունութեան տակ կռացած գլուխներու, կորացած մէջքերու վրայ... սահմանէն անդին:

Տ. Զաւէն

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մուկդէնի տակ:—Անգլիան Մերձաւոր Արեւելիում:

Հեռաւոր Արեւելքում պատմական ահեղ ընդհարումը կարծես մօտենում է իր վախճանին և Մուկդէնի տակ վճռում է երկրագնդի այդ մասի ապագան: Երկարատե նախապատրաստական շրջանից յետոյ, յունուարի կիսից սկսեց զարգանալ ահադին բանակների մեծ ճակատամարտը: Յունուարի 12-ին գնեւրալ Կուրոպատկինը եօթներորդ անգամ փորձեց նախայարձակուող լինել. գնեւրալ Գրիպպենբերգը սկզբում նոյնիսկ յետ մղեց ճապոնացիներին, սակայն 16-ից ռուսները ստիպուեցին թողնել Սանդիպուն ահադին կորուստով (397 օֆիցեր և 13,800 զինուոր): Այնուհետև ճապոնացիները մեծ ճարպիկութեամբ և շժմեցնող արագութեամբ՝ ու թափով սկսեցին երևան հանել ճապոնական զլխաւոր շտաբի պետ՝ գնեւրալ Կոդամայի ծրագիրը: Օյաման ունենալով իր ձեռքի տակ Օկուի, Նոդզուի, Կուրոկիի և Նոգիի նման տաղանդաւոր զօրավարներ կարճ միջոցում զարգացրեց՝ ճապոնացիները յանկարծ երևացին Մուկդէնից 245 վերստ հիւսիս, երկաթուղու վրայ: Փետրուարի 16-ին նրանք երևացին Մուկդէնից արևմուտք և գրաւեցին Սինմիտին: Միայն այդ ժամանակ Կուրոպատկինը տեսաւ որ ճապոնացիները շրջապատել են իր բանակի արևմտեան թևը: Օկուի բանակի առաջապահ մասը երևաց Լեաօխէի ափին, Կալահամա տեղում, փետրուարի 16-ին և մի օրում ձեպընթաց քայլով արաւ 50 վերստ և հասաւ փետրուար 17-ին Սալինպու, Մուկդէնից 18 վերստ դէպի արևմուտք: Միաժամանակ հարաւից և հարաւ-արեւելքից Նոդզուն և Կուրոկին էին յարձակւում ռուս բանակի վրայ: Փետրուար 23-ին արդէն ռուսաց բանակը յետ էր մղուած Շախէ գետից հիւսիս, ստիպուած էր թողնել նաև Սունխէի հարաւային ափը, այնպէս որ այդ օր Մուկդէն-Սարբինեան երկաթուղային գծից դէպի ա-

արևմուտք և Խուսիսէ գետի ամբողջ ձախ ափը ճապոնացիների ձեռքում էր: Փետրուարի 23-ին Նոգի մտաւ Մուկդէն և, կանգ չառնելով այդտեղ, դիմեց դէպի հիւսիս, ուռնների նահանջումն արգելելու նպատակով: Միւս օրը փետրուարի 25-ին, առաւօտեան ժամի 10-ին ճապոնացիները գրաւեցին պատմական Մուկդէնը: Կուրոկին նախընթաց օրը արդէն հասել էր Մուկդէնից արեւելք և գրաւել Ֆուշունը և Տիտան: Այդպիսով, Կուրոպատկինի ահագին բանակը շրջապատուած է, և նա այժմ աշխատում է կտրել այդ զարհուրելի օղակը և յետ նահանջել դէպի Տելին...

Ծովի վրայ հակառակորդները դեռ հեռու են ընդհարումից: Փետրուարի 2-ին Լիբաւայից Հեռաւոր-Արեւելքի ջրերն ուղևորուեց ուռնաց երրորդ Սադալ-ովկեանոսեան նաւատորմիդը, ծովակալ Ներոգատովի հրամանատարութեամբ, իր կազմի մէջ ունենալով 4 զրահակիր, մի հին յածոնաւ, 2 օժանդակ յածոնաւեր, մի փոխադրանաւ և ածխակիր նաւեր: Ծովակալ Բոժեսովկենսկին Մադագասկար կղզու ջրերում պէտք է սպասի Ներոգատովին, որ հազիւ թէ լոեղ համարի մայիսի սկզբներում: Այդքան ժամանակ ֆրանսիական ջրերում ուռնաց ռազմանաւերի ապաստանելը անկասկած պէտք է գրգռի ճապոնացիներին, որոնք, երևի, կը բողոքեն Դէլլասէի այդ կերպ «չէզոքութիւն» պահպանելու եղանակի դէմ...

* *

Մինչդեռ Մուկդէնի տակ հարիւր հազարաւոր զոհերի արիւնքով են բացւում Հեռաւոր Արեւելքի պատմութեան նոր էջերը և Ծագող Արեւակի ճառագայթներն են ուժգին լուսաւորում մեր դժբախտ երկրագնդի այդ մասը, Մերձաւոր Արեւելքում ևս կեանքը ապագայ մեծ փոփոխութիւնների նշաններ է ցոյց տալիս: Եւ, ինչպէս երևում է, վերջ ի վերջոյ Մեծ-Բրիտանիայի ազդեցութիւնը պէտք է յաղթող հանդիսանայ այդ մասում: Ռուս-ճապոնական պատերազմը, պէտք է ասել, բաւական նպաստաւոր էր այդ երևոյթի զարգացման համար:

Օգտուելով ներկայ պատերազմի շփոթութիւնից՝ սուլթանը ոչ միայն ուժեղացրեց իր ցամաքային և ծովային սպառազինութիւնը, այլև՝ բեֆորմներ մտցնելու փոխարէն, Մակեդոնիայում նորանոր զօրքեր մտցրեց, բնաւ ուշադրութիւն չդարձնելով «բեֆորմների» աւստրո-ունգարական ծրագրի վրայ: Եւ Մակեդոնիան նորից պատրաստուած է գէնքի դիմելու: Անգլիան է այժմ իր ձեռքը վերցնում մակեդոնական հարցի լուծումը:

Մակեդոնական հարցի առիթով Լոնդոնում վերջերս կայա-

յեւ է մի ժողով, մեծ մասամբ պարլամենտի անդամներէց, լորդ Ստենմորի նախագահութեամբ: Այդ ժողովը գտել է որ Անգլիան վերջապէս պէտք է իր վրայ վերցնի թիւրքական զորքերի մէջ միջամտելու նախաձեռնութիւնը: Հեռագրներից իմանում ենք, որ Կ. Պոլսի անգլիական դեսպանը, վերադառնալով «արձակուրդից», այցելեց Վիէնայում և Սոֆիայում ղեկավար մինիստրներին և յայտնի եղաւ որ նա իր հետ տանում է Մակեդոնիայի համար բեֆորմների նոր ծրագիր: Այդպիսով Եւրոպական թիւրքիայում ևս Անգլիան սկսում է զօրեղացնել իր ազդեցութիւնը, որը այդ մահմեդական պետութեան ասիական մասերում, մանաւանդ Արաբիայում, գերակշռող էր: Անգլիական առատ ոսկին և ճարպիկ քաղաքականութիւնը վաղուց իր ձեռքն էր գցել արաբական ծովամիակայ, կիտանկախ ցեղերի շէյխերին: Արաբական թերակղզու մի կտորը (Ադէնը) իր թաթի մէջ բռնած բրիտանական առիւծը իր ասորժակները տարածում է և աւելի խոշոր պատանդների վրայ: Մեր ընթերցողը գուցէ յիշում է մի քանի տարի առաջ այս էջերում Կուվէյթի առիթով անգլո-թիւրքական լարուած յարաբերութիւնների մասին բերուած տեղեկութիւնները *): Անգլիական զրահակիրների առաջ սուլթանը այն ժամանակ ստիպուած էր յետ կանգնել և՛ անպատիժ թողնել Անգլիայից հովանաւորուած ապստամբ շէյխ Մուրադէփին: Այժմ այդ նոյն Կուվէյթում, որ ահագին նշանակութիւն է ունենալու, իբրեւ Բաղդադի երկաթուղու մի ծայր Պարսից-Ծոցում, անգլիացիները հաստատուել են առանձին քաղաքական գործակալութիւն, որի խորհուրդներով պիտի ղեկավարուի Անգլիայից նպաստ ստացող շէյխը: Կուվէյթը դառնում է անգլիական նաւատորմի կաշառան Պարսից Ծոցում...

Լորդ Կրքընը իբրեւ նուրբ քաղաքագէտ աշխատում է օգտուել նպաստաւոր հանգամանքներից և Անգլիայի ազդեցութիւնը ամրացնել Հեղկաստանի շուրջ: Արաբիայում, Պարսկաստանում, Բելուջիստանում և Աֆղանիստանում: Ամեն տեղ անգլիական առևտրական շահերը ամրացւում են քաղաքական որոշ քայլերով: Առ այժմ առանձին շահ չունի Անգլիան թիւրքիայի հայկական գաւառներում և այդ պատճառով պղատմական ցանկութիւններից դէնը չի անցնում նրա ղեկավարման, թէկուզ զարհուրելի կոտորածների, սովից և ցրախի մեռնող զոհերի ազդակները ընդունակ լինեն քարերից անգամ արտասուներ քամելու: «Մեր շահը չի պահանջում և չենք կարող միջամտել»,— ահա ժամանակակից մեծ պետութիւնների զործունէ-

*) Տե՛ս «Մուրճ» 1901 թ. № 11, էրես 248—249

ութեան նշանաբանը: Երևի այդ շահերը պահանջում են այժմ խառնուել մակեդոնական հարցում, որ Անգլիան հանդիսականի դերը փոխել է գերակատարի դերի... Եւ բուլղարական իշխան Ֆերդինանդը իր քաղաքագիտական նուրբ հոտառութեամբ ըմբռնեց ժամանակի պահանջը ու շտապեց Լոնդոն, ինչպէս մի քիչ առաջ՝ Բերլին, «այցելութեան» Էդուարդ Թագաւորին: Փառաւոր ընդունելութիւնը կասկած չթողեց որ Ֆերդինանդը չէր սխալուել իր հաշիւների մէջ: Դիպլոմատների հետ զիպլոմատ պէտք է լինել և ոչ երազող...

Այսպիսով Անգլիան Բալկանեան թերակղզուց մինչև Հնդկաստանի սահմանները, բոլոր այն տեղերում ուր միայն շահ ունի, ամեն կերպ ուժեղացնում է իր ազդեցութիւնը և դիրքը, գերակշռութիւն տալով ծովեզերեայ երկրներին: Մերձաւոր Արևելքի այն մասերում, որոնք հեռու են ծովերից, Բաղդատի երկաթուղու ուղղութեամբ, սկսում է աճել գերմանական ազդեցութիւնը, այսինքն Անատոլիայում, Միջագետքում: Ֆրանսիայի դերը Արևելքում այժմ չնչին է: Բնականաբար արևելեան ազգերի հասկացողութիւնների մէջ կամաց-կամաց նսեմանում է և ջնջւում Ֆրանսիայի անունը: Քրանզը, որի տեղ օրէցօր բռնում է ինգլիզը: Եւ մի գեղեցիկ օր կը տեսնէք ամբողջ թէ Մերձաւոր և թէ Հեռաւոր-Արևելքը «ինգլիզացած»...

Ս. Լ.

24 փետր.

Ո՞վ փակեց Թաւրիզի Լիլաւա թաղի դպրոցները 1903
— 1904 ուսումնական տարւոյ ընթացքում.
(Նամակ խմբագրութեան)

«Մուրճ»-ի էջերում մէկ ու կէս տարի է ես դատաւիտւում եմ Ատրպատականում իմ ցոյց տուած գործունէութեան համար: Վերջերումս էլ «Մուրճ»-ի այս տարւոյ № 1-ի մէջ դարձեալ նոյն բանն է կրկնւում Լիլաւա թաղի դպրոցների փակման առիթով *):

Ես տեսնում եմ որ հակառակ Թաւրիզից ստացուած ու տը-

*) Տես «Մուրճ» №, 1 երես 169—170.

սրուած հերքումների, հակառակ անցեալ տարուայ ծխական ժողովի վճռի՝ նախկին ուսուցչական խմբերին չհրաժիրելու մասին, դարձեալ ցանկանում են ինձ համարել Լիլաւայի դպրոցների փակման պատճառը:

Թոյլ տուէք պատմել բուն իրողութիւնը, բաւականանալով միմիայն դպրոցների խնդրով: Լիլաւայի հոգաբարձութիւնը կազմուած էր վեց հոգուց՝ ըփիշկ Փաշայեան, Ենովք Տէր-Յակովբեան, Բաղդասար Զանեան, Արիստակէս Տէր-Գրիգորեան, Մատթէոս Յովսէփեան և Արշակ Դորդանեան: 1901 թուի վերջերին՝ պաշտօնավարութեան հէնց առաջին ամիսներին, երեք հոգի հրաժարական ներկայացրին, որովհետեւ առանց նրանց գիտութեան ժողովներ էին կայացրել և վճիռներ ու որոշումներ տուել մնացած երեք անդամները: Պաշտօնի մէջ մնացին պ. Փաշայեան, որը նախագահ էր հոգաբարձութեան, Մատթէոս Յովսէփեան՝ գանձապահ դպրոցի և Սեան ընկերութեան և Արշակ Դորդանեանը, որը դպրոցին պարտ էր բաւական կլորիկ գումար՝ բարձր իր միջոցներից: Հոգաբարձութեան մնացող անդամները, յուսալով իրանց գործունէութեան յաջողութեան, զրոյց սպասելիք օժանդակութեան և սկսած վիճակախաղի արդեանց վրայ, սկսել էին ծախսել դպրոցական անձեռնմխելի դրամազուլսը և ծախսածի գումարն հասցրել 5000-ի: Նրանք անխոյժ գտնուեցին նաև Սեան ընկերութեան վրայ ունեցած 2400 թումանը ժամանակին գանձելու խնդրում, հակառակ առաջնորդարանի պատուէրների, չնայելով, որ հոգաբարձութեան և ընկերութեան գանձապահը միևնոյն անձն էր և լաւ գիտէր «Սեանի» գործերի ողբալի դրութիւնը: Յանկարծ ընկերութիւնը իրան սնանկ յայտարարեց և Լիլաւայի դպրոցների դրամազուլսը, որ հազել 15,000 բուրլու էր հասնում՝ կիսուեց: Մնացած կէսն էլ ազգասիրաբար պարտ մնացին հոգաբարձութեան անդամներից մի երկուսը և թաղի օրական աշխատանքով ապրող մարդիկ:

Առաջնորդարանը հէնց սկզբից զգուշացրել էր շրջաբերականով բոլոր հոգաբարձական մարմիններին, որ ազգային հասարակական գրամների կորստեան համար իրանք պատասխանատու են, որ նրանք պարտաւոր են այդ գումարներն առանց ապահովութեան ոչ ոքի չտալ, սակայն հէնց այդ պահանջն էր, որ նրանք պալաժենիայի գործադրութիւն համարեցին և գրեցին իսկ, մինչդեռ յայտնի է Ատրպատականի թեմական կանոնադրութեան էութիւնը և հէնց «Մուրճ»-ի համարներում քրննադատուած: Հոգաբարձութեան մնացող անդամներն երբ տեսան, որ արգէն վտանգել են դպրոցի կանոնաւոր գոյութիւնը,

չուզեցին մնալ իրանց պաշտօնում և հրաժարուեցին: Այլապէս լինել էլ չէր կարող: Նշանակուեց հոգաբարձական ընտրութիւն և տոմսակներ ուղարկուեցին ծխականներին քահանաների ներկայացրած ցուցակներով: Չայնի իրաւունքը համեմատաբար կանոնաւորուեց և յանկարծ հոգաբարձու ընտրուեցան ուսուցչական խմբին հակառակ կուսակցութեան մարդիկ: Իրարանցումը մեծ էր. մարդիկ պատրաստ էին ոչ մի միջոցի առաջ կանգ չառնել: Սկսուեց աղաչանքն ու սպառնալիքը և ես որոշ մարդկանց մի կեղծ ու անկանոն խնդրով ստիպուած եղայ լուծել կայացած ընտրութիւնը և խնդիրն անուշ տեղ կապել:

Նշանակուեց նոր ընտրութիւն, ժողովին նախագահելու իրաւունքը տուի Մկրտիչ աւագ քահանային, իսկ ժողովի ատենապետ եղաւ պ. Փաշաեանը: Հոգաբարձութիւնն ընտրուեց խմբի կողմնակիցներից. ընտրուածներից երեք հոգի հրաժարուեցան և մնացին անանկ յայտարարուած Սեան ընկերութեան նախագահը, նոյն ընկերութեան և հրաժարուած հոգաբարձութեան գանձապահը և զպրոցին հազար ուսուցչի պարտք ունեցող ժամագործ Արշակ Ղորղանեանը: Կազմի կէսը հրաժարուել էր, միւսն իրան վաղուց յայտարարել էր անբարեկոյս պարտադան, բայց այնուամենայնիւ ցանկութիւն ունէր երեք հոգով ստանձնելու զպրոցի հոգաբարձութիւնը: Ես նրանց հաստատելուց առաջ ստորագրութիւն պահանջեցի այդ պարտքներից, որ իրանք բարոյական պարտ համարեն գանձել Սեան ընկերութեան վրայ եղած գումարը, բայց երբ այդ առաջարկս չընդունուեց, իսկ միւս կողմից էլ յայտնի խումբը պնդում էր հաստատել այդ անձերին իրանց տեղն ամուր պահելու համար, զիմեցի Վեհափառ Հայրապետին և հրահանգ խնդրեցի, թէ ի՞նչպէս վարուէի այդ դէպքում: Ստացայ Հայրապետի № 950 սրբատառ կոնդակը յունիսի 21-ից, որով հրամայում էր ստորագրութիւն պահանջել և ապա միայն հաստատել մնացող երեք անձանց, իստիւ արգելելով դրամագլխին ձեռք տալը, հակառակ դէպքում կատարել նոր ընտրութիւն: Թէև պարզ չէր, թէ ո՞վքեր պէտք է հոգաբարձու լինէին, սակայն մի բան ակնյայտնի էր. այն որ Լիլաւայի զպրոցները սնանկացրած էին. որ եղած դասարաններից երեքը պէտք է փակուէր, որովհետեւ միջոց չկար և մնացած դասարանները պէտք է կադ ի կադ շարունակէին իրանց գոյութիւնը: Պ. Ռաշմաձեանը կամաց կամաց սկսեց Թաւրիզից հեռանալու պատրաստութիւնը՝ չնայած իմ խօսքերին, որ զպրոցը՝ ինչ զոհաբերութիւն էլ հարկաւորուէր, կը պահուէր ունեցած դասարաններով: Ես առաջարկեցի իրան չհեռանալ և այդ մասին յայտնել նաև ուսուցչական խմբին՝ բա-

ցի Յարէթ Խաչատրեանից, որին՝ որպէս երգեցողութեան ուսուցչի և դպրապետի՝ իրաւունք համարեցի պաշտօնից հեռացընել Համարձման օրուայ վարմունքի համար:

Պ. Ռաշմաճեանը մի պայման ունէր իր ուսուցիչներին հետ. կամ բոլորս, կամ ոչ մէկս: Բանաւոր կերպով բանակցութիւնից յետոյ ես իրան պաշտօնական № 272 զրութեամբ յուլիսի չորսին տեսուչ հրաւիրեցի: Պաշտօնագրի բովանդակութիւնն էր հետեւեալը.

Մեծապատիւ Պ. Տիգրան Ռաշմաճեան.

Մինչև հոգաբարձական կազմի վերջնական հաստատութիւնը, որոնցից չորս հոգի հրաժարուել են, իսկ երկուսի համար հայցել եմ Վեհափառ կաթողիկոսի հաճութիւնը ու հրահանգը, կարգելով ձեզ Լիւաւայի Հայկազեան և Թամարեան դպրոցներէ տեսուչ մի քանի ժամանակով, առաջարկում եմ կազմել ուսուչական խումբը առաջիկայ 1903 և 1904 ուսումնական տարուայ համար հետեւեալ կերպով.

Դպրոցների տարեկան եկամուտն է.—

Հաւանական . . . 0/0 դրամագլխի 420 թուման	
Ուսումնաւարձ	700 թ.
Մելիք Ազարեանից	300 թ.
Եկեղեցուց և եկեղեցական անից	150 թ.
Ներկայացումներից	300 թ.
Թեմակալ առաջնորդից	150 թ.
(Ուս. աւելորդ)	300 թ.
Պատահական	200 թ.

Ընդամենը

2320 թ.:

Վերջին գումարն եթէ չստացուեց, թոյլ եմ տալիս վերցնել դրամագլխից: Այսպիսով դպրոցներն ամենայնպէս ղեկավարում կարող են ունենալ 2300 թուման, որ և ունենալով դպրոցների պահպանութեան համար, առաջարկում ենք ղեկավարուել ուսուցիչներ հրաւիրելիս յիշեալ բիւդձէտով: Ուսուցիչների հաւասար վարձատրութեան համար ցանկալի է որոշել դասագին՝ բաժանելով առարկաներն առաջին և երկրորդ կարգերի: Դպրոցների նպատակն է տարածել հայ մատաղ սերնդի մէջ կրօնական-բարոյական և ազգային դաստիարակութիւն, որև ինկատ պէտք է ունենայ ձեր հրաւիրած իւրաքանչիւր պաշտօնեան: Կրօնի և երգեցողութեան ուսուցիչները պէտք է միւսներին նման հմուտ լինեն իրանց աւանդելիք առարկաներին և երկրորդը՝ նրանցից՝ որպէս խմբապետ՝ պարտաւորապէս պէտք է ներկայ լինի շաբաթ երեկոյեան, կիրակէ, ինչպէս և ազգային-եկեղեցական հանդիսաւոր տօներին՝ պատարագին և երգի իր խմբով: Յատկապէս երգեցողութեան ուսուցչի ուճակի հաշուին կը տրուի եկեղեցական նպաստը և ուսուցչի զանցառութեան ղեկավարում կը ղեկընդործէ նրա ուճակից բացակայ ժամերի վարձատրութիւնը, որև առաջարկում ենք մտցնել երգեցողութեան ուսուցչի պայմանագրի մէջ:

Մօտ ապագայում Լիւաւայի ժողովրդին հրաւիրելու ենք առաջին ժողովի մեզ մօտ և ծանօթացնելով նրանց դպրոցի նիւթականի հետ, առաջարկելու ենք այս տարի նիւթապէս օգնել դպրոցներին, որ գոյութիւն ունեցող դասարանները չփակուեն: Եթէ բարեհաճեցին ըմբռնել զրութեան Փետրուար, 1905.

դժուարութիւնը և օգնութեան հասան, այնուհետև մեր լրացուցիչ պաշտօնագրից յետոյ կը հրաւիրէք պակաս անձանց, առաջարկելով կազմած խումբըն ի հաստատութիւն առաջնորդարանիս: Պարտք եմ համարում աւելացընել, որ պատշաճաւոր իշխանութիւնից չհաստատուած ուսուցիչը ոչ մի իրաւաբանական հիմունք և իրաւունք ունենալու չէ դպրոցներից որեւէ պահանջ անելու, ինկատի ունենալով միմիայն ստացած հրաւերին ու տրւած համաձայնութիւնը:

Պ. Ռաշմաճեանը յուլիսի 7-ին ինձ ուղղեց հետեւեալ պատասխանը.

Գերապատիւ Առաջնորդ Ատրպատականի, Եղիշէ Ժ. Վարդապետ Մուրադեան

Ձեր № 272, յուլիսի 4-ի գրութեան, ինչպէս ամսի 5-ին բանաւոր ասացի, հիմա էլ նոյնն եմ կրկնում, որ ձեր առաջարկած պայմաններով ցաւօք սրտի չեմ կարող յանձն առնել 1903—1904 ուսումնական տարւում Լիւաւա թաղի Հայկազեան և Թամարեան երկսեռ դպրոցների տեսչութիւնը հետեւեալ կէտերի հիման վրայ.

1) Ձկայ հոգաբարձական կադմ (Ձեր գրութեան համաձայն):

2) Երկու հազար հինգ հարիւր տասը (2510) թուման բիւզլէտով հնարաւոր չէ դպրոցները նոյն բարձրութեան վրայ պահել:

3) Ուսուցչական խմբի կազմակերպութեան իրաւունքը սահմանափակուած է:

Նաեւ աւելորդ չի լինի ասել, որ դեռ մայիս ամսին Առաջնորդարանում կայացած հոգաբարձական նախապատրաստական ժողովից ձեզ յայտնի է, որ վերոյիշեալ դպրոցները կարելի է նոյն բարձրութեան վրայ պահել 2725 թուման բիւզլէտով:

Տիգրան Ռաշմաճեան

7-ին յուլիսի 1903 թուի:

Թաւրիզ.

Յուլիսի 9-ին պ. տեսչի յիշեալ գրութեան առթիւ ուղղեցի կրկին հետեւեալ հրաւերը.

Մեծապատիւ պ. Տիգրան Ռաշմաճեան

Ձեր յուլիսի 7-ին տուած հրաժարականի առթիւ պարտք եմ համարում պատասխանել, որ հանգամանքների բերմամբ տարաբախտաբար հնարաւորութիւն չկայ տեսչական խնդիրն յետաձգելու մինչև Լիւաւայի դպրոցների համար նոր հոգաբարձական կազմի ընտրութիւնը, որոնցից երրորդ խումբն է այս մէկ և կէս ամսուայ ընթացքում հրաժարուել: Դպրոցի բիւզլէն ձեզ քաջ յայտնի է և առ այժմ հնարաւորութիւն չկայ ենթադրական եկամուտների յուսով դպրոցի գրամագլխի չնչին մնացորդներն էլ մի տարուայ ընթացքում ոչնչացնելու: Դաւով ուսուցչական խմբի խնդրին, ես կրկին պնդում եմ № 272 պաշտօնագրի վերջին կէտը և ուեւացնում, որ Լիւաւա թաղի դպրոցների ուսուցչական խմբի վերահաստատութեան դէմ ոչ մի արգելք չկայ առաջնորդարանիս կողմից՝ բացի երգեցողութեան ուսուցիչ և խմբապետ պ. Յարէթից, որին հաստատել չենք կարող Համբարձման օրուայ ցոյցի և անկարողութեան պատճառով և առաջարկում եմ հրաւիրել նրա տեղ մի այլ անձաւորութիւն:

Ձեր համաձայնութեան մասին առաջնորդարանս խնդրում է շուտով տեղեկագրել, որովհետև ժամանակն անցնում է և Լիւաւայի դպրոցների ուսուցչական խումբը դեռ չէ հաւերուած և վերահաստատուած:

Սոյն գրութեանս որպէս պատասխան պ. Ռաշմաճեանից յուլիսի 19-ին ստացայ հետեւեալը.

Գերապատիւ ե... այլն.

Արդէն ճանապարհի վրայ լինելով ժամանակ և հնարաւորութիւն չունեմ երկար և բարակ զրելու: Ձեր № 27-ի յուլիսի 9-ի գրութեանը պատասխանելով, ցաօք սրտի պէտք է կրկնեմ նոյնը, ինչ որ ասել եմ ամսիս 7-ի գրութեամբս: Գալով պ. Յարէթ Պաշտօրեանի խնդրին, կ'ասեմ, որ նա յանցաւոր չէ մէկ, և երկըսող առանց այն էլ այստեղ եղած ժամանակ և յունիսի 23-ին գրած նամակով ևս յայտնել է, որ 190¹/₄ ուս. տ. չի կարող գալ Թաւրիզ. ապա ուրեմն նրա մասին հարց բարձրացնելու կարիք չկար, մանաւանդ թէ նախապէս այդ մասին բանաւոր ասել էի ձեզ:

Տիգրան Ռաշմաճեան:

10-ին յուլիսի Թաւրիզ.

Արդեօք հրճան անմեղ էր պ. Յարէթ Պաշտօրեանը ևս այստեղ դրա մասին չեմ խօսում, որովհետեւ Համբարձման պատարագին ներկայ եղող հասարակութիւնը և ամբողջ Թաւրիզը գիտէ այդ, սակայն պ. Ռաշմաճեանը ինձ ոչնչով չէր ապահովել, որ նա այլևս երգեցողութեան ուսուցիչ և խմբավետ չի լինելու:

Ահա այս գրութիւնից յետոյ պ. Ռաշմաճեանը թողեց Թաւրիզը և հեռացաւ: Այդ միջոցին էր, որ ստացայ Վեհափառի կոնդակը և որովհետեւ դպրոցին պարտապան հոգաբարձուները չբարեհաճեցին իրանց վարած Սեան ընկերութեան վրայ եղած դպրոցական դրամներ իրանց մասի համար անգամ ստորագրութիւն տալ, հարկադրուեցի հոգաբարձական նոր ընտրութիւն նշանակել: Բայց որպէս զի սնանկացրած դպրոցի հոգաբարձութիւնը նորից դժուարութեանց չհանդիպէր, կամ հրաժարական չտար, որոշեցի նախ լրացնել բոլոր դասարանների պահպանութեան համար հարկաւոր բիւզջէն: Գնացի Լիլաւա, քարոզեցի եկեղեցում և յայտնեցի, որ դպրոցական տաճնապալի կացութիւնն ի նկատի ունենալով՝ հանգանակութիւն եմ սկսելու և այդ նպատակով թաղի մի քանի պատուաւոր անձանց հետ միասին շրջելու եմ տնէ տուն՝ առանց խտրութիւն դնելու հարստի և աղքատի մէջ: Ասածիս կատարումը սկսեցի հէնց նոյն օրը և մի շաբաթ ամբողջ շրջելով Լիլաւա թաղի բոլոր տները, հանգանակել կարողացանք մօտ մի հազար չորսլ լարիւր թուման, որով՝ բացի բիւզջէն լրացնելուց, հետեւաւ տարուայ պակասն էլ էր լրանում: Երկու շաբաթ առաջ դուրսուր Փաշայեանն էր «Հայրենիք»-ում ինձ երկինք հանել, իսկ այդ աշխատանքից յետոյ թէ Լիլաւան և թէ Ղալան չէին իմանում, թէ ինչ ձևով արտայայտէին իրանց շնորհակալութիւնն ու զարմանքը: Մարգիկ, որոնք կարծում էին, որ դպրոց սնան-

կացնելու գնով իրանց բացած դասարանները պէտք է փակուին և մեղադրանքի կեդրոնը առաջնորդարանը պէտք է դառնայ, խաբուեցան իրանց յոյսերի մէջ և շտապեցին խմբուել կրկին առաջնորդարանի շուրջը: Կատարուեց հոգաբարձական ընտրութիւն, մինչև այդ օրը չեղած կանոնաւորութեամբ և համերաշխութեամբ և ռմ կարմանք, հոգաբարձու ընտրուեցին կրկին այն անձինք, որոնք ընտրուել էին առաջին ժողովում: Ընտրութեան արտակարգ կանոնաւորութեան դէմ ոչ մի առարկութիւն անկու հնարաւորութիւն և առիթ չունենալով՝ որոշ խմբակի ներկայացուցիչ պ. Մարտիրոս Յարութիւնեանը բարեհաճեց գալ առաջնորդարան և գիմել ինձ հետեւեալ բառերով. «հայր սուրբ, եթէ դուք իրաւ մեզ բարեկամ էք, այնպէս արէք, որ հոգաբարձութիւնը կրկին Ռաշմաճեանին հրաւիրի և ես խօսք եմ տալիս, որ նա անպատճառ կը համաձայնի և կը գայ»:

Հոգաբարձուներին հաստատելուց յետոյ, անմիջապէս ժողովի հրաւիրեցի նրանց և առաջարկեցի պ. Ռաշմաճեանի թիկնաժութիւնը: Ես լաւ գիտէի, որ հոգաբարձական ամբողջ կազմը հակառակ է նրա ընթացքին. գիտէի, որ նրանք ինձանից չափազանց դժգոհելու են, սակայն թանկ գնահատելով խաղաղութիւնը, հասկացրի և համոզեցի հրաւիրել պ. Ռաշմաճեանին: Իսկոյն արձանագրութիւն կայացաւ և հետեւալ օրը հոգաբարձութեան կողմից Ռաշմաճեանին գրուեց հրաւէր. նրա տրամադրութեան տակ գրուեց իր խնդրած 2725 թումանը և միայն իրան նշանակուեց 500 թուման ռոճիկ, որչափ նա երբէք չէր ստացել. միայն ուսուցչական խմբի հաստատութեան պահանջը այս անգամ գրուեց և հոգաբարձութեան կողմից, ինչպէս որ շեշտուած էր Առաջնորդարանի № 272 գրութեան մէջ:

Օգոստոսի 16-ին ստացուեց յուլիսի 31-ին գրուած գրութեան պատասխանը պ. Ռաշմաճեանից նորանոր պահանջներով, որի բովանդակութիւնն էր հետեւեալը.

Գերապատիւ Առաջնորդ Արքայատեանի Եղիշէ ծայրագոյն վարդապետ Մուրադեան.

Անցած ամսի 31 թուակիր № 334 ձեր գրութիւնը ստացայ և ցաւելով պիտի ասեմ, որ անկարող էմ չիլաւա թաղի երկսեռ դպրոցների տեսչութիւնը յանձն առնել հետեւեալ կէտերի հիման վրայ.

1) Եթէ տեսչութեան հրաւիրուած անձն այնքան վստահութիւն է վայելում, որ նրան է յանձնուում մատաղ սերնդի մտաւոր և բարոյական յառաջագիմութեան պատասխանատուութիւնը, ապա՝ ուրեմն նրա կողմից առաջարկելիք ուսուցչական խումբը ոչ մի կասկածի և ոչ մի առարկութեան ենթակայ չպէտք է լինի, այլ անպայման կերպով պէտք է ընդունուի. ուստի ձեր № 272 պաշտօնագրի վերջին կէտը պիտի վերացնել մէջ տեղից. այդ է պահանջում գործի բնական ընթացքն ու յաջողութիւնը:

2) Ձեզ յայտնի և ինձանից անկախ պատճառով ստիպուեցայ տուն

ու տեղս քանդել, յուլիսի 11-ին թողնել թաւրիպը և ընտանիքով, երկու երեխաներով հարիւրաւոր վերստեր անցնել, կրելով նիւթական և ֆիզիքական շատ զրկանքներ. դարձեալ պատրաստեմ շատ նեղութիւններ յանձն առնել, բայց ինձ համար ծանր է գալ այն դէպքում, երբ վերջը պիտի ճընշուեմ պարտքերի տակ. որպէս զի այս բանը տեղի չունենայ, այն ժամանակ ինձ պէտք է տրուի՝ բացի 500 թուման ոռճկից՝ 100 թուման էլ ճանապարհածախք և բնակարանս կահաւորութիւն ամենահամեստ կերպով. ըստ ինքեան հասկանալի է, որ կահ-կարասին վերջը կը վերադարձուի ուսմ հարկն է:

3) Ցանկալի է, որ ուսուցչական խմբի ոռճիկները համար որոշած 2750 թումանի վրայ աւելացւի 300 թուման էլ, որպէս զի թերեւ հնարաւոր լինի եղած ոյժերի վրայ աւելացնել մի համալսարանական ևս. չյաջողութեամբ դէպքում գումարը կը մնայ դպրոցին: Վստահանում եմ այս ցանկալի առաջարկութիւնը անել՝ ի նկատի առնելով Լիւաւայի դպրոցների օգտին եղած յաջող հանգանակութիւնը:

Եթէ այս պահանջներն իրագործուին, մանաւանդ առաջին և երկրորդ կէտերը, այն ժամանակ բարեհաճեցէք՝ բիւզջէի հաշուին հետագրով 500 ըուրի փոխադրել և ես պատրաստ եմ խմբիս հետ այդտեղ լինել. դրական թէ բացառական դէպքում խնդրում եմ բարի լինիք հեռագրել:

Տիգրան Ռաշմաճեան.

10-ին օգոստոսի 1903 թ.

Աղէքսանդրապոլ.

Այդ գրութիւնը թաւրիպում ստացուեց օգոստոսի 16-ին և հետեւեալ օրն իսկոյն հոգաբարձական ժողով կայացաւ: Հոգաբարձութիւնը հնարաւոր չգտաւ պ. Ռաշմաճեանի առաջարկութիւններին բաւարարութիւն տալը, մանաւանդ որ այդ կլինէր միմեայն մի տարով, իսկ յետոյ դպրոցը պէտք է մնար աղքատ ու սնանկ և փակէր բարձր դասարանները:

Որոշուեց զիմել Բաքու պ. Լեոն Մանուելեանին և նրան տեսուչ հրաւիրել: Այդ մտքով հեռագիր տրուեց տեղական գործակալ տ. Դեոնդ քահանային, որից պատասխան ստացուեց, որ պ. Մանուելեանը գնացած է ամարանոց և գալուն պէս կը պատասխանի: Մի քանի օրից յետոյ ստացանք հետեւեալ պատասխանը.

«Ինձանից անկախ պատճառով գալ չեմ կարող»:

Մանուէլեան

Հոգաբարձութեան կողմից դիմումն եղաւ պ. Տիգրան Յովհաննիսեանին արժանաւոր տեսչացու գտնելու. Էջմիածին գրուեց որ այդ պաշտօնի համար հրաւիրուի պ. Սիբական Տիգրանեանը, բայց որովհետեւ ընդունելութեան ժամանակն անցնում էր, մինչև նոր տեսչի գալը ժամանակաւոր պաշտօնակատար նշանակուեց քսան տարուց ուսուցիչ պ. Գէորգ Զիլինգարեանը: Նրան թուղթ գրուեց օգոստոսի 28-ին և առաջարկուեց սկսել աշակերտների ընդունելութիւնն ու ներկայ եղող

ուսուցիչներին հրաւեր կարգով: Սեպտեմբերի 3-ի երեկոյեան 8 ժամին լիւսացիներէր Վեց հոգի մեզ ներկայացան հետեւեալ արձանագրութեամբ.

Արձանագրութիւն

Մենք Լիւաւա թաղի ծխականներս սոյն 1903 թուի սեպտեմբեր ամսի երեքին հաւաքուելով Լիւաւայի երկսեռ դպրոցներէ թատերասրահում, կայացրինք հետեւեալ որոշումները.

ա). Դ ինկատի առնելով, որ Լիւաւայի նորընտիր հոգաբարձութիւնը Լիւաւայի դպրոցներէ տեսչութիւնը յանձնել է պ. Գէորգ Չիլինգարեանին մի անձնաւորութեան, որ իր միամեայ պաշտօնավարութեան ընթացքում Ղալայի դպրոցում ցոյց է տուել իր կատարեալ ապիկարութիւնը (սրբադրած է անկարողութիւնը) և վնասուել է Ղալայի դպրոցից, (մակագրուած է «արձակուել է») իբրև անպէտք և ֆլասակար ուսուցիչ, մենք մեր պարտքն ենք համարում բողոքել հոգաբարձութեան այդ քայլի դէմ և յայտնել նրան մեր անվատահոսութիւնը և խորին բարոյական դժգոհութիւնը:

բ). Այլև ինկատի առնելով, որ աշակերտներ՝ մի քանի տարի առաջ աշակերտած լինելով պ. Չիլինգարեանին, անբաւական են նրա ընտրութիւնից և այդ անբաւականութիւնը գնալով աճում է և կարող է լուրջ բարդութիւններ առաջացնել, որոնք կարող են ֆլասակար կերպով անդադառնալ դպրոցի ներքին կեանքի վրայ՝ մենք ընտրեցինք բացարձակ քուէով պ. պ. Ներսէս Բալախանին, (դերձակ) Մկրտում Սահակեանին (գրաշար), Ռաֆայէլ Բուդաղեանին (առևտրական), Կարապետ Յովհաննիսեանին (առևտրական), Յովսէփ Կարախանեանին (նախկին ուսուցիչ), Գասպար Սարգսեանին (մանրավաճառ), Ղահրաման Սարգսեանին (կօշկակար), Իսրայէլ Մելիք Իսրայէլեանին, Ալեքսան Մելիք Արքահամեանին (գործակալաւոր) բողոքելու թեմիս բարձրագատիւ առաջնորդ Եղիշէ ծայրագոյն վարդապետ Մուրադեանին հոգաբարձութեան այդ քայլի դէմ և հրաւիրելու նորին բարձրագատութեան ուշադրութիւնն դպրոցի ողբալի դրութեան վրայ, այլև խնդրելու թեմակալ տաճնորդին դպրոցի առժամանակեայ կառավարութիւնը յանձնել պ. Մարտիրոս Յարութիւնեանին, որ վայելում է անխտիր մեր բողոքի սէրն ու համակրութիւնը և թոյլ տալ նրան ուսուցչական խումբ կազմելու, մինչև հրաւիրուած տեսչի գալը, իսկ վերջինիս չըգալու դէպքում, վարել դպրոցի տեսչութեան պաշտօնը մի տարի ժամանակով:

Քարտուղար՝ Յովսէփ Կարախանեան

Բայց ով կայացրեց այդ ժողովը, ով նախագահեց, ի՞նչ իրաւունքով և այդ ի՞նչ լեզու էր գործածուած, ոչ ոք իրան ներգրութիւն չէր տուել հարցնելու: Պատգամաւորներն եկան, խօսեցին ինչ և ինչպէս որ կարող էին խօսել ու տեսչութեան համար առաջարկեցին բացի պ. Մարտիրոս Յարութիւնեանից՝ նաև պ. Ռուբէն Խանապատեանին և խօսք տուին որ հոգաբարձութիւնը այդ երկուսից որին էլ ընտրելու լինի իրանք կընդունեն ամենայն զոհունակութեամբ և անտրտունջ:

Հետեւալ առաւօտ մի քանի աշակերտներ ևս եկան առաջնորդարան և ներկայացրին հետեւեալ բողոքը:

Քողոք առ գերապատիւ Եղիշէ ծալբապոյն վարդապետ Մուրադեան.

Նախկին դպրոցական տարուայ յայտարարութեան համեմատ մենք պարտք համարեցինք սեպտ. 1-ին դպրոց յաճախել, բայց դժբախտաբար մենք ոչ ուսուցիչ և ոչ տեսուչ գտանք դպրոցում:

Տարածուած զանազան անախորժ լուրեր մեզ առիթ են տալիս հետեւալ մեր իրաւացի պահանջները զինելու ձեւ առաջ:

1 Մենք պահանջում ենք շուտով ուսուղչական խումբ:

11 Մենք մի որևէ գաղութից իր անյարմարություններն պատճառով վերն-
տուած ուսուցչին չենք կարող և չենք ուզում հրելք ուսուցիչ կամ տեսուչ
ճանաչել:

III Մինչև այժմ մեր զսլրոցում տիրող ուղղութիւնը ցանկալի էր
չփոխուէր:

Ընդհանուր առմամբ, Մեր արյունը իրաւացի պահանջները չկատարելու դեպքում, կարող են անսխաբոթութիւններ թելելք տալ ուսուցչական խմբի և աշակերտութեան մէջ:

Խնդրում ենք անյապաղ վարուել ըստ պատշաճին:

ՄԼ, Վ, Ո՞, ՈՒ և Ո ղառաբանցիներ:

Պ. Զիլինգարեանն այդ օրը դպրոց գնաց ընդունելութիւններ սկսելու, բայց մի քանի աշակերտներու անլուռ հայհոյանքի պատճառաւ վերադարձաւ առաջնորդարան և յայտնեց, որ որոշ անձինք խռովում են աշակերտների միտքը, իսկ ինքը միևնոյն է, քանի որ տեսուչ չի լինելու, խնդրեց տեսուչ հրաւիրելու գործը փութացնել: Ինչպէս ինձ, այնպէս և ամբողջ թաւրիղի համար պարզ էր, որ դա դպրոցի հետ ոչ մի կապ չունեցող որոշ կուսակցութեան կռիւն էր և պէտք էր մի ելք գտնել այդ դրութիւնից դուրս գալու: Ստիպուած հոգաբարձական ժողով հրաւիրեցի, հատկացրի թէ ինչ խաղ էր խաղացւում դպրոցի շուրջը և առաջարկեցի լուծել տեսչական ծանր խնդիրը: Հոգաբարձութեան ցանկալի տեսչացուն էր Ռուբէն Խանազադեանը և քանի որ թաղի ինքնընտիր պատգամաւորներն էլ զրել էին նրա և պ. Մարտիրոս Յարութիւնեանի թեկնածութիւնը, ուստի կանգ առին Ռուբէն Խանազադեանի վրայ և միաձայն որոշուեց տեսչական պաշտօնի համար հրաւիրել նրան և իսկոյն պայման կապել: Պ. Խանազատեանը հրաւիրուեց ժողովի, յանձն առաւ տեսչի պաշտօնը և իսկոյն ստորագրեց մշակած պայմանագիրը: Ինչպէս ես, այնպէս էլ հոգաբարձութիւնը համոզուած էր, որ վերջապէս լուծուեց Լիւլաւայի դպրոցների տեսչական խնդիրը և շուտով կը սկսուին կանոնաւոր պարապմունքներ:

Գիշերը ժամը տասնին ինքնակոշ պատգամաւորներէջ երկուսը և մի պարոն գնացել էին պ. Սնանգասեանի մօտ շնորհաւորելու պատրուակաւ, բայց խկապէս ստուգելու, նա լիօք յանձն է առել տեսչական պաշտօնը, թէ ոչ։ Երբ գրական պա-

տասխան էին ստացել, դարմացած և զայրացած հեռացել էին մօտից, տեսնելով, որ իրանց հաշիւների մէջ խիստ խաբուած են: Նոյն նպատակաւ ուղարկել էին նաև աշակերտներին, դարձեալ շնորհաւորելու, բայց միևնոյն ժամանակ նրանց միջոցով յայտնելու, որ իրան չեն ուղում: Այս բոլորից յետոյ պ. Յարութիւնեանը բարեհաճեց անձամբ ներկայանալ մեզ և դնել իրան թեկնածութիւնը, մինչդեռ հոգաբարձական ժողովով տեսուչն արդէն հրաւիրուած էր, պայմանագիրը ստորագրուած և ուսուցչական խմբի անդամներին պաշտօնական գրութիւններ տուած:

Նոր տեսուչը դպրոց գնաց, աշակերտները նրան ընդունել էին անխօս, բայց մեծերից մի երեքը ցրուել էին փոքրերին իրանց տները և հետևեալ օրը՝ սեպտ. 10-ին ստացուեց հետևեալ բողոքը:

Բողոք առ գերապատիւ Եղիշէ Ժ. վարդապետ Մուրադեան
Գերապատիւ հայր, մենք քանիցս անգամ դիմել ենք Ձեզ ու մեր խնդիրը դրել Ձեր առաջ, բայց այդ խնդիրներից ոչ մէկն էլ հետևանք չուհեցաւ և մինչև այժմ էլ մեր դպրոցը փակ է:

Մենք կը խնդրէինք Ձերդ գերապատուութիւնից, տալ մեզ ուսուցչական խումբ շարունակելու համար մեր թերի կրթութիւնը, միմեայն առանց Պանագատեանի. մենք նրան երբէք չենք կարող ընդունել: Մի մերժէք մեր խնդիրը, որից յետոյ ամեն աղմուկ կը դադարէր և մեր կեանքը կ'ընկնի դարձեալ իր սովորական շրջանի մէջ և մենք այլևս չենք գալ մեր բողոքներով Ձեզ ծանօթացնելու: Հակառակ դէպքում աշակերտները կարող են ցրուել և դպրոցը կ'ընկնի իւր բարձրութիւնից:

Աշակերտութիւն:

Կոյր գործիքը մէջտեղն էր... Առաջնորդարանում հոգաբարձական կազմը հրաւիրեց խոսվարար երեսմաների հայրերին, բայց սրանք եկան և բողոքեցին, որ իրանց զաւակները այլևս իրանց չեն լսում, որ գիշերներն ու ժամերն անց են կացնում փողոցներում և խօսք առած դէպքում իրանց սպառնում ատըրճանակով:

Սեպտեմբերի 12-ին հոգաբարձութեան բոլոր անդամները տեսչի և ուսուցիչների հետ դպրոց գնացին բանալու այն և ըսկըսելու աշակերտների ընդունելութիւնը, սակայն դրդիչ երիտասարդները որոնք 4—5 հոգի էին, թագնուել, իսկ երեսմաներին պատուիրել էին փակել նոյնիսկ եկեղեցու բակի դռները և ոչորի ներս չթողնել: Թէ թ'նչ հայհոյանքով էին դիմաւորել տեսչին ու հոգաբարձուներին և ինչպէս վերադարձրել նրանց, ես չեմ կարող նկարագրել, որովհետև անհնարին է: Հոգաբարձական ժողովը մէկ վճռեց դիմել ռատիկանութեան, բայց հասկանալով, որ խոսվարարների ուզածն հէնց այդ է, որպէսզի ամբողջ կազմը մատնիչ և դաւաճան յայտարարուի, որոշեց ու

չինչ չանել այլևս դպրոցի բացման համար և սպասել մինչև որ աշակերտները կը խաղաղուեն: Շուտով աշակերտներից ստացուեց նաև հետևեալ յայտարարութիւնը, որ և կպցրել էին եկեղեցու բակի դռներին.

Յայտարարութիւն.

Կարգալով առաջնորդարանի վերջին յայտարարութիւնը, որով յայտարարուած է ի գիտութիւն Լիլաւա թաղի հայ հասարակութեան, որ իբր թէ մենք գործիք ենք եղել մի քանի անհատների ձեռքում և մեր արդարացի պահանջները համարում են անկարգութիւն:

Մենք քանիցս անգամ իրաւացի կերպով բողոքել ենք առաջնորդարանին. և պահանջներս հետևեալն է.

Ունենալ տեսուչ միայն և միայն պ. Մարտիրոս Յարութեանցին: Մենք նորից կանգնել ենք մեր բողոքի վրայ և այդ դանազան սպառնալիքները մեզ վրայ ոչ մի ազդեցութիւն չեն կարող ունենալ. և մենք մինչև այժմ բողոքել ենք շատ մեղմ կերպով, իսկ հակառակ դէպքում մենք կը դիմենք ծայրահեղ միջոցներ:

Աշակերտութիւն:

Դպրոցների հոգաբարձութիւնը ձանձրացած և զայրացած՝ որոշեց Ալալայի Արամեան ուսումնարանի հոգաբարձու և ուսաց վաճառականապետ պ. Չաքարեա Նազարբէկեանի միջոցաւ դիմել պ. Մարտիրոս Յարութեանցին, հարցնել նրանից, թէ նա ի՞նչ է ուզում. ի՞նչ է պահանջում Լիլաւայի հոգաբարձութիւնից, ի՞նչ հիմամբ է դնում իր թեկնածութիւնը և մի կերպ համոզել, որ թողնի Թաւրիզն և հեռանայ: Տեսակցութիւնը տեղի էր ունեցել պ. Զիբրայէլ Բուդաղեանի տանը և պարոնը պնդել էր, որ ինքն իրաւունք ունի, որովհետև աշակերտները նրան են ուզում և նրա թեկնածութիւնն են ստաջարկում:

Ահա այս դրութեան մէջն էր գործը, երբ ես Վեհափառից կրկին հեռագիր ստացայ և մեկնեցի Կովկաս: Պ. Սանազատեանը ինչպէս տեսուչ գտնել և խոստացաւ, որ ինքն ամենայն սիրով կը թողնի պաշտօնը, միայն թէ եկողը թայֆայական չլինի: Եկայ ս. Էջմիածին սեպտ. 28-ին և որքան ուրախ եղայ, երբ Գերմանիայից նոր աւարտած ու դարձած պ. Մկրտիչ Ղազարեանը երկար թախանձանքիցս յետոյ խօսք տուաւ զալ Թաւրիզ և ստանձնել տեսչի պաշտօնը: Այդ բանում մեծ նշանակութիւն ունեցաւ Վեհափառ Կաթողիկոսի հաճութիւնը, բայց վրայ հասաւ զոկտոր Փաշայեանը և յայտնեց պ. Ղազարեանին, որ զուր տեղը Թաւրիզ չգնայ, որովհետև աշակերտները նրան չեն ընդունի և կարող է սպանութիւն տեղի ունենալ: Պ. Ղազարեանը հրաժարուեց:

Ես Կովկասումն էի: Տեսուչն ու հոգաբարձութիւնը մի քանի անգամ փորձել էին բանալ դպրոցները և ամբողջ կազմով, ուսուցչական խմբով և պատուաւոր քաղաքացիներով դը-

նացել ուսումնարան ընդունելութիւններ սկսելու և դպրոցը բացուած յայտարարելու, սակայն այդ միջոցին տեղի էր ունեցել խայտառակ ընդհարում. աշակերտներն յարձակուում և սկսում են ծեծել ծառային, հայհոյում ժողովրդին և հոգաբարձուներին, անպատուում տեսչին և ուսուցիչներին և յետ դարձնում:

Անցած դարձածի մասին հոգաբարձութիւնը կայացնում է արձանագրութիւն, և ուղարկում է Վեհափառին ներկայացնելու և կարգադրութիւն խնդրելու: Արձանագրութեան բովանդակութիւնն է հետևեալը.

Ըստ նախօրօք տրուած յայտարարութեան և ըստ պատուէրի թեմակալ առաջնորդի՝ տեսուչ պ. Պանագաղեան մի քանի ուսուցիչներով մտնելով դպրոց, մի աշակերտ առաջացաւ և «ձեզ ո՞վ է ուղարկել» ասելով կտրեց տեսչի ճանապարհը: Տեսուչն անխռով առաջ անցաւ, որի ընթացքում մի քանի հոգի աղաղակում էին. «չենք ուզում, չենք ուզում»: Տեսուչն աստիճանների վրայ, երբ նոյն աշակերտը, որ առաջ տեսչի առաջ կտրել էր, կրկին մօտեցաւ և ասած ձգ. Պանագաղեանց, ուր էք գնում, չենք ուզում ձեզ»:

—Ո՞վ ես դու, հարցրեց տեսուչը:

—Աշակերտ եմ:

—Աշակերտ չես. արձակուած ես:

—Դու ես արձակուած, ժողովութեամբ պատասխանեց աշակերտը:

Աշակերտի յանդուգն պատասխանի վրայ տեսուչը ծառային պատուիրեց հեռացնել, դուրս անել նրան: Այդ միջոցին վրայ պըծան խռովաբար աշակերտներ և բազմաթիւ դուռում դռնիւններով յարձակուեցան ծառաների և հոգաբարձութեան վրայ: Պատրաստուած մարդիկ դրսից ներս բերին, արդէն փողոցում շտապ-շտապ պտտուող Մկրտում Սահակեանին և այլ կողմնակի անձանց, որոնք առաջ բերին մի անտեղի ընդհարում, որտեղ մինչև իսկ մի աշակերտի կողմից ատրճառակի ցուցում եղաւ հոգաբարձու Անդրէ Գուլասեանին:

Վարդան Վարդանեան աշակերտը մի խումբ աշակերտների հետ ամենայանդուգն ձևով պարոն Պանագաղեանի հասցէին շարտում էր «Անաստուած, ըռնակալ, անամօթ, դժւրս, դժւրս, ո՞վ ես, չենք ճանաչում քեզ. լիբր»։ Սրանից յետոյ տեսուչն առաջացաւ ուսուցչանոց, իսկ դուրսը աշակերտները մի քանի մարդկանց հետ Գէորգ անունով ծառային ենթարկեցին խիստ ծեծի, տրորելով նրան ոտքերի տակ և վիրաւորելով նրա ձախ ծնօտը և աւանջը: Աշակերտները դրսում շարունակեցին ագմուկը և հայհոյանքը և պատուհաններին փայտերով ու քարերով հարուածներ տալը:

(Ստորագրութիւն հոգաբարձութեան և տեսչի):

Այս գէպը տեղի է ունենում հոկտ. 2-ին ժողովրդի երկիցս ընտրած հոգաբարձութեան և հաստատուած տեսչի դէմ:

Այդ գէպից յետոյ էջմիածնում ստացայ հետևեալ հեռագիրը.

«Վերջին շփոթութիւնները ձեզ հաղորդուած են, դպրոցը փակ է. Ալեքսանդր Վարդանեան հրաժարուեց, Դաշտօյեանները նոյնպէս. սպասում ենք Վեհափառի կարգադրութեանը հեռագրով:

Հոգաբարձութիւն Լիլաւայի:

Ծերունի վառացած Հայրապետը կոնգակ տուաւ և ուղարկեց փոխանորդիս հետ, բայց ի զուր լսող ու կատարող չկար։ Այնուհետև ստանում էի բազմաթիւ նամակներ և դոկումէնտներ։ Ստացուեցին փոխանորդիս գեկուցումներ ևայլն ևայլն, որոնց հրատարակութիւնն առայժմ թողնում եմ։ Թողնում եմ նաև այն դոկումէնտների հրատարակութիւնը, որոնք քրէական բնաւորութիւն են կրում... Կարծեմ առաջ բերած դոկումէնտներիցս ընթերցողը կարողացաւ զաղափար կազմել, թէ բազդի բերմամբ ես ում հետ գործ ունէի և ինչ կարող էի անել...

Այս բոլորից յետոյ ինձ որևէ բանում մեղադրողներին հրաւիրում եմ միջնորդ դատարանի և առաջարկում եմ մարդիկ ընտրել և քննել, թէ ռբտեղ է թաղուած շունը և ո՞վ է Ատրպատականում անցած դարձածների նաև Լիլաւայի գալրոցների փակման պատճառը...

Ատրպատականի նախկին առաջնորդ

Ն. ծ. վ. Մուրադեան

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հանդես Ամսօրեայ, Յունուար,
 փետրուար.— Ռուսաստանի կոթողիկ հայերի հոգևոր վարչութեան մասին պ. Կ. Տիւրեան տալիս է ամփոփ տեղեկութիւններ: Առաջ ենք բերում մի քանի հետաքրքրական կըտորներ: Իսկ Անդրկովկասի «հայկաթուղիների թեմը» Տիրասպոլի եպիսկոպոսներից է կախուած և կազմուած է 4 վիճակներից: 1) Ախալցը-խայի՝ 16 եկեղ. 2) Ախալքալաքի՝ 12 եկեղ. 3) Լոռուայ՝ 5 եկեղ. 4) Ալեքսանդրոպոլի՝ 13 եկեղ, ընդամենը 46 եկեղեցի՝ որոնց ծխականների ընդհանուր թիւն է 33,216 հոգի: Վերոյիշեալ 4 վիճակներից դուրս, Թիֆլիս և Կովկասի այլ քաղաքների մէջ գտնուող կաթողիկ հայերի թիւըն առնուած են հաշուում է 2 հազար: Բացի այդ, Խըրմի կաթողիկ հայերի թիւը (Սիմֆերոպոլի վիճակ) 2057 է: Վերոգրեալ հաշիւներից դուրս է մնում Արդուինի թեմը, որին ենթարկուած են Արդանուշի, Կարսի և Բաթումի վիճակները: Արդուինի թեմն անկախ է Տիրասպոլի եպիսկոպոսներից և լոկալայն շարունակում է մնալ զեռ. ևս Կ. Պոլսի պատրիարքական աթոռի իրաւասութեան տակ. և միայն այժմ, երբ 1903 ապրիլ 14-ի կայսերական կարգադրութեամբ Հոռմի Աթոռի հետ համաձայնութիւն է գոյացած՝ Արդուինի թեմն էլ կը միանայ Անդրկովկասի թեմին և կը մտնէ «Հայոց Առաքելական կառավարչի» վարչութեան տակ: Արդուինի թեմի մէջ կայ 15 եկեղեցի, և 12000՝ ծխական: Այդպիսով Ռուսաստանի

հայ կաթողիկեների թիւը կըլը հաշուով հաւասար է 50,000-ի:

Գիտական տերմինները մեզանում զեռ շտտ խառնաշփոթ և յաճախ սխալ գործածութեան մէջ են. պէտք է առանձին ուշադրութիւն այդ բանի վրայ. և Վիէնայի հայերը, ինչպէս երևում է, սկսել են զբաղուել այդ հարցով. «Հանդես Ամսօրեայում» շտտ համոզեցուցիչ կերպով ապացուցուած է որ բարսի և կողա-մախի ծառերն ճիշտ համապատասխանում են, առաջինը՝ լատինական *populus pyramidalis*-ին իսկ երկրորդը՝ *populus tremula*-ին:

«Ծաղիկ». Թիւ 8.— Բնագաւառութեան դէմ պատասխանելով այդ հանդէսը գործ է ածում բանակուական այնպիսի ձևեր և ոճեր, որոնք վերաւորական են և չեն պարզում գրական խնդիրները, այլ միայն անձնական հողի վրայ են դնում հարցերը: Այդպէս, օրինակ, ահա ինչ լեզուով է խօսուում պ. Մ. Բերբերեանի մասին, որ դժբախտութիւն է ունեցել Սիպիլի տաղանդի մասին տարբեր կարծիք բնական, քան «Ծաղիկի» յօդուածագիրը: «Պ. Մ. Բերբերեանին մենք ընաւ նկատի չէինք առնէր եթէ երբէք գրուած տեղը մնար և հարկ չտեսնուէր նաև թրքահայ ընթերցողներուն ներկայացուելու: Բայց քանի որ անգամ մը հրապարակուեցաւ մեր մէջ, կ'արժէ որ քիչ մը ծանօթանանք անոր մասին, եթէ ոչ ուրիշ բանի, զոնէ ցրելու համար կարգ մը սխալ հասկացո-

դուժիններ որոնք հակառակ վճռական և անվերաքննելի շեշտով մը ներկայացրած ըլլալուն, շուտ կը մատնեն ի՞նչ տեսակ ուղեղէ և դատողութենէ բղխած ըլլալին: Երկրորդական միջակութիւն մըն է արդէն այդ պ. Բերբերեանը՝ որ մօտաւորապէս տասը տարիէ ի վեր քննադատի գործ կը կատարէ Կովկասի մէջ, և որուն սակայն ոչ մէկ լուրջ թեյք, ոչ մէկ լուրջ հանգէս տակաւին չէ զիջած իր էջերը տրամադրելու: Իր վերջին ապաստանն է այն գրականութեան անկեղծոցը՝ զոր Գիւտ քահանայ Աղանեանց կը հրատարակէ, և որ սակայն երբեմն թիֆլիսի Մեղուին պէս գերագոյն որջը կը դառնայ բոլոր սահմանափակ, տգէտ և մանաւանդ յետադիմական գրողներուն (եր. 401): «Բերբերեանի գնահատութիւնը սըլխալ է և անհիմն. պ. Բերբերեան բնաստեղծութենէ ու բնաստեղծական գործերէ անքան բան կը հասկընայ, որչափ հասարակ պատճեփող մը պիտի հասկնար նկարչութենէ» կայն կայն: «Երբ պէտք է մեր գրականութեան մէջ վերջանան այդ ձևի բանակութիւնները: Մեզանում գլխուն կամ անհամու չափազանցած շողորրութիւններ շոյլել կամ հայտնել. դա զգուշի է, ինչպէս և այն սովորութիւնը. երբ մեր թրքահայ թերթերը այս կամ այն մասնաւոր անձերի գործերին հասարակական նշանակութիւն են ընծայում: Օրինակ, հայ հասարակութեան ինչ պէտքն է, թէ նշան Պապիկեան գրատան վարիչներէց այս կամ այն մէկը ձև հետ է ամուսնանում, ի՞նչ եկեղեցում է տեղի ունեցել պատկառութեան հանդէսը, ձմ նախագահութեամբ, զի ձեռնուութիւն կատարեց, զի էր կնքահայրը և այլն և այլն: Թող «Ծաղկի» ղեկավարները իրանց «խնդակցութիւննէլ շնորհակալութիւններն էլ» որքան ուղղում են յայտնեն «եքիտ կողմերուն» էլ, բայց նրանց տանը,

ձաշի վրայ և այլն, և ոչ «գրական, գիտական և գեղարուեստական» մի հանդիսի էջերում: Ե՞րբ պէտք է լրջանան մեր թրքահայ գրողները...

Երեսկ.—Այս է անունը այն ամսաթերթի, որ ներկայ տարուայ յունուարից սկսած լոյս է տեսնում Եգիպտոսի Ալէքսանդրիա քաղաքում: Մենք մեր ձեռքի տակ ունինք նրա առաջին համարը միայն, հետևաբար այժմ անկարող ենք որոշ բան ասել նրա ուղղութեան, նրա սկզբունքներին և ներկայացրած դրօշակի մասին. կը սպասենք յաջորդ թիւերին, աւելի արդար կերպով դատելու համար: Առաջին համարի ընթերցումից մեր անմիջական տպաւորութիւնը «Շիրակ»-ի մասին այն եղաւ, որ Ալէքսանդրիայում հրատարակուող հանդէսը ներկայանում է մեզ առհասարակ նոյն յատկութիւններով և թերութիւններով, որով ընտրուում են առհասարակ թրքահայ պարբերականները «գրականութեան» — այսինքն լուրջ ու ամուր դաստիարակութիւնից գուրկ ուղեղներին անխրական, աւտադրութիւններին, հողից կտրուած մարդկանց երևակայութեան խաղերին շատ տեղ է տրուած: Եւ, ինչպէս ամեն արտասահմանում հրատարակուող թերթ, «Շիրակը» իրան նպատակակէտ ընտրած է «ազգային վերածնումի» գործին աշխատել: Բայց ինչպէս, ի՞նչ միջոցով: Ահա մի հատուած Երեսկի «հաւատոյ-հանգանակից», որից պէտք է պատասխան գտնէինք:

«Շիրակ»-ի ուղղութիւնը պիտի ըլլայ, գրողներու ընտրելախումբի մը օգնութեամբ աշխատել հայ գրութեանց վերականգնումին արտասահմանի մէջ: Անկարելի ըլլալով որ ներկայ ժամուն հայ գրողը շանդրադառնայ հայրենիքի մշտահեծ ցաւերուն, անոնցմէ իր յուզումին արիւնը և մտածմանց հիւթը չծծէ: «Շիրակ» պիտի ընէ ազգային գրականութիւն մը, առանց մտնելու

կուսակցական նկատումներու և մասնաւորութեանց մէջ. լայն պիտի բանայ իր էջերը բոլոր ճշմարիտ ու վաւերական գրագէտներուն առջև, ընծայելով այսպէս անոնց գերազանց միջոցը կատարելու իրենց վրայ ծանրացող պարտքն հանդէպ հայ դպրութեանց և անով՝ հանդէպ ազգային վերածնունդին գործին»:

«Շիրակ պիտի ընէ ազգային գրականութիւն մը». այսպէս են ասում Փարաւոններու երկրում ամաթերթ հրատարակող մեր եղբայրները: Բայց ի՞նչ են հասկանում «ազգային գրականութիւն» տարտամ ու առանձգական խօսքով: Միթէ ազգային գրականութիւն չեն այն բոլոր արտագրութիւնները, որ լոյս են տեսնում հայ լեզուով: Երեւի «ազգային գրականութիւն» ասելով հասկանում են «հայրենասիրական» գրականութիւն: Բայց կայ հայրենասիրութիւն և հայրենասիրութիւն...

Ահա այստեղ առաջ է գալիս արդէն սկզբունքի, գաղափարի ընտրութիւնը, որը և գոյն է տալիս «հայրենասիրութեան»: Իսկ «Շիրակի» վարիչները ոչ մի խօսք չեն ասում սկզբունքի, գաղափարի մասին և բաւականանում են առանձնական «ազգային գրականութիւն» խօսքով: Եւ սակայն մենք չենք կարող չնկատել, թէ ազատ երկրում, անկաշկանդ մամուլի համար, ճրքան մեծ գործ կայ անելու, որքան մեծ պարտականութիւն կայ կատարելու հանդէպ արտասահմանի հայութեան, որը դժբախտաբար ապրում է մտքի նոյն վիճակով և նոյն ձգտումներով, սրով ապրում են բռնութեան տակ կրած իրանց հայրենակիցները:

Այսքան՝ «Շիրակ»-ի ուղղութեան մասին: Այժմ տեսնենք թէ ի՞նչ նիւթեր է տալիս «հայ դպրութեանց վերականգնումին» նպաստելու համար:

Առաջին յօդուածն է Երուանդ Օտեանի՝ «Ազգային Բարերարը»: Դա թերեւս, աւելի ճիշտ, պոլսահայ

կեանքից վերցրած մի պատկեր է, ամենից յաջողը ամբողջ ամապրում երեցած գրուածքների մէջ: Պէտք է ասել սակայն, որ մինք կարգացել ենք այդ թերեւսայ գրողից աւելի ուժեղ, ու աւելի սրամիտ էջեր: «Ազգային Բարերարը»-ի մէջ, գուցէ իրականութեան չափազանցութիւնը, գոյների խտացումը պատկերին տալիս է փոքր ինչ արհեստական նկարագիր:

Այդ արհեստական, շինծու նկարագիրը շատ աւելի խոշոր չափերով կրում է իր մէջ յաջողը պատկերը, «Մարն դմանուկը մոռցաւ» Էփրահարի: Այդ ինչպէս հեղինակն է անուանած՝ «արիւնոտ պատկերի» մէջ ամեն ինչ կեղծ է. և՛ անձերի հոգեբանութիւնը, և՛ միջավայրի ցուցադրումը և այն ոճը, որով գրած է:

Ա. Արփիարեանի «Հողվրդիբը» եթէ ոճի ու դարձուածքների կամաւոր ու անճաշակ խրթնութիւնն ու արհեստականութիւնը չունենար, կարող էր գուցէ հետաքրքրութեամբ կարդացուել: Այդ գրողի մէջ մենք այլևս չենք ճանաչում բնաւ ոչ «Հայկակէին և ոչ էլ «Հայրենիք» ջղուտ ու խայթող հրապարակախօսին...

«Շիրակ»-ի մնացեալ նիւթերի վրայ չարժէ կանգ առնել: Միայն՝ pour la bonne bouche, յիշենք մի ապշեցուցիչ գրուածք՝ «Մենութեան տեսիլներ» որի հրատարակութեան առիթով խմբագրութիւնը հետեւեալ նոյնքան ապշեցուցիչ ծանօթութիւնը աւելցնում է. «Այս վերնագրով բախտը (?) ունինք հրատարակելու քանի մը հատուածներ մեր ամենէն ինքնատիւ ու տաղանդաւոր երիտաւար գրագէտներէն միայն անտիպ երկասիրութիւնէն: Զուտ արուեստի այս էջերը պիտի կրնան ճաշակ մը տալ ամբողջ գործին վրայ, որ թերեւ չուշանայ, ուրիշ անունի մը տակ, մօտեւս լոյս տեսնելու»:

Այդ «ինքնատիւ ու տաղանդաւոր գրագէտը» մեզ թւում է, որ ու-

ընդ ոչ այլ ինչ է բայց եթէ անքը-
նութիւնից ու գրական անկարողու-
թիւնից տանջուող մի անձ, որին՝
չգիտենք ի՞նչու, «Շիրակ»-ի խմբա-
գրութիւնը այդքան անսանձ գո-
վեստներ է շուայլում: Մենք էլ մեր
ընթերցողներին «ճաշակ մը տալու
համար» «գուտ արուեստի» այդ է-
ջերից, առաջ բերենք մի քանի հա-
տուածներ:

«Բայց, ահ, իբրաւ, ինչպէս չէի
գիտեր: Մութ պատահանին ապա-
կիւն մէջ՝ գիշերին վրայ բացուած
վարդոյրներուն միջև՝ կողմնակի
լուսաւորուած ստուեր մը կայ. իմ
ցոլքս է. ես եմ. եսս է. ինչ զուար-
ճութիւն, եթէ ոչ տրամութիւն: Նո-
ճեպէն խաւարին մէջ աղօտագծուած
նան է: Մարմինիս պէս կը գիտեմ
զինքը, որ իմ աննիւթացումս, իմ
իդէալան էութիւնս կը թուի. իս-
կութեանս մէկ արտաքնումը: Իր գի-
ծերուն ճկուն ու զուսպ խաղին սառ-
չումը կը միանձնացնէ դայն մութ
գգնատներուն տարտամ սուզին մէջ
որ անորոշապէս կ'էսխառնուի ան-
ջրպետին մրդկալի սևութեան, և
ուրիշ կը պապլրանայ կողմնահակ
զլուխին ռամպրանկարը. տմոյն, իր
տեսլային անգայտութիւնը նոճինե-
րուն գիշերովը թափանցուած»:

Եւ «Շիրակ»-ը այս կարգի ար-
տադրութիւնները աստուածացը-
նելուց յետոյ, դեռևս շանթեր է ար-
ձակում Պոլսում կատարուած զրա-
կանութեան դէմ: Անկեղծօրէն ասե-
լով՝ մենք Եգիպտոսի և Պոլսի հրա-
տարակութիւններին մէջ մեծ տար-
բերութիւն չենք նկատում: Բայց այս
վերջինները գոնէ այն արդարացու-
մըն ունին, որ ապրում են մի այն-
պիսի միջավայրում, ուր նրանց լե-
զուի և մասծումի վրայ դրուած է
մի խոշոր քար...

Սիւռուան.—Այս էլ մի ուրիշ
ամապիւրթ է, որ ներքինով թէ ար-
տաքինով աւելի ճղճիմ՝ սկսել է լոյս
տեսնել այս միեւնոյն տարուայ սկզբից
միւնոյն քաղաքում: Մենք չենք հաս-

կանում, թէ ի՞նչ են մտածում մեր
թիւրքահայ եղբայրները իրանց ա-
ռանձին թերթ հրատարակելու մո-
լութեան մասին, բայց մենք խոս-
տովանում ենք, որ դա մեզ համար
առնուազն ուժերի անպէտք, ամո-
թալի մասում է: Միթէ «Սիւռուան»-ի
և «Շիրակ»-ի ղեկավարները չէին
կարող միանալ մի աւելի կանոնա-
ւոր գործ մէջտեղ հանելու համար:
Ի՞նչն է նրանց բաժանում, իրարից
հեռացնում: Դադափարի, ուղղու-
թեան, սկզբունքների տարբերու-
թիւնը: Բայց քիչ վերեւ, «Շիրակ»-ի
մասին խօսելիս, մենք յայտնեցինք,
որ այդ ամապիւրթը ոչ մի սկզբունք,
ոչ մի ուղղութիւն չէ նախագծած
իր առաջ, որ միայն բաւականա-
նում է «ազգային զրականութիւն»
անելու անորոշ յաւակնութեամբ: Ա-
հաւաստի «Սիւռուան»-ը, որը նոյն-
պէս «ազգային զրականութեան» ա-
նունով հրապարակ եկած է, կար-
ծում ենք: Ինչու ձեռք ձեռքի չեն
գործում: Եթէ իրանց առաջ ունե-
նային որոշ ծրարներ իրագործե-
լիք՝ իրանց բաժանումը կարող էինք
ընթերցել. բայց որ այդ արգելքը
գոյութիւն չունի... Սրա հետեանքը
այն կը լինի որ երկու ամապիւր-
թերն էլ մի քանի ամիս կեանք ու-
նենալուց յետոյ կ'աներկոյթանան
այնպէս, ինչպէս երեացել էին: Իսկ
մէջտեղում կը մնայ մի հիւանդ ե-
րեոյթ. — խմբագիր-տնօրէն դառնա-
լու մարմաջը: Մենք կարծում ենք
որ ժամանակ է — ճիշտ ժամանակը —
վերջ դնելու այդ կարգի փոքրիկ,
փոքրացնող մտահոգութիւններին և
նուիրուելու անկեղծօրէն ու եռան-
գաղին մի դժբախտ ժողովուրդի, որ
օրէօր մեռնում է ընթերցելու, կանքի
երեոյթները քննող, վերահսկողա-
նացնող խօսքի ուղործի պահասից:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ինչպէս յայտնի է յունուարի 19-ից մինչև փետրուարի 1-ը Թիֆլիսի տպարանները չէին բանում, գրաշարների զործադուլի պատճառով: Այդ հանգամանքը բնականաբար ազդեց և մեր ամսագրի հրատարակութեան վրայ: Անկարող լինելով փետրուարի գիրքը ժամանակին լոյս ընծայել՝ մենք ստիպուած եղանք միացնել փետրուար և մարտ ամիսների համարները: Այդ ահամայն անկանոնութեան իբրև հատուցում՝ մեր բաժանորդները կը ստանան իբրև յաւելուած «Հաջի Բաբա» վէպի երկրորդ հատորը՝ «Հաջի Բաբան Անգլիայում»:

Հանգուցեալ Ն. Բողարջեանի յիշատակին նրա ժառանգներից ստացած 30 թուրլիով խմբագրութիւնս ուղարկում է «Մուրճ». 1) Թիֆլիսի էժանագին գրադարանին, 2) Հովվերան և 3) Արթիկ գիւղերի հասարակութիւններին:

1905 թ. «Մուրճ» նուիրել են հետևեալ պարոնները. 1) Սուրէն Աղամեանց, Արաղամի և Փրջամալ գիւղերին:

2) Գեղամ Կոստանեան, Կորիսի շրջակայ գիւղերից մէկին:

3) Արսէն Կրասիլնիկեան, Բիրի-Էյբաթի և Ախմէղլուի «Մանթ. ընկ.» գործարանի բանուորներին:

4) 13 բռնակաթցի երիտասարդ, իրանց գիւղին.

5) Սմբատ Շահազիզ, Աշտարակ գիւղին.

6) Յովհաննէս Միրիմանեան, Իգգէր Մալա և Ալի Ղա-
մարու գիւղերին:

7) Յ. Խարմաշեան, Նոր-Նախիջևանի արհեստ. ուսում-
նարանին:

8) Տ. Աֆրիկեան, Հաֆթվանի գրաս. ընկ. գրադ.

9) Բալարէգ Լալայեան, Շամախու, Քերքենջի, Մաղրա-
սայի և Գիւրջիվանի հասարակութիւններին:

10) Մոսկուայից պ. Սիմէօն Եարամիշեան մի բաժանոր-
դագին թողնում է խմբագրութեանս տնօրինութեան. որոշե-
ցինք ուղարկել Կապանի Քաջարանց գիւղին:

11) Եսայի Արզումանեան (Նոր-Ջուղայից), Համադանի
(Պարսկաստան) հայոց գաղութին:

12) Բալախանում և Բագում վերաբնակուող Արծուանիկ
գիւղացի երիտասարդները, մի օրինակ իրանց գիւղի հասա-
կութեան:

Խմբագրութիւնս յայտնում է յիշեալ ուարճներին իր
շնորհակալութիւնը:

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Ս. ԷՋՄԻՍԵՐՆ. Ե. Ճ. Վ. Մուրադեանին.—Հաւատարիմ մեր սկըզ-
բունքին զետեղում ենք Ձեր բացատրութիւնը, կրճատելով միայն
այն տեղերը, որոնք զուտ անձնական բնութիւնն են կրում
և, վիրաւորանքներ մտցնելով բանակրուի մէջ, միայն խճճում
են բուն հարցը: Ձեր բերած փաստերը աւելի ևս համոզում
են որ Թաւրիզի առանձնայատուկ պայմաններում պահանջում
էր առաջնորդի կողմից վարչական աւելի մեծ *տալկա*, քան
կարողացար ցոյց տալ դուք:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բացումս է ըստանորդազրույթին

Ե. ՖՐԱՆՔԵԱՆԻ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

Պատկերազարդ ժողովածուի

«Ատրպատական» իր մէջ պարունակում է մի շարք յօդուածներ (թուով 30—35), որոնք պահազան ժամանակներում տպագրուել են պարբերական հրատարակութիւնների մէջ, մեծագոյն մասը «Մուրճ» ամսագրում: Կը լինին նաև նոր զլուխներ, իսկ արտատպութիւնները լոյս տեսնելու են նոր սրբագրութեամբ, աւելի ընդարձակած և ճշտացրած: Գիրքը, որ տպագրուելու է Թիֆլիսում, ունենալու է 450—500 էջ, մօտ 50—60 տիպեր և տեղանիւթներ:

Բաժանորդագիրն է Ռուսաստանում 1 ռ. 50 կ., Պարսկաստանում 1 թուման, իսկ արտասահմանում 5 ֆրանկ.

Բաժանորդագիրը կանխիկ է. լոյս տեսնելուց յետոյ զբքի գինը կորոզ է զգալի կերպով բարձրանալ:

Բաժանորդագիրն ընդունում է.

Ռուսաստանում.

ա) Թիֆլիսում—«Հերմէս» տպարանում.

բ) Բազում—պ. Տիգրան Ռաշմաճեանի մօտ.

գ) Երևանում—պ. Սարգիս Օհանջանեանի մօտ.

դ) Րոստով գինի վրայ—պ. Ռուստամեանի մօտ (Ե. Садо-
вая № 17 է).

ե) Բաթումում—պ. Սողոմոն Յարութիւնեանի մօտ.

Պարսկաստանում.

ա) Թեհրանում—պ. Յարէթ Քաշաթեանի մօտ (ուսուցիչ).

բ) Թաւրիզ—պ. պ. Ալէք Բարայեանի և Յովսէփ Յովհաննիս-
եանի մօտ.

գ) Սալմաստում—հեղինակի մօտ.

Արտասահմանում.

ա) Եգիպտոս—գոկտոր Կ. Փաշայեան (Ալէքսանդրիա)

բ) Ամերիկա—«Հայրենիքի» խմբագրատունը (Բոստոն)

գ) Բուլղարիա—«Շարժումի» խմբագրատունը (Վլադնա).

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՆՐԱԴՐԻ

(33-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՅ

1905

ԹՈՒԱԿԱՆԻՆ

«Մշակը» կը հրատարակուի նոյն պըողրամով եւ նոյն ուղղութեամբ

Ամեն օր ըսցի տօներին յաջորդող օրերից:

Բաժանորդագիրը «Մշակի». տարեկան զինը 10 ռուբլի է, տասնամէկ ամսուանը նոյնպէս 10 ռ., տասն ամսուանը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. եւ մի ամսուանը 1 ռուբլի:

Արտատահմանեան ըստանորդագրութիւնը. Ա.մ եւրիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրուել կարելի է յսմըագրատանը՝ (Բաղարնոյա եւ Բարոնակոյա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» ղըրուելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս՝ պէտք է զիմել հետեւեալ հասցէով. ТИФ-ЛИСЪ, Редакция „МШАКЪ“, իսկ արտատահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունուած են բոլոր լեզուներով:

Ապառիկ ըստանորդագրութիւն չէ ընդունուած:

VII годъ
изданія

ОТКРЫТА ПОДПИСКА

VII годъ
изданія

на 1905 г.

на газету

„Нефтяное Дѣло“

Изданіе Совѣта съѣзда нефтепромышленниковъ въ Баку.

Выходитъ два раза въ мѣсяць

*Подписная цѣна съ доставкой.*на годъ 10 руб., на 6 мѣсяцевъ 6 руб., на 3 мѣсяца 4 руб.

Подписка принимается въ гор. Баку, въ редакціи, въ помѣщеніи Совѣта съѣзда нефтепромышленниковъ.

Объявленія принимаются тамъ-же.

**Памятники
древне-армянской архитектуры**

Бъ фотографіяхъ и чертежахъ

Подъ редакціей академика архитектуры профессора Инст.

Гражд. Инж. Гер. Д. Гримма,

составили и издали

Л. Егиазаровъ и Р. Мартиросянцъ

выпускъ I

Հայոց Հին Գործարարական Քանոնի նշմաներ

Изданіе будетъ состоять изъ 10 выпусковъ, по 5 таблицъ въ каждомъ. Стоимость изданія съ пересылкой при единовременномъ взносѣ 12 рублей. съ разсрочкой платежа 13 рублей, Подписка принимается: у Л. Егиазарова, С.-Петербургъ, Инст. Гражд. Инж., 2-я рота Измайловскаго полка; въ г. Тифлисѣ, у Е. А. Цатурова, Дворцовая ул.

Բ Ա Ն Ա Ս Է Ր

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ

«Բանասէր»-ի խմբագրութիւնը պատիւ ունի ծանուցանել իր համակրողներուն, ընթերցողներուն եւ բաժանորդներուն, որ 1905-ի յունուարէն սկսելով «Բանասէր» պիտի հրատարակուի ընդորովին նոր ծրագրով եւ նոր ուղղութիւնով:

«Բանասէր» պիտի պարունակէ իր բանասիրական եւ հնարասական յօդուածներու շարքը, աւելի ժողովրդականացած նոր ձևի մը տակ:

«Բանասէր» ընդարձակ տեղ մը պիտի տայ՝ «Ժողովրդական Համայնաբան» բաժնի մը տակ՝ զիտական, գրական, արուեստական, իմաստասիրական, հոգեբանական, բաղմարուեստական եւ համայնագիտական յօդուածներու:

«Բանասէր»-ի 1905-ի յունուարէն սկսելով նոր վարչութիւն մը կազմուած է, եւ նոր շրջանը պիտի սկսի նոր ոյժերով:

ԿՈՎԿԱՍԻ մէջ կը յանձնարարենք գիմել Բագու, Նիկողայոսկայա փողոց, ա. համար 1, տիկին Մ. Ա. Սունդուկեանցին, որ մեր ընդոր հրատարակութիւններէն ունի իր նորահաստատ գրախանութիւն մէջ: Կա-
րելի է գիմել նաեւ Թիֆլիս, «Գուտտեմէրք» ին:

Բաժանորդագրուելու համար

Տարեկան գինն է՝ 6 ռուբլի, վեց ամսուանը՝ 3 ռ.

Մեր հասցէն է՝ Basnadjian.—Bd. Rochechouart. Paris.

1905

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑ

ս. Փրկչեան Հիանդանոցի Հայոց

Օրացոյց եւ տմարական գիտելիք, ժամանակագրական եւ աշխարհագրական, պետական վիճակագրութիւնք, հայ եկեղեցւոյ եւ պատրիարքարանի տեղեկութիւններ.

Գործնական բաժին.

Գրական բաժին.

(Քարտղներով եւ պատկերագրով)

ԳԻՆԸ 10 ՂՐԾ. (80 ԿՈՊ.)

Կը ծախուի յօգուտ Պուսի Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի վեցերորդ տարին լոյս կը տեսնի ճոխ եւ բազմակողմանի պարունակով ծեամբ:

ОТКРЫТА ПОДПИСКА

На ежедневн. полит. и литерат. газету

„Новое Обозрѣніе“

Выходящую въ гор. Тифлисѣ подъ Новой редакціей и по новой программѣ.

Новая редакція ставитъ себѣ цѣлью поддерживать традиціи и идеалы предшествовавшихъ редакцій, въ соотвѣтствіи съ новыми запросами нашего времени, столь богатаго событіями какъ во внѣшней, такъ и во внутренней жизни.

Подписная цѣна какъ для городскихъ, такъ и иногороднихъ подписчиковъ съ доставкой и пересылкой на годъ—7 руб., на $\frac{1}{2}$ года—4 руб., на 3 мѣсяца—2 р. 50 к. и на 1 мѣсяць—1 руб. За границу 14 руб. въ годъ.

Подписка съ 1-го и 15-го числа каждаго мѣсяца и объявленія принимаются въ конторѣ газеты (Барятинская ул. 8) и въ книжномъ магазинѣ Л. Б. Хидкеля (на Головинскомъ пр.), а также въ провинціальныхъ отдѣленіяхъ конторы газеты.

Отдѣленія конторы: въ Баку—Николаевская ул. д. Пирбудагова; въ Батумѣ—у Х. Давіеляна; въ Гори—при книжн. маг. Мих. Арчадзе, въ Сухумѣ—при книжн. магазинѣ И. Т. Гогиджанова.

Плата за объявленія: для Кавказскаго края на 1-й страницѣ одинъ разъ—15 коп. (со строки петита), на 4-й страницѣ—8 коп. Повторныя объявленія пользуются скидкой.

Лицамъ, ищущимъ личныхъ званій и труда, дѣляется скидка 50% противъ обычной таксы.

Объявленія отъ лицъ, фирмъ и учреждений, живущихъ или живущихъ свои главныя конторы или правленія въ Кавказскаго края, принимаются исключительно въ центральной конторѣ объявленій торговаго дома Л. и Э. Металь и Ко МОСКВА, Мясницкая, домъ Сытова, и въ его отдѣленіяхъ: въ С.-ПЕТЕРБУРГѣ: Московская, 11; ВАРШАВѣ, Браковское предмѣстіе, № 53; ПАРИЖѣ, 8 площадь Биржи, и печатаются по 10 коп. за строку петита позади текста на первой страницѣ цѣна двойная.

Подписывающіеся теперь же на весь 1905 годъ будутъ получать, газету безплатно въ ноябрѣ и декабрѣ мѣсяцахъ настоящаго года.

Կովկասի Ուսումնական Շրջանի հոգաբարձական Խորհրդի որոշմամբ, որ հաստատուած է Կովկասի Բաղաժողովական պ. կառավարչապետի պաշտօնակատարի կողմից:

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՄԲ

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ

(Երրորդ և չորրորդ տարիների համար)

Համառոտ հայերէն-ռուսերէն քառզբոյլ

ԳԻՆՆ Է 70 Կ.

(246 էջեր)

Դիմել Թիֆլիս՝ «Դուատենբերգ» և «Կենտրոնական», իսկ Բազում՝ «Сотрудник» զրավաճառանոցներին:

Ա. Զ. Դ.

Հայոց Դրամասիկական Ընկերութիւնը, գնահատելով դերասանուհի Տիկին ՄԻՐԱՆՈՅՇԻ յազնամեայ, քննիչուոր քննական գործունէութիւնը և այն քանակցին ծառայութիւնները, որ ևս մասնացել է մայրենի քննին, որոշել է հրապարակական տնտեսութեանը կատարել ևս երեսնամեայ քննական գործունէութեան յօրէրեանը, որ յրանում է այս տարի:

Վասնի, որ Ընկերութեան այդ որոշումը համակրութիւն և խրախուսանք կրցնէ հայ քննի բարգաւաճման նախանձախնդիր անձանց և հիմնարկութիւնների կողմից, փայտութիւնս պատիւ ունի դիմել յայդ համակրողներին՝ խնդրելով ևս անց աշակցութիւնը և բարեհաճ մասնակցութիւնը՝ յօրէրեանական հանդէսը արժանաւայել կերպով կատարելու:

Այդ մասնակցութիւնը կարող է արտայայտուել շնորհանդիմական ուղերձներով, հեռագիրներով, պատգամաւորութիւններով և նուերներով:

Հանդեսը պէ՛տ է տեղի ունենայ ապրիլի 5-ին, Թիֆլիսում, մի յօրեղանակաւ ներկայացումով, որի միջոցին կըկարդացունեն ողերձներ, կըներկայանան պատգամաւորութիւններ եւ կըմատոցունեն նոէրներ ու քննականներ:

Վարչութիւնս խնդրում է քարեհաճել յայտնել միևեւր մարտի 15-ը քէ ի՞նչ ձեւով մտադիր է իւրաքանչիւրը մասնակցել տիկին Միւսկոյշի յօրեղանակաւ տօնախմբութեան:

Երէ կըլինի որ եւ է ողերձ, պէ՛տ է վաղօրօք ներկայացնել վարչութեանս նրա պատճենը, որովհետեւ վարչութիւնս պատրաստ է ներկայացնել քողոր կարդացուելիք ողերձների քովանդակութիւնը նախնական իշխանութեան ի հաստատութիւն:

ԴՐԱՄԱՏ. ԸՆԿ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յ. Գ. Պատասխանները ինքըրում են ուղղել ընկերութեան նախագահի հասցէին. Княгинѣ М. Тумановой, Барятинская ул. д. № 8. Тифлисъ (Россія) կամ Princesse M. Thoumanian, Rue Bariatinsky, № 8, Tiflis (Russie.)

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՅ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵՄԲ

Կ ա զ մ ու ա ծ

ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

յոյտարարում է ի գիտութիւն Բազումի ողերձից փառված ու օգնութեան կարօտ անձանց, որ նրանք կարող են գիմել օգնութիւն ստանալու համար ամեն օր, առաօտեան ժամը 12—1, Թիֆլիսի Առաջնորդարանը, ուր կը լինի հերթապահ անգամ յանձնաժողովի կողմից: Բացի զընկից կարելի է գիմել առանձին յանձնաժողովի անդամներին, այն է պ.պ. բժ. Կ. Ստեփանեանին, բժ. Ալ. Խաթիսեանին, Արշ. Բաբեանին, Ալ. Քալանթարին, Ալ. Մէլիք-Աղաբեանին, Լ. Մարգսեանին, իշխ. Ա. Մ. Արդութեանին, Աւ. Մհարունեանին, Հ. Առաքելեանին, Աւ. Սահակեանին, Ս. Մէլիք-Աղաբեանին, Տ. Յովհաննիսեանին, Յ. Սպէնդիարեանին, բժ. Վ. Արծրունուն, Եղ. Թովչեանին և Աւ. Արաքեանեանին:

ժամանակաւոր պատասխանատու-խմբագիր՝ Յ. Ապեմեղիարեան
Հրատարակչուհի՝ Վ. Բանանեան

ծիւնը եւ ինքնօղնութիւնը:—Կովկասեան ազգերի համե-
րաշխուժեան գաղափարի յաղթանակը:—Շահի հեռագի-
րը:—Պաշտօնական հաղորդադրութիւն Թիֆլիսի, Բա-
թումի, Կրեւանի եւ Կովկասի եւ այլ տեղերի զանազան
խառնակութիւնների մասին:—Թիֆլիսի երդ. հաւատ.
կազմած յանձնաժողովը:—Հայերի պատգամաւորութիւ-
նը Պետերբուրգում:—† Մեծ իշխ. Մերդէյ Ալէքսանդրո-
վիչ:—Առթող. կողմից Կովկասի նոր փոխարքային ուղար-
կած հեռագիրը եւ նրա պատասխանը:—Գուրիական
դորձերը:—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ:
—† Սեմէօն Հախումեան: Լ. Ս. 181

19. ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՅ, Տիգրան Ռաշմանեանի 210

20. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՅ. — «Թիմեոնիկների կոիւր»
Զուգերմանի:—«Թաղի համար» Ֆ. Կոպպէի:—«Վա-
նիւշինի պաւսններ»՝ Նայդեմովի:—«Պաշտպան»՝
Սօխմկովսկիի:—«Խարդաւանք եւ Ս'ը»՝ Շելլերի, Շիլ-
լերը իրրեւ թատերադիր:—«Գոկտոր Շտոկման»՝ Իշսե-
նի:—Նորվեգիայի մեծ թատերադրի աշխարհայեացքը.
«Գոկտոր Շտոկմանի» մէջ դորձող անձերը եւ նրանց
բնորոշումը:—«Հանելուկ»՝ պ. Լըվիօի. մեր գերասան-
ները եւ Գրանսիական պիէսները:—«Բաւաճանութիւն»՝
իշխան Սումբատովի:—Տ. Վարդուհու յորեկեանը:—
«Նոր Կեանքի շէմբուս»՝ Քիշմիշեանի, Տ. Չաւէշի. 218

21. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻԻՆ. — Մուկրէնի տակ:—Անգլիան Մեր-
ժաւոր արեւելքում Լ. Ս.ի 239

22. Ո՞Վ ՓԱԿԵՅ ԹԱԻՐԻԶԻ ԼԻԼԱԿԱ ԹԱՂԻ ԴՊՐՈՅՆԵՐԸ,
Ե. ծ. վ. Մարադեանի 242

22. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 175

23. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ 177

24. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

24. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 178

ՅԵՐԵՐԵՆԵԱԳԻՌԻՄ Է ԲԵԺԱՆՈՐԴԱԳՐԵԹԻՒՆ

1905 թ.

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Ք Ր Ի

(Նոր շրջան V տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

Ռուսաստան տարեկան	10 ռ.	Արաստանում 12 ռ.	(32 ֆ.)
կէս տարին	6 »	» 7 »	(18 ֆ.)
1 ամսուան	1 »	» 1 » 20 կ.	(3 1/2 ֆ.)

Ծանոթութիւն. Բաժանորդագիրք կարելի է վճարել նաեւ մաս-մաս. սկզբում 5 ռ., մայիսի 1-ին 3 ռ. և յունիսի 1-ին 2 ռ.—կամ՝ սկզբում 5 ռ. և յունիսի 1-ին 5 ռուբլի: Գրողական քանակների, ուսուցիչների և աշակերտների համար տարեկան բաժանորդագիրքն է 8 ռուբլի: Պոստատանում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատանը (ձախձախման փողոց, տ. № 16)

Կայսերական այլ տեղերից պէտք է գիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «МУРՋ».

Արաստանից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

«Մուրճ»-ի գործակալները.

Աստախան—Գ. Բ. Մկրտումեան:

Սոչի—Արամ Յակոբեան (Սեծովեան շրջան):

Սանաթկանդ—Ռ. Բ. Բէկզիււկեան (Անդրկասպեան երկիր):

Անապա—Շ. Լուս:

Թիֆլիզ—«Գոտտենըրդ» և «Կենտրոնական» զրաւաճառ.

Բաքու—Բժ. Գ. Սարգսեան, (Ե. Морская. д. № 26):

Բալխանի—Մ. Տ.-Դանիւլեան, «Անդրանիկ» ընկ. գրաս.

Բիբի-էյրաք—պ. Գ. Տ.-Դանիւլեան:

Երեւան—«Արարատ» զրաւանութ:

Կարս—պ. Համադասպ Տ.-Բաշատեան:

Մոսկուա—պ. Մտ. Թումեան:

Թաւրիզ—պ. Յ. Տէր-Ստեփանեան:

Եզիպսոս—գոկատր և Փաշալեան-Խան:

Էնկելի—պ. Գ. Մելիք-Աբրահամեան:

Սալմաս—պ. Եր. Ֆրանգեան:

Նոր-Ջուղա—պ. Տիգրան Արզարեան:

Թեհրան—պ. պ. Լ. Բարսեան և Ալեքսան Թունեանց:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. Ընդունում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են.—1 երես ընտղ յայտարարութեան համար 15 ռ., 1/2 եր.—8 ռ., 1/4 եր.—4 ռ., տողատեղ (կորպ.)—40 կ.:

Ձեռագիրները, նամակները և ծրարները պէտք է ուղղել խմբագրութեան, ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ անունով: